Հայրենիք



ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ա. ԷՔՍՈՒԶԻՈՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԴԻՄՈՒՄ Ռուսական, Վրացական և Հայկական եկեղեցիների Պետերի, ուղղված ողջ աշխարհի քրիստոնյաներին	3
Երեք եկեղեցիների Պետերի խորհրդակցությունը Քրիլիսիում	7
Երեք Հովվապետների դիմումը	8
Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի և Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Կալիստրատի այցը Ս. Էջմիածին	12
Հանգիստ Տ. Մատթեոս արքեպիսկոպոս Ինճեյանի	22
Քրիստոնյա եկեղեցիների ներկայացուցիչների կոնֆերանսը Լուդաչովիցոյում	29
Հ. ԱՐԱՄՅԱՆ, Զրույց Ամենայն Հայոց Հայրապետի հետ	38
ՍՈՂՈՄՈՆ ՍՐԿ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ (Կոմիտաս), Շնորհալին	42
Ե. ՇԱՀԱԶԻԶ, Գրիգոր Աբրահամի խալաթյանցը	49
Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Հովհաննես Սարկավագի պատմական աշխատությունները	56
Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ, Բուխարեստի հայոց անցյալն ու ներկան	61
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՂՆԵՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ	65
Լ. ԱՃԵՄՅԱՆ, Զբոսապտույտ դեպի Գեղարդ և Գառնի	70
Վ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Միչուրինյան Բիոլոգիայի նոր հաղթանակը	73
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ	75
Ս. ԵՍԱՅԱՆ, Նամակ խմբագրության	80
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	81
Վենետիկ Հայրապետի եկեղեցական միասնության առթիվ գրված կոնդակի արձագանքները	89
Նվիրատվություն Հայաստանի գեղարվեստի թանգարանին	90
Հայ Երուսաղեմը և Պաղեստինի տագնապը	91
Սոֆիայի հայոց միտինգը խաղաղության համար	92
Ա. ՊՈՂՈՍՅԱՆ, Խոշոր ներդրում հայագիտության մեջ	93

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՑԿԱԿԱՆ ՍՈՒ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ՍՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magasine „Etchmiadzin", Armenia, USSR

Պատվեր № 566

Հայպետհրատի № 3 տպարան, Երևան, Կոմունիստական փող. № 8, 1950 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Զ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ-ՊԱՏՐԻԱՐՔ ԳԵՈՐԳ Ձ. Ը
ՍՏՈՐԱԳՐՈՒՄ Է ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ

Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Կալիստրատը և Ամենայն Հայոց Կաթողիկոս և Մայրագույն Պատրիարք Նորին Ս. Օծություն Գեորգ Զ-ը

ԴԻՄՈՒՄ

ՌՈՒՍԱԿԱՆ, ՎՐԱՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ՝ ՈՒՂՂՎԱԾ ՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՆ

Խաղաղության համար ժողովուրդների մղած բացառիկ լարված պայքարի ներկա շրջանում, երբ նրանց խաղաղասիրությանը հակադրում են նոր սպառնալիքներ և կործանման միջոցներ, մենք, Սովետական Միության տերիտորիայի վրա գտնվող երեք քրիստոնյա եկեղեցիների պետերս՝ Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Ալեքսի, Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Կալիստրատ և Ամենայն Հայոց Կաթողիկոս և Մայրագույն Պատրիարք Գեորգ Զ., մտահոգված ժողովուրդների հակատագրի տագնապալից վիճակից և առաջնորդվելով խաղաղության կողմնակիցներին հնարավոր օգնությունը ցույց տալու ցանկությամբ, հավատվեցինք Թբիլիսի քաղաքում իրար մոտ, որպեսզի քննարկենք աջակցության այն նոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ են քրիստոնեական համագործակցության ոգով և ուժով:

Ամենքին բաց հայտնի է այն համառությունը, որով խաղաղության թշնամիները շարունակում են պատրաստվել պատերազմի: Նոքա աշխատում են իրենց դիտավորությունները վարագուրել ժողովուրդներին «օգնելու» լայն ծրագրերով, իսկ շար կամքով, պաշտպանողական դաշինքի վարագուրի տակ,

պատրաստվում պատերազմի: Սակայն նրանց գաղտնիքը բացահայտ դրսևորում է նրանց ռազմական պատրաստությունների լարվածությունը և նրանց ձգտումը՝ իրենց պահեստային մահաբեր զենքերով խաղաղ ապրող ժողովուրդներին փաբաբելու իրենց կամքը:

Սակայն հակառակ խաղաղության այդ թշնամիների ջանքերի, որոնք նոր պատերազմի են նախապատրաստվում, շեշտակի աճում և ամրանում է խաղաղության կողմնակիցների դաշինքը, որը իր մեջ միավորել է բարի կամքի տեր բոլոր մարդկանց՝ առանց քաղաքական և կրոնական համոզմունքների խտրության: Այդ դաշինքի բարոյական գերազանցությունը և նրա հզորությունը՝ հաղթանակի համոզմունք է ներշնչում ժողովուրդներին՝ պատերազմի մռայլ ուժերի վրա: Արդեն շատ բան է արված խաղաղասեր մարդկանց այդ դաշինքը ամրապնդելու ուղղությամբ՝ խաղաղության թշնամիների հարձակողական պլաններին հակադրվելու գործում: Իսկ այս տարվա մարտ ամսում ողջ աշխարհը լսեց խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Կոչը՝ արգելելու ատոմային զենքը: Այդ կոչում արտահայտվեց մարդկության խիղճը, որը պարտավորեցնում է մեզանից ամեն մեկին բարձրացնելու իր ձայնը ընդդեմ մահվան զենքի: Եվ ո՞րքան ավելի է սրվում պայքարը խաղաղության համար, ա՛յնքան ավելի է ակներև դառնում, որ պատերազմից և երկպառակություններից հոգնած ժողովուրդները ծարավի են, վերջապես, միասնական, կենսատու ճշմարտության և ձգտում են դեպի այդ փրկարար աղբյուրը՝ «Գտանել նմա ի խաղաղութիւն» (Բ թուղթ Պետրոսի, Գ, 15):

Տեսնելով ճշմարտության համար նոքի և ծարավի մարդկանց, կարող ենք արդյոք մենք, մահվանը հաղթանակող Քրիստոսի դավանողներս, որն իր շարչարանքներով հաղորդակից դարձրեց մարդկանց Աստծու հետ և մարդկանց մեջ փոխադարձ խաղաղության երաշխիքը տվեց, այդ շարժումից մի կողմ մնալ և ոչ մի օգնություն ցույց չտալով նորան, դրանով, լռելյայն, հավանություն տալ մահվան զենքի պատրաստմանը:

Եթե խաղաղության պաշտպանության համար բարձրանում են Քրիստոսից հեռու կանգնած մարդիկ, ապա քրիստոնյաները, ըստ Քրիստոսի պատվիրանի, մշտապես պիտի լինեն խաղաղարարներ:

Այդ պատճառով, Ռուսաստանի Ուղղափառ եկեղեցին անմիջապես միացրեց իր ձայնը խաղաղության կողմնակիցների ձայնին, ինչպես այդ արեցին նաև Վրացական եկեղեցին և ուղղափառ այլ եկեղեցիները՝ Ռումինական, Բուլղարական, Այրանական, Լեհական: Խաղաղության պաշտպանների դաշնակցությանը միացավ նաև Հայաստանյայց եկեղեցին: Այդ եկեղեցիները, խաղաղասեր ժողովուրդներին օգնելու համար, միահամուռ ջանքերով, անխոնջ կերպով բարձրացնում են իրենց հոգևոր զենքը՝ կենսատու աղոթքը հանուն խաղաղության ողջ աշխարհում, քարոզում են սեր, հոտի բարոյական միասնություն և միավորում պայքարի գործում և քրիստոնեական ճշմարտության ճաստատության համար:

Բայց խաղաղության թշնամիները բոլոր միջոցներով մարզվում են այդ ճշմարտությանը հակադրվելու համար, սպառնալով նորան ավերածությամբ և մահվան գերհզոր ուժերով: Ուստի և մենք, երբ քրիստոնյա եկեղեցիների պատրիարքներս, բարեհաճեցեք զտանք ուժեղացնել խաղաղության կողմնակիցների շարժման օգնությունը և այդ առթիվ դիմել կոչով ողջ քրիստոնյա աշ-

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ է
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ

խարհին, որը չի կարող և չպիտի դառնա հենարանը ոչնչացման անմիտ խաղաթղթերի:

Աշխարհի Փրկչի անունով կոչ ենք անում բոլոր քրիստոնյա հովվապետներին և հովիվներին և բոլոր նրանց, ովքեր փրկություն են փնտրում Հիսուս Քրիստոսի մեջ, միավորել իրենց ուժերը համատեղ պայքարի ընդդեմ համաշխարհային աղետի սպառնալիքի, որպեսզի հնչեց ինքը՝ մղձավանջը ևս հայվի՝ «Հալեցին իբրեւ զմոմ առաջի հրոյ», և անհետանա կյանքի հորիզոնից:

Գինվել ընդդեմ պատերազմի չարիքի՝ պարտքն է ամեն մի քրիստոնեի, որովհետև քրիստոնեությունը մահվան կրոն չէ, այլ կյանքի և փրկության, որին և ձգտում են բոլոր ժողովուրդները: Նոքա միասնական դաշինքի մեջ պայքարեցին աշխարհի բշնամիների դեմ, իրենց շարքերում ունենալով միլիոնավոր քրիստոնյաներ: Անհրաժեշտ է շարունակել և ուժեղացնել այդ պայքարը, որպեսզի բոլոր քրիստոնյաները, առանց դավանանքի խտրության, միավորեն իրենց ջանքերը այդ սրբազան գործում:

Խաղաղության պայքարում, որպես կյանքի գլխավոր պայմանը, պիտի վեր բարձրանալ այն ամենից, ինչ բաժանում է մարդկանց, որովհետև մենք բոլորս քրիստոնյաներ ենք, Առաքյալի խոսքերով՝ «Քանզի միով հոգւով մեք ամենեքեան ի մի մարմին մկրտեցաք» (Ա թուղթ առ Կորնթացիս, ԺԲ, 13):

Այստեղից բխում է քրիստոնյաների խաղաղության պաշտպանությանը գործում միավորվելու ընդհանուր հիմքը:

Ժամանակակից մարդկության կարիքները հոգալու խնդրում քրիստոնեության պարտքը, ամենից առաջ, կայանում է նրանում, որ նա գործուն աջակցություն ցույց տա խաղաղության մարտիկների ազնիվ որոշումներին՝ արգելելու ատոմական զենքը և պատերազմի հանցագործ հանանչել այն կառավարությանը, որն առաջինը կգործադրի այդ զենքը:

Ահա այդ անհետաձգելի գործի համար և մենք կոչ ենք անում բոլոր քրիստոնյաներին և, առաջին հերթին, եկեղեցիների պատվարժան պետերին:

Նույն կոչը մենք ուղղում ենք նաև Ողորմական աշխարհին, ի դեմս «եկեղեցիների համաշխարհային միության»: Միանալով Ստոկհոլմի խաղաղության ակտին, «եկեղեցիների համաշխարհային միությունը» գործով կարդարացներ իր պատասխանատվությունը ռազմական բռնությունների նկատմամբ:

Մենք նույն կոչն ուղղում ենք նաև քրիստոնեական աշխարհի Կաթոլիկ մասին այն հույսով, որ նա չի բաժանում պատերազմի հրձիգների աջակից հանդիսացող հռոմեական կուրիայի քաղաքականությունը, և որ նա չի ցանկանում հենարան ծառայել հակաքրիստոնեական բնաջինջ քաղաքականության համար:

Թող մեր կոչը հասնի նաև Անգլիկան եկեղեցուն, որը մշտապես մունետիկն է հանդիսացել քրիստոնեական միավորման գաղափարի, ինչպես և բոլոր այլ քրիստոնյա միություններին, որոնք ապրում են երկրի վրա:

Միանալով նշված որոշումներին, քրիստոնեական աշխարհը այդ միջոցով նրանց կտա բարոյական այնպիսի ուժ, որ ի վիճակի կլինի ներգործել նաև պատերազմի գաղափարները կրողների վրա:

Ատոմական զենքը արգելելու որոշումներին հավանություն տալը՝ պատասխանատու դարձնելով այն պետությանը, որը կհամարձակվի այն գործադրել, ավելի մեծ նշանակություն կստանա՝ նրն հոգևորականությունը և քրիստոնեական բոլոր դավանանքի հավատացյալները, հանուն մարդկության փրկության, նոր, ավելի արյունալի պատերազմից, քան նախորդ պատերազմնե-

ը, ձեռնարկի նոր միջոցառումների. այն է՝ մտնել խաղաղության պաշտպանության միությունների մեջ և ամեն կերպ աջակցել նրանց աշխատանքին, յուրաքանչյուր հովվապետ և յուրաքանչյուր քահանա նույն աշխատանքը տանի եկեղեցու բեմից, հրավիրելով իր հոտին աղոթելու խաղաղության համար ողջ աշխարհի վրա, դեպի խաղաղ ստեղծագործ աշխատանք և օրհնելով ամեն մի միջոցառում, որն ուղղված է խաղաղության հաստատմանը և ավետարանական հշմարտության կյանքում:

Այն բոլոր վայրերում, ուր հնարավոր է, թող հանդես գա այդ հոգևոր ուժը ո՛չ միայն բանավոր, այլ և գրավոր խոսքի մեջ՝ կոչերի, հոդվածների ձևով՝ հանուն խաղաղության պաշտպանության, ինչպես և խաղաղության համար մարտնչողների բոլոր համաժողովրդական և համաշխարհային միություններում մասնակցելու կոչերի միջոցով:

Կոչ անելով բոլոր քրիստոնյաներին պայքարելու խաղաղության համար, մենք, աստվածային նախախնամությամբ կարգված քրիստոնյա եկեղեցիների պետերս, աղոթում ենք Տեր Աստծուն, որպեսզի ընդհանուր խաղաղության մեծագույն գաղափարը հաղթանակի խառնակության և երկպառակության հանդեպ, և որպեսզի մենք բոլորս, Քրիստոսի հետևորդներս, լինենք ո՛չ միայն խաղաղության համար կոչ անողներ, այլ և իրական ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԸ՝ խաղաղարարները, արժանի լինելով կոչվելու, ըստ խոստման Քրիստոսի՝ «Որդիք Աստուծոյ»:

Թո՛ղ անցնեն խաղաղասեր ժողովուրդների համար տագնապի և անհանգստության այս ծանր ժամանակները և թո՛ղ բազավորե վստահությունը և անվտանգության հանգստությունը ողջ աշխարհում, հավիտենական խաղաղության մեջ:

Անձնազոհաբար և վճռապես բոլորս ծառանանք չարի առջև և մեր այս սրբազան և արդար գործում հաղթանակենք նորան հշմարտության ամենահզոր ուժով, հավատի ուժով, աստվածային անկասկածելի օգնությամբ:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ՝
ԱԼԵՔՍԻ

ՀԱՄԱՅՆ ԼՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ՝
ԿԵԼԻՍՏՐԱՏ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ՝
ԳԵՈՐԳ Զ.

Թրիլիսի, 5 օգոստոսի 1950 թ.



ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱԼԻՍՏՐԱՏԸ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ Է
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ

ԵՐԵՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Սույն թվի օգոստոսի 5-ին Թբիլիսիում տեղի ունեցավ Սովետական Միության երեք հրիտոնյա եկեղեցիների Հովվապետների հանդիպումը, հրիստոնյա աշխարհին և եկեղեցիներին խաղաղության պահպանման համար կոչ ուղղելուն առթիվ:

Ամսի 2-ին Վեհափառ Հայրապետը Ռուբեն Արքեպիսկոպոսի, Սուրեն Եպիսկոպոսի և Գարեգին Ծ. Վարդապետի ուղեկցությամբ մեկնեց Թբիլիսի: Լենինականում Վեհին դիմավորեցին քահանայական դասը և ժողովուրդը:

Օգոստոսի 3-ին Վեհափառը ժամանեց Թբիլիսի: Նրան դիմավորեցին Վրաց Կաթողիկոսի ներկայացուցիչները, Վրաստանի կրոնական գործերի կոմիտեի նախագահը, Թբիլիսիի հայոց քահանայական դասը և բեմական խորհրդի ներկայացուցիչները:

Նույն օրը, Վեհը այցելեց Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Կալիստրատին և ջերմ ընդունելության մթնոլորտում ծանոթացավ ժողովի օրակարգին: Թեյասեղանի շուրջը տեղի ունեցան փոխադարձ ջերմ ողջույններ:

Ամսի 4-ին Թբիլիսի ժամանեց Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբազնություն Ալեքսին, հոգևոր հետևորդների ուղեկցությամբ:

Նույն օրը, Ամենայն Հայոց Հայրապետը և Նորին Սրբազնություն Ալեքսին հանդիպում ունեցան և որոշեցին հաջորդ օրվա՝ ամսի 5-ին տեղի ունենալիք ժողովի կարգը:

Ամսի 5-ին Վրաց Կաթողիկոսարանում երեք Հովվապետները իրենց հոգևոր հետևորդներով նստեցին խորհրդակցության: Նիստը բացվեց աղոթքով և երգեցողությամբ: Նիստին նախագահ ընտրվեց Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Կալիստրատը, որը հակիրճ ճառով բացատրեց սույն ժողովի պատմական նշանակությունը, նախ խաղաղությունը համայն աշխարհում պաշտպանելու տեսակետն աչքի առաջ ունենալով և երկրորդ՝ երեք Հովվապետների հոգևորական հանդիպումը որպես նոր երևույթ և նոր էջ համագործակցության հանապարհին: Այնուհետև ընթերցվեց և հաստատվեց այս առթիվ կազմված կոչը, որը հրավիրում է աշխարհի հրիստոնյա համայն եկեղեցիների կրոնավորներին և հավատացյալ համայնքներին՝ միասնաբար պաշտպանել խաղաղությունը համայն աշխարհում, հետ մղելով պատերազմի սպառնալիքը: Կոչն ընդունվեց ոտոնկայս, աղոթքների ջերմ մթնոլորտում: Կոչն ստորագրեցին երեք Հովվապետները և կնքեցին իրենց կնիքներով:

Այնուհետև կարդացվեց ժողովի արձանագրությունը և ներկաների կողմից ստորագրվելուց հետո, նիստը փակվեց աղոթքով և հոգևոր երգեցողությամբ: Ապա ժողովականները հյուրասիրվեցին թեյով և մրգով: Հովվապետները հաջորդ օրը Սիոնի մայր եկեղեցում մասնակցեցին խաղաղության Ս. Պատարագին և մաղթանքին: Նույն օրը Վրաց Կաթողիկոսը հյուրերին հրավիրեց ճաշի, որը տեղի ունեցավ ջերմ և սիրալիր մթնոլորտում:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածին հրավիրեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին և Վրաց Կաթողիկոս Նորին Սրբազնություն Կալիստրատին իրենց հոգևոր շքախմբերով հանդերձ, ծանոթանալու համար հայ ժողովրդի հնադարյան կոթողներին և նրա ներկա հոյակապ վերելքին:

ԵՐԵՔ ՀՈՎ. ԱՊԵՏՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ

Մարդկությունը նորից տագնապալից ժամանակներ է ապրում: Աշխարհի վրա նորից սկսել է սավառնել նոր պատերազմի սև ուրվականը: Աշխատավոր մարդկության արյուն քրտինքով հղփացած մի խումբ գաղութարարներ, նոր երկրներ տիրելու և նոր ժողովուրդներ ստրկացնելու իրենց հրեշային ծրագրերի հետևից ընկած, ուզում են մարդկությանը մի նոր և ահավոր սպանդի մեջ քաշել: Նրանք զորահավաքի են ենթարկում աշխարհի բոլոր հետադեմ ուժերը, գենք են բաժանում, ռազմական բազաներ ստեղծում և ամեն տեսակի նենգ միջոցներով հրահրում համաշխարհային նոր հրդեհը:

Քնած չէ սակայն աշխատավոր մարդկությունը: Նախորդ համաշխարհային երկու աշխարհավեր պատերազմների տասնյակ միլիոնների թափած արյունը սթափեցրել է մարդկության խիղճը: Այլևս ո՛չ ոք չի կամենում շահագործողների խեղկատակ զոհի դերը լինել և արյուն թափել պորտաբույծների համար: Աշխարհի բոլոր առաջավոր մարդիկ այժմ միավորվում են խաղաղության համար պայքարող կազմակերպությունների մեջ, ջերմ պաշտպան ունենալով խաղաղության հուսալի հենարան Սովետական մեծ Միությունը: Նրանք համարձակ պայքարում են պատերազմի հրձիգների դեմ ու մերկացնում ռազմամոլների ստոր միտումները:

Ողջ աշխարհն այժմ փաստորեն բաժանված է երկու գլխավոր ճակատների՝ աշխատավորության ճակատի, որը խաղաղություն է ուզում, և շահագործողների ճակատի, որը պատերազմ է պատրաստում:

Հակոտնյա ճակատներից յուրաքանչյուրն ունի իր սեփական գաղափարախոսությունը և շահը: Ի՞նչ է ուզում աշխատավորությունը. ազատ լինել շահագործումից և ապրել եղբայրական խաղաղության մեջ, Ի՞նչ են ուզում շահագործողները. ստրկության մեջ պահել իրենց գերիշխած երկրների աշխատավորներին և աշխատել նոր երկրներ տիրել, մարդկային նոր ուժեր ստրկացնել ու միլիոնների արյան և արցունքի գնով, ավելի մեծացնել իրենց շահույթը:

Ամերիկյան ռազմամոլները վերջին ժամանակներս առանձնապես գազազել են այն պատճառով, որ որոշ երկրներում գիտակցության եկած աշխատավորները իրենց ձեռքն են վերցնում իրենց երկրների իշխանությունը և ձգտում են ազատության: Նրանք ցանկանում են բռնությամբ, զենքի ուժով աշխատավորությանը պահել ստրկական վիճակում: Աշխարհն այժմ տեսնում է այն գազանությունները, որ կատարվում են ազատասեր կորեացիների նկատմամբ:

Պատերազմի հրձիգները ստեղծել են պատերազմի անխուսափելիության իրենց նողկալի «փիլիսոփայությունը», որի էությունը կայանում է նրանում, որ պատերազմը ցանկալի մի երևույթ է, որովհետև նա գալիս է պակասեցնելու մարդկության օր ավուր աճող թիվը և հավասարակշռություն ստեղծում մարդկանց քանակի և բնության ընձեռած բարիքների հնարավորությունների միջև: Այդ մարդատյաց քաղաքականության անսքող ձևակերպումը կարելի է տեսնել գեներալ Շասինիի հետևյալ ցինիկ հայտարարության մեջ. «Մինչև այժմ պատերազմը վատ միջոց էր մարդկանց ոչնչացման հա-

ՌՈՒՍԱՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

մար: Երկրագնդի բնակչությունն իրապես չի դադարում անից: Ըստ որում, անում է շափազանց անհանգստացնող չափերով: Ուստի և անչափ ձեռնտու է հայտնարերել այնպիսի ռազմական մի միջոց, որ սպանվեն մարդիկ, բայց վնաս չպատճառվի շենքերին»:

Ի՞նչպիսին պիտի լինի քրիստոնյա եկեղեցիների դիրքը հակադիր գաղափարներով և հակադիր ցանկություններով դեմ առ դեմ կանգնած այս երկու հակատների նկատմամբ, որի՞ն պիտի հարեն նրանք— խաղաղության կողմնակիցների՞ն, թե պատերազմի հրձիգներին: Այս հարցը ծառացել է աշխարհի բոլոր տեսակի կազմակերպությունների, որոնց թվում և քրիստոնյա եկեղեցիների առաջ: Ոչ ոք չի կարող և չպիտի խուսափի կողմնորոշումից:

Նախ քան այս հարցին պատասխանելը, անհրաժեշտ է անդրադառնալ քրիստոնեական վարդապետությանը՝ ծանոթանալու նրա սկզբունքային մոտեցմանը՝ խաղաղության և պատերազմի հարցերին, Ի՞նչ է ավանդել Եկեղեցու հիմնադիրը՝ Հիսուս Քրիստոսը:

Իր տանջանքներից առաջ, երբ հրաժեշտ էր տալիս աշակերտներին, Փրկիչը նրանց միայն մի բան կտակեց՝ խաղաղություն. «Խաղաղություն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ» (Հովհ., ԺԴ, 27):

Ըստ Պողոս առաքյալի, աստվածային այն բարգավորությունը, որին մենք ձգտում ենք, կերակուր և ըմպելիք չէ, այլ արդարություն և խաղաղություն. «Զի ոչ է արքայութիւնն Աստուծոյ կերակուր եւ ըմպելի, այլ արդարութիւն եւ խաղաղութիւն» (Թուղթ առ Հռովմայեցիս, ԺԴ, 17):

Փրկիչը իր հայտնի լեռան քարոզի մեջ երանի է տալիս խաղաղարարներին, անվանելով նրանց Աստծու որդիներ. «Երանի՞ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» (Մատթ., Ե, 9):

Այսպես, Փրկչի խոսքերով, խաղաղարարները Աստծու որդիներն են:

Հիմա ունի՞ արդյոք քրիստոնյան մազաչափ անգամ տատանվելու պատերազմի և խաղաղության հարցերը քննելիս: Երբե՛ք: Քրիստոնեությունը պատերազմ և մահ քարոզող վարդապետություն չէ, այլ՝ խաղաղության և կյանքի:

Ելնելով անա քրիստոսավանդ այս սկզբունքից, իրենց հնդիանակավոր խոսքն են ասել աշխարհի եկեղեցական բազմաթիվ համայնքները և առանձին հոգևորականներ:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դեռահասների աշխատանք կատարեց Զեխոսլովակիայի Լուգաչովիցո ամառանոցում գումարված քրիստոնյա եկեղեցիների ներկայացուցիչների կոնֆերանսը: Իսկ Սովետական Միության քրիստոնեական երեք իմքենական եկեղեցիների հովվապետները՝ Մոսկվայի և համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Սրբազնություն Ալեքսին, Համայն Վրաց Կաթողիկոս Նորին Սրբազնություն Կալիստրատը և Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Նորին Ս. Օծություն Գեորգ Զ.ը սույն թվի օգոստոսի 5-ին տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ ընդունել են դիմում՝ ուղղված աշխարհի բոլոր եկեղեցիներին, և որը տպագրվում է «Էջմիածին» ամսագրի ներկա համարում:

Երեք եկեղեցիների պետերը կոչ են անում բոլոր քրիստոնյա հովվապետներին, հովիվներին և հավատացյալներին՝ «միավորել իրենց ուժերը համատեղ պայքարի ընդդեմ համաշխարհային աղետի սպառնալիքի»:

Նրանք պահանջում են, որ քրիստոնյաները գործուն աջակցություն ցույց տան «խաղաղության մարտիկների ազնիվ որոշումներին՝ արգելելու ատոմական զենքը և պատերազմի հանցագործ համարել այն կառավարությունը, որն առաջինը կգործադրի այդ զենքը»:

Նշված դիմումի մեջ երեք քրիստոնյա եկեղեցիների պետերը խաղաղության պահպանման համար աշխատակցության են հրավիրում «եկեղեցիների համաշխարհային միությանը», կաթոլիկ հոգևորականության այն մասին, որը հավանություն չի տալիս Վատիկանի ռազմամոլ քաղաքականությանը, և Անգլիկան քույր եկեղեցուն:

Երեք Հովվապետները կոչ են անում բոլոր քրիստոնյաներին «մտնել խաղաղության պաշտպանության միությունների մեջ և ամեն կերպ աջակցել նրանց աշխատանքին»: Նրանք պահանջում են, որ «յուրաքանչյուր հովվապետ և յուրաքանչյուր քահանա նույն աշխատանքը տանի եկեղեցու քեմից, հրավիրելով իր հոտին աղոթելու խաղաղության համար ողջ աշխարհի վրա, դեպի խաղաղ ստեղծագործ աշխատանք և օրհնելով ամեն մի միջոցառում, որն ուղղված է խաղաղության հաստատմանը և ավետարանական ճշմարտությանը կյանքում»:

Կասկած լինել չի կարող, որ աշխարհի բոլոր գիտակից քրիստոնյաները, առանց դավանանքի խտրության և պարտիական պատկանելիության, առաջնորդվելով իրենց քրիստոնեական խղճով, կբարձրացնեն իրենց մարդասեր ձայնը հանուն խաղաղության,

ՀՐԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

նպրայության և մարդկանց երջանկության:

Քրիստոնյա հովիվները պիտի զգաստ լինեն, որովհետև մարդախաղ գայլերը ցանկանում են հոշոտել իրենց հոտը: Նրանք մաջ հովիվների նման արթուն պիտի հսկեն և պաշտպանեն իրենց հոտը գիշատիչ գայլերից, հիշելով Փրկչի հայտնի խոսքերը. «Ես եմ հովիւն մաջ. հովիւ մաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Իսկ վարձկանն որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ, թողու զոչխարսն եւ փախչի. եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ» (Հովհ., ժ, 11—12):

ՍՍՌՄ Քրիստոնյա երեք եկեղեցիների պետերն իրենց դիմումի մեջ կոչ են անում բոլոր Քրիստոնյաներին՝ անվարան զորավիգ հանդիսանալ խաղաղության: Պատերազմի դեմ պայքարելու հարցը ներկայումս մարդկության համար նախատարական նշանակություն ունեցող մի հարց է: Նրա կարևորությունը շատ պարզ ասված է Վեհափառ Կաթողիկոսի հետևյալ խոսքերում. «Հանուն Քրիստոսավանդ խաղաղության անհրաժեշտ է մարդել և պայքարել պատերազմի հրձիգների դեմ, որպեսզի համաշխարհային երկու անհնի պատերազմներում մարդկության թափած արյունից և արցունքից զոյացած գետերի նման նոր գետեր չհոսեն, մարդկային հոգու ստեղծագործած անգին գանձերը չանհետանան. մարդու ստեղծած նյութական կուլտուրան չոչնչանա և աշխարհը խեղանդամների ու մուրացկանների ավերակ աշխարհ չդառնա» (*Գևորգ Զ. Կաթողիկոսի օգոստոսի 8-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում արտասանած հառից*):



ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱԼԻՍՏՐԱՏԻ ԱՑՑԸ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Օգոստոսի 4—5-ին Թբիլիսիում տեղի ունեցավ Հայ, Ռուս և Վրաց Եկեղեցիների Հովվապետների հանդիպումը, որոնք իրենց հեղինակավոր ձայնը բարձրացրին հանուն խաղաղության։ Նրանք կոչ ուղղեցին բոլոր քրիստոնյա հովվապետներին ու ժողովրդին՝ իրենց ձայնը միացնել Ստոկհոլմի խաղաղության կոչին և պայքարել նոր պատերազմ հրահրողների դեմ, որոնք ոչ մի միջոցի առաջ չեն կանգնում ազգերի ու ժողովուրդների մեջ նոր կոտորած առաջ բերելու գործում, որի հետևանքն է լինելու ավերածություններ, սովը և համաճարակը։

Օգոստոսի 7-ին, երեկոյան ժամը 5-ին Թբիլիսիից Երևան ժամանեցին Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին և Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Կալիստրատը, ուղեկցությամբ ազգիս ծերունազարդ Գեորգ Զ. Կաթողիկոսի։ Պատրիարքներին ուղեկցում էին իրենց շքախմբերը, հանձինս ռուս և վրաց միտրոպոլիտների, եպիսկոպոսների, ավագ քահանաների և աշխարհական անհատների։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Թեհրանի առաջնորդ Տ. Ռուբեն Արքեպիսկոպոսը, Բաքվի առաջնորդ Տ. Սուրեն Եպիսկոպոսը և Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին Մ. Վարդապետը։

Հովվապետներին դիմավորելու համար Մայր Աթոռից Երևանի կայարան էին գնացել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Տ. Վահան Արքեպիսկոպոսը, Տ. Սահակ Մ. Վարդապետը, Տ. Կոստանտին Արեպատ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Ստեփան Կամսարականը և Ճեմարանի ռեկտոր Մինաս Մինասյանը։

Գնացքը երբ կանգնեց կայարանում, դիմավորողները մոտեցան այն վագոնին, ուր սենդավորված էին հյուրերը, և Տ. Սահակ Մ. Վարդապետը, Ս. Էջմիածնի միաբանության անունից ռուսերեն լեզվով ողջույնի հետևյալ խոսքն ասաց.

«ՁԵՐԴ ՍՐԲԱԶՆՈՒԹՅՈՒՆՔ

Էջմիածնի հոգևոր միաբանության և ողջ հայ հոգևորականության և հավատացյալ հայության անունից ողջունում ենք Ձեզ՝ երկու ավտոկեֆալ Եկեղեցիների Առաջնորդներիդ, Ձեզ ուղեկցող բարձրաստիճան հոգևորականների հետ միասին, Սովետական Հայաստանի մայրաքաղաք՝ Երևան ժամանման առթիվ։

Հայ և Ռուս, Հայ և Վրաց Եկեղեցիները միշտ էլ բարեկամական սերտ փոխհարաբերությունների մեջ են գտնվել։ Ձեր՝ համաշխարհային հռչակ ունեցող երկու մեծանուն հոգևորականներիդ այցելությունը, անկասկած, ավելի կխորացնի և կսերտացնի բարեկամական փոխհարաբերությունները մեր Եկեղեցիների միջև։

Ձեր այցելությունը անժխտելի ապացույց է ոչ միայն Ձեր անձնական մտերմության

մեր Վեհափառ Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Գևորգ Զ. Կաթողիկոսի հետ, որը ուղեկցում է Ձեզ, այլ և Ձեր հարգալից վերաբերմունքի դեպի Հայոց Եկեղեցին ու նրա սուվերեն իրավունքը։ Մեզ՝ Հայ Եկեղեցու կրոնապետներիս և հայ հավատացյալների համար մեծ ուրախություն և պատիվ է Ձեր՝ ոուս մեծ և ազնիվ ժողովրդի և մեր դրացի ու բախտակից Վրաց Եկեղեցիների պետերի Սովետական Հայաստան այցելելը, որը Ստալինյան կենսարեր արեի տակ ստեղծել է իր ինքնուրույն պետականությունը և Սովետական Միության փառավոր ընտանիքում, համարձակ, դնում է դեպի իր երջանիկ ապագան։

Մեզ համար առանձնապես ուրախալի է նշել, որ Ձեր դալուստը զուգադիպում է երեք Առաջնորդների Թբիլիսյան խորհրդակցությանը, ուր ընդունվել է քրիստոնյա բոլոր եկեղեցիներին ուղղված կոչը՝ պայքարելու պատերազմի հրձիգների դեմ հանուն խաղաղության պահպանման, որը ներկա շրջանում արտահայտում է ողջ աշխարհի բարի կամք ունեցող մարդկանց իղձը և ցանկությունը։

Բարո՜վ, հաղա՜ր բարի եք եկել մեր հարազատ երկրի, մեր աչքի լույս հյուրերս։

Հյուրերը իրենց շքախմբով հյուրընկալվեցին Երևան, նախապես պատրաստված հյուրանոցում, ուր բոլորին էլ հատկացվեցին առանձին սենյակներ, իրենց բոլոր հարմարություններով։

Ժամը 7-ին հյուրերը հրավիրվեցին սեղանատուն՝ ճաշի։

Առաջին կենաց բաժակները առաջարկվեցին Գևորգ Զ. Կաթողիկոսի կողմից, ի պատիվ և արևշատություն հյուր եկած մեծ Հովվապետների։ Բաժակաճառերով ելույթ ունեցան Մոսկվայի ավագերեց Ն. Կոլչանովին, պրոֆ. Ն. Դոկտուսովը, Տ. Սահակ Ծ. Վարդապետը և ուրիշները։

Ճաշը վերջացավ բավական ուշ և սեղանակիցները ցրվելով, թողին հյուրերին հանդրստանալու։

***

Հետևյալ օրը, ժամը 10-ին նշանակված էր բարձրաստիճան հոգևոր հյուրերի այցը Ս. Էջմիածին և ազգիս Վեհափառ Հայրապետին։

Առաջին և եղակի դեպքն էր, որ դարերի ընթացքում, երեք տարբեր քրիստոնյա հովվապետներ պատահում էին Ս. Էջմիածնում։

Ավագ լուսարար Տ. Սահակ Ծ. Վարդապետի ջանքերով Տաճարից մինչև Վեհարանը զորդապատված էր։ Միաբանությունը, շուրջառազգեստ, վանքի արեմտյան դռանը կանգնած, սարկավագներով ու քառաձայն խմբով, սպասում էր։

Ի պատիվ հյուրերի, Վեհափառ Հայրապետը բարվոք համարեց Ս. Իշման Սեղանի մոտ իր ամպհովանու տակ լմտնել, այլ երեք բազկաթոռներ դրվեցին Հովվապետների համար՝ որպես ընկերակիցների։

Ժամը 9.45-ին, Վեհափառը իջնում է Մայր Տաճարը, որոշ կարգադրություններ անում և փիլոնազգեստ, հայրապետական խաչն ու գավազանը ձեռին, բազմում իր աթոռի վրա։

Ժամը 10-ն է։ Բացվում են Մայր Աթոռի դարսպասի երկաթյա դռները։ Ինքնաշարժ մեքենաները իրար ետևից մտնում են գավիթ և կանգ տոնում Վեհարանի առաջ։

Երկու երիտասարդ կուսակրոն սարկավագներ (Հոգևոր Ծեմարանի լսարանական սաներ), խունկի տապանակները ձեռքներին, մոտենում են Հայրապետներին, խունարկ դուրս տալիս և առաջարկում խունկ ծխել բուրվառների մեջ։ Քառաձայն երկսեռ խումբը սկսում է «Հրաշափառ շարականը։ Սարկավագները, խնկարկելով, Հայրապետներին առաջնորդում են Տաճար։ Քշոցների ախորժ նվագածության և Մայր Տաճարի զանգերի զողանջների տակ, թափորը փառավոր հանդեսով մտնում է Տաճար։

Վեհափառ Հայրապետը կանգնած է Ս. Իշման Սեղանի աստիճանի վրա։ Հովվապետները մոտենում են և կանգ առնում։ Երկու Հովվապետների բարի գալուստը Ս. Էջմիածին Վեհափառը ողջունում է հայերեն երկար ատենաբանությամբ, որը բերում ենք այստեղ.

«ՍԻՐԵԼԻ» ԵՂԲԱՐՔ Ի ՔՐԻՍՏՈՍ

Այսօր մեզ մոտ հյուր են մեր քույր եկեղեցիների աչքի ընկնող երկու Առաջնորդները՝ Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբազնություն Ալեքսին և Համայն Վրաց Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Կալիստրատը, մի խումբ բարձրաստիճան հոգևորականների հետ։

Ժամանակակից քրիստոնյա եկեղեցիների այս աչքի ընկնող հոգևորականների հետ մեր ունեցած ծանոթությունը հին է։ Մեր առաջին հանդիպումը նոցա հետ տեղի ունե-

ցավ 1948 թվի հուլիսի 7-ին, երբ Ռուսաց Պրավոսլավ եկեղեցին տոնում էր իր ավտոկեֆալության 500-ամյակը։ Տոնակատարության հանդեսին հրավիրված էին Պրավոսլավ եկեղեցու բոլոր ավտոկեֆալ ճյուղերը։ Հրավիրված էր նաև Հայոց եկեղեցին իբրև հյուր։ Թե՛ հրավերը, թե՛ ընդունելությունը լափազանց սիրալիր ու բարեկամական էին, իսկ հրավերի և ընդունելության եղանակը՝ Հայոց հնագույն պատմական եկեղեցու դիրքին ու արժանապատվությանը վայել ու պատշաճ։ Այդ թվականը անջինջ կմնա մեր հիշողության մեջ։

Հայոց եկեղեցին միշտ էլ սերտ բարեկամական փոխհարաբերության մեջ է գտնվել Ռուսաց եկեղեցու հետ, բայց այս անգամ Հայոց եկեղեցին Ռուսաց եկեղեցու կողմից բացառիկ սիրալիր, սրտաբաց ու բարեկամական վերաբերմունք էր տեսնում և, իբրև քույր եկեղեցի, համագործակցության հրավիրվում։

Վերջին տասնամյակների ընթացքում սերտացել և խորացել է նաև մեր եկեղեցու դարավոր բարեկամությունը դրացի և բոլշևիկից Վրաց եկեղեցու հետ։

Բնականաբար, հարց է ծագում՝ ի՞նչպես

Վեհափառը ողջունում է հյուրերին

հասկանալ, ի՞նչպես բացատրել այս երևույթը։

Ցարական Ռուսաստանը մի պարսավելի քաղաքականություն ուներ— Ռուսաստանում ապրող ժողովուրդներին կռվեցնել միմյանց հետ, որպեսզի ինքը ապահով դա։ Նա գրժություններ էր սերմանում նաև քրիստոնյա բույր եկեղեցիների մեջ։

Այս քաղաքականությանը բոլորովին հակառակ, Սովետական Իշխանությունը իր երկրի բազմացեղ և բազմալեզու ժողովուրդներին աշխատում է կապել միմյանց հետ բարեկամական և եղբայրական սերտ կապերով և, իբրև հավասարների, համագործակցության հրավիրում՝ ընդհանուր ուժերով զարգացնելու բոլորին կուլտուրապես և տնտեսապես, ստեղծելով բոլորի համար բարեկեցիկ վիճակ։

Սովետական Իշխանությունը նույն սկզբունքը հետևողականորեն կիրառել է և փորձում է կենսագործել նաև իր երկրից դուրս։ Դրամատիրական աշխարհի դիվանագիտությունը ղեկավարվում է անձնական շահի, այլ ժողովուրդներին ստրկացնելու և իր շահերին ծառայեցնելու սկզբունքով։ Սորա հակառակ, Սովետական դիվանագիտությունը դրել է մի այլ սկզբունք՝ եղբայրության և խաղաղասիրության, պետությունների համագործակցության սկզբունք, որով միայն կզարգանա ազգերի մշակույթը, կբարվոքվի նորա տնտեսական վիճակը և ընդմիշտ ազատ կլինեն պատերազմների ավերիչ ու կործանիչ փտանգից, որը մարդկային կյանքի էական նպատակներից մեկն է։

Սովետական իշխանության վարած խաղաղասիրության, եղբայրության և համագործակցության քաղաքականությունն իր արտահայտությունը գտել է նաև մեր քրիստոնյա եկեղեցիների փոխհարաբերությունների մեջ։ Դորա ցայտուն արտահայտությունը տեսանք մենք Ռուս Պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյակի տոնակատարության հանդեսներին։

Այդ քաղաքականության հետևողական նախաձեռնողներից մեկն է բոլորից խորապես հարգված, Մոսկվայի և համայն Ռուսիա շնորհազարդ Ալեքսի Պատրիարքը, որի անունը, անշուշտ, ուրախ սառերով կարձանագրվի Ռուս Պրավոսլավ եկեղեցու պատմության մեջ՝ ռուս լավագույն և խոշորագույն պատրիարքների շարքում։ Այդ քաղաքականության ջերմ հետևողներից է մեր սիրելի եղբայր՝ Նորին Ս. Օծություն Կալիստրատ Կաթողիկոսը։

Այս խաղաղասիրության, եղբայրության և համագործակցության սկզբունքների կենսագործության արտահայտությունն է նաև Թբիլիսիում ամսույս 4—5-ին, ռուս շնորհազարդ Ալեքսի Պատրիարքի նախաձեռնությամբ գումարված ժողովը՝ մասնակցությամբ Վրաց եկեղեցու Կաթողիկոսի և մեր, ուր որոշվեցավ կոչով դիմել բոլոր քրիստոնյա եկեղեցիներին, հանուն քրիստոսավանդ խաղաղության՝ քարոզելու և պայքարելու պատերազմի հրձիգների դեմ, որպեսզի համաշխարհային երկու ահռելի պատերազմներում մարդկության թափած արյունից և արցունքից գոյացած գետերի նման նոր գետեր չհոսեն, մարդկային հոգու ստեղծագործած անգին գանձերը չանեանան, մարդու ստեղծած նյութական կուլտուրան չոչնչանա և աշխարհը խեղանդամների ու մուրացկանների ավերակ աշխարհ չդառնա։

Եվ, վերջապես, խաղաղության, եղբայրության և համագործակցության երրորդ արտահայտությունը՝ Մոսկվայի և Համայն Ռուսիա շնորհազարդ Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի և Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Կալիստրատի այցելությունն է Ս. Էջմիածնի Մայր Տաճարին և նորա Գահակալին։

Սրբազան եղբա՛ր ի Քրիստոս. այսոր Հայ եկեղեցու համար ուրախություն է, որովհետև Ձեր այցելությունը գալիս է ավելի սերտացնելու մեր և Ձեր գլխավորած եկեղեցիների բարեկամական փոխհարաբերությունը։ Դա միաժամանակ ապացույց է Ձեր լայնախոհ և հարգալից վերաբերմունքին դեպի մեր եկեղեցու՝ Արևելքի հնագույն եկեղեցիներից մեկի ինքնուրույն սովերեն իրավունքները։ Հայոց եկեղեցին քրիստոնյա ծաղկանոցի ծաղիկներից մեկն է, որը պահելով իր ուրույն գույնը և հոտը, միշտ պատրաստ է եղել և այժմ պատրաստ է քրիստոնեական վեհ գաղափարների կենսագործման համար համագործակցել բոլոր քրիստոնյա եկեղեցիների հետ և, առավելապես, Պրավոսլավ եկեղեցու հետ, որին շատ ավելի մոտ է ամեն կողմով, քան ոչ այլ եկեղեցու։

Որպես մնայուն հուշարձան Հայոց և Պրավոսլավ եկեղեցիների եղբայրության և համագործակցության, մատուցանում ենք Ձեզ Ս. Էջմիածնի մակետը՝ մեր և Ձեր միջև կնքված բարոյական անխախտ ուխտի և ազնիվ համագործակցության ի հիշատակ։

Նվերի հետ ընդունեցե՛ք Հայոց եկեղեցու, նորա Գահակալի, միաբանության և հավատացյալ հոտիս սրտագին ողջույնները Ձեր այցելության առթիվ և հաճեցե՛ք Իմման Սեղան բարձրանալ և օրհնել մեր միաբանությունն ու հավատացյալ ժողովուրդը։

Վեհափառի ճառը անմիջապես թարգմանվում է ռուսերենի։

Այստեղ միջանկյալ պետք է հիշել, որ 1948 թվին, Ռուս եկեղեցու ավտոկեֆալիայի 500-ամյակի հոբելյանի առթիվ, Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսն ևս հրավիրված էր Մոսկվա, տոնախմբությանը մասնակցելու։ Ի հիշատակ այդ հոբելյանի, Վեհափառ Հայրապետի կողմից պատվիրված էր Էջմիածնի Մայր Տաճարի արծաթյա մեծ մակետը (կաղապար), որը հենց այդ օրերին պատրաստած հանձնել էին Վեհին։ Մակետը դրված էր Ս. Իշման Սեղանի ձախ կողմը պատշաճ սեղանի վրա, ծածկված թանկարժեք քողով, ի տես ժողովրդի։

Երբ Վեհափառը հասնում է իր ողջույնի այն տեղին, ուր հիշում է թե ի հիշատակ Հայ և Ռուս եկեղեցիների բարեկամության և սիրո, նվիրում է Ս. Էջմիածնի մակետը Ալեքսի Պատրիարքին։ Քողը բացվում է և մակետը, իր գեղեցիկ, ճոխ և ճարտարապետական ոճով հիացմունք է պատճառում թե՛ Հովվապետներին և թե՛ ժողովրդին։

Վեհափառի ճառից հետո առաջ է անցնում Ալեքսի Պատրիարքը։ Վեհը իր ձեռքի ոսկյա ադամանդակուռ խաչը հանձնում է Պատրիարքին, և նա Ս. Իշման Սեղանից Վեհին ուղղում է իր շնորհակալական խոսքը, որը բերում ենք այստեղ.

«ԲՈԼՈՐԻՑ ՍԻՐՎԱԾ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մենք խորապես զգացված ենք այն սիրաբիրությանը համար, որ ցուցաբերեցիք Դուք մեր նկատմամբ Էջմիածնի այս Սուրբ Տաճարում։ Շնորհակալություն ենք հայտնում նմանապես Ձեր մատուցած նվերի համար, որը հանդիսանում է Ձեր՝ մեր նկատմամբ տածած սիրո վառ արտահայտությունը։

Ես երջանիկ եմ, որ կարողացա գալ Ս. Էջմիածին, որպեսզի երկրպագեմ Ձեր սրբությունները և համբուրեմ Գրիգոր Լուսավորչի Սուրբ Աջը։

Մենք գիտենք թե Հայաստանյայց Եկեղեցին իր գոյության ընթացքում որքա՜ն դառնություններ և աղետներ է տեսել։ Հայտնի է նմանապես, որ Քրիստոնեության նախնական դարերում նա համատեղ է ընթացել Արևելյան Ուղղափառ եկեղեցիների հետ, սակայն հետագայում, քաղաքական շարժառիթներով, որոշ տարաձայնությունների հետևանքով, բաժանվել է նրանից։ Այդ ժամանակներից ի վեր, նա սկսել է հետապնդվել Հունական եկեղեցու որոշ քարձրաստիճան հոգևորականների կողմից։ Հայոց եկեղեցին անվանարկելու համար, նրա նկատմամբ անբարյացակամ տրամադրված շրջանները հազար ու մի տեսակ առասպելներ և մտացածին բաներ են հորինել նրա մասին։ Բայց Հայոց եկեղեցին գլխավորող հոգևորականությունը, մեծագույն տոկունությամբ, պահպանել է իր ժողովրդի շահը և իր եկեղեցու պատիվը։ Դարեր շարունակ նա պահպանել է իր անկախությունը և աշխարհի առաջ բարձր պահել Հայոց եկեղեցու արժանապատվությունը և հեղինակությունը։

Հայոց եկեղեցու աչքի ընկնող ներկայացուցիչները մաքառելով իրենց եկեղեցու անկախության համար, միաժամանակ բարեկամական փոխհարաբերությունների մեջ են գտնվել մյուս քրիստոնյա քույր եկեղեցիների, առանձնապես Հունական եկեղեցու հետ։ Հայոց Եկեղեցու շուրջը եղած զրույցները ցրելու համար, հայ հոգևորականները քանիցս պատգամավորություն են ուղարկել Բյուզանդիոն և բացատրել իրենց Եկեղեցու դոգմատիկ և ծիսական սկզբունքները։ Աչքի ընկնող այդպիսի հոգևորականներից կարելի է մատնացույց անել Գրիգոր Պահլավունի Կաթողիկոսին 12-րդ դարում։ Այդ նույն ժամանակ Մանվել կայսեր հրամանով ստեղծվել է առանձին հանձնաժողով՝ քննելու Հայոց եկեղեցու ուղղափառությունը։ Հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ Հայաստանյայց եկեղեցին հարազատորեն պահպանել է տիեզերական առաջին ժողովների բոլոր սկզբունքները և անաղարտ մնացել ուղղափառության մեջ։

Հայոց եկեղեցու շուրջը եղած ավելորդ զրույցները պակասեցին Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականի» գրվելուց հետո, ուր հեղինակը մանրամասն բացատրել է Հայոց եկեղեցու դոգմաների և ծեսերի էությունը։ Հունական կայսրը և Հունական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականությունը, քննելով Շնորհալու այս «Ընդհանրականը», լիովին համոզվեցին, որ Հայոց եկեղեցու դոգմաները համընկնում են ուղղափառ եկեղեցիների բոլոր դոգմաներին, չհաշված որոշ տարբերություններ։

Ռուսաց Պրավոսլավ եկեղեցին և Հայաստանյայց Եկեղեցին այժմ գտնվում են բարեկամական սերտ փոխհարաբերության մեջ։ Մեր, Ինքնանկախ եկեղեցու պետերիս սրբազան պարտքն է է՛լ ավելի խորացնել այդ բարեկամությունը և միացյալ ուժերով պայքարել հանուն քրիստոսավանդ խաղաղության, ժողովուրդների եղբայրության և համայն մարդկության երջանկության համար։

Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին շնորհակալական խոսք արտասանելիս

Իմ և ինձ ուղեկցողների անունից կրկին անգամ շնորհակալություն եմ հայտնում Ձեր ցուցաբերած եղբայրական սիրու համար։

Թո՛ղ Աստված օրհնի Ձեր հոտը և եկեղեցին հավիտյանս հավիտենից, ամենայն։

Ապա նույն ձեռվ վերը խաչը հանձնում է Կալիստրատ Կաթողիկոսին, որը հետևյալ ճառով իր դոհունակությունն է հայտնում փառավոր ընդունելության համար։

«ՍԻՐԵԼԻ՝ ԵՂԲԱՐՔ Ի ՔՐԻՍՏՈՍ

Հայ և Վրաց եբաղբայրական ժողովուրդների բարեկամությունը խորը հնություն ունի։ Ըստ մատենագրերի ավանդած տեղեկության, դրացի այդ ժողովուրդները երկու արքունական հարազատ եղբայրների որդիներն են, մեկը՝ Հայոսի, իսկ մյուսը՝ Քարթլոսի։

Հայ և Վրաց ժողովուրդները ապրելով կողք կողքի, միասին են ճաշակել պատմության և՛ դառնությունը, և՛ ուրախությունը։ Չորրորդ դարի սկզբում նրանք միասին ընդունեցին Քրիստոնեությունը։ Այդ օրվանից հարևան երկու եկեղեցիների միջև հիմք դրվեց բարեկամական փոխհարաբերության։

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Կալիստրատը շնորհակալական խոսք արտասանելիս

Հետագա դարերում, երբ Հայաստան խուժեցին օտարերկրյա նվաճողները և հայ ժողովուրդը կորցրեց իր քաղաքական անկախությունը, վրացական պետությունը, սկսած Դավիթ Վերաշինող թագավորի ժամանակից, հնարավոր ամեն աջակցություն ցույց տվեց Հայոց՝ նրանց մղած ազատագրական ծանր պայքարում։

Երբ Հայաստանը և Վրաստանը մտան ռուսաց հովանավորության տակ և արտաքին վտանգն անցավ, հայ և վրաց ժողովուրդներն ավելի սերտացրին իրենց կապերը։

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամական փոխհարաբերությունն իր ամենասերտ և բարձրագույն աստիճանին հասավ Սովետական Իշխանության տարիներին։

Մեր երկու ժողովուրդների հարաբերության ամրացման և սերտացման հետ զուգընթաց, ամրացավ և սերտացավ մեր եկեղեցիների փոխհարաբերությունը։ Այդ տեսակետից, մեծ է եղել Մոսկվայում 1948 թվի հուլիս ամսում գումարված Ռուս Պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալիային նվիրված հանդեսը, ուր հրավիրված էինք և՛ մենք, և՛ Հա-

յոց Եկեղեցու ծերունազարդ Հովվապետը՝ մեր սիրելի եղբայր Գեորգ Զ. Կաթողիկոսը։ Այնտեղ մենք առաջին անգամ հանդիպեցինք Վեհափառ Հայրապետի հետ և նրա հետ մոտից ծանոթանալուց հետո զգացինք, որ հանձին Գեորգ Զ.-ի, Հայոց կաթողիկոսական գահն ունի իր շրջահայաց և մեծ պատրաստություն ունեցող իմաստուն Հովվապետը։

Մոսկվայի մեր այդ հանդիպումը կարելի է համարել մեր Եկեղեցիների աշխատակցության սկիզբը։

Մի քանի օր առաջ մենք՝ երեք Եկեղեցիների պետերս՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարք Ալեքսին, Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Գեորգ Զ.-ը և մենք, հավաքվեցինք Որիլիոհում և ընդունեցինք մի կոչ՝ ուղղված բոլոր քրիստոնյաներին՝ խաղաղության կողմնակիցներին միանալու և հաստատ խաղաղության պայքարելու համար։

Իսկ այժմ, ահա եկել ենք Ս. Էջմիածին, այցելելու մեր Սրբազնագույն եղբորը և համբուրելու այստեղ գտնված սրբությունները։

Հույս ունենք, որ մեր այս հանդիպումը վերջինը չի հանդիսանա և մենք դեռ հաճախ առիթ կունենանք տեսնելու իրար։

Մեր և Ձեր Եկեղեցիների տարբերությունները ծիսական են և չպիտի երբեք արգելք հանդիսանան մեր հետագա աշխատակցության՝ հանուն մեր և Ձեր ժողովուրդների բարօրության և երջանկության։

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի արծարյա մակետ ճվերի հանձնումը

Կալիստրատ կաթողիկոսի խոսքից հետո սկսվում է հայրապետական մաղթանքը երեք Հայրապետների արևշատության համար։ Մաղթանքը վերջանում է Տաճարից դուրս են գալիս երեք Հովվապետները և ուղղվում Վեհարան։

Նախաճաշից հետո երկու Հովվապետները իրենց շքախմբով իջնում են Տաճար և դիտում թե՛ Տաճարը և թե՛ թանգարանը։ Ապա հյուրերը, էջմիածնի մի քանի միաբանների ուղեկցությամբ, այցելում են Ս. Հռիփսիմեի վանքը, դիտում են Զվարթնոցի ավերակները ու թանգարանը, որից հետո մեկնում են իրենց հատկացված հյուրանոցը՝ հանգստանալու։

Ժամը 7-ին հյուրերը վերադառնում են Վեհարան, ճաշի։ Սեղանատանը, սեղանի ճակատին, առանձին դրված սեղանի մոտ բաղմում են մի ուղղությամբ երեք Հովվապետները։ Մյուս հյուրերն ու ներկաները տեղ են բռնում բոլոր իրենց դիրքի ու աստիճանի։ Սեղանի օրհ-

Պատրիարք Ալեքսիսն ծանոթանում է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ բանասեր Ե. Շահազիզի հետ

նությունից հետո, առանձին բաժակաճառերով ելույթ է ունենում Վեհափառը հայերեն լեզվով։ Վեհափառի խոսքերը անմիջապես թարգմանվում են ռուսերենի։ Երկու Հովվապետների (ռուս և վրաց) պատասխան ճառերը լինում են ռուսաց լեզվով։ Սեղանի շուրջը բաժակաճառերով ելույթ են ունենում Տ. Ռուբեն Արքեպիսկոպոսը, ռուս միտրոպոլիտ Վիկտորը, վրաց միտրոպոլիտ Եփրեմը, վրաց եպիսկոպոս Գավրիլը, Սահակ Մ. Վարդապետը, Կոլչանսկիյ ավագերեցը, պրոֆ. Ա. Աբրահամյանը, պրոֆ. Դոկտուսովը, Հոգևոր Ճեմարանի ռեկտոր Մ. Մինասյանը և ուրիշները։

Ճաշը անցնում է շատ քաղցր, մտերմական ու բարեկամական մթնոլորտում։ Ճաշից հետո հյուրերը հրավիրվում են Վեհարանի այգին, որտեղ Վեհի շքեղ կարգավորված տաղավարում, բազմում են Հովվապետները և շքախմբի անդամները ու հյուրասիրվում այդու պտուղներով։

Հաջորդ օրը, առավոտյան, հյուրերը, Վեհափառ Հայրապետի և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշ անդամների ուղեկցությամբ, այցելում են Հայի. ՍՍՌ Մատենադարան։ Այցելուներին հարգալից ընդունում է և բացատրություններ տալիս Մատենադարանի դիրեկտոր Գ. Արովը։ Հյուրերը, հիացած Մատենադարանի ձեռագրական հարուստ ժողովածուով, նրա պահպանմամբ և ուսումնասիրության արդյունքներով, անչափ գոհ են մընում։ Երեք նկեղեցիների Հովվապետները այցելուների մատյանում արձանագրում են իրենց հետևյալ տպավորությունը. «1950 թվի սեպտեմբերի 9-ին դիտեցինք ձեռագրերի այս սքանչելի ժողովածուն և հիացանք հսկայական գիտական այն աշխատանքով, որն այնպես սիրով ու դուրգուրանքով կատարվում է այստեղ։

Մատենադարանից հետո հյուրերը այցելում են Պատմական թանգարան և ծանոթանում նրա կարևոր էքսպոնատների հետ։ Այստեղ բացատրություն են տալիս թանգարանի դիրեկտոր դոց. Կ. Ղաֆանդարյանը և ավագ գիտական աշխատող Ա. Շահնազարյանը։

Նույն օրը ժամը 1-ին հյուրերը ավտոմեքենաներով գնում են Սևան։ «Միկոյան» շուգենավով նրանք պտտում են լճի վրա, վայր իջնում կղզին և ծանոթանում նրան ու հիանում նրա գեղեցկությամբ։

Ժամը 4-ին հյուրերը ճաշի են հրավիրվում լեռի մոտ կառուցված ճաշասրահում, ճաշակելով անուշահամ իշխան ձուկը, հայկական կերակուրներ և անուշահամ մրգեր։ Հյուրերը երեկոյան երկաթուղիով մեկնում են Թբիլիսի։

Հյուրերը Սևանում ՄԻԿՈՅԱՆ շոգենավի վրա

ՌՈՒՍԱՑ ԵՎ ՎՐԱՑ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՑԱՍՏԱՆԻՑ ՄԵԿՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Վերադառնալով Թբիլիսի, սիրով վերհիշում եմ չքնաղ Հայաստանը և նրա հոկայական հաջողություններ։

Շնորհակալություն Ձերդ Վեհափառության ցուցաբերած սիրալիր վերաբերմունքի համար։

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ **ԱԼԵՔՍԻՍ**

Թբիլիսի, 10 օգոստոսի 1950 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ընդունեցե՛ք, Սրբազնագույն Տե՛ր, սրտագին շնորհակալություններ ինձանից և իմ ուղեկիցներից մեր նկատմամբ Ս. Էջմիածնում, Երևանում և Սևանում ցուցաբերած հայրական հոգածության համար։ Ձեր հարի տակ անցկացրած օրերի հուշերս մշտապես անմոռաց կմնան ինձ համար։

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ՝ **ԿԱԼԻՍՏՐԱՏ**

Թբիլիսի, 10 օգոստոսի 1950 թ.

ՀԱՆԳԻՍՏ

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻՆՃԵՅԱՆԻ

Մանչեստրից Ամենայն Հայոց Հայրապետի անունով ստացված հեռագիրը գուժեց տեղի հոգևոր հովիվ Մատթեոս Արքեպիսկոպոս Ինճեյանի մահը:

Հանգուցյալ Սրբազանը ծնվել է Գումգաբուում 1877 թվին: Իր նախնական և միջնակարգ կրթությունը նա ստացել է տեղական դպրոցներում, իսկ բարձրագույնը՝ Փարիզի Իրավաբանական Համալսարանում: Այնուհետև նա Արմաշի Դպրևանքում կրոնական հարկավոր պատրաստությունը ստանալուց հետո, 1909 թվին, Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցում, հոգելույս Իզմիրլյանի կողմից ձեռնադրվում է վարդապետ: Նա այստեղ կարճ ժամանակ պաշտոնավարելուց հետո, առաջնորդության է կանչվում Սիս, իսկ այնուհետև տեղափոխվում է Զմյուռնիա առաջնորդական պաշտոնով ու երկար տարիներ մնում այստեղ: 1914 թվին, տեղի խառը ժողովի միջնորդությամբ, եպիսկոպոս է օծվում Էջմիածնում Տ. Գեորգ Ե.ի կողմից նույն թեմի վրա: Հետագայում նա վարում է Սամսունի առաջնորդությունը, Եվրոպայի Հոգևոր հովվությունը, և վերջում, իր առողջական վիճակի թելադրանքով, հանձն է առնում Մանչեստրի հոգևոր հովվությունը: 1932 թվին, խորհնդ կաթողիկոսի ընտրության ժամանակ, որպես պատգամավոր եկել է Ս. Էջմիածին և վերադառնալիս Հայրապետից ստացել արքության աստիճան:

Մատթեոս Արքեպիսկոպոսի մահով Հայաստանյայց եկեղեցին կորցնում է մեծ առաքինություններով օժտված իր բարձրաստիճան մի հոգևորականին, որը ազնվաբար արել է կարելին իր եկեղեցու և իր ժողովրդի համար:

Տերը լուսավորե նրա հոգին:

ՔՐԻՍՏՈՆԵԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԼՈՒԳԱԶՈՎԻՑՈՅՈՒՄ[1]

Լուգաշովիցայում կոնֆերանս գումարվելու անհրաժեշտությունը և նրան պատգամավորներ ուղարկելու հրավերը Նորին Ս. Օծությունն Վեհափառ Հայրապետ Գ. կոնֆերանսի նախապատրաստող հանձնաժողովից ստացել էր նախապես։ Վեհափառ Հայրապետը հեռագրով տվել էր իր համաձայնությունը պատգամավորություն ուղարկելու մասին և նշանակել պատգամավորության կազմը։ Պատգամավորությունը գլխավորում էր ամենապատիվ Ռուբեն Արքեպիսկոպոս Դրամբյանը։

Հայոց եկեղեցու պատգամավորությունը էջմիածնից դուրս եկավ Ճեպընթաց երկաթուղով դեպի Մոսկվա հունիսի 25-ին։ Երեք օր հետո, հունիսի 28-ին, պատգամավորությունը ժամանեց Մոսկվա և հուլիսի 1-ին, առավոտյան վաղ լուսաբացին, մարդատար սավառնակով, թռավ դեպի Պրագա (Չեխոսլովակիայի մայրաքաղաքը)։ Պրագայի օդանավակայանում սավառնակը վայրէջք կատարեց ժամը 11-ին։ Նախապես հեռագրված էր Հայոց եկեղեցու պատգամավորության թռիչքի մասին։ Օդանավակայանում պատգամավորությանը դիմավորելու էին եկել Չեխոսլովակիայի ժողովրդական դեմոկրատական կառավարության ներկայացուցիչ Պլիհալը, Սովետական դեսպանության ներկայացուցիչը, Մորավիայի արքեպիսկոպոս Չեստմիր Կրաչմար Օլոմուցկին, Ալեքսի եպիսկոպոս Պրյաշևսկին և այլ հոգևորականներ։

Կառավարության ներկայացուցիչը և վերև հիշված եպիսկոպոսները հակիրճ խոսքով ողջունեցին Հայոց եկեղեցու պատգամավորության ժամանումը Պրագա։ Ամենապատիվ Ռուբեն Արքեպիսկոպոսը շնորհակալություն հայտնեց սիրալիր ընդունելության համար և հույս հայտնեց, որ Լուգաշովիցայում գումարված քրիստոնյա եկեղեցիների ներկայացուցիչների կոնֆերանսը կասի իր վճռական խոսքը խաղաղության պաշտպանության համար, որը աշխատավոր մարդկության միակ իդեալ է ներկա ժամանակում։

Օդանավակայանի հյուրասենյակում մոտ կես ժամ հյուրասիրվելուց ու մի փոքր հանդստանալուց հետո, Հայոց եկեղեցու պատգամավորությունը, վերև հիշված երկու եպիսկոպոսների ուղեկցությամբ, սավառնակով թռավ դեպի Լուգաշովիցա, կոնֆերանսի գումարման վայրը, որը գտնվում էր Պրագայից մոտ 400 կիլոմետր հեռավորության վրա։ Ժամ ու կես թռիչքից հետո, պատգամավորությունը հասավ Լուգաշովիցայի օդանավակայանը։ Այստեղ պատգամավորությանը դիմավորեց տեղական իշխանության ներկայացուցչությունը։

Լուգաշովիցայի օդանավակայանից պատգամավորությունը ավտոմեքենաներով գնաց

---

1. Սույն թվի հուլիսի 1—2-ին Չեխոսլովակիայի Լուգաշովիցա ամառանոցում տեղի ունեցավ քրիստոնյա եկեղեցիների ներկայացուցիչների կոնֆերանսը, օրակարգ ունենալով՝ ա) քրիստոնյա հավատացյալների վերաբերմունքը սոցիալական արդարության հասարակության ստեղծման գործում և բ) քրիստոնյա եկեղեցիների խնդիրները խաղաղության համար մղվող պայքարում։

Կոնֆերանսին մասնակցում էին 300 պատգամավոր աշխարհի գանազան մասերից։ Սովետական Միության քրիստոնյա եկեղեցիներից մասնակցում էին Ռուսաց և Հայոց եկեղեցու պատգամավորությունները։ Ակնհայտորեն ամսագրի խմբագրությունն անհրաժեշտ է համարում ներկա համարում տեղավորել իր աշխատակցի թղթակցությունը Հայոց եկեղեցու պատգամավորության մասին՝ կապված կոնֆերանսի գործունեության հետ—ԽՄԲ.

Չեխոսլովակյան կառավարության ներկայացուցիչը ողջունում է Հայոց Եկեղեցու պատգամավորությանը

դեպի ամառանոցը՝ կոնֆերանսի գումարման վայրը։

Հայոց Եկեղեցու պատգամավորությունը Լուգաչովիցոյում կանգ առավ «Պալասս» կոչվող հյուրանոցում։ Պատգամավորությունն անմիջապես գնաց կոնֆերանսի դահլիճը, ուր, ինչպես պարզվեց, կոնֆերանսը քիչ առաջ արդեն սկսվել էր։ Կոնֆերանսին մասնակցում էին քրիստոնյա եկեղեցիների տարբեր դավանանքի պատկանող աշխի ընկնող եկեղեցականներ՝ Կրուտիցկի և Կոլոմենայի միտրոպոլիտ դոկտ. Նիկոլայը, Քենտերբրիի ավագերեց Ջոնսոնը, Մադյարի Բերեցկի եպիսկոպոսը, ռումինական Պաուլեսկու եպիսկոպոսը, բուլղարական միտրոպոլիտ Կիրիլը և ուրիշները։

Կոնֆերանսի նախագահ էր ընտրված Չեխոսլովակիայի Առողջապահության մինիստր Ի. Պլոյդարը (Կաթոլիկ եկեղեցու քահանա)։ Հայոց Եկեղեցու պատգամավորության դահլիճ մտած ժամանակ կոնֆերանսի նախագահը ընդհատեց նիստը և հայտարարեց նրա ժամանման մասին։ Կոնֆերանսի պատգամավորությունը, հոտրնկայու, ծափահարություններով դիմավորեց Հայոց Եկեղեցու պատգամավորությանը։ Պատգամավորության ղեկավար Ռուբեն Արքեպիսկոպոսին տեղ հատկացվեց կոնֆերանսի նախագահության կազմում։

Այդ օրը, ողջույններից հետո, կոնֆերանսում դրված էր, հիմնականում, մեկ զեկուցում— դոկտոր Ա. Գորակի զեկուցումը՝ «Քրիստոնյաների վերաբերմունքը սոցիալական արդարացի հասարակության կառուցման ջանքերում» թեմայով։ Զեկուցողը նշեց, որ քրիստոնյաները ակտիվ մասնակցություն պիտի ունենան սոցիալիզմի կառուցման գործում, որովհետև սոցիալիզմը վերացնում է դարավոր անարդարությունը, վերացնում է տնտեսական ճգնաժամերը և լուսավոր ուղի հարթում ապագա մարդկության համար։

Զեկույցման կապակցությամբ ելույթ ունեցան բազմաթիվ պատգամավորներ, որոնք բոլորն էլ գտան քրիստոնյաների ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը նոր

Չեխոսլովակիայի Առողջապահության մինիստր Պլոյզար
Քահանան, որը ղեկավարեց կոնֆերանսը

հասարակության ստեղծման գործում, որը լիովին համապատասխանում է քրիստոնեության հիմնական սկզբունքներին։

Ելույթներն այդ օրը շարունակվեցին ճաշից հետո մինչև ուշ երեկոյան։

Հաջորդ օրը, հուլիսի 2-ին, լսվեց Չեխոսլովակյան եկեղեցու եպիսկոպոս դոկտոր Միլոսլավ Նովակի զեկուցումը՝ «Խաղաղության պաշտպանության համաշխարհային կոմիտեն և եկեղեցու դերը նրա մեջ» թեմայով։ Զեկուցողը բազմաթիվ մեջբերումներ անելով ավետարաններից, ցույց տվեց, որ աշխարհի վրա խաղաղություն հաստատելու հիմնական սկզբունքը բխում է քրիստոնեությունից, ուստի և քրիստոնյաներն այժմ ակտիվ մասնակցություն պիտի ցուցաբերեն խաղաղությունը պաշտպանելու գործում։

Զեկուցման կապակցությամբ բացված վիճաբանություններին մասնակցեցին բոլոր եկեղեցիների ներկայացուցիչները, որոնց թվում Հայոց եկեղեցու պատգամավորությունից ամենապատիվ Ռուբեն Արքեպիսկոպոսը, որի ելույթը ընդունվեց ծափահարություններով։

Խաղաղության պաշտպանության առթիվ կոնֆերանսում բացված վիճաբանությունները շարունակվեցին ճաշից հետո և վերջացան բանաձևի ընդունմամբ, որին պատգամավորները քվեարկեցին միաձայնությամբ։

Կոնֆերանսը ընդունեց բոլոր քրիստոնեական եկեղեցիներին ուղղված կոչ։

Այդ կոչը և Չեխոսլովակիայի կառավարությանը ուղղված ողջույնի հեռագրեր ընդունվելուց հետո, կոնֆերանսը փակվեց։

տանից, Քենտերբրիի ավագերեց դոկտ Հ. Ջոնսոնը և ուրիշներ։ Մանիֆեստացիայում եզրափակիչ խոսք ասաց մինիստր Պլոյդաբը։

Ժողովուրդը ցնծությամբ և ծափահարու-



Միտրոպոլիտ Նիկոլայ և կոնֆերանսի նախագահության մի քանի անդամներ ողջունում են կոնֆերանսի մասնակիցներին

Հաջորդ օրը, հուլիսի 3-ին, Հայոց Եկեղեցու պատգամավորությունը մասնակցեց Վելիգրադ քաղաքում տեղի ունեցող մեծ մանիֆեստացիային խաղաղության պաշտպանության համար։ Մանիֆեստացիային, ըստ թերթերում եղած հաղորդագրության, մասնակցում էին ավելի քան 140,000 հոգի։ Այդ օրը Վելիգրադում տոնվում է տեղի քրիստոնյա առաջին քարոզիչների՝ Կիրիլի և Մեթոդիայի հիշատակը։

Մանիֆեստացիայում ելույթ ունեցան տեղացի և հյուր մի շարք հռետորներ, որոնց թվում՝ Չեխոսլովակիայի Մինիստրների Սովետի նախագահ Ա. Զապոտոցկին, Մինիստրների Սովետի փոխնախագահ Զ. Ֆերլինգերը, Միտրոպոլիտ Նիկոլայը՝ Պրավոսլավ Եկեղեցու կողմից, Ա. Լոմպարտին Լեհասթյունների ներսից էր ընդունում հռետորների խոսքերը խաղաղության վստահելի հենարան հանդիսացող ՍՍՌՄ-ի և նրա հանճարեղ առաջնորդ Ի. Վ. Ստալինի մասին։ Հաճախ կարելի էր լսել ժողովրդի լոզունգները ռիթմով ծափահարության հետ.

«Ամ ժիզ սվատի մեր» («Կեցցե՞ սրբազան խաղաղությունը»)։

«Ամ ժիզ Սովետսկի Սոյուզ» («Կեցցե՞ Սովետական Միությունը»)։

«Ամ ժիզ տովարիշշ Ստալին» («Կեցցե՞ ընկեր Ստալինը»)։

Ի դեպ, հռետորներից պ. Ֆերլինգերը, խոսելով Լուգաշովիցոյի կոնֆերանսի և նրան մասնակցող արտասահմանի պատգամավորությունների մասին, ջերմ խոսքերով հիշեցրեց Սովետական Միությունից ե-

կած Ռուսական եկեղեցու պատգամավորությունը միտրոպոլիտ Նիկոլայի և Հայոց Եկեղեցու պատգամավորությունը Ռուբեն Արքեպիսկոպոսի գլխավորությամբ, որը ժողովուրդն ընդունեց լուռն ծափահարություններով։

Մանիֆեստացիան վերջանալուց հետո Հայոց Եկեղեցու պատգամավորությունը ավտոմոբիլներով եկավ Պրագա և կանգ առավ «Արկրոն» հյուրանոցում։

Հուլիսի 4-ին Հայոց Եկեղեցու պատգամավորությունը հրավիրված էր և մասնակցեց Պրագայից 60—70 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Կոզելո Գրադկա կոչվող վայրում (Տափորի մոտ) տեղի ունեցող մանիֆեստացիային, որը նվիրված էր Յան Հուսի (Հուսական շարժման ղեկավարի) հիշատակին։ (Յան Հուսը 15-րդ դարի աչքի ընկնող անձնավորություններից մեկն է Չեխիայում։ Նա Պրագայի կաթոլիկ շրջանից հալածվելով, այստեղ է տեղավորվել և քարոզել իր բոցաշունչ գաղափարները հավատքի և սոցիալական արդարության մասին)։

Հուսի հիշատակին նվիրված այս մանիֆեստացիային մասնակցում էին հսկայական բազմություն և Լուգաչովիցցի կոնֆերանսին մասնակցող դրսից եկած բոլոր պատգամավորները։ Մանիֆեստացիային մասնակցում էր Չեխոսլովակիայի Ազգային ժողովի նախագահ Ս. Իոնը։ Նյուքեներ ունեցան մի շարք անձինք, որոնց թվում պ. Իոնը, միտրոպոլիտ Նիկոլայը, Զոնսոնը, Չեխոսլովակիայի գործարանների քանվորներ և այլն։ Մանիֆեստացիան փակվեց եպիսկոպոս Նովակի առաջարկած բանաձևի ընդունմամբ և Չեխոսլովակյան և ՍՍՌՄ հիմների կատարումով։

Հուլիսի 5-ին Հայոց Եկեղեցու պատգամավորությունը այցելեց Պրագայի հիշարժան վայրերը՝ Կարլոսյան քարի կամուրջը, Պրագայի աշխարհահռչակ բերդը և պալատները, Վիտայի ընաշխարհիկ տաճարը, Աղդային թատրոնը, Վացլավսկու հուշարձանը և բազմաթիվ այլ վայրեր։

Հայոց Եկեղեցու պատգամավորությունն այցելեց նաև Պրաժոսլավ Եկեղեցին ու գերմանական ֆաշիստների դեմ մղվող կռվի ժամանակ ընկած կարմիր բանակայիններ ի վրա կանգնեցված հուշարձանը։ Սրբազանը հոգոց ասաց ընկած հերոսների հիշատակին։

Հաջորդ օրը, երեկոյան, Պրագայում գտնվող Լուգաչովիցցի հյուր պատգամավորները հրավիրված էին Ճաշկերույթի Չեխոսլովակյան կառավարության կողմից։ Հրավիրված հյուրերի շարքումն էր նաև Հայոց Եկեղեցու պատգամավորությունը։ Չեխոսլովակյան կառավարության կողմից ներկա էին Մինիստրների սովետի նախագահի տեղակալ պ. Ֆերդինդերը, մինիստր Պլոյդար քահանան և մի շարք այլ մինիստրներ։

Ճաշկերույթի ժամանակ շնորհակալական ճառեր ասացին մի շարք պատգամավորներ, որոնց թվում և Հայոց Եկեղեցու պատգամավորությունը։ Հայոց Եկեղեցու պատգամավորության շնորհակալական խոսքում ասվում էր հետևյալը. «Ցնայած մեր պատգամավորությունը երկար ժամանակ չէ, որ գտնվում է ձեր գեղեցիկ երկրում, բայց նա հարուստ տպավորություններով է վերադառնում։ Մեզ վրա առանձնապես հաճելի տպավորություն են թողել կոնֆերանսում չեխական եկեղեցիների պատգամավորների ելույթները՝ ձեզ մոտ տեղի ունեցող տնտեսական ու կուլտուրական տեղաշարժերի մասին և ի սրտե ուրախանում ենք ձեր առաջադիմության համար։ Ցնայած մենք եկել ենք շատ հեռվից,— հեռավոր Կովկասից,— սակայն մեզ շատ մոտ ենք զգում չեխոսլովակյան ժողովրդին։ Հարց է առաջանում— ի՞նչ է մեզ մոտեցնողը։ —Այն արյունը, որ մեր ժողովուրդները թափել են միասին ընդհանուր թշնամու՝ ֆաշիզմի դեմ։ Մեզ մոտեցնում են նաև ներկայումս մեր համատեղ ջանքերը՝ պայքարելու մարդկության նոր թշնամիների— պատերազմի նոր հրձիգների դեմ։ Թույլ տվեցեք մեր պատգամավորության անունից շնորհավորություն հայտնել չեխոսլովակյան ժողովրդին և նրա սիրելի առաջնորդ Կլեմենտ Գոտվալդին, մեզ ցույց տրված բացառիկ հյուրասիրության համար։

Հաջորդ օրը, հուլիսի 7-ին, Հայոց Եկեղեցու պատգամավորությունը Լեհաստանի վրայով վերադարձավ դեպի էջմիածին՝ լավագույն տպավորություններ քիրելով Լուգաչովիցցի այդ կոնֆերանսից, ուր առաջին անգամ քրիստոնյա եկեղեցիների ներկայացուցիչները իրենց հաստատակամ խոսքն ասացին իսաղաղության համար, որը աշխարհի աշխատավոր բոլոր ժողովուրդների միասի իղձն է։

ԹՈՂԹԱԿԻՑ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՆՐԱ ՄԵՋ

(ՉԵԽՈՍԼՈՎԱԿՅԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏ. ՄԻԼՈՍԼԱՎ ՆՈՎԱԿԻ ՃԱՌԸ 1950 ԹՎԻ ՀՈՒՆԻՍԻ 2-ԻՆ ԼՈՒԳԱՅՈՎԻՑՈՅՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ)

ՀԱՐԳԵԼԻ ՈԱՐԵԿԱՄՆԵ՛Ր, ԵՂԲԱՅՐՆԵ՛Ր ԵՎ ՔՈՒՅՐԵ՛Ր.

Մենք, Չեխոսլովակիայի բոլոր քրիստոնեական եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներս, արտասահմանից եկած մեր սիրելի հյուրերի հետ միասին, առաջին անգամ հավաքվում ենք բարեկամության և եղբայրության մթնոլորտում որպես քրիստոնյա եղբայրներ և քույրեր։ Այս բոլորովին ինչ որ մի նոր բան է։ Այս պատմական մի իրադարձություն է, որը երբևէ կդիտվի որպես բեկման կետ մեր փոխհարաբերությունների մեջ։ Ի՞նչն է պատճառ հանդիսացել, որ մենք տոգորված ենք վստահությամբ իրար նկատմամբ, միահոգի և համագործակցության պատրաստ նստած ենք այստեղ կողք կողքի։ Ի՞նչն է դրդել մեզ դեն նետել փոխադարձ պայքարը և միավորել մեր ուժերը։— Ամենից առաջ, նոր պատերազմի չարագուշակ մղձավանջը և միլիոնավոր մարդկանց կոչը պայքարելու խաղաղության համար։ Այո՛, երրորդ համաշխարհային պատերազմը սպառնում է մեր կրոնական աշխատանքին, մեր բարոյական և հոգեկան շինարարությանը։ Նույնիսկ Քրիստոնեության գոյությունը վտանգի մեջ է։ Մենք մեզ հաշիվ ենք տալիս, որ Աստված մեզ հնարավորություն է ավել ապրել և աշխատել ռևոլյուցիոն ժամանակ, որպեսզի փորձարկի մեր հավատքն այն ըստ պետին, երբ աշխարհը կանգնած է երկու ճանապարհների խաչաձևման վրա, մեկը՝ որ տանում է դեպի մինչև այժմ չտեսնված ավերվում, ինչ մյուսը՝ խորտակում։ Կարծես մեզ՝ քահանաներիս, հենց այսօրվա համար են տրված Երկրորդ Օրինաց գրքի հետևյալ խոսքերը. «Զկեանս եւ զմահ ետու առաջի երեսաց ձերոց, զօրհնութիւն եւ զանէծս. եւ ընտրեա զկեանս, զի կեցցես դու եւ զաւակ քո» (I, 19)։

Սակայն, եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք արդյոք կանգնա՞ծ ենք այստեղ բարձր գլխով և հոգեկան ուրախ բավականությամբ։ Կարո՞ղ ենք արդյոք ասել, որ մենք մեր եկեղեցիներում արել ենք այն ամենը, ինչ կարելի է և պիտի արվի սպառնացող կատաստրոֆան կանխելու համար։ Մենք, քրիստոնյանե՞րս, մենք, քահանանե՞րս ենք արդյոք, որ սկսեցինք այդ հսկայական պայքարը ընդհանուր խաղաղության պահպանման համար, որը ներկա ժամանակում, այնպիսի հաջողությամբ առաջ է տարվում խաղաղասեր ողջ մարդկության կողմից։ Կամ մեր խիղճը արդյո՞ք այնքան զգայուն հանդիսացավ և մեր սիրտը բավականաչափ կորովի, որպեսզի կրի Քրիստոսի ավետարանին ծառայելու բոլոր այս հետևությունները։ Մենք պետք է համեստությամբ ընդունենք, որ մենք առաջիներ չէինք, և որ հաղթողների պսակը այս անգամ մեզ չի պատկանում։ Ընդունե՛նք մեր սխալը և ուղղե՛նք մեր գլացումը։

Միանգամայն բնական է, որ մենք բոլորս խաղաղություն ենք ուզում։ Մենք աղոթում ենք խաղաղության համար։ Շատերը ենթադրում են, որ այդ բավական է։ Ո՛չ, բավական չէ։ Այսօր քիչ է միայն խաղաղության ծարավելը, խաղաղության համար աղոթելը։ Մենք, քրիստոնեական ժեռերի սպասարկուներս, պիտի լծվենք այդ պայքարին առաջին հերթին ու մեր բոլոր ուժերով և ունակություններով։ Այն ամենը, ինչ մենք արել ենք պատերազմի դեմ և խաղաղության պաշտպանության համար, չափազանց քիչ է, ուստի և մենք,— մեծ մասամբ ոչ այնքան հասակավորներս,—վարձ ժամանակում ապրեցինք երկու համաշխարհային պատերազմներ, անլուր թշվառություններ։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, բոլոր ոչ կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչները հավաքվեցին Ստոկհոլմում, և, զղջալով, ընդունեցին որ քրիստոնյա եկեղեցիների վրա քիչ չի ծանրանում պատերազմի հանցանքի բաժինը։ Նրանք ցուցեցին իրենց տները հաստատուն որոշումներով՝ որ մարդիությունն այլևս այդքան ցած չի իջնի, և որ բոլոր վեճերը կլուծվեն միջազգային բարեկամական համաձայնությամբ։

Երկրորդ, անուղղելի, ավելի սարսափելի պատերազմից հետո, քրիստոնեական եկեղեցիները մինչև այժմ պարզ և անվերապահ չեն արտահայտվել, որ իրենք կանգնած են խաղաղության կողմը։ Եվ, այնուամենայնիվ, այս անգամ մենք հարկադրված ենք ընդունել մեր թուլությունը, ընդունել, որ ոմանք բախտախաղի վրա են դրել կողմնա-

մենք, քահանանե՞րս ենք արդյոք, որ սկսեցինք այդ հսկայական պայքարը ընդհանուր խաղաղության պահպանման համար, որը ներկա ժամանակում, այնպիսի հաջողությամբ առաջ է տարվում խաղաղասեր ողջ մարդկության կողմից։ Կամ մեր խիղճը արդյո՞ք այնքան զգայուն հանդիսացավ և մեր սիրտը բավականաչափ կորովի, որպեսզի կրի Քրիստոսի ավետարանին ծառայելու բոլոր այս հետևությունները։ Մենք պետք է համեստությամբ ընդունենք, որ մենք առաջիներ չէինք, և որ հաղթողների պսակը այս անգամ մեզ չի պատկանում։ Ընդունե՛նք մեր սխալը և ուղղե՛նք մեր գլացումը։

Միանգամայն բնական է, որ մենք բոլորս խաղաղություն ենք ուզում։ Մենք աղոթում ենք խաղաղության համար։ Շատերը ենթադրում են, որ այդ բավական է։ Ո՛չ, բավական չէ։ Այսօր քիչ է միայն խաղաղության ծարավելը, խաղաղության համար աղոթելը։ Մենք, քրիստոնեական ժեռերի սպասարկուներս, պիտի լծվենք այդ պայքարին առաջին հերթին ու մեր բոլոր ուժերով և ունակություններով։ Այն ամենը, ինչ մենք արել ենք պատերազմի դեմ և խաղաղության պաշտպանության համար, չափազանց քիչ է, ուստի և մենք,— մեծ մասամբ ոչ այնքան հասակավորներս,—վարձ ժամանակում ապրեցինք երկու համաշխարհային պատերազմներ, անլուր թշվառություններ։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, բոլոր ոչ կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչները հավաքվեցին Ստոկհոլմում, և, զղջալով, ընդունեցին որ քրիստոնյա եկեղեցիների վրա քիչ չի ծանրանում պատերազմի հանցանքի բաժինը։ Նրանք ցուցեցին իրենց տները հաստատուն որոշումներով՝ որ մարդիությունն այլևս այդքան ցած չի իջնի, և որ բոլոր վեճերը կլուծվեն միջազգային բարեկամական համաձայնությամբ։

Երկրորդ, անուղղելի, ավելի սարսափելի պատերազմից հետո, քրիստոնեական եկեղեցիները մինչև այժմ պարզ և անվերապահ չեն արտահայտվել, որ իրենք կանգնած են խաղաղության կողմը։ Եվ, այնուամենայնիվ, այս անգամ մենք հարկադրված ենք ընդունել մեր թուլությունը, ընդունել, որ ոմանք բախտախաղի վրա են դրել կողմնա-

կի քաղաքական կարգի շահերը։ Վերհիշենք երկրորդ համաշխարհային պատերազմի տխրալի արդյունքները. ավելի քան 32 միլիոն մարդ փճացավ մարտադաշտերում, 26 միլիոն մարդ սպանվեց մասսայական կոտորածով և համակենտրոնացման ճամբարներում, 15-ից մինչև 20 միլիոն կանայք, երեխաներ և ծերունիներ ոչնչացան ռմբակոծության ժամանակ, իսկ 29 միլիոն մարդ դուրս եկավ պատերազմից հաշմանդամ և աշխատանքի անընդունակ վիճակում (ըստ «Ռեվյու ինտերնասիոնալ դե սիանս դիպլոմատիկի)։ Մենք չենք համարձակվի թույլ տալ, որ նրանց մանը իզուր կորչի։ ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ԷԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ԿՐՈՒՄ։ Մի՛ վախենամ ԺԱՄԱՆԱԿԻՆ մերկացել նոր պատերազմի հրձիգներին։ Ես ասում եմ ժամանակին, որովհետև ուշ է կուվել պատերազմի դեմ, երբ նա արդեն սկսվել է։

Այդ անել դժվար չէ։ Պատերազմի կողմնակիցները իրենք իրենց բացահայտում են, չնայած այն բանին, որ օգտվում են նողկալի ցինիզմով, կամ, ճիշտ արտահայտված,

Եպիսկոպոս գերապատիվ դոկտոր Նովակ

չարաշահում են այնպիսի խոսքեր, ինչպես՝ «քրիստոնեական հավատ», «ազատություն» և այլն։ Կազմվել է երկու ճակատ։ Կողմերից մեկը բազմաթիվ անդամներ արտահայտել է իր կամքը. ամենեղծ համագործակցությամբ, առաջարկություն է արված զինվածության կրճատման մասին, գործուն միջազգային հսկողության մասին։— Այդ Սովետական Միությունն է, որ արտահայտել է իր ազատ ժողովուրդների ցանկությունը, այն ժողովուրդների, որոնք ծարավի են խաղաղության, որոնք մշակում են երկարամյա ծրա-

դրեր իրենց երկրի բնության վերափոխման համար, օգտագործելով այդ հսկայական խնդիրների իրագործման համար նաև նոր, ամենահզոր, ատոմային էներգիան։

Բարի կամքի ցուցարերումը մերժեց մյուս կողմը, մյուս ճակատը, որին ղեկավարում է Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Այնտեղ, ընդհակառակը, ստեղծվում է ռազմական հիստերիայի անտանելի մթնոլորտ և դիվային զինվածություն, նպատակադրված նևով աշակցում են ռեներվերի սառը պատերազմին, որն ուղղված է ընդդեմ մարդկության և առաջադիմության։ ԱՄՆը ոչնչացրեց այն բոլոր հույսերը, որոնք դրվում էին Միավորված Ազգերի Կազմակերպության վրա, որին վեր է ածել իր քաղաքականության հլու գործիքի։ Բացի այդ, Միավորված Ազգերի Կազմակերպությունից դուրս և նրա դեմ Միացյալ Նահանգների կողմից ստեղծվեցին ռազմական պատրաստության երկու այլն՝ Մարշալի պլանը և Ատլանտյան պակտը։ Բավական էր միայն կարճ ժամանակ նրանց գոյության համար, որպեսզի դառը հեգնանքի վեր ածվի զուգակցվող նրա գովազդը։ Առաջին հերթին, ուր խոսք է լինում «եվրոպական երկրների օգնության» մասին, նա, ըստ էության, միայն ուժեղացրեց արևմտաեվրոպական երկրների կախվածությունը Միացյալ Նահանգներից և օգնեց սերջիններին երկրորդ դեպքում, խոսքը վերաբերվում է, իբր թե, «պաշտպանողական» ծրագրին, որը հայտարարված է փարիսեցիական լոզունգով՝ «Կառուցե՛նք աշխարհը»։ Սովետական կառավարությունը Ատլանտյան պակտի հայտարարությունից անմիջապես հետո ապացուցեց, որ այդ պակտը ագրեսիվ բնույթ ունի և նրա նպատակն է անգլո-ամերիկյան գերիշխանությունը հիմնել ամբողջ աշխարհի վրա։

Պատերազմի հրձիգները չեն խորշում ոչ մի միջոցից։ Նրանք սպառնում են ատոմային և ջրածնային ռումբերով, բակտերիոլոգիական պատերազմով և նոր, ավելի սարսափելի զենքի տեսակներով։ Նրանք պատերազմը համարում են մարդկանց աճը երկրի վրա կարգավորող մի լծակ, որովհետև մարդկանց թիվը չափազանց մեծ է, ուստի և անհրաժեշտ է կրճատել երկրագնդի բնակչության քանակը։ Հրամայեցեք նորմալ մարդ համարել ինչ որ Գեներալ Շասինի, որը գրել է. «Մինչև այժմ պատերազմը վատ միջոց էր մարդկանց ոչնչացման համար։ Երկրագնդի բնակչությունը իսպառ չի դադարում աճից։ Ըստ որում, աճում է չափազանց անհանգստացնող չափերով։ Ուստի և անչափ ձեռնտու է հայտնագործել այնպիսի ռազմական մի միջոց, որով սպանվեն մարդիկ, բայց վնաս չպատճառվի շենքերին։ Այդպիսի միջոց է հանդիսանում ռադիոակտիվ ամպը։ Այժմ այդ միջոցը դեռ չի մշակված, սակայն լուրջ զննության նյութ է հանդիսանում» («Թրվյու դը լա դիֆանս նասիոնալ»)։

Ուստի և զարմանալի չէ, որ նման մարդիկ ձեռք են առնում բոլոր տեսակի միջոցները, որպեսզի համաձայնություն չկայացվի։ Վարձու մամուլի և արևմտյան երկրների ռադիոյի կեղծիքի և զրպարտության անընդհատ հոսանքի ճանապարհով, անվստահության և Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների նկատմամբ ատելություն քորքորելու ճանապարհով, մարդկանց էգոիստական բնազդները խրախուսելու ճանապարհով, և խաղաղության կողմնակիցների հետևողներին գազանային հետապնդման ճանապարհով, նրանք փորձում են խափանել իրենց երկրների և գաղութների միլիոնների առաջընթացը դեպի ազատություն։ Միացյալ Նահանգներում և Արևմտյան Եվրոպայի երկրներում առաջադիմական պոետները, գրողները, պիոներները, պրոֆեսորները, ժուռնալիստները ղբրկվում են աշխատանքից և դատի են տրվում իրենց աշխարհայացքի համար։ Այսպես, ամերիկացիների հրամանով հեռացվեց ատոմային էներգիայի ուսումնասիրության ֆրանսիական հանձնախմբի պաշտոնյա հանճարեղ մի գիտնական, որն ուսումնասիրում էր ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման հնարավորությունները՝ Ֆրեդերիկ Ժոլիո-Կյուրին, Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի նախագահը։

Համաշխարհային շարժումը խաղաղության պաշտպանության համար, դժբախտաբար, ունի նաև իր առաջին նահատակները։ Աշխարհը երբե՛ք չի մոռանա ֆրանսիական այն բանվորին, որը խաղաղության պաշտպանությանը կոչ անող պլակատը փակցնելու ժամանակ գնդակահարվեց։ Աշխարհը երբե՛ք չի մոռանա գործադուլների ժամանակ սպանվածներին, չի մոռանա երիտասարդ ֆրանսիացի աղջկան, որը պատկեց երկաթգծի վրա, որպեսզի կանգնեցնի տանկերով բեռնավորված գնացքը, չի մոռանա համատեղ գործունեությունը հարյուր հազարավոր նավահանգստային բանվորների, որոնք հրաժարվեցին բեռնաթափել ռազմանյութերը։

Այո՛, գոյություն ունեն երկու կողմ, ավելին՝ երկու աշխարհներ։ Բայց ո՛չ Արևելք և Արևմուտք, ինչպես աշխատում են մեզ հավատացնել նոր պատերազմի հրահրող-

ներ։ Գոյություն ունի՝ ազատության և արդարության աշխարհ բոլորի համար, մարդկային երջանկության աշխարհ, իսկ մյուս կողմից՝ ատելության, ճնշման և բռնության, ռասայական դեկրիմինացիայի աշխարհ, կրոնների և պատերազմի աշխարհ, իմպերիալիզմի աշխարհ։

Իսկ ամերիկյան ցայլը հագել է գառան մորթի, որպեսզի իրեն չճանաչեն։ Նա պրոդուցում է մեր ամենամեծ սրբությունը, նա պղծում է Քրիստոսի և կրոնի հեղինակությունը։ Ահա թե ինչո՛ւ այդքան խայտառակ է Վատիկանի քաղաքականությունը, որը վարկաբեկում է քրիստոնեությունը, ընդունելով Ուոլ-ստրիտի հրամանները։ Վատիկանի միաբանության Ս. Աթոռի ուխտի հայտնի հրահանգները տնտեսական համագործակցության վերաբերյալ, չարաշահում են հավատացյալների ձգտումը դեպի Քրիստոսի միասնական Եկեղեցին՝ մոբիլիզացիայի ենթարկելու քաղաքական և ռազմական ուժերը ընդդեմ Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների։ Վարկաբեկումը առաջավոր մարդկանց, որոնց գլխավորում են կոմունիստները, Կաթոլիկ եկեղեցական հիերարխիայի խարդավանքի շարունակությունն է հանդիսանում։

Նույնիսկ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, ինչպես այդպիսին, վճռականապես չմտնեցնց պատերազմի և նրա նախապատրաստման դեմ, չնայած նրա գործադիր կոմիտեն դատապարտեց ջրածնային ռումբը որպես մոլագարություն, որպես հանցանք Աստծու առջև։

Իմպերիալիստները գիտեն մեր ուժը, նրանք վախենում են բոլոր խաղաղ ուժերի մի ընդհանուր հզոր ճամբարում միավորվելուց։ Այդ պատճառով, նրանք աշխատում են բաժանել մեզ, մատնացույց անելով իգնոլոգիական այն տարբերությունը, որը գոյություն ունի Քրիստոնեության և գիտական Սոցիալիզմի միջև, որպեսզի դրանով խանգարեն հավատացյալների ընտրությունը։ Նրանց ջանքերն իզուր են, որովհետև մենք, նախ՝ վաղուց արդեն համոզվել ենք որ քրիստոնեական ձեռնարկությունները սոցիալիզմի երկրներում օգտվում են ավելի մեծ ազատությամբ, քան կապիտալիստական երկրներում։ Այստեղ քրիստոնեական քարոզիչները կախված չեն աշխատավորների շահագործողների գործունեությունից, որոնք կարողանում են նույնիսկ օգտագործել կրոնի շահերը իրենց գրպանի համար, այլ, հակառակը, նրանց ամբողջովին պաշտպանում է ժողովուրդը, առանձնապես երբ նրանք, իրենց աշխատանքում, հավատարիմ են կանգնած ավետարանի սկզբունքին։ Ուստի և մեզ չի վախեցնում սոցիալիզմի աշխարհի կրոնի նկատմամբ թշնամական վերաբերմունքի մասին եղած խոսակցությունը։ Երկրորդ, մենք համոզվել ենք, որ սոցիալիզմի երկրներում, աշխատավորության և ղեկավար պաշտոններում աշխատողների մեջ չնայած կան մարդիկ, որ անհավատ են, սակայն մեզ նրանց միացնում է բարոյական արժեքների նկատմամբ մեր ունեցած անկեղծ ձգտումը, որը ո՛չ միայն չի հակասում ավետարանի արժեքներին, այլև, ընդհակառակը, սիրողջովին նույնանում է նրա հետ։ Մեր ուսմունքն ասում է, որ մենք պիտի արժեքավորենք մարդկանց ո՛չ թե իրենց գաղափարներով, այլ իրենց վարմունքով. «Զի որ առնիցի զկամս հօր իմոյ որ յերկինսն է՝ նա է եղբայր և քոյր և մայրս» (Մատթեոս, ԺԲ, 50)։ Եվ մի այլ տեղում ասում է. «ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա» (Մատթեոս, է, 16)։ Մենք կույրեր չենք և տեսնում ենք մի կողմից պատերազմի հրձիգների աշխատանքի պտուղները, որոնք միշտ էլ վատ պտուղներ կլինեն, ինչպես էլ նրանք աշխատեն «քրիստոնեական կուլտուրայի պաշտպանների» դիմակ հագնել, իսկ մյուս կողմից՝ աշխարհի արդարության պտուղները, որոնք այնքա՜ն արագ հասունանում են Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունում և ժողովրդական դեմոկրատիայի երկրներում։

Բարեկամնե՛ր, մենք թույլ չենք տա, որ մեր նկատմամբ ևս վերաբերվեն կշտամբանքով, որոնց մասին մի ժամանակ հավատացյալներին արդարացի ասաց Ֆրանսիշեկ Կսավեր Շալդան։

ԳՆՐԱՇՆՈՐՀ Տ. ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԸ

ՍԻՐԵԼԻ՝ ԵՂՐԱՐՔ Ի ՔՐԻՍՏՈՍ.

Հայաստանյայց Ս. եկեղեցին Արևելքի հնագույն եկեղեցիներից մեկն է։ Նա իր սկիզբն է առնում Թադեոս և Բարթողիմեոս առաքյալներից, որոնք Հայաստան եկան, առաջին քրիստոնյա համայնքները կազմակերպեցին և արյունով էլ նահատակվեցին։ Քրիստոնեական սրբազան գաղափարները հող գտան Հայաստանում։ Նուռով քրիստոնյա համայնքները արագ շատացան և հզորացան, որ 303 թվին քրիստոնեությունը պաշտոնական կրոն ճանաչվեց Հայաստանում։

Հայաստանյայց Ս. եկեղեցին, իր գոյության ողջ ընթացքում, հավատարիմ Փրկչի ավետարանած «խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ» սկզբունքին, խաղաղություն է քարոզել և խաղաղություն պաշտպանել։ Հայոց եկեղեցիներում, պատարագի սրբազան արարողության ամենախորհրդավոր րոպեներին, դպիրները երգով դիմում են Սուրբ Երրորդությանը հետևյալ սրտառուչ աղերսով. «Ամենասուրբ Երրորդութիւն, տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն, եկեղեցեաց հաստատութիւն, ազգիս Հայոց սէր, միութիւն»։

Քրիստոսավանդ խաղաղության այս վեհ գաղափարը ամենանվիրական գաղափարն է հանդիսացել աշխատասեր հայ ժողովրդի համար։ Գուցե ո՛չ մի ժողովուրդ այնքան չի զգացել խաղաղության կենսական արժեքը, որքան հայ ժողովուրդը, որովհետև ո՛չ մեկը այնքան չի ճաշակել պատերազմի դառը պտուղները, որքան բազմաչարչար հայ ժողովուրդը։ Ո՞ւմ հայտնի չեն այն ավերներն ու կոտորածները, որոնք կատարվել են պարսից, սելջուկների, մոնղոլների, տաճիկների և այլ բռնակալների կողմից Հայաստանում։ Ո՞ւմ հայտնի չեն տաճկական հրեշային կոտորածները և բռնությունները արևմտյան սլավոնական և հայ, վրացի և մի շարք այլ ժողովուրդների նկատմամբ։

19-րդ դարի հայ կաթողիկոսներից մեկը՝ Մկրտիչ Ա. Խրիմյանը, դառնացած Տաճկաստանում հայերի գազանային կոտորածից, իր նամակներից մեկում ուղղված հայտնի ծովանկարիչ Այվազովսկուն, խնդրում է նկարել Հայաստանի դաշտերը և լեռները կարմիր դույնով որպես արյան մի ծով և իրեն այդ արյան ծովու մեջ նստած՝ տարաբախտ հայ ժողովրդի թշվառությունը սգացյալի վիճակում։

Հայ եկեղեցին, որը անխզելիորեն կապված է իր ժողովրդի հետ, հավասար չափով բաժանել է իր ժողովրդին բաժին ընկած դառնությունը։

Դարերի տառապանքներից հետո, վերջապես հայ ժողովրդի համար ծագեց ազատության արշալույսը։ 1920 թվին Սովետական լուսաշող արևի տակ ստեղծվեց հայ պետականությունը։ Երբեմն տառապած և բազմաթիվ փորձություններով անցած հայ ժողովուրդը լիաթոք շնչեց և ինչպես մի փյունիկ մոխիրների տակից վեր հառնեց, սկիզբ դնելով իր նոր վերածնդին։ Սովետական կենսաբեր իրականության մեջ երեք տասնյակ տարիների ընթացքում աշխատասեր հայ ժողովուրդը, ռուս մեծ և ազնիվ ժողովրդի և ՍՍՌՄ եղբայրակից մյուս ժողովուրդների գործուն աջակցությամբ, Մեծ Ստալինի ղեկավարությամբ, երբեմնի ավերակ և հետամնաց իր Հայրենիքը դարձրեց արդյունաբերական զարգացած երկիր։

Սովետական ազատ իրականության մեջ, ուր սահմանադրությամբ ապահովված է խղճի և հավատքի կատարյալ ազատությունը, իր ազատությունը ձեռք բերեց նաև Հայոց եկեղեցին։ Վերջ գտավ ցարական պրոկուրորների ապօրինի միջամտությունը հայոց եկեղեցական գործերում։ Հայ եկեղեցին սկսեց իր անկախ և ինքնուրույն գործունեությունը։

Հայ եկեղեցին այժմ գտնվում է իր զարթոնքի շրջանում։ Ամենայն Հայոց Հայրապետության գահի վրա՝ այժմ բազմած է Նորին Ս. Օծություն Գեորգ Զ. հայրենասեր և իմաստուն կաթողիկոսը, որը Հայ եկեղեցու տարեգրության մեջ եզակի դեմքերից մեկն է։ Հայաստանյայց եկեղեցու ներկա պատգամավորությունը, որը ուղարկված է ծերունազարդ Հայրապետի հրամանով, հանձնարարություն ունի այստեղ, եկեղեցական այս վեհաժողովում ի լուր ամբողջ աշխարհին հայտարարելու, որ նա անվերապահ խաղաղության փողմնակից է։

Մերունազարդ Հայրապետը միայն վրշտացած է, որ քրիստոնյա եկեղեցիները ներկա շրջանում հասարակության առջևից չեն քայլում խաղաղություն քարոզելու ու հաստատելու գործում և հառաջապահի դեր չունեն։ Քրիսաոնյա եկեղեցիների պետերն խղճի վրա ծանրացել է համաշխարհային երկու պատերազմների ընթացքում բազմամիլիոն զոհերի արյունը և տառապանքը, որովհետև քրիստոնյա եկեղեցիների պետերը ոչինչ, համարյա ոչինչ չարեցին կանխելու երկու մարդախոշոր պատերազմները։

Եվ այժմ, միջազգային փոխհարաբերությունների այս վերին աստիճանի սրված իրադրության մեջ, իր պատրաստվում է մարդկությունը նոր պատերազմը, քրիստոնեական չէ՞ ն եկեղեցին, որը խաղաղություն քարոզելու և ստեղծելու համար չունի իր որոշակի մուծումները։ Քրիստոնեական չէ՞ ն եկեղեցին, որը ծառայության մեջ է գանվում պատերազմի հրձիգների մոտ և սատանայական թելադրանքով կռիվ ու կոտորած է քարոզում։

Վեհափառ Հայրապետը հանձնարարել է մեզ իր օրհնությունը և գոհունակությունը հայտնել ներկա կոնֆերանսի կազմակերպիչներին, որոնք վերին աստիճանի շնորհակալ գործ են ձեռնարկել՝ հիմք դնելով պատերազմի դեմ քրիստոնյա եկեղեցիների համերաշխ համագործակցությանը։ Այդ մեծ պատիվ է բերում չեխոսլովակյան ժողովրդին և հոգևորականությանը։

Թույլ տվեք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ Արևելքի հնագույն ներկայացուցիչներից մեկի անունով հավատել ժողովականներին, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին արել է և կանի իր կարելին՝ խաղաղության սկզբունքը քարոզելու և պաշպանելու համար։

Աղոթենք առ Աստված՝ խաղաղության կողմնակիցների գործի հաջողության համար։

Թող Աստված քրիստոնեական զուր և խիզճ արթնացնի այն եկեղեցիների բարձրաստիճան պետերի հոգում, որոնք մոլորված են քրիստոնեական եղբայրության սրբազան ճանապարհներից և պատերազմ են հրահրում։

Թող Աստված հաստատուն պահի խաղաղությունը, ամեն։



Լուգաչովիցոյի ամառանոցի այն շենքը, որի դահլիճում տեղի ունեցավ կոնֆերանսը

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻ ՆԱՄԱԿԸ ԼՈՒԳԱԶՈՎԻՑՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ

Ողջունում եմ քրիստոնյա դավանանքների հոգևորականներին, որոնք հավաքվել են կոնֆերանսի՝ խաղաղության պաշտպանության համար: Ցեմ կասկածում, որ Աստված կօրհնի մեր բարի նախաձեռնությունը, և որ նա չերմ արձագանքներ կգտնի բոլոր հավատացեալ ազնիվ մարդկանց սրտերում: Պատահական չէ, որ բոլոր երկրների հավատացյալ մարդիկ, անկախ դավանանքի տարբերությունից, լարել են ամեն ինչ՝ պայքարելու իրենց ընտանեկան խաղաղ օջախի պահպանման համար, վաղվա վստահության համար, ստեղծագործական աշխատանքի անվտանգության, աշխատանքի հանգստության և ուրախության համար,— որովհետև մեր ամեն մեկին այդպես է բելադրում մեր կրոնական խիղճը: Ձեզ ոգեշնչում է արդարացի և տեսական խաղաղության ստեղծման գործում անհրաժեշտ լուսան միակամ մուծելու ձգտումը, մի ձրգտում՝ որը բխում է հավատացյալներին դեպի աստվածային բարձր գիտակցություն առաջնորդելու, և, առաջին հերթին, սիրո մասին Քրիստոսի պատվիրանը կատարելու պարտականությունից:

Թո՛ղ աստվածային օրհնությունը լինի Ձեր ներկա աշխատանքների վրա ի բարություն ժողովուրդների, որոնք ծարավի են խաղաղության՝ ապահովելու նրանց խաղաղ ստեղծագործական աշխատանքը:

Թո՛ղ գործուն և բեղուն լինի Ձեր աշխատանքը, և թո՛ղ ամրապնդի Ձեզ երկնային Տերը իր աստվածային բարության ուժով:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ՝

Ա Լ Ե Ք Ս Ի

Մոսկվա, հուլիս, 1950 թ.

ՔԵՆՏԵՐԲՐԻԻ ԱՎԱԳԵՐԵՑ ԴՈԿՏՈՐ ՀՈՒԼԻԵՏՏ ՋՈՆՍՈՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Ես ողջույններ եմ բերում Ձեզ Անգլիայի խաղաղասերների կողմից և կամենում եմ փոքրիկ ելույթ ունենալ Անգլիական պատգամավորության ղեկավարի իմ պաշտոնով.

Ի՞նչ կարգի խաղաղություն ենք ուզում տեսնել մենք, քրիստոնյա հոգևորականներս: Որպեսզի պատասխանենք այս հարցին, հիշենք ամենից առաջ, որ Քրիստոսը մշտապես իր մտքում ուներ մարդկանց փոխհարաբերության խնդիրները, առանձնապես այն խնդիրները, որոնք կապված են մարդկանց անմիջական կարիքներին՝ ուտելու, հագնվելու, առողջության և դաստիարակության: Հիշենք նրա խոսքերը՝ ես սոված էի, ես հիվանդ էի, ես մերկ էի: Ի՞նչ էք արել դուք սրանց նկատմամբ: Այդպիսի հարց ձեզ կառաջադրվի Վերջին դատաստանում:

Հիշենք նույնպես, որ Քրիստոսը մերժեց կեղծ և կեղծավոր սերը դեպի ինքը: Ահա թե ինչո՛ւ նա կարող էր ասել. «Ոչ ամեն մեկը, որ կարող է ինձ ասել՝ Տէր, կմտնի երկնային թագավորությունը, այլ միայն նա, ով կկատարի իմ Հոր կամքը, որ երկնքումն է»: Այդ դեպքում, այն հասարակությունը, որին մենք նպատակում ենք, անկասկած, կլինի այնպիսի հասարակություն, որ հոգատարություն կցուցաբերի դեպի իր քաղաքացիներից ամեն մեկի և ամբողջի կարիքները: Այդ կլինի այնպիսի հասարակություն, որը տալիս է ամեն մեկին ըստ իր կարիքի: Այդ մեզ ուսուցանում է Հիսուսի առակը խաղողի այգու աշխատողների մասին: Այդ կլինի այնպիսի մի հասարակություն, ուր ամեն մի քաղաքացի հասարակության բարորության համար կաշխատի

ըստ իր ունակությունների։ Մենք, քրիստոնյա հոգևորականներս, արժե որ այդ կապակցությամբ հիշենք տաղանդի առակը։ Այդպիսի հասարակությունը կստեղծի իդեալական հիմք խաղաղության և վերջնական հիմք՝ տեսական խաղաղության համար։ Այդ կլինի այնպիսի հասարակություն, ուր շեշտը կդրվի աշխատանքի վրա և ոչ շահույթի, մի հասարակություն, ուր ապահովությունը կվերացվի և վերահսկողություն կսահմանվի շահույթի վրա։

Այսպիսով, քրիստոնյա հոգևորականների խնդիրը երկակի է՝ մասնակցել սոցիալիստական արդարացի պետության ստեղծմանը, որը հավատում է բոլոր գույնի բարի կամք ունեցող մարդկանց եղբայրությանը և կոլեկտիվ անվտանգությանը՝ և, ապա, կոչ անել այդ հասարակության ամեն մի անհատին՝ բարձրացնելու իր անձնական պատասխանատվությունը՝ հասարակության աշխատանքն ավելի արդյունավորելու համար, որովհետև բարոյական և հաջող տնտեսական հիմքի վրա կառուցված տնտեսությունը և պլանավորումը պահանջում է ազնիվ մարդիկ՝ լավ տնտեսությունը լավ գործի մեջ մարմնավորելու համար։ Բարեհաջող պլանավորված շենքը իր կառուցվածքի համար կարիք ունի աղյուսների, այլապես ողջ շենքը կարող է քանդվել։ Սոցիալիստական հասարակությունը կդատվի ըստ իր պտուղների։ Կկարողանա՞ արդյոք նա ստեղծել բավականաչափ դրական այն ամենը, ինչ անհրաժեշտ է իր քաղաքացիներին։ Կարողանա՞ արդյոք նա ստեղծել հարատև կյանք բոլորի համար— Ահա այդ չափով էլ կչափվի Ձեր և իմ հասարակությունը։

Վերջապես, խնդրում եմ Ձեզ, նկատի ունենաք, որ «Ռիբիբիան և «Ամերիկայի ձայնս («Տը վոյս օֆ Ամերիկա») ռադիոհայտնները չեն արտահայտում իրենց երկրների հասարակ մարդկանց հայացքները, հայացքներն այն միլիոնների, որոնք իրենց ստորագրություններն են դնում խաղաղության կոչի տակ։ Իսկապես, այդ բոլորի մասին Ձեզ չի ասի ո՛չ Ամերիկայի ձայնը, ո՛չ Վատիկանը և ո՛չ Ռիբիբիան։

Դեպի Ավստրալիայի և Կանադայի խորհրդային քաղաքները ճեռնարկած իմ ճանապարհորդության ընթացքում ես խոսել եմ հսկայական քանակությամբ մարդկանց հետ և պետք է ասեմ, որ բոլորը չերմորեն էին արտահայտվում խաղաղության և ժողովուրդների մեջ համաձայնություն ստեղծելու մասին։

Այդ՝ արշավի մեջ գտնվող համաշխարհային բանակն է, ներշնչված անդորրության և խաղաղության տնորինողից։

Այդ այն բանակն է, որի մեջ կոչվում են բոլոր քրիստոնյա եկեղեցիների և դավանանքների ղեկավար ներկայացուցիչները։

Այդ, իմ հասկացողությամբ, Աստծու կոչն է իր ծառաներին ներկա ժամանակաշրջանում։

ԼՈՒԳԱՋՈՎԻՑՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱՁԵՎԸ

Մենք, Չեխոսլովակիայի բոլոր քրիստոնյա եկեղեցիների և համայնքների հոգևորականներս, որ հավաքվել ենք Լուգաջովիցոյի խաղաղության կոնֆերանսը, համերաշխաբար հայտարարում ենք, որ մենք անվերապահ հարում ենք խաղաղության գաղափարին և ընթանում ենք նրանց հետ, ովքեր սոցիալիզմի ոգով փառուցում են նոր և սոցիալական արդարացի կարգեր աշխարհում։

Մենք մերժում ենք պատերազմը հանուն մարդկության, հանուն քրիստոնեական սիրո և հանուն այն ամենի, ինչ որ երբեք սուրբ է եղել մարդկանց համար։ Մենք մերժում ենք պատերազմը, որովհետև չկա ո՛չ մի բան այնքան ավելի հեռու քրիստոնեական գաղափարից, որքան մասսայական սպանությունը և ավերածությունը, որոնք բերում է իր հետ պատերազմը։

Այդ պատճառով, մենք մեծագույն վերդիվմունքով դատապարտում ենք Արևմտյան երկրների անասելի ծրագրերը, որոնք իրենց աշխատում են սահման դնել սոցիալիստական գաղափարի հաղթական ընթացքի առջև, ցանկանում են աշխարհը քաշել նոր ռազմական աղետի մեջ։ Մարդկային սեռի այդ թշնամիները, որպեսզի կարողանան երկարաձգել շահագործողական անբարոյական սիստեմը, սկսել են նողկալի ձևով վախեցնել խաղաղասեր մարդկությանը ատոմային ռումբով։ Սակայն նրանք արժանի պատասխան ստացան մարդկության մեծամասնության կողմից, որը արտահայտվեց մինչև այժմ պատմության մեջ նմանը չեղած անհամար մարդկանց ստորագրումով խաղաղության պաշտպանության համաշխարհային վեհաժողովի Մշտական կոմիտեի բանաձևին, որոնք և դատապարտեցին ա-

ատոմային էներգիան ի չարը գործադրելու ձգտումները՝ մասսայական ավերածության և սպանության համար։

Մենք ուրախությամբ նշում ենք, որ հարյուր միլիոնավոր քրիստոնյաներ աշխարհի բոլոր մասերում իրենց ստորագրություններով ձեռնարկել են խաղաղության պաշտպանության շարժումը, որը զգալի չափով ամրացնում է աշխարհի խաղաղասեր ուժերը։

Մենք քրիստոնյաներ ենք, մենք մունետիկներ ենք Քրիստոսի սիրո և խաղաղության ուսմունքի, ուստի և մենք խաղաղության կողմնակից ենք։ Ուստի և մենք հպարտությամբ մեզ հայտարարում ենք խաղաղության բանակի անդամներ, որը ղեկավարվում է Սովետական Միության կողմից։ Մեր պարտականությունն է հանդիսանում ո՛չ միայն աղոթել խաղաղության համար, այլ և աշխատել նրա համար։ Եվ եթե աշխարհում կան մարդիկ, որոնք թեև ոչ քրիստոնեական պատվիրաններով, բայց սոցիալական և համամարդկային իդեալներով ձգտում են խաղաղություն հիմնել աշխարհի վրա, մենք թույլ չենք տա մեզ հեռանալ այդ աշխատանքից. մենք պիտի գնանք դեպի այն նպատակը, ինչ ընդհանուր է բոլորի համար։

Մենք համոզված ենք, որ մենք լավագույն կերպով կծառայենք խաղաղության գաղափարին, եթե համաձայն ստեղծագործական կամքի, բոլոր եկեղեցական գործունեությամբ օգնենք մեր ժողովրդի ձգտումներին սոցիալիզմի կառուցման գործում, որի հաղթանակը հանդիսանում է նույնպես երաշխիք մարդկանց միջև տևական խաղաղության։

Քրիստոնեությունը և Սոցիալիզմը— դրանք այնպիսի ուղղություններ են, որոնք իրար չեն բացառում, և փոխադարձ հարգանքի դեպքում ընդունակ են ստեղծել իդեալական պայմաններ երկրի վրա և նախադրյալներ երջանիկ ու հավիտենական կյանքի համար բոլոր նրանց համար, ովքեր այս կյանքում բարություն են արել և իրագործել արդարության և սիրո այն սկզբունքները, որոնք ընդհանուր են քրիստոնեության և սոցիալիզմի համար։

Ուստի և մեզ ավելի վիշտ և նողկանք է պատճառում Վատիկանի և կաթոլիկ բարձր նվիրապետության բռնած դիրքը, որոնք, ի հակադրություն հավատացյալների բացահայտ մեծամասնության, աջակցում են խաղաղության դեմ ուղղված իմպերիալիզմի ուժերին։ Խորապես ընկած են նրանք, ովքեր նախանձախնդրություն պիտի ցուցաբերեին պահպանելու Քրիստոսի սիրո և խաղաղության ուսմունքը։ Ատելությամբ լցված դեպի աշխատավոր մարդկությունը, սարսափահար նոր արդար աշխարհի առջև, նրանք դառնում են համախոհը այն մարդկանց, ովքեր տանում են նոր սարսափելի հանցագործության հավասար բաժինը մարդկության առջև։

Մենք պիտի նույնպես մերժենք և այն ուղղությունները, որոնք կանգնած են ռեակցիայի և պատերազմի հրձիգների կողմը, որոնք եկեղեցիների Համաշխարհային խորհրդի մի մասն են կազմում, միավորելով որոշ ոչ կաթոլիկ եկեղեցիներ։

Մենք համաձայն չենք նրանց ձեռնարկների հետ և մերժում ենք այդ շրջանների հակախաղաղասիրական և հակասոցիալիստական քաղաքականությունը։

Հիշեցնում ենք ամբողջ աշխարհի քրիստոնյաներին և կրոնական բոլոր այն համայնքներին, որոնք ելնում են Քրիստոսի պատգամներից սիրո մասին, որ բոլոր նրանք հավասարաչափ պատասխանատու են խաղաղության կամ արյունահեղության համար, և որ խաղաղության պահպանումը կախված չէ միայն աղոթքից, այլ և այն գործից, որքան ակտիվ նրանք կպայքարեն ընդհանուր խաղաղության պահպանման համար, հարյուր միլիոնավոր մարդկանց կյանքի պահպանման համար մարդկության թշնամիների հրեշավոր ծրագրերից։

Մենք համոզված ենք, որ մեր ձայնը, ողջ աշխարհի խաղաղության կողմնակիցների ձայների հետ միասին, կզարթեցնի բոլոր քրիստոնյաների խիղճը և նրանք իրենց ակտիվ գործունեությամբ կապահովեն պատվավոր տեղ առաջադիմության, խաղաղության և սոցիալիզմի հաղթական ճակատում։

ԼՈՒԳԱԶՈՎԻՑՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԿՈՉԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ

Աշխարհի վրա նորից կախվել է պատերազմի սպառնալիքը։ Կապիտալիստները, իրենց եկամուտները պահպանելու և բազմապատկելու ապարդյուն ձգտումներով, ցանկանում են մարդկությունը քաշել նոր ռազմական ավերի մեջ։

Անխնա ճնշումով, իսկ ներկայումս բացահայտ ագրեսիայով, իմպերիալիստները իրենց ենթակա ժողովուրդներին կամենում են պահել ստրկության մեջ։ Ներկա ժամանակում, որը վճռական է հարյուր միլիոնավոր մարդկանց կյանքի համար, մենք կոչ ենք անում աշխարհի ողջ քրիստոնեության խղճին՝

Հանուն քրիստոնեական սիրո միավորել իրենց ուժերը բոլոր բարի կամք ունեցող մարդկանց հետ, որպեսզի ապահովվի խաղաղությունն ողջ աշխարհում։ Պաշտպանել ցանկ միակամ խաղաղության կողմնակիցների համաշխարհային վեհաժողովի Մշտական կոմիտեի Ստոկհոլմի դիմումը։

Չեխոսլովակիայի բոլոր քրիստոնյա եկեղեցիների հոգևորականությունը՝ հաստատապես կանգնել է կապիտալիստական երկրներում գտնվող իր լծակից այն եղբայրների կողմը, որոնք դժվարին պայմաններում պայքարում են խաղաղության համար, ինչ որ թելադրում է նրանց քրիստոնեական խիղճը։

Համաշխարհային քրիստոնեության բոլոր ուժերը դեպի խաղաղության պայքարը։

Քրիստոնյաների աշխատանքը՝ հանուն խաղաղության և խաղաղության պաշտպանների ընդհանուր ջանքերի, կոչնչացնի պատերազմի հրձիգների մութ դիտավորությունները։

ԼՈՒԳԱԶՈՎԻՑՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Պ. ՖԵՐԼԻՆԳԵՐԻՆ

Հեռանալով Չեխոսլովակիայից, մեր անկեղծ շնորհակալություններն ենք հայտնում Ձեզ՝ Լուգաշովիցյի օրերին մեզ ցույց տրված սիրալիր ընդունելության համար։ Ձեր սքանչելի երկրից մեր ստացած քաղցր հուշերն ու տպավորությունները հավերժորեն կմնան մեր հիշողության մեջ։

Լուգաշովիցյի կոնֆերանսը՝ քրիստոնյաների արդար խղճի ձայնն էր, որ միահորհուրդ և համարձակ հնչեց Ձեր ազատասեր երկրում։ Քրիստոնյա ազգային եկեղեցիների ներկայացուցիչները այստեղ միահամուռ և միաձայն իրենց կամքը հայտնեցին խաղաղության համար պայքարելու գործում։ Համագումարի ընդունած կոչը, որն ուղղված է աշխարհի բոլոր քրիստոնյա ժողովուրդներին և քրիստոնյա եկեղեցիների հոգևորականներին, տոգորված է քրիստոնեական սիրո և եղբայրության ջերմ զգացմունքներով։

Վերադառնալով Ս. Էջմիածին, մենք մեր ծերունազարդ Կաթողիկոսին պատմեցինք Ձեր ժողովրդի և հոգևորականության ցույց տված սիրալիր վերաբերմունքի մասին մեր նկատմամբ, որը և անհուն գոհունակություն պատճառեց նրան։

Կրկին անգամ շնորհակալություն Ձեզ, Ձեր կառավարությանը, հոգևոր դասին և ժողովրդին։ Աղոթում եմ առ Ամենաբարձրյալն Աստված, որ զորավիգ և աջակից լինի մեզ մեր արդար իղձերի իրականացման մեջ և խաղաղություն թագավորե աշխարհում։

Քրիստոնյա եկեղեցիների Լուգաշովիցյի կոնֆերանսի Հայաստանյայց եկեղեցու պատգամավորության նախագահ՝
ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Հ. ԱՐԱՄՅԱՆ

ԶՐՈՒՑՑ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Բոլոր նրանք, ովքեր 1945 թվականի ամռանը Սովետական Հայաստանի, Սովետական Միության և Սփյուռքի զանազան թեմերից եկել էին Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետության թափուր գահին համար գահակալ ընտրելու պաշտոնով, պաշտոնական ժողովներում և անպաշտոն հանդիպումների ընթացքին, մոտից ծանոթանալուց հետո Աղգընտիր Տեղակալի հմայքոտ անձնավորության և հայրենանվեր, ժողովրդանվեր բազմագուտ գործունեությանը հետ, կողմնորոշվեցին իսկույն և եթ. յուրաքանչյուր պատգամավոր՝ իր սրտի և խղճի խորքում որոշած էր արդեն իր ընտրելին— և այդ ընտրելին միևնույն անձնավորությունն էր բոլո՛ր սրտերում, բոլո՛ր խղճերում, բոլո՛ր գիտակցություններում։ Այսպես է, որ 111 պատգամավորների միաձայն հավանությամբ և միահամուռ կամքով ընտրվեց Գեր. Գեորգ Զյուրեքյան Արքեպիսկոպոսը—Գեորգ Զ. Հայրապետը։ Այսպիսի միաձայն և միահամուռ ընտրություն, ինչպես քանիցս նշվեց այն օրերին, աննախընթաց էր Հայոց Հայրապետական ընտրությունների տարեգրությանց մեջ։

Բոլոր պատգամավորները և հյուրերը,—որոնց թվում և այս տողերը գրողն էր,— վերադարձան իրենց տեղերը՝ հայրապետական ընտրության հարցին լավագույն լուծումը տված լինելու գոհունակությամբ առլցուն, համոզված, որ հանձին նորընտիր Վեհին, Հայոց ժողովուրդը կունենա իր հայրապետների երկարաձիգ շարքում ամենարնտիրներից, ամենամեծերից մեկը։ Բոլոր պատգամավորները վերադարձան իրենց տեղերը՝ «ոսկեվառ ակնկալություններ» փաթաթած Գեորգ Զ.ի անձնավորության հետ, ինչպես նշվում էր հայրապետական անդրանիկ կոնդակում։

Եվ Վեհափառի հետագա հինգ տարիների կեցվածքն ու գործունեությունը ցույց տվեցին, որ պատգամավորները լավագույն և ճշտագույն ներշնչումն էին ունեցել՝ և՛ իրենց ընտրության և՛ ընտրած անձնավորության հետ կապված «ոսկեվառ ակնկալություններ»ի մեջ։

Գեորգ Զ. Կաթողիկոսի գործունեության ամենափայլուն հանգրվանը, նրա կյանքի ամենաշքեղ կոթողը՝ ժամանակագրականորեն զետեղվում է իր ընտրությունից ոչ շատ ժամանակ առաջ.—ա՛յն հանդիպումը, որ նա ունեցավ ժողովուրդների հանճարեղ Առաջնորդ Ստալինի հետ Կրեմլում։

Բայց քիչ փայլուն չեն նաև նրա գործունեության հանգրվանները՝ և իր ընտրությունից հետո։

Զխոսենք Վեհափառի աչալուրջ հսկողության և սրտագին հոգատարության մասին՝ ինչ վերաբերում է Մայր-Աթոռի պայծառացման, Հոգևոր Շեմարանի պահպանման և զարգացման, «Էջմիածին» ամսագրի հրատարակման, թեմերին ցույց տրված ուղիղ և մշտարթուն ղեկավարության։ Դրանք, եթե հնարավոր է ասել՝ մենք-մասնագիտական պարտականություններ են, իր պաշտոնին սովորական և առօրյա կիրառումներ։

Ինչ որ Վեհ. Գեորգ Կաթողիկոսի ճշմարիտ փառքն է կազմում և նրա իսկական մեծությունը, դա այն փեղվածքն է, որ նա ունեցավ համազգային պատմական մեծ դեպքերի և շարժումների կապակցությամբ, համամարդկային մեծ երևույթների առնչությամբ։

Այդ հանդրվաններից, այդ կեցվածքներից հիշատակենք մի քանիսը միայն։

Երկրորդ համաշխարհային պատերազմի վաղորդայնին, երբ Հայկական դատը վերարծարծվեց, պատմական մնալու սահմանված է այն հուշագիրը, որ Վեհափառը այդ առթիվ ուղղեց երեք Մեծերի Արտաքին գործերի մինիստրներին, որոնք 1945 թվականի

դեկտեմբերի 16—26-ին գումարվել էին Մոսկվայում։

Հայկական արդար Դատի վերաբծարծման հետ նույն օրերին, և մասամբ դրան կապակցված, ծագեց Սփյուռքի հայերի Հայրենիք վերադարձի հարցը. սկսվեց արտասահմանյան հայերի Հայրենադարձության մեծ շարժումը։

Մի բոցաշունչ հայրենասեր, մի արծվի-հայաց անձնավորություն, ինչպիսին Ամենայն Հայոց Հայրապետն է, մի՞թե կարող էր անտարբեր հանդիսատես լինել նման պատմական մի մեծ շարժումի հանդեպ։ Ո՛չ իհարկե։ Եվ նա հե՛նց իր առաջին Ընդհանրական կոնդակում, որ ստացվեց արտասահման 1946 թվականի ամառնամուտին, դրում էր այնքան սրտառուչ կերպով.

«Պիտի տեսնե՞մ արդյոք օտարության մեջ ցան ու ցրիվ ընկած հայությունը համախմբված իր հայրենի երկրում՝ խորհրդային Հայաստանի իշխանության ներքո, որ այքս խաղաղ դոցեմ, հոգու և մարմնիս հանգիստ տամ և հայ ժողովրդի ողորմիսը լսեմ։

Ինչ վերաբերում է Հայրենադարձության մեծ շարժումին, Վեհափառը իր այս առաջին Ընդհանրական կոնդակի ակնարկությամբ չբավարարվեցավ, այլ հետագային հատուկ կոնդակներով, նամակներով և հեռագրերով ցույց տվեց, թե այս շարժումը ի՞նչքան մոտ է իր սրտին։

Վեհափառը, եթե լավ և հայրենասեր ՀԱՅ է և որպես այդպիսին չէր կարող անտարբեր հանդիսատես լինել հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված մեծ շարժումների, նա, դրա հետ զուգահեռ, լավ մարդ է, մարդասեր մարդ, և որպես այդպիսին, չէր կարող, իհարկե, անտարբեր մնալ համայն մարդկության ճակատագրի հետ կապ ունեցող մի շարժման հանդեպ, որ խաղաղության մեծ ու հարաճուն շարժումն է՝ ի հեճուկս պատերազմի հրձիգներին և «քաղաքակիրթ» պիտակ ունեցող մարդակերներին։

Եվ Վեհափառի համազգային և համամարդկային նշանակություն ունեցող ակնարկու մեկ կեցվածքն է արն պատմական դիմումը, որ նա արեց խաղաղության օգտին, Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսիի ու Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Կալիստրատի հետ միասին։

***

Վեհափառ Գեորգ Զ.-ի՝ այդ պայծառ հայրենասերի, խորաթափանց մտքի, լայնահայաց անձնավորության, արծվային հայացքով հայության բոլոր հորիզոնները զննող և Սփյուռքի բոլոր խնդիրներին և գործիչներին վերաբերմամբ զարմանալիորեն ճիշտ և լայն ճանաչում ունեցող Հովվապետի հետ զրույցը, հոգեկան և մտային ճշմարիտ հաճույք է ինձ համար։ Եվ առիթից առիթ բախտ եմ ունենում վայելելու այդ հաճույքը։

Էջմիածնի Վեհարանում, Ռուսաց Պատրիարքի և Վրաց Պատրիարք-Կաթողիկոսի Էջմիածին այցելությունից մեկ քանի օր հետո այցելում եմ Վեհափառին։

Ո՞վ կասեր, տեսնելով նրա ուղղորդ և պարթև հասակը, ուժեղ և առույգ կազմը, հանդիսավոր բայց աշխույժ շարժումները, և լսելով նրա խորը խմաստությամբ և զարմանալի ողջմտությամբ ու մարդկանց ու իրերի ճանաչողությամբ թաթավուն խոսքերը, որ գտնվում է ութսունների ամյա մի անձնավորության ներկայությանը։

Մերունազարդ, ծավալուն կենսափորձ ունեցող մարդու իմաստություն և երիտասարդական ավյուն և աշխույժ—ահա՝ ինչպիսին է մեր Հայրապետը։

Հյուրասիրվում ենք Հայրենի երկրի սքանչելահամ մրգերով՝ հենց Էջմիածնի սեփական այգիներից բերված, կարկանդակներով, սուրճով։ Եվ զրուցում ենք երկար՝ Հայրենի աշխարհում անդուլ և հարաճուն թափով տեղի ունեցող շինարարության մասին, կուլտուրական և տնտեսական կյանքի շարունակական վերելքի մասին, հայրենադարձ հայերի զանազան բնագավառներում իրագործած հաջողությունների մասին, նրանց տընտեսական-կենցաղային պայմանների հարաճուն բարելավման մասին, Սփյուռքի պանդուխտ հայերի անանխանձելի կացությանց և բոլորին Հայրենիքում մեկտեղելու ցանկալիության մասին։ Այս բոլորը շատ հետաքրքրական է և հաճելի։ Բայց այսօրվա իմ այցելությունը ունի հատուկ նպատակ։ Հայտնի է ինձ ներկա տարվա օգոստոսի 4—5-ին Վրաստանի մայրաքաղաքում, Հայոց հայրապետի, Համայն Ռուսաց Պատրիարքի և Վրաց Պատրիարք-Կաթողիկոսի խորհրդաժողովը, և նրանց միացյալ դիմումը՝ խաղաղության օգտին։ Գիտեմ, որ այդ դիմումը մամուլի միջոցով հանրային սեփականություն դարձավ։ Բայց ես ցանկանում եմ լսել Հայոց Ընդհանրական Հայրապետի կենդանի Պատգամը խաղաղության և Պատերազմի հարցի մասին, որը ներկա բոպեին

կրաղեցնում է ողջ մարդկությանը՝ որպես ամենահրատապ հարցը բոլոր հարցերի մեջ։

— Վեհափա՛ռ,— դիմում եմ Գեորգ Զ-ին,— չէ՞ իք ցանկանա Ձեր Պատգամն ասել Խաղաղության և Պատերազմի հարցի մասին, որպեսզի այն հասցնենք Սփյուռքի Ձեր հոգևոր զավակներին «Էջմիածին» ամսագրի միջոցով։ Մայր Հայրենիքի հայերը, որ ունեն ճշմարտացի և արդարակորով մամուլ և ռադիո, լուսաբանված են այդ հրատապ հարցում և կողմնորոշված. գիտեն, թե ո՛վքեր են պատերազմ ցանկանում և ի՞նչ դրդապատճառներով։ Նույն պարագայի մեջ չեն Սփյուռքի հայերը. նրանք կարող են զոհ դառնալ վաճառված մամուլի ստահոդ պրոպագանդային, և մոլորվել։ Գիտեմ, թե Ձեր խոսքը ի՞նչ հմայք ունի նրանց աչքին։ Կարող եք Ձեր Պատգամով օգնել նրանց կողմնորոշվելու։

— «Էջմիածին»ի շուտով լույս տեսնող համարում տպագրվում են նյութեր Թրիլիսիում տեղի ունեցած ժողովի մասին։ Դրանց ընթերցմամբ, Սփյուռքի մեր զավակները կիմանան, թե իրենց Հայրապետը ի՞նչ հայացքներ ունի Խաղաղության և Պատերազմի հարցում։ Այնուամենայնիվ, ավելորդ չեմ համարում մեկ անգամ էլ պարզել իմ հայացքները այդ հարցի մասին։ Խաղաղությունը այնպիսի ցանկալի և կենսական մի բան է, որի օգտին ի՞նչքան էլ խոսվի և գրվի, դեռ քիչ է. որի ամրակուռ հաստատման օգտին ի՞նչքան էլ պայքարենք, ավելորդ չէ՝ ինչքան ժամանակ գոյություն ունեն պատերազմ հրահրել ցանկացող անմարդկային ճիվաղներ...

Եվ Վեհափառը, որը գուցե չէր սպասում մեր կողմից նման մի դիմումի, մեկ բան ընդհատում է իր խոսքը, և մտածողության մեջ է ընկնում, շոյելով իր ալեփառ միրուքը։ Երևի, ամփոփում է իր մտքերը։

— Քրիստոնեությունը,— շարունակում է Վեհափառը՝ մի պահ լռելուց հետո,— կռվի և մահվան կրոն չէ, այլ խաղաղության և կյանքի։ Քրիստոնեական կրոնի Հիմնադրի ծննդի հետ՝ հնչում է և խաղաղության պատգամ. «...և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։ Ըստ Ավետարանի, այսպես են երգում հրեշտակները Քրիստոսի հրաշափառ Մանկան օրը։ Այդ խոսքերը կրկնվում են Մանկան տոնի մեր շարականների մեջ։ Ուրեմն, խաղաղությունը քրիստոնյա եկեղեցիների առաջին և ամենաէական պատգիրանն է։ Բայց միայն կրոնական տեսանկյունից չենք նայում հարցին։ Ի՞նչ կրոնական պատկանելիություն էլ ունենանք, ի՞նչ կրոնական համոզմունքների տեր էլ լինենք, ամեն բանից առաջ մարդ ենք, և որպես այդպիսին՝ չենք կարող բացասական վերաբերմունք չունենալ հանդեպ պատերազմին, որ մարդկության համար գոյություն ունեցող մեծագույն աղետն ու չարիքն է։ Խաղաղության պայմաններում, բնականոն պայմաններում, ի՞նչ ենք անում. գիտության տրամադրած բոլոր միջոցներով աշխատում ենք փրկել մարդկային կյանքեր, բուժել մարդկային վերքեր։ Իսկ ի՞նչ է ստացվում պատերազմի պայմաններում. տարիներով գուրգուրանքով մեծացրած երիտասարդության ծաղիկ կյանքը վտանգի ենք ենթարկում։ Սակայն պատերազմներում միայն ռազմիկ երիտասարդությունը չէ, որ զոհ է լինում, այլ և քաղաքային խաղաղ բնակչությունը՝ երեխաներ, կանայք, ծերուներ..., առանց հաշվելու շենքերի, կուլտուրական հիշատակարանների, ինչքերի հասցրված ավերածությունը։ Եվ ի՞նչու այս բոլոր աղետները— որպեսզի մի բուռ աշխարհակալների փառասիրական մոլուցքները և ուրիշ մի խումբ մարդկանց շահույթի կիրքը գոհացում գտնեն...։

Իսկ Խաղաղության առավելությունները ակներև են։ Խաղաղության պայմաններում, մարդկային կյանքի կորուստ չի լինում. մարդիկ աշխատում են և ստեղծագործում, աշխատում են երկար և երջանիկ ապրել, և այդ՝ յուրաքանչյուր մարդու բնական իրավունքն է։ Խաղաղության պայմաններում է, որ ստեղծվում են տնտեսական լավագույն կյանքի, կենսամակարդակի հարաճուն բարձրացման միջոցներ, ստեղծագործվում են արվեստի, գրականության հրաշակերտներ, հառաջադիմում է գիտությունը։ Կան պնդողներ, որ պատերազմը բարիք է, ինչպես, օրինակ ոմն գեներալ Շասինի...։ Բայց այդ պնդումը ամենալպիրշ ցինիզմն է, և ուրիշ ոչինչ։ Կան պնդողներ, որ պատերազմը առաջ է բերում առաջադիմություն, կատարելագործություն։ Իսկ ի՞նչ բնագավառում. զենքերի բնագավառում։ Այսինքն, կատարելագործվում են մահվան և քանդումների գործիքները։ Իսկ դա՝ չարիքի առաջադիմություն է հանդիսանում։ Ո՛չ. ինչ կողմից էլ քննենք, պատերազմը միայն և միայն չարիք է ծնում։

Խաղաղությունը միայն հնարավորություն է տալիս երջանիկ կյանքի, ստեղծագործական թափի, արվեստի հրաշալիքների գեղակերտումին։ Նայեցեք թեկուզ մեր, Հայոց պատմության։ Մեր արվեստի, շինարարության, գրականության կոթողները չե՞ն ստեղծվել այն ժամանակները, երբ մեր ժողովուրդը հարաբերաբար խաղաղ կյանք է ունեցել։ Իսկ սովետական շրջանի երիտասարդներին, ի՞նչու հառաջադիմեցինք այս աստիճան և ունեցանք մեծամեծ կենսագոր-

ծումներ բոլոր բնագավառներում։ Որովհետև վայելեցինք անընդմեջ խաղաղություն, եթե չհաշվենք Հայրենական պատերազմի շուրջ չորս տարիները։ Հասարակա-տնտեսական նոր հասարակակարգում, երբ մարդիկ խաղաղ կյանք ունեն, ընդունակ են հրաշքներ գործելու։

Ահա քրիստոնեական և մարդկային այս տեսանկյուններից ելնելով է, որ Ռուսաց Պատրիարք Ալեքսեյ և Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Կալիստրատ եղբայրակիցներիս հետ՝ Թբիլիսիից լսելի արեցինք մեր ձայնը՝ խաղաղության օգտին, և պատերազմի հրձիգների դեմ։ Այս անգամ, մեր կոչն ուղղված է բացառապես քրիստոնյա եկեղեցիներին։

Բայց միայն քրիստոնյաները չեն, որ խաղաղություն են ցանկանում։ Ստոկհոլմի Կոչը ցույց տվեց, որ խաղաղության վտղմանակից են բոլոր բարի կամեցողության տեր մարդիկ՝ բուդդայականներ, բրահմանականներ, իսլամներ, իսրայելացիներ և ուրիշներ։

Սովետական Միության սահմաններում գտնվող քրիստոնյա երեք ինքնուրույն եկեղեցիների՝ Ռուսաց Եկեղեցու, Հայոց Եկեղեցու և Վրաց Եկեղեցու պետերի ծանոթությունը և մերձեցումը սկսվեց 1948 թվին, երբ իմ եղբայրակից Վրաց Պատրիարք-Կաթողիկոսը և ես Մոսկվայում ներկա էինք Ռուսական Պրավոսլավ Եկեղեցու ինքնուրույնության 500-ամյակի հանդիսություններին։ Թբիլիսիի խորհրդաժողովը՝ ներկա տարվա օգոստոսին, և երկու Հովվապետների այցը Էջմիածին, հանդիսացան մեր մերձեցման և գործակցության հետագա հանգրվանները։ Ապագային, երեք եկեղեցիները, պահելով հանդերձ ծիսական-դավանական առանձնությունները, որոնք կազմում են յուրաքանչյուրի ինքնուրույնությունը, ավելի ևս սերտորեն կգործակցեն քրիստոնեական եղբայրակցության ոգով, և կպայքարեն խաղաղության օգտին աշխարհում, մնալով հավատարիմ իրենց կրոնական ըմբռնումներին և իրենց մարդկային խղճմտանքին։ Մեր ամենօրյա աղոթքն է, որ խաղաղություն թագավորեն աշխարհի վրա։ Մեծ գործ են կատարում խաղաղասերները, օրհնյալ լինեն նոքա։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՂՈՄՈՆ ՍՐԿ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

(Կոմիտաս)

ՇՆՈՐՀԱԼԻՆ՝

Գ.

ԿՐՈՆԱԿԱՆ ՎԵՃ ԱՍՈՐՈՑ ԵՎ ՀԱՅՈՑ ՄԵՋ 1134-ԻՆ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՆՏԻՈՔԻ 1139-ԻՆ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ 1140-ԻՆ ԼԱՏԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ. ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ 1139-ԻՆ. ՇՆՈՐՀԱԼՈՒ ԹՈՒՂԹԸ ԱՍՈՐԻՔԻ ՀԱՅ ՄՈԼՈՐՎԱԾՆԵՐԻՆ. ՊԱՊԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ. ԽԱՉԱԿԻՐՆԵՐ. ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԵՎ ՎԱՏԻԿԱՆԻ ՄԵՋ 1144-ԻՆ. ՍՈՐԱ ՀԵՏԵՎԱՆՔԸ. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ ՀՌՈՄԿԼԱՅՈՒՄ 1151-ԻՆ. ՇՆՈՐՀԱԼԻՆ ՄԻՋՆՈՐԴ ՕՇԻՆԻ ԵՎ ԹՈՐՈՍԻ ՄԵՋ 1165-ԻՆ

Գրիգոր Գ. և Ներսես Շնորհալի Պահլավունիների ժամանակ տեղի ունեցան հայոց և ասորոց մեջ մի քանի կրոնական հուզումներ դավանաբանական այլևայլ կետերի և ծիսակատարությանց վերաբերյալ։ Այս հուզումները սկիզբ առան նախ Կիլիկիայում հայոց և ասորոց մեջ, ապա, Ասորիքում՝ ասորոց և հայոց մեջ և նույնիսկ՝ հայոց միմյանց մեջ։

Հայերը վաղ ժամանակից արդեն հարաբերության մեջ էին Ասորիքի հետ, նախ՝ սահմանակից ազգ լինելու և ապա երկուսի քրիստոնեության առաքյալն էլ Թադեոս առաքյալը համարվելու պատճառով։ Հարաբերությունը բարեկամականի փոխվեցավ Քաղկեդոնի ժողովից հետո, 451-ին, թեև ոչ սերտ, ինչպես որ վերջերը նկատելի եղավ։

Մինչ հայերն ու ասորիք դեռ բարեկամական կապակցության մեջ էին, Գրիգոր Գ. Պահլավունու ժամանակ տեղի ունեցավ մի դեպք, որ երկար վիճաբանության և պառակտման առիթ եղավ։ Այն ժամանակները մի արվածք երևեցավ, որի մեջ պախարակում է հեղինակը ասորոց ծեսերը...։

Այս գրվածքը բավական դայրացրեց ասորոց, որոնք ոորա հեղինակն էին համարում Գրիգոր Գ. Պահլավունուն։ Շուտով մի ուրիշ արվածք էլ երևեցավ Դրազարկ վանքի նորակազմ և հռչակավոր մատենադարանի գրքերի միջից։ Այս գրվածքի հեղինակն է Փարսման ավանի բնակիչ, հայերեն իմացող ասորի վանականի մեկը, որ հիշյալ գրվածքը տարել խառնել էր Դրազարկի մատենադարանի գրքերին։ Հայերն էլ այս լսելով, բարկացան ասորոց վերա և սկսվեց վիճաբանությունը։ Ասորի վանահոր գրվածքն էլ հայոց ծեսերն էր արհամարհում, մանավանդ անասլակ գինով պատարագելը։

Գրիգոր Գ.ի ականջին հասավ այս լուրը։ Երկպառակության և վիճաբանության դռները փակելու համար, նա մի խոհեմ ճանապարհ բռնեց, որով հաճելի եղավ և՛ հայոց և՛ ասորոց. երկու գրվածքն էլ հրապարակական հրո ճարակին մատնեց և 1134 թվին վիճաբանության բոցը շիջավ։

Պապերի հետ առաջին հարաբերությունը սկսվեց Անտիոքի Ռատուլֆ եպիսկոպոսի պատճառով գումարած ժողովից, ուր հրավիրվեցան նույնպես Գրիգոր Գ. և Ներսես Շնորհալի Պահլավունիները։ Ժողովի վերջանալուց հետո, Գրիգոր Գ. կաթողիկոսը Հռոմի պապական դեսպանի հետ ուղեվորվեցավ Երուսաղեմ՝ տնորինական տեղերին երկրպագելու, իսկ Ներսես Շնորհալին վերադարձավ Ծով դղյակը՝ վերահաստատ լինելու Հայրապետանոցի գործերին։

Պապի դեսպանը հարմար առիթ համարելով և Հայրապետի ներկայությունից օգուտ քաղելով, Երուսաղեմի Ս. Սիոն եկեղեցում

1. Նարոնակված նախորդ համարից և վերջ։

1140 թվին ժողով է գումարում, ուր, ի միջի այլոց, խոսք է բացվում Հայաստանյայց Եկեղեցու դավանական, արարողական և ազգային ծեսերի մասին։ Գրիգոր Պահլավունին այս բոլորին հարմար ու պատշաճ պատասխանելով, բացատրություն է տալի՝ հմտությամբ և իմաստությամբ ցուցնելով լատին կղերի Հայաստանյայց Եկեղեցու ուղղափառության մասին հայտնած տարակուսանքները։ Բայց սոքա ո՛չ թե համոզվում են, այլ համակիր են ձևանում, որ սիրո և միության պատրվակը հրապույր դնելով և բարեկամական մտերմություն հաստատելով, դյուրին կարող լինին թակարդել։ Այս նպատակով իսկ, պապի դեսպանը Գրիգոր Գ. Պահլավունու բարեմասնությունները հայտնեց Հռոմ։ Ինոկենտիոս Բ. պապը հայրապետական քող և դավազան ուղարկեց Գրիգոր Գ.ին։

Գրիգոր Գ.ին Անտիոքում եղած ժամանակ, 1139-ի սկզբին, մի նվիրակություն եկավ Աղվանից երկրից, որ կաթողիկոս ձեռնադրե իրանց մեկին։ Պատրիարքության գլուխն էր անցել Թոքակերի որդի կոչված Գրիգոր վարդապետը և խնդրեցին, որ Գագիկ պատանուն կաթողիկոս օծե։ Աղվանից կաթողիկոսները, Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսից սկսած, ձեռնադրվում էին հայոց կաթողիկոսներից։ Համարյա Գրիգորիս Գ. Պահլավունու կաթողիկոսության սկզբին Ստեփանոս անունով մի կաթողիկոս ունեին Աղվանները, որը մեկ և կես տարի կաթողիկոսությունից հետո, վախճանվում է, Աթոռը, եպիսկոպոսի պակասությունից, անհաջորդ է մնում ութ տարի։

Գրիգորիս Գ. Պահլավունին նոցա խնդիրքը կատարում է, բայց ոչ անձամբ, քանի որ ինքն էլ Անտիոքումն էր, այլ Գրիգոր վարդապետին եպիսկոպոս է ձեռնադրում Անտիոքում։ Ցուր դրան եպիսկոպոս Սահակին էլ հանձնարարում է, որ Գագիկին ձեռնադրե։ Ժողովվում են բավական թվով եպիսկոպոսներ և շքեղ հանդեսով Գագիկ պատանուն հայրապետ են օծում Աղվանից երկրի համար, անունը Գրիգորիս փոխելով։ Վարդավառի տոնին նորընտիր կաթողիկոսը մյուռոն է օրհնում և երկու եպիսկոպոս ձեռնադրում մեծ շքով։

Երբ Գրիգոր Գ. Պահլավունին Երուսաղեմից վերադարձավ, մի գրությամբ տեղեկություն ստացավ Թլխուրան ավանի Առյուծ իշխանից՝ Միջագետքի Ամայք և Շորոթան դավառի հայ և ասորի ազգաբնակության մեջ եղած ինչ ինչ մոլորությունների մասին։ Այս լսելով, Ներսես Շնորհալուն գրել տվեց մի հանդիմանական, խրատական և վարդապետական թուղթ, կշտամբեց, հերքելով երկու կողմի մոլորություններն էլ...[2]։

Այս մոլորությունները միայն ժողովրդի մեջ չէին, այլ քահանայական դասն էլ մասնակից էր, որը շատ էր հեռացել և շեղվել ճշմարտից և խորտակիչ վիճաբանություններով մոլոր մտքերի դուռն բացել ժողովրդի առաջ...։

Ասորիքի կրոնական հուզման ժամանակ պապերն էլ Հռոմից սկսեցին աչք ձգել Արևելքի վերա. նոքա հարմար առիթ էին սպասում յուրյանց եկեղեցուն տիեզերական նշանակություն և զորություն տալու։ Այս առիթը շուտով մտածեցին։

Սինչ Գրիգոր և Ներսես Շնորհալի Պահլավունիներն երկրի, եկեղեցու և ժողովրդի լարոյական և կրոնական կրթության գործ էին հոգ տանում, սկսվեց Արևելյան արշավանքը, որ «Խաչակրաց արշավանք» անունով է հայտնի, որովհետև զինվորները հագուստի վերա կարմիր խաչ էին կրում։ Այս արշավանքը իբր թե նպատակ ուներ յուր առաջ Ս. Երկրի՝ Երուսաղեմի ազատությունը, որ քրիստոնյաների համար նվիրական և ցանկալի ձեռնարկություն էր։ Բայց այս ազատությունը մի տեսակ քող էր, որով պապերը քողարկում էին յուրյանց գերիշխանությունը Արևելյան քրիստոնյաների վերա տարածելու։ Խաչակրաց արշավանքը այս նպատակին հարմար զենք էր, որով մի կողմից յուրյանց միտումները, հանուն ընդհանուր քրիստոնյաների միության իրագործման հետամուտ էին լինում, իսկ մյուս կողմից, հանուն ազատության Ս. Երկրի, եվրոպական պետություններին էին զրաղեցնում։ Հայոց քաղաքական իշխանությունն էլ ոչ մի բան չխանգեց։ Սինչև իսկ ուղղեցույց տված, նոցա ճանապարհները ցույց տվեց և չզլացավ տրամադրելու ուտեստն անդամ։ Ենամության մեջ մտան նոքա խաչակիր իշխանների հետ, հուսալով, որ կարող են ամրանալ յուրյանց թագավորական գահին, որն անդադար հոնաց և մահմեդականների արշավանքի և ավարի ասպարեզ էր դարձել. այս պատճառով էլ խաչակիրներին նոքա նայում էին իբրև ազատարարների վերա։ Ահա այսպես է սկսում հայոց հայրապետի և պապի հարաբերությունը։

Կիլիկիան անդադար շփոթության մեջ էր. մի կողմից Իկոնիայի սելջուկները, մյուս կողմից հույները հանգիստ չէին տալիս հայերին, հնարավորություն չէին տալիս բա-

2. Այս ուշեհան կրոնական վեճերին վերաբերող հատվածները տեղ տեղ կրճատված են կախման կետերով։—ԽՄԲ.

զաքակնապես աճել։ Այս պատճառով 1144-ին նվիրակություն է գնում պապին, որի հետևանքի մասին հայտնի բան չկա, միայն թե պապը լինելով խաչակրաց արշավանքի բուն պատճառը, նորանից օգնություն էին սպասում մեր թագավորները։ Բայց բոլորովին իզուր են անցնում թե՛ իրանց տված նպաստը խաչակիր զորքին, թե՛ հույսը. նվիրակները ձեռնդատարկ վերադառնում են, երկար ժամանակ այս ու այն կողմում թափառելուց հետո։ Բայց միևնույն ժամանակ, պապերն էլ յուրյանց հույսն էին խորտակված տեսնում. ինչ նպատակով որ նոքա քարոզել էին խաչակրությունը, նույն նպատակին չէր ծառայում. պատերազմներն ավելի շահագիտական ուղղություն են ունենում՝ գաղթականության ճանապարհ բանալով դեպի Արևելք։

Կաթողիկոսական Աթոռը բավական ժամանակից ի վեր Մեծ Հայաստանից դուրս էր գտնվում։ Գրիգոր Գ. Պահլավունին տեսնելով Անի մայրաքաղաքի պայծառությունը, միտք հղացավ Աթոռը տեղափոխել այնտեղ. նույն քաղաքի իշխան Ապուլ-Սուարը ամիրայի սիրտը շահելով և նախապես հավանությունը ստանալով։

Անեցիք Հայրապետի դիտավորությունը չէին իմանում և մի կերպ քրիստոնյա պետության իշխանության տակ մտնելու հնարք էին որոնում, ուստի և ծածուկ բանակցությամբ դաշնակցեցին վրաց Դավիթ թագավորի հետ։ Սա հանկարծ եկավ պաշարեց քաղաքը. բնակիչները Ամիրային և ընտանիքին հանձնեցին նորան, որոնք Վրաստանի բանտում մեռան։ Այսպիսով, քաղաքը վրաց ձեռքն անցավ։ Դավիթ թագավորը մեռավ և Ապուլ-Սուարի երեց որդին՝ Փաուլն Անին պաշարեց։ Երկար ընդդիմադրությունից հետո, սովից ստիպված, քաղաքն անձնատուր եղավ և իր արարքի համար տուժեց։

Գրիգոր Գ. այս լսեց, սաստիկ զայրացավ Անեցվոց վրա և մտադրությունը խափանված տեսավ։ Անիից հույսը կտրած, դարձյալ օտար երկրում մերձակա տեղերում ամուր և հարմար տեղ սկսեց որոնել՝ Կաթողիկոսարանն այնտեղ տեղափոխելու և արտաքին հարստահարությանց ժամանակ պաշտպանություն գտնելու համար։ Հայրապետական Աթոռը նախ Շուղր անապատի վանքը (երբեմնի Կարմիր վանք), հետո 1125-ին՝ Անի քաղաքի առման տարին՝ Ծով դղյակը տեղափոխվեց։ Այստեղ 25 տարի մնաց։ Բայց երբ այստեղն էլ վտանգ սպառնաց, 1151-ին հաստատվեցավ Հռոմկլայում, որ գտնվում է Եփրատ և Մարդման գետերի խառնարանի մոտերը։ Հարկ եղած շենքերը կառուցանելուց հետո, Գրիգոր Գ-ը և Ներսես Շնորհալին բոլոր ազգականներով և հոգևորական դասով տեղափոխվեցան Հռոմկլա։ Ապա Հռոմկլան և շրջակայքը գնեցին և հատկացրին Կաթողիկոսարանին։

Ներսես Շնորհալին ինչպես յուր պաշտոնի մեջ, այնպես էլ քաղաքական դեպքերի ժամանակ, մեծ հեղինակություն ուներ։ Այդ ժամանակ, երբ խաչակիրներն Արևելք եկան, երկրի իշխանապետ Թորոսը՝ Լևոն Ա.ի որդին, զզվեցավ հույներից և թյուրքերից, անցավ խաչակիրների կողմը նոցա օգնելով։ Սորա ոխերիմ թշնամին՝ Լամբրոնի իշխանը՝ Օշին՝ Ներսես Լամբրոնացու հայրը, որի որդուն՝ Հեթումին փեսայացրել էր իրան ապչիկը տալով, Թորոսին հակառակ էր վարվում և գործում։ Թորոսը երկրի անկախությանն էր ձգտում, Օշին հունաց կայսեր հավատարիմ էր մնում։ Օշինը սաստիկ նեղն ընկավ։ Գրիգոր Գ. տեսնելով երկու մերձակիցների հակառակությունը, յուր եղբայր Ներսես Շնորհալուն ուղարկեց միջնորդ հաշտության։ Ներսես գործը հաջող կերպով կատարեց, երկու կողմի իշխաններն էլ հաշտվեցան իրար հետ։ Այս դեպքը պատահեց 1165 թվին։

Ներսես Շնորհալին վերադարձին Մամեստիա քաղաքում հանդիպեց հունաց Կիր Մանվել կայսեր փեսային՝ Ալեքս Կոմնենոս դքսին։ Հույն իշխանն ապշեց Ներսեսի գիտության վերա և յուր հայոց մասին ունեցած գաղափարը փոխեց։ Խոսակցությունը շուտով կրոնական կերպարանք ստացավ. Ներսես Շնորհալին հեղաշրջեց իշխանի հայոց ծեսերի և դավանության մասին եղած կարծիքը և նորա խնդիրքով Հայաստանյայց եկեղեցու ուղղափառ դավանությունը գրեց և թղթով դքսին հանձնեց. իսկ սա տարավ և կայսեր տվեց, որով նորա կասկածն էլ փարատեցավ...։

Ներսես Շնորհալու դրած դավանական թուղթը հունաց կայսեր, պատրիարքի և Հայոց Հայրապետանոցի մեջ երկար թղթակցության ատիթ եղավ։ Կայսրը հոգ տարավ մեծ ջանքով այս միությունը կատարել յուր ժամանակ։

Ներսես Շնորհալու դքսին գրած թուղթը մի տեսակ հերքումն էր հույների հայոց մասին տարածած և սարքած կարծիքների...։

Այս թուղթը դուքսը կայսերն է տանում, իսկ Ներսես Շնորհալին վերադառնում է Հռոմկլա յուր պաշտոնն ստանձնելու և Գրիգոր Գ. Պահլավունուն՝ յուր եղբորը և հոգևոր հորը հայտնելու Թորոսի և Օշինի հարաժամ գժտությունների վերջը, ավետելով հաշտության լուրը նորան։

Դ.

ՇՆՈՐՀԱԼԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ 1165-ԻՆ. ԴՐԻԳՈՐԻՍԻ ՄԱՀԸ 1166-ԻՆ. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ. ԱՐԵՎՈՐԴԻՔ. ՀԱՎԱՏՈ ՀՆԴԻՐ ՀՈՒՆԱՅ ԵՎ ՀԱՅՈՑ ՍՏՈՒ 1165—1173. ՇՆՈՐՀԱԼՈՒ, ՄԱՆՎԵԼ ԿԱՑՍԵՐ ԵՎ ՄԻՔԱՅԵԼ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԻՄՅԱՆՑ ԳՐԱԾ ՓՈԽԱԴԱՐՁ ԹՂԹԵՐԸ. ԺՈՂՈՎԻ ՀՐԱՎԵՐ. ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՀԸ 1173-ԻՆ. ԹԱՂՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Գրիգոր Պահլավունի կաթողիկոսը ծերության մեջ էր. վերջին օրերը հաճախ տկարանում էր և ուժաթափ եղած ծերունին արդեն վաղուց է, որ առաջարկում էր Ներսես Շնորհալուն կաթողիկոսության պաշտոնը՝ հայրապետական գործերը փոխի փոխ կատարելու և նոցա հսկելու, բայց Ներսես յուր երեց եղբոր Գրիգորի կենդանության ժամանակ արժանի չէր համարում իրան այդպիսի մի ծանր պաշտոնի ստանձնումը։ Բայց երբ վերադարձավ Օշինին ու Թորոսին հաշտեցնելուց հետո Հռոմկլա, մոտավորապես 1165-ի վերջերը, տեսավ, որ եղբայրը հիվանդ է և գործերը երեսի վրա մնացած։ Իսկ Գրիգոր Գ. Պահլավունին սպասում էր Ներսեսի գալստյան։ Գալուն պես Հռոմկլայում ժողով գումարեց 1165-ին, որ Հռոմկլայի Ա. ժողովն էր, ուր հայտնեց յուր տկարությունը վարել հայրապետական իշխանության գործերը ծերության և տկարության պատճառով և առաջարկեց ընտրել նոր հայրապետ։

Ժողովը Ներսես Շնորհալու հրաժարումներին ուշադիր չեղավ և Հայրապետ ընտրեց։ Գրիգոր Գ. Պահլավունին հանդիսավոր կերպով նորան կաթողիկոս օծեց և իրրև Հայրապետի երկրպագություն անելով, հայրապետական ջողն ու գավազանը հանձնեց։ Իսկ ինքը քաշվեցավ, առանձնացավ և երեք ամիս հետո մահկանացուն կնքեց 1166-ին, 53 տարի կաթողիկոսություն անելուց հետո ու թաղվեցավ յուր պատրաստած շիրիմի մեջ Հռոմկլայում։

Ներսես Շնորհալին Կամ Կլայեցին (Հռոմկլայի բերդում երկար մնալու համար, կալ, կամ կալա, որ բերդ է նշանակում) հաջորդելով Գրիգոր Գ.ին, նախ և առաջ պարտք համարեց մեկ շրջաբերականով ծանուցանել յուր եղբոր հաջորդելու հանգամանքը, որովհետև այս շրջաբերականը վերաբերում էր ժողովրդի բոլոր դասակարգին, ուստի և Ընդհանրական անունով է հայտնի։

Թե ի՞նչն է ստիպել Ներսես Շնորհալուն մի այսպիսի ընդհանրական գրավոր թղթով հովվելու. այս ինքը պարզում է նույն թղթի մեջ։ Ասում է նա. «Ի բացեայ լինելով հովուին եւ հօտին յոյժ հեռաւորութեամբ ի միմեանց..., քանզի շրջել առ ամենեսեան՝ ընդ ամենայն կողմանս աշխարհի, եւ քարոզել զրանն Աստուծոյ ըստ նմանութեան առաքելոցն սրբոց՝ անկարելի է յաղագս ժամանակիս շարութեան եւ բազմիշխանութեանս։ Մյուս կողմից էլ՝ հայրապետանոցի սուղ վիճակն է ներկայացնում. ուրեմն ճանապարհորդության ծախս անդամ չուներ. «Ոչ եւ մարմնական պիտոյիւք շատացեալք ի գիւղից, կամ յաղարակաց, յորոց ունիմք եւ ոչ մի։ Նաեւ ոչ անդաստան հողոց, զի վաստակօք եւ աշխատութեամբ զպէտս մեր լնուաք, եւ ոչ օգնութիւն ուստեք՝ որպէս արժան էր ի թագաւորաց եւ յիշխանաց ի Քրիստոս հաւատացելոցս։

Ահա այս և սոցա նման հարգելի պատճառներից ստիպված, ընդհանրականով է սկսում ուղղել ժողովրդյան պակասությունները, բոլորը մի առ մի թվելով և սիրալն ուղղելով։

Ա. Ընդհանրականի մեջ զետեղում է առենից առաջ Հայաստանյայց եկեղեցու ուղղափառ դավանությունը և Քրիստոսի տնորինությունները՝ համառոտակի ամփոփելով և առանց շեղման. «Ոչ նորոգ ինչ գրելով, այլ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից եւ հարցն սրբոց լինելով համառօտ բանիւ։

Որպեսզի հայ ժողովուրդը պակաս կողմերն իմանա և ուղղե, ուստի ամեն դասակարգին առանձին-առանձին թուղթ է գրում յուր կոչման հատկացած պարտականությունները իմացնելու։

Բ. «Առ կրօնաւորս որ ի վանորայս»։— Վանքերում բնակվող կրոնավորները, ինչպես և այն ժամանակի ընդհանուր ժողովրդի դասակարգերն անիտիր, կրոնական, բարոյական անկյալ գրությամբ խարխափում էին, շատերը թողած վանքը, թափառում էին գյուղեր, քաղաքներ, շրջելով անպատկառ, անառակ, արբեցող, որովայնամոլ, ընչասեր, բամբասող, հիշողատու մարդոց նման. եկեղեցին թողած այգեգործության ետեվից ընկած, տգիտության մեջ թաղված, մինչև իսկ շատերը կարդալ չիմացող, ոչ միայն դող, այլ և գողության սուտ վկա եղել։

Գ. «Առ առաջնորդս սրբոց ուխտից վանականաց»։— Վանահայրերն էլ յուրյանց վա-

նականներից հետ չէին ազգությամբ, մյուս բաներումն էլ մինչև անգամ գերազանց հանդիսանալով։ Եկեղեցական կարգն ու կանոնը թողած, պահանջում էին յուրյանց ստորադրյալներից նյութական գործերում ժիր լինել, իսկ որոնց որ չէին սիրում, նոցա լոկում ու զատում էին, դրկելով ամեն բանից։ Եկեղեցուն նվիրած պատարագը սեպհականացնում էին լոկ յուրյանց անձին, որը պետք է եկեղեցական ծախսերի և պիտույքների համար գործ դնեին իսկապես։ Ոմանք մեծերից կաշառ առնելով առաջնորդությունը կամ վանահայրությունը հափշտակում էին։

Դ. «Առ առաջնորդս նկեղեցւոյ որ են յաշխարհի, որ կոչին եպիսկոպոսունք»։— Եպիսկոպոսները շատ փառահեղ և ճոխ կյանք էին վարում և աշխարհական իշխանների պես գոռոզ էին։ Ոմանք երիվարների կամ ջորու վերա հեծած, որ շքեղ զարդարում էին, սլանում էին ճանապարհով և որսի գնում։ Կերուխումի մեջ չափազանց էին։ Վանահայրերի նման կաշառված էին իշխաններից, նոցա օգնությամբ հափշտակում էին առաջնորդությունը և կամ նույնպիսի հնարքներով եպիսկոպոսության բարձր աստիճանի ձգտում։

Ե. «Առ դասս քահանայից»։— Քահանաների մեջ օրինազանցությունը չափ չուներ։ Պատարագ էին անում սովորական կեղտոտ զգեստով և տրեխով։ Առանց ծածկույթի Ս. Խորհուրդն էին վերաբերում և ավետարան ու խաչ բռնում։ Պատարագի ժամանակ, քաղաքների վաճառափողոցներում շրջելով, այլ քահանայի պատրաստած նշխարով պատարագ էին մատուցանում, իսկ մկրտության ժամանակ, առանց երկյուղածության, ծիծաղ ու կատակերգություն էին անում և մկրտելուց հետո, մկրտության անգին շնորհի համար, փող էին պահանջում։ Գաղտնի պսակ անելը, արբեցողությունը, անառակությունը, եպիսկոպոսին չհնազանդելը և եկեղեցական դատաստանը թողած աշխարհականին դիմելը՝ սովորական էր դարձել։ Ոմանք փող դիզելու նպատակով քաղաքի կամ գյուղի հոգաբարձու էին լինում, կամ դավառապետների գրագիրը. ձիարշավն ու սրախաղությունը մարմնական զվարճության ժամանակ անպակաս էր։

Զ. «Առ իշխանս որ ըստ աշխարհի»։— Իշխանները բոլորովին անիրավաբար էին վարում դատաստանը և ծանր հարկերով ճնշում էին գործում ժողովրդին։ Նույնն անում էին և նոցա դատավորները կամ հարկահանները՝ դատելով անխիղճ կերպով։ Պահեցողությունը վերջացել էր, իբրև իշխան իրավունք էին համարում ձուկ, գինի գործածել, որով գայթակղության պատճառ էին դառնում ժողովրդի համար։ Ավետարանի և խաչի վերա սուտ երդում էին անում։

Է. «Առ զինուորաց դասս»։— Սոքա էլ յուրյանց իշխանների նման պահքը լուծում և ժողովրդին անիրավաբար թալանում էին։

Ը. «Առ Բաղտակականս»։— Ստախոսությունն ու սուտ երդումը գործիք էր դարձել խեղճ գյուղացվոց խաբելու համար սոցա ձեռքում։ Մաստիկ արհամարհում էին գյուղացիներին՝ տգետ համարելով։

Թ. «Առ երկրագործս եւ համօրէն ժողովրդականս»։— Անհասարակ ժողովրդի ստորին դասակարգի մարդիկ արբեցողությամբ և հիշոցներով էին կրթում յուրյանց մանկանց և ոչ թե հոգ տանում նոցա կրթության մասին։ Պարզ է, որ հայրերի նման էլ պետք է որդիք լինեին. ամեն օր հոգի հավատ էին հայհոյում։

Ժ. «Առ կանանց դասս»։— Կանայքն անպարկեշտ, սատանայական խարդախությանց և կախարդությանց ետևիցն ընկած, փառասեր և պաճուճյալ կյանք էին անցկացնում։

Այսպիսի վատ կենցաղավարությամբ ապրող ժողովրդին հարկավոր էր այն ժամանակում մի արթուն, իմաստուն և հեղինակավոր հայրապետ, որ ուղղել կարողանար այս բոլորը։ Ներսես Շնորհալին շատ լավ է նկատում սրատես հոգու աչքով և ժողովրդի վերականգնման նորանոր միջոցների ձեռք գարնում և բարելավում։

Մնում էր բարեկարգել եկեղեցիները, որոնք երկար ժամանակից ի վեր անկարգ դրության մեջ էին մնացել և եկեղեցական կարգն ու կանոնը խախտվել էր։ Սորա առաջն առնելու համար Մաքինյանց վանքից և Թեղենյանց անապատից, որ ժամանակի կարգավորյալ վանքերն էին, բերել տվեց ժամակարգության հին օրինակներ և կանոնավորեց խանգարումները։ Նույնպես եկեղեցական ծեսերն ու ձեռնադրության կարգավորությունը վայելչացրեց ինչ ինչ պատշաճավոր հավելվածներով։

Շնորհալու այսքան եկեղեցական բարեկարգությունն ու բարեզարդությունը, թե՛ արտաքին, թե՛ ներքին, որով պատվելի և պատկառելի դարձրեց կաթողիկոսական Աթոռն ու հայ ժողովրդին այսպիսի մի փառնակ և դժբախտ վիճակում, մեծ արժեք ունեցան Հայաստանյայց եկեղեցու արդի վիճակի նկատմամբ։

Շնորհալու հայրապետության ժամանակ Արևորդյաց աղանդը, որ մինչ այդ ժամանակ Սամոսատ քաղաքում և նրա շրջակայ-

քում հեթանոսական տգեղ սովորություններին էր հետևում, վերջնականապես ջնջվեց։

Արևորդիք իրանք դիմեցին Սամոսատի առաջնորդ Թորոս քորեպիսկոպոսին, որ միջնորդն Շնորհալուն իրանց Հայաստանյայց Եկեղեցու ծոցը մտնելու ներսես Շնորհալին ստացավ նոցա թուղթը, որով խոստանում էին ի սրտե զղջալ։ Շնորհալին Հայաստանյայց Եկեղեցու ուղիղ դավանությունը համառոտեց և ուղարկեց Սամոսատ՝ հրահանգներ տալով նոցա՝ մկրտելու և քրիստոնյա դարձնելու մասին։ Հայրապետի հրահանգի համաձայն, նոքա կամաց կամաց Հայոց Եկեղեցու գիրկը մտան։

Այս ժամանակներում Շնորհալի մի թուղթ ստացավ Մանվել կայսրից, որն ուղղված էր Գրիգոր Գ. Պահլավունուն. սորան պատասխանեց ինքը։ Այս թուղթը վերաբերում էր յուր եղբոր կաթողիկոսության ժամանակից սկսած, հունաց և հայոց կրոնական միությանը... Կայսրը թղթով ներսես Շնորհալուն Կ. Պոլիս էր կանչում, որ միության խնդրի մասին խոսակցեն։ Որովհետև ինքը հայրապետական գործերով զբաղված էր, չի կարողանում գնալ, այլ թղթով է հայտնում Գրիգոր Գ. Պահլավունու մահը և յուր ընտրությունը՝ առաջ բերելով յուր Եղ. Պոլիս գնալու անհնարավորությունը...

Շնորհալին ստացավ և մի թուղթ Միքայել Պատրիարքից, այս առաջարկության հետ միասին։ Երկոսին էլ պատասխանեց, թե առաջարկությունները քննելու համար ժողով պետք է գումարե, ժողովի որոշումը կհայտնե ապա։

Առաջարկությունը քննելու համար Հայաստանյայց Եկեղեցու բոլոր ներկայացուցիչներին ժողովի հրավիրեց, նույնպես և Աղվանից կաթողիկոսին։ Դեռ ժողովը չնստած, 72 տարեկան հասակում, ութ տարի կաթողիկոսություն անելուց հետո, կնքեց յուր մահը։ Սանահնում 1173 թվին ու թաղեցին Հռոմկլայի դամբարանի մեջ։ Մարմինը շատ երկար անթաղ է մնում, որովհետև ժողովուրդը իուրն բազմությամբ դիմում էր այն առնելու և վերջին հրաժեշտ տալու յուրյանց սիրելի հայրապետին։

Զ.[3]

ՇՆՈՐՀԱԼԻՆ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ. ՆՈՐԱ ԵՐԿԵՐԸ, ՈՃԸ, ՁԵՎԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներսես Շնորհալին ոչ միայն յուր հայրապետական գործերն էր վարում, այլ և գոքա անթերի լրացնելուց հետո, ժամանակ էր գտնում և զանազան գրական աշխատությունների անձնատուր լինում։ Եվ յուր բազմակողմանի և բազմարովանդակ գրվածքներով՝ գրականության պատմության, այն էլ հայոց, հոտավետ ծաղիկներից է։

Շնորհալու գրվածքներն երկու տեսակ են՝ արձակ և ոտանավոր։ Ոճը մաքուր է, սահուն և պարզ. լեզուն ազու՝ ամեն մի խոսք յուր տեղն է գործածում։

Շնորհալու տաղաչափությունը դարձյալ երկու ձև ունի. հայկական հին և արաբական նոր տաղաչափություն։

Արձակ երկասիրություններն են՝

Ա. «Ընդհանրական. սա երեք մասի է բաժանվում. 1. Հովվական հրահանգներ հայ ազգի բոլոր դասակարգերին, 2. Թղթակցություններ հունաց կայսեր և պատրիարքի հետ ունեցած կրոնական խնդրի մասին, 3. Մասնավոր անձանց գրած թղթեր։

Մյուս արձակ գրվածքները՝ ճառեր և մեկնություններ են։

Բ. «Մեկնութիւն «Բարձրացուցէ»ի. սորա մեջ նա եղած իրթնաբանությունն է պարզում, որով այս մեկնությունը Դավիթ Անհաղթի ճառի մութ տեղերն է բացատրում։

Գ. «Մեկնութիւն Մատթէի». այս գրվածքը կիսատ է թողնում։ Սա վերջին օրերի աշխատությունն է։ Այս մեկնության շարունակությունը գրում է և ամբողջացնում Երզրնկացին։

Դ. «Մեկնութիւն կաթուղիկեայց». սա պարունակում է յոթը կաթուղիկյայց թղթի մեկնաբանությունը։

Այս երեք մեկնությունն էլ բնտիր և օրինակելի լեզվով են գրված՝ հետևելով, ընդհանրապես, Ոսկեբերանին։

Ե. «Գիր շրջաբերական ի կողմանս արեւելից ի Կարս». Շնորհալու հայրապետության միջոցին Կարսի Արրահամ եպիսկոպոսը մեռնում է։ Քաղաքացիք հաշատուր անունով մի քահանայի են ուղարկում ձեռնադրելու։ Շնորհալին քննում է, անթերի գտնելով ձեռնադրում և մի օրհնության նամակ է տալիս, որով խրատում է քաղաքացոց։

Զ. «Բան մխիթարութեան առ վտանգեալսն մարմնով». եղեսիայում մի սիրտ է տարածվում։ Առողջները զգվանքով և անկարեկից աչքով են նայում նոցա։ Սիրտացածները

3. Հինգերորդ գլուխն ամբողջովին բաց են թողած։—ԽՄԲ.

գանգատ են գրում, և Ներսես Շնորհալին մխիթարում է նոցա։

է. «Ցաղազս արեւորդոցն դարձի». Սամոստիա քաղաքի արեւորդիք խնդրում են Թորոս եպիսկոպոսին՝ տեղական առաջնորդին, որ իրենց ընդունե Հայ Եկեղեցու ծոցը։ Թորոս եպիսկոպոսը տեղեկացնում է Հայրապետին, և Շնորհալին հրահանգ է տալիս նորան՝ մկրտելու մասին։

Ը. «Առ Պողոս Քահանայ Հայկազն». հունաց և հայոց մեջ եղած կրոնական հարաբերությանց ժամանակ հռոմացած Պողոս քահանան աշխատում էր այդ գործը խափանել, սորա համար նամակագրության մեջ էր մի Հայաստանցի համախոհ քահանայի հետ՝ Սամվել անունով։ Շնորհալին լսում է և հանդիմանում առաջինին։

Թ. «Առ ժպիրն ոմն». այս անձը չէր սիրում Ներսես Շնորհալուն և արհամարհական երեք նամակ է գրում, բայց Ներսեսը հեզությամբ լսում է դորա սուտ նկատողությունները։

Ժ. «Առ Սաեփանոս ոմն». սա Շնորհալուց խնդրում է Դավիթ Անհաղթի Սահմանաց գրքի վերջին գլխի մեկնությունը, որ և ստանում է։

ԺԱ. «Առ երջանիկ վարդապետն Գէորգ». երեք համառոտ թուղթ է։

ԺԲ. «Հրեշտակաց ներբող». հրեշտակների մասին գովեստ՝ հետևողաբար Արիսպագացուն, որն և գրել է նույն նյութի վերա։

ԺԳ. «Հաւատով խոստովանիմ». սա օրվա 24 ժամին հարմարեցրած մի գեղեցիկ աղոթք է։

ԺԴ. «Սուրբ Սարգսի վկայաբանութիւն»ը. այս գրում է Հաղբատի առաջնորդ Գեորգ վարդապետի խնդրանքով, նախապես Միքայել Ասորի քահանայի միջոցով ասորերենից թարգմանել տալով։

ԺԵ. «Խրատ ժամերգութեան». Թեղենյանց և Մաքինյանց վանքից բերել տվեց ժամերգության հին օրինակներ և խրատ գրեց սորա մասին։

Հին հայկական տաղաչափությամբ են գրված գրեթե նորա բոլոր շարականները, իսկ արաբականով՝ երգերն ու «Հիսուս Որդի»ն (1151 թ.)։

«Վիպասանութիւն», որով համառոտակի պատմում է հայոց պատմությունը. սա նորա անդրանիկ աշխատությունն է, որ գրել է մոտավորապես 20 տարեկան հասակում՝ 1121 թվին։

«Ողբ»ը. Հագարացոց Զանգի ամիրան պաշարում և առնում է քաղաքը 1144 թվին, և Շնորհալին եղբորորդու՝ Ապիրատի խնդրանքով գրում է այս ողբը, որ 1053 տողից է բաղկացած։

Շնորհալին ունի և ուրիշ մանր մունր երկեր, որոնք բոլորն էլ նորա հարուստ հանճարի արտահայտիչը կարող են լինել և են։

Ներսես Շնորհալին, որ «Երգիչ» մականունով էլ է հայտնի, ունի հնարած, ամենայն հավանականությամբ, գեղեցիկ եղանակներ, որոնց վերա գանձեր, տաղեր էր գրում և երգում։ Իսկ այն արվեստը, որ «մանր ուսմունք» անունով է հայտնի, լավ գիտեր Ներսես Շնորհալին և որը պահանջում էր քահանաներից անթերի կերպով իմանալ և գործածել, ասելով՝ «Զմանրուսմունս ձայնաւորացն պաշտել յեկեղեցիս»։

Ն. ՇԱՀԱԶԻԶ

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՀԱՄԻ ԽԱԼԱԹՅԱՆՑԸ

(Իմ հուշերից)

Գրիգոր Խալաթյանցը Գյումրեցի էր (այժմյան Լենինականը), ունևոր ծնողների զավակ։ Նա ուսել է Լազարյան ճեմարանում, որի գիշերոթիկ աշակերտներից է եղել։ Ես լավ էի ճանաչում նրան, որովհետև ես էլ նույն ժամանակներն ուսանում էի ճեմարանում, իրրև դիշերոթիկ սան։ Նա միայն ինձանից երկու դասարանով բարձր էր։ Նա հինգերորդ դասարանումն էր, ես՝ երրորդ։

Սովորում էր նա միջին հառաջադիմությամբ, շատ հաջող և առաջընթաց էր հայ լեզվի գիտության մեջ։ Վարք ու բարքով խոնարհ էր ու հնազանդ, բայց իրեն թանկ գնահատողներից էր, շատ մեծամիտ և իր մեջ կենտրոնացած։ Մի խոսքով, նա այն աշակերտներից էր, որոնց մասին մենք՝ աշակերտներս սովորություն էինք արել լատիներեն ասել. «Noli me tangere», այսինքն՝ ձեռ մի տաք ինձ, մի կպչեք ինձ, ապա թե ոչ, ատամներս ունեմ, կխածնեմ։

Ես առաջին անգամ լավ ծանոթացա նրա հետ, երբ դեռ մենք երկուսս էլ աշակերտներ էինք ճեմարանի դիմնազիոնական դասարաններում։ Հիշում եմ, մի տարի մոտենում էին բարեկենդանի օրերը, և մե՛նք՝ երրորդ և չորրորդ դասարանների աշակերտներս, պատրաստվում էինք աշակերտական ներկայացում տարքելու սովորական կարգով, ինչպես ամեն տարի։ Մենք լսել էինք, որ հինգերորդ դասարանի աշակերտ Խալաթյանցի մոտ «Վարդանանց պատերազմ» խորագրով մի ձեռագիր պիես կա, որ հենց մեր ուզածն էր։ Մեզանից ոչ ոք չէր կարդացել այդ ձեռագիրը, բայց որ դա Վարդանանց պատերազմն էր, մեր ուզածն էր։ Ո՞վ կերթա խնդրելու, ո՞վ չի երթալ— Շատերը հրաժարվեցին գնալ, ասելով. «Քթի մաղ է, չի տալ»։ Վերջապես, իմ վրա մնաց «քթի մաղից» պատերազմը ստանալու դժվար և անախորժ գործը։

Հարմար բոպե գտնելով, ես մոտեցա նրան և խնդրեցի ձեռագիրը։

— Իսկ ո՞վ ձեզ ասաց, որ իմ մոտ կա այդ ձեռագիրը... այո՛, կա, բայց ո՞վ է տվողը,— ասաց նա։

Զրուցելով, մենք մտանք հինգերորդ դասարանը։ Նա բաց արեց արկղը և թղթերը դես ու դեն խառնեց, գտավ ձեռագիրը և գրեց առաջս։

— Ահա՛, Շահազի՛զ երկրորդ, ձեր ուզածը, բայց դե՛հ, ո՞վ կա ձեր մեջ, որ կարողանա խաղալ այս,— ասաց նա քմծիծաղ տալով,— սրա մեջ մոգպետի խոսակցությունը թագավորի հետ ամբողջությամբ գրարար է... Է՜հ, տեսնենք, թող մնա վաղը, կտեսնեմ...։

Մյուս օրը, վերջապես, հազար ու մի թոհ ու բոհով ստացա ձեռագիրը և ուրախ ուրախ բերի, հանձնեցի ընկերներիս, խնդրելով, որ լավ պահեն, «քթի մաղի» ապրանքն է։

Այնուհետև մենք հետզհետև շատ մոտեցանք իրար։ Այդ մոտեցմանը նպաստեց և այն, որ ես էլ իմ ծննդի տեղով Ալեքսանդրապոլցի էի, կնքված «Յոթն վիրաց Ս. Աստվածածնիս» պատկերի առաջ, ճոճքս էլ կցված Հառիչա վանքում։ Քանի որ ճեմարանում էինք, մենք միշտ միասին էինք լինում, ասում, խոսում և երազում։ Նա ինձանից այլևս գաղտնիք չուներ։ Նա ասում էր, որ որոշել է համալսարանի դասընթացն ավարտելուց հետո, իրեն նվիրել հայ լեզվի և գրականության գիտական մշակու-

թին, որի համար և պետք է մտներ համալսարանի պատմա-բանասիրական բաժինը։ Նա կարծում էր, որ իր ընտրած նպատակին կարող էր հասնել իր աշխատասիրությամբ և Ճեմարանի լիկեոնի հայոց լեզվի և գրականության դասախոս՝ հայագետ Մկրտիչ Էմինի միջոցով, եթե կարողանար դուր գալ նրան։ Մի անգամ խոսակցության ժամանակ բացահայտ ասաց ինձ. «Հույս ունեմ, որ այդ ինձ կհաջողվի, որի համար ես պիտի գործադրեմ իմ բոլոր կարողությունս և միջոցներս. ես Էմինին ընտրել եմ ինձ առաջնորդ աստղ, ես նրան բոլորանվեր հետևող, և, դուցե, գիրազանցող հանդիսանամ։ Ապա, տեսնելով որ ես ժպտում եմ, նա ավելացրեց. «Դու ծիծաղում ես, լավ երազ համարելով այդ բոլորը, բայց դու չպետք է մոռանաս, որ քաղցր երազներն էլ երբեմն կատարվում են և ավելիով։

Այս խոսակցությունը մեր մեջ տեղի ունեցավ, երբ նա արդեն ավարտական դասարանումն էր և շուտով պիտի ավարտեր։ Նա, ինձանից, իհարկե, ավելի շուտ ավարտեց, որովհետև, ինձանից, ինչպես ասացի, երկու դասարանով առաջ էր և ապա՝ նրա ժամանակ ավարտում էին չորրորդ դասարանից, իսկ իմ ժամանակ՝ ութերորդ դասարանից։

Նա մտավ համալսարանի իր ընտրած բաժինը։ Ես էլ հետո ավարտեցի և մտա իմ ընտրած «Ազգային Ճեմարանի Արևելյան լեզվաց լիկեոնը», որ երեք կուրս էր և երեք տարվա դասընթաց ուներ։ Ոմանք այդ տարիներին, մեր միջև փոխհարաբերությունը չփոխվեց, նույնը մնաց. մենք հաճախ տեսնվում էինք միմյանց հետ, գնում դասիս էինք իրար մոտ։ Խալաթյանցը հաստատ էր մնացել իր մտադրության վրա. նա հաճախում էր Էմինի ընակարանը, կանոնավոր կերպով և լրջորեն ուսանում էր նրա մոտ հայ գրականությունը. նրանք քննաբար կարդում էին Ղազար Փարպեցին, օգտվելով այն հանգամանքից, որ 1853 թվին Ս. Էջմիածնի ձեռագրերի մեջ գտնվել էր Ղազար Փարպեցու «Թուղթ առ Մամիկոնէից տէրն Վահան», որ առաջին անգամ տպագրել էր Էմինը ընդարձակ առաջաբանով, մի թուղթ, որ հարուստ ուսումնասիրության նյութ էր հաղորդում իրեն Փարպեցու մասին։ Նա, բացի դրանից, դեռ չավարտած համալսարանի իր ընտրած բաժնի դասընթացը, հաճախում էր լիկեոնը և լսում Էմինի դասախոսությունները, և, վերջապես, նա գնում գալիս էր Ճեմարանի տեսուչ Գևորգ Քանանյանի մոտ և սիրալիր ընդունելություն գտնում նրանից։

1881—1882 ուսումնական տարին էր, իմ լիկեոնի դասընթացն ավարտելու տարին։ Իմ գլուխը խառն էր քննություններով, որոնք այդ տարին չգիտեմ ինչո՞ւ կատարվում էին մի առանձին հանդիսավորությամբ— Կորշի, Գերիհի, Էմինի, Խալաթյանցի, Գևորգ Քանանյանի ներկայությամբ, ուստի և ազատ ժամանակ չունեի Խալաթյանցի հետ լինել, և միայն շատ կարճ միջոցներով էի կարողանում տեսնվել նրա հետ, նամանավանդ որ նա էլ շատ զբաղված էր իր Ղազար Փարպեցու ուսումնասիրության գործով, որ անհրաժեշտորեն պատրաստված և տպագրված պետք է լիներ 1882—1883 ուսումնական տարվա համար։

Գրիգոր Աբրահամի Խալաթյանց

Էմինն որոշել էր հրաժարվել պաշտոնից և դրա վրա պիտի հիմներ իր կարծիքը, երբ պաշտոնապես դիմելու լիներ Ճեմարանի վերատեսչության՝ Խալաթյանցին իրենից հետո լիկեոնի հայոց լեզվի և գրականության դասախոս հրավիրելու մասին։ Այդ, իհարկե, միայն գործի պաշտոնական ձևակերպության համար էր, թե չէ, իրոք, արդեն ամեն բան վերջացած էր Էմինի և Քանանյանի մեջ, որ Ճեմարանի վերատեսուչ Նիկոլայ Դավիթիչ Դիլյանովից հետո, արդեն

մասնակցել էր դպրոցի խորհրդակցի ատենաբանի հետ միասին նաև Ճեմարանի վերատեսչության բարձր պաշտոնը։

Քննությունները վերջացան 1882 թվի հունիսին, և ես պատրաստվում էի վերադառնալ Հայրենիք։ Ես պետք է մի վերջին անգամ էլ տեսնվեի Խալաթյանցի հետ, որ ինձ ճաշի էր հրավիրել։ Գնացի։ Այս անգամ նրա սեղանը շատ առատ էր — հայկական փլավ անուշեղեններով, գինի, դարեջուր թոնկանոց բիրհաջից, և այլն։ Ուրախ էինք երկուսս էլ։ Ես հաջողությամբ ավարտել էի իմ բարձրագույն ուսման դասընթացն և մտնում էի կյանքի ասպարեզը, նրա քաղցր երազներն էլ լիակատարորեն հաջողելու վրա էին։ Կերանք, խմեցինք իրար կենաց և շնորհավորեցինք իրար, ցանկանալով իրար հաջողություն կյանքի ասպարեզում։ Երբ ես վերկացա դուրս գալու և մենք մնաս բարով ասելով իրար, գրկախառնվեցինք, ես շմոռացա շշնջալ նրա ականջին. «Շմոռանաս Հայրենիքը»։

Անցավ ամառը։ Ես չկարողացա Հայրենիքում իմ մասնագիտության համապատասխան ուսուցչի պաշտոն գտնել մեր հասկնոր դպրոցներում կամ մեր Հոգևոր Ճեմարանում և ստիպված եղա գնալ Նոր Նախիջևան, որն այն ժամանակվա ծաղկած հայ գաղութներից մեկն էր։ Այդտեղ արդեն լսեցի, որ Խալաթյանցը հրավիրվել է Ճեմարանի Արևելյան լեզվաց լիկեոնը դասախոսելու էմինի տեղը, որ հրաժարվել էր պաշտոնից։ Հետո ստացա իրենից՝ Խալաթյանից «Ղազար Փարպեցի և գործք նորին, պատմական և գրական քննություն Գրիգորի Խալաթյան, ի Մոսկվա, 1883 թ.» աշխատությունը։

Ես սիրով կարդացի այդ սիրուն գրքույկը, որի մեջ բան քննական մասը պատկանում էր էմինին, որովհետև, ըստ ամենայնի, համապատասխանում էր նրա մեղ դասախոսածին լիկեոնում։ Նյութի շարադրությունը և դասավորումը, որ պահանջել էր ոչ սակավ աշխատանք և հմտություն, պատկանում էր Խալաթյանցին։ Լեզուն երկուսինն էր — Խալաթյանցի դրածը, էմինի ճշտածը, ընդհանրապես, բան մասանց բանի քերականության, ճիշտ, բայց ոգով ենթարկվոծ աշխարհարարի ազդեցության։ Կարելի էր ավելի կարճ կապել և շմուծել գրքույկի մեջ Մամիկոնեից տեր Վահանի մեծ պայքարը պարսից դեմ, բայց ինչ որ էլ լինի, համենայն դեպս, դա մի լավ ընծա է եղել ժամանակի հայ գրականության համար։

Այդ բոլորից հետո, ես ուզեցա ա՛լ ես մի երկու անգամ տեսնելու նրան, խոսելու նրա հետ աղատորեն իրրև հին ընկեր, մեր հրագնների մասին, որոնք առաջ երդվեր էին, իսկ այդ ժամանակ արդեն իրականություն էին դարձել։

Առաջին անգամ ես պատահեցի նրան Կիսլովոդսկի հանքային ջրերում։ Ես համարյա ամեն տարի ամառները գնում էի Կիսլովոդսկ։ Հարմարություն կար, ճանապարհը կարճ էր։ — Երեկոյան ժամը 11-ին դուրս էի գալիս Ռոստովից, մյուս օրը ճաշին արդեն այնտեղ էի լինում։ Զգիտեմ, չեմ հիշում, թե ո՞ր տարին էր, որ անակնկալ հանդիպեցի նրան։ Նա դիրացել էր։ Ծանրացել էր իրեն պահելու, խոսելու, գիտնական պրոֆեսորի ձևեր ընդունելու տեսակետից։

Գնացինք խորովածանոց, ոչխարի սպիտակ մսի հայտնի անուշ խորովածը ուտելու և հանգիստ զրուցելու։

— Է՛հ, բարե՛վ, հաղար բարի,— ասացի ես,— տեսնում եմ, որ դու առողջ ես, ես էլ հիվանդ չեմ, չեմ ուզում մեր անցյալին դառնալ։ Ինչ որ էլ լինի, դու հասել ես քո նպատակին, ես էլ իմ նպատակին...

Ուզում էի շարունակել, բայց նա ընդհատեց ինձ։

— Ես գիտեմ, թե դու ինչի՞ վրա ես ակնարկում. ես խոստացել եմ և խոստանում եմ մեր նոր դրականության ուսումնասիրությամբ զբաղվել... խոստացել եմ և պիտի կատարեմ.— ամբողջացրեց նա։

— Անցյալի դարձը չկա. դու այնքան խորն ես մտել էմինին նմանելու ձգտումիդ մեջ, որ նմանել ես նրան և քո կյանքով.— ասացի ես։

— Բայց ես այդ չեմ ուզում ասել,— շարունակեցի ես,— այլ մի ուրիշ բան, որի մասին մենք շատ ենք խոսել։ Իմ ասելիքը մայրաքաղաքի հայ ուսանողությունը Լազարյան Ճեմարանի լիկեոնի հայ լեզվի և դրականության ամբիոնի հետ կապելու մասին է։ Մեր երկրում ամեն տարի շատ հայ երիտասարդներ են ավարտում գիմնազիոնները, որոնց մի խոշոր մասը թափվում է Մոսկվա, բարձրագույն դպրոցները մտնելու համար։ Դրանք, սովորաբար, իրենց պատմության և դրականության անծանոթ են լինում։ Դրանք կարող են լսել լիկեոնի պրոֆեսորին և խորթ չմնալ իրենց հարազատ դրականության և պատմության։ Առաջ, քանի որ էմինն էր, այդ անկարելի էր անել, որովհետև նրա ուսուցման սիստեմը հին վարժապետական էր, իսկ դու կարող ես և պետք է անես։

— Այո՛,— ասաց նա,— մենք այդ մասին շատ ենք խոսել, կփորձեմ, ես աշխատանքից վախեցող չեմ...։

Նա գնաց. կարճ ժամանակով էր եկել։

Անցավ ժամանակ։ Մի ձմեռ, չսպասած, ստացա նրանից վիմագրված թերթեր

գրանք, ինչպես երևում էր, մեր Մեծն Տիգրանի մասին լիկեոնում նրա դասախոսության սղագրությունն էր։ Կարդացի և շատ հավանեցի. ափսո՜ս որ բոլորը չէր։ Վերջացրե՞լ է, թե չի վերջացրել, հայտնի չէ. դրա անունը չի հիշված նրա թողած գրավոր ժառանգության ցանկի մեջ[1]։

Երկրորդ անգամ ես առիթ ունեցա տեսնել նրան, երբ գնացել էի Մոսկվա, հորեղբորս թաղման։ Նա հանկարծամահ էր եղել 1907 թվի դեկտեմբերի 24-ին։ Ես Խալաթյանցին տեսա թաղման օրը եկեղեցում, երբ նա դուրս եկավ դամբանական խոսելու։ Նրա և հանգուցյալի հարաբերությունը լարված էր, ուստի և ես շատ զարմացա, երբ նրա բերանից լսեցի այնպիսի ճիշտ, անաչառ, արժանավոր և, ըստ ամենայնի, վայելուչ, խելոք բնութագրում. երևում էր, որ նա իմացել էր իր սրտից բխածը, աննախանձաբար, և ոչ թե կեղծ ու պատիր ուռուցիկ խոսքեր։ Երբ եկեղեցում կատարելիք ծեսը վերջացավ և հանգուցյալին դուրս էին հանում հուղարկավորելու դեպի հավիտենական հանգիստ, ես մոտեցա նրան, և մենք գրկախառնվեցինք։ Ժամանակ չկար խոսելու. արտասուքը, ջերմ ու առատ արտասուքը, ոլորոն-ոլորոն թափվում էր մեր աչքերից և խեղդում մեզ...։

Ամեն քան կատարվելուց, վերջանալուց հետո, տեղի էր ունենում թաղման հանձնաժողովի հաշվետու նիստը Գասպարյան անկեյանոցում, որին ես էլ հրավիրված էի։ Խալաթյանցը, որ նույնպես հանձնաժողովի անդամներից մեկն էր, ինձ հանդիպելով, հարցրեց՝ թե ե՞րբ պիտի վերադառնամ և հրավիրեց ճաշի։

Գնացի ճաշի։ Եկել էին և մի քանի հին բարեկամներ Բնակարանը, որքան ես հիշում էի, միևնույնն էր մնացել, միայն կահ կարասիքն էր վերանորոգվել։ Մեծ դրասեղանը խառն ի խուռն լցված էր թերթերով ու գրքերով. նա սիրում էր, որ իրեն տեսնեն շրջապատված թղթերով, պարապելիս։ Լավ ժամանց ունեցանք, մեր անցյալը հիշեցինք, մեր ոսկե ուսանողության անցյալը։ Հիշեցինք և մորոգ հանգուցյալին։ Ես գտվեցի Խալաթյանցի դամբանականը, Նատուրյանի կարդացածը և գերեզմանի վրա Վասիլովսկու սրտանց արտասանած մի երկու խոսքը...։

— Այո՛, այո՛,— պատասխանեց Խալաթյանցը,— պետք է ամեն գործիչ գնահատվի համապատասխան իր ժամանակի հանգամանքներին. մեզանում հաճախ այս ճշմարտությունը մոռացության է տրվում։

Նա ակնարկում էր եկեղեցում իր խոսածը։

Ես մի երկու օր ևս մնացի Մոսկվայում, նոր տարին էլ այնտեղ արի և վերադարձա Նոր Նախիջևան։ Ճանապարհ ընկնելուցս առաջ, մի վերջին անգամ էլ գնացի Տագանկա, հայոց գերեզմանատունը։ Ցուրտ, քամոտ օր էր. գերեզմանները ծածկված էին խոր ձյունով։ Հանգուցյալի գերեզմանաքումքն էլ իր վրա մի կիտուկ ձյուն ուներ։ Զոքեցի ձյունի վրա և իմ երախտագիտության զգացմունքներս հայտնեցի. նա էր, որ բերել էր մեզ՝ երեք եղբայրներիս Լաղարյան ճեմարան ուսման։ Վեր կացա, չորս կողմս նայեցի։ Խորին լռություն էր, ոչ ոք չկար, ի՞նչ եմ ասում, ընդհակառակը, շատեր կային, բայց ամենքն էլ լռիկ մնջիկ քնած էին խոր ձյունի տակ—Ահա՛ Նազարյանցը, ահա՛ Մսերը, ահա՛ իմ կրոնուսույց Տեր Հարությունյան Քուրքչյանը, ահա՛ իմ կրտսեր ընկեր վաղարշապատցի Մուշեղյանը, որ մահացել էր Ճեմարանում, և ես ամբողջ դիշեր սաղմոս էի քաղել նրա վրա... Ցուրտ էր, շատ սառը քամի էր փչում։ Վերադարձա քաղաք և վերջին երեկոն էլ անցկացրի իմ նախկին ծառայակից Նախիջևանում պատվական բարեկամ ղզլարեցի Սահակ Թանգյանի ընտանիքում, որ մխիթարիչ էր հանդիսացել ինձ իմ սգալից օրերին Մոսկվայում։ Վերադարձիս, եղանակը մի փոքր ինչ մեղմացել էր, այնքան փոթորկալից չէր, որքան Մոսկվա մեկնելու օրերումս էր։

Բայց ես իմ հուշերում սակավ ինչ առաջ գնացի և չհիշեցի փր տեղը մի կարևոր հանգամանք, որ վերաբերում է Խալաթյանցին։ Ես մոռացա ասել, որ Քանանյանի վերատեսչության օրերում, երբ նա բռնել էր Դելյանովի տեղը (1890 թ.) և տեսչության պաշտոնը թափուր էր մնացել, Խալաթյանցը հրավիրվել էր այդ պաշտոնին։ Այն օրերից նա լիկեոնի դասախոսի պաշտոնի հետ միասին վարել էր տեսչի պաշտոն և խաղաղ կառավարել Ճեմարանը։ Այդ դժվար և դյուցազն գործը կարողացել էր կատարել Քանանյանի ցուցմունքով։ Քանանյանը վախճանվել է 1897 թվին և Ճեմարանի վերատեսուչ է կարգվել Մոսկվայի համալսարանի գիտնական դասախոս Վ. Միլլերը, որի ժամանակ Ճեմարանում տեղի է ունեցել մի ներքին սովորական փոթորիկ, որ չի կարողացել

---

1. Մեծահարգ Ե. Շահազիզի հիշատակած այս սղագրությունը հավանական է եղած լինի Խալաթյանցի «Очерк истории Армении» աշխատության՝ մի մասը, որը նրա դասախոսությունների դասընթացն է Լաղարյան ճեմարանում և որը հրատարակվել է վիմագիր 1910 թվին։—ԽՄԲ.

կամ չի կամեցել հենց տեղն ու տեղը վերացնել Միլլերը։ Նորամուտ ուսուցիչներից մեկը, ազգային խորականությունն նկատելով Խալաթյանցի վարմունքի մեջ, ամբաստանել է դպրոցական բարձր իշխանության։ Պահանջվել է բացատրություն։ Պատվասեր Խալաթյանցը մի ընդարձակ հերքումն է ուղարկել և դրա հետ միասին և իր հրաժարականը, որ ընդունվել է։

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Ճեմարանն ուներ մի հիմնական օրենք, որ պահանջում էր, որ Ճեմարանի կա՛մ վերատեսուչը, կա՛մ տեսուչը հայազգի լիներ, Միլլերը հրավիրել էր տեսչության պաշտոնի համար Սահակ Թանդյանին։

Խալաթյանցը պետական ատեստանների կամ ատեստավորության շատ սեր չուներ, բայց մեծ գիտնականի անուն վաստակելու համար մեռած էր։ Նա դրա համար և դրականության խորքերը, անկյունախորշերը քրքրելու, քշելու մի առանձին սեր ու ընդունակություն ուներ։ Եվ աշխատասիրությունն էլ չէր պակասում նրան։

Նրա օրոք մի ժամանակ եղավ, որ մի զորեղ հոսանք վչեց մեր դրականության մեջ. ամենքը թափվեցին ճշտելու Խորենացու Հայոց պատմության աղբյուրները, որոնք 1400 տարուց ի վեր անձեռնմխելի էին մնացել։ Կարծեմ այդ հոսանքն արտասահմանի հայագետներից եկավ։ Դեռ առաջ էլ, թե՛ մեզ. նում և թե՛ արտասահմանում, սկսված էր մեր հին դրականության ուսումնասիրությունը, դրա արժեքը գնահատելու համար։ Բայց այդ կատարվում էր հետզհետե, գիտնականության հատուկ կարգով։ Ս. Էջմիածնում, օրինակի համար, «Միաբան»ը հանգիստ նրստած իցում, երբեմն իր խորենացու ուսումնասիրություններից այնպիսի հայտարարություններ էր տպում «Աբարատում», որ զարմացնում էր ամենքին։ Բայց այս հոսանքն այդպես չէր. ամենքն էլ կարծես դտել էին մի վտանգավոր հանցավոր և շտապում էին հանցավորի հանցաքանշանները դանել։

Ո՞վ էր հանցավորը։— Մեր բովանդակ հին դրականության միակ ուսող, հայրենասերների հայրենասեր Մովսես Խորենացին։

Ի՞նչ ծանր հանցանք էր կատարել նա։— Նա գրել է 2—3000 տարի անհայտ, անհիշատակ մնացած իր ազգի ծագման պատմությունը։

Ի՞նչ միջոցներ է գործադրել նա այդ անհիշելի ժամանակների պատմությունը վերականգնելու համար։— Նույն միջոցները, որ գործադրել են նույն կացության մեջ գտնված մյուս պատմիչները. նա հավաքել է ազգի մեջ պահպանված և մինչև իր ժամանակները հասած բոլոր առասպելները, երգերը, ավանդությունները, հիշողությունները, իրար մոտ բերել և այդ բոլորից բանաստեղծորեն կազմել իր գեղեցկագույն պատմությունը։

Ի՞նչ հանցանք է, ուրեմն, գործել նա։— Նա որտեղ որ պակաս է աղբյուրը, դտել և օգտագործել է օտար աղբյուրներ, սակայն առանց ստուգելու նրանց ճշտությունը։

Ահա այդ հոսանքի այդպիսի հախուռն դրականագետներից մեկը և ամենատեսանելին հանդիսացել է մեր Խալաթյանցը, որ Խորենացու պատմության հիշյալ օտար աղբյուրները գտնելու և նրանց ի՛նչ և ի՛նչպիսին պարդելու գործում գործադրել է իր բոլոր ուժն ու կարողությունը և ծայրահեղության հասել։ Նա, վերջապես, ճիշտ է, մի որոշ չափով դրական եզրակացություններ արել է, բայց իր աշխատանքի ընթացքում չի կարողացել պահանջված սահմանը պահել և երախտամոռ է գտնվել պատմության հեղինակ Խորենացու նկատմամբ, իր կրիտիկական գրվածներում թույլ տալով նրա վերաբերմամբ անվայել արտահայտություններ։ Նրա արած դրական եզրակացություններն էլ շատ թույլ են եղել։

Այս մասին նրա եզրակացությունների քննադատ Սանուկ Արծրունին ասում է. «Պ. Խալաթյանի հիմունքները շատ թույլ ու խախուտ են և հաճախ վեպի հետ կապ չունեցող։ Բայց և այնպես նա այդպիսի նախադիրներով շատ հեշտությամբ եզրակացություններ է անում։ Թեպետ անվերջ կրկնած «հավանական է», «գուցե», «կարելի է կարծել», «ինձ թվում է» և նման դարձվածներով լիքն է նրա աշխատությունը, սակայն, կարող է վերջը ոչ մասնագետի և ոչ քննադատական աչքով կարդացողի համար ընդունելի լինել հոգեբանական այն պարզ օրենքով, որ թույլը թույլի հետ միանալով, իրար զորացնում են և վերջը զորեղ տպավորություն թողնում։ Սակայն առաջին հայացքից հենց նրա եզրակացության չափազանցությունը, ուստի և սխալ լինելը, թվում է ընթերցողին», և այլն։

Այժմ էլ մի քանի խոսք Խալաթյանցի հայերեն գրածների և հատկապես նրա խմբագրությամբ հրատարակված Ռափայել Պատկանյանի երկհատորի մասին։ Ինչ վերաբերվում է խմբագրության, այդ կատարված է, ըստ ամենայնի, բարեխղճաբար, իսկ ինչ վերաբերվում է կենսագրության, որ զետեղված է այդ հրատարակության մեջ, նույնը չի կարելի ասել։ Անհրաժեշտ է նկատել, որ Ռափայել Պատկանյանը մեր նոր դրականության հեղինակների մեջ ամենաանբախտն է. նրա ո՛չ հորելյանն է տոնվել, ո՛չ

էլ մինչև այսօր ստույգ կենսագրություն դրվել։

Պետք էր սպասել, որ կենսագրությունն այս անգամ դուրս կգար ամենայն կատարելությամբ, քանի որ դրա գրողն էր Լազարյան ճեմարանի լիկեոնի պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանցը, բայց մեր սպասածը չի կատարվել. կենսագրությունը վերստին լույս է տեսել նախկին անկատարությամբ, պակասություններով, սխալներով ու կցկտուրությամբ, որ պատիվ չէր կարող բերել մեր ընկերոջ գրչին։ Ահա դրա մեջն է եղել, որ արտահայտվել է նրա կորված, իրված լինելը մեր նոր գրականությունից. նա ծանոթ չի եղել Ռափայել Պատկանյանի կյանքին և գործունեության, ծանոթ չի եղել աղբյուրներին, վավերագրերին, որ անհնար էր նամակներով հեղինակից ստանալ...։

Ռափայել Պատկանյանի ընտիր երկերի հրատարակողն եղել է Վառվառե Քանանյանը, որ կամեցել է դրանով նյութական օժանդակություն հասցրած լինել իրեն՝ հիվանդ Պատկանյանին և նրա ընտանիքին։ Նա նամակ է գրել նրան և գրավոր թույլտվությունը խնդրել։ Պատկանյանը շնորհակալությամբ ուղարկելով նրան թույլտվությունը, ավելացրել է, որ եթե այդ արվում է իրեն նյութական օգնություն տալու նպատակով, չի հասած լինել նպատակին, որովհետև հայ մարդը տակավին սովորած չէ հայ գրքին փող տալ, գնել։ Բայց այդ նախազգուշացումը չի ընդունվել։ Երկհատորները տպագրվել են Պետերբուրգում 1899 թվին, երբ բանաստեղծն արդեն վախճանված է եղել 1892 թվին, և մաքուր խնամքով տպագրված երկհատորները, կապույտ, սիրուն կազմերի մեջ, թափված են մնացել հումպեռում։ Այնինչ Քանանյաններն ունեցել են այնքան կարողություն, որ եթե ուզենային, ազատ կարող էին ամոքած լինել իրենց մտերիմ քարեկամի կյանքի վերջին տարիների խղճուկ կացությունը, նամանավանդ նրա վերջին երկու տարվա հիվանդության օրերում, որով, գուցե, և երկարացրած լինեին մի քանի տարվա նրա հայ գրականության համար այնքան արդյունավետ կյանքը։ (Ռ. Պատկանյանի մասին տեսնել հոդվածի վերջում «ծանոթագրությունը)։

Ահա և մի դրվագ ես, և ես վերջացրած կլինեմ իմ հուշերը Խալաթյանցի մասին։

Չգիտեմ, չեմ հիշում, թե ո՞ր թվին էր, որ ես Թիֆլիսի Ղուկասյան կրոնա-պատմական թանգարանի վարչությունից մի գրքի հետ միասին ստացա մի ծրար, որի մեջ վարչությունը խնդրում էր, որ ես կարդամ գիրքը և իմ կարծիքը հայտնեմ նրա մասին, առանց հայտնելու, թե ինչո՞ւ համար է այդ։

Գիրքն ինձ համար մի անհայտ բան չէր. դա առաջ տպվում էր մաս մաս Ս. Էջմիածնի «Արարատում և ես, բնականապես, կարդացել էի և հավանել։— Դա Մանուկ Աբեղյանի ուսումնասիրություններն էր, որը 1899 թվին արտատպված լինելով «Արարատից, դարձել էր մի ամբողջություն և, ուրեմն, ավելի հեշտամատույց՝ կարդալու և դաղափար կազմելու նրա արժանավորության մասին։

Ես պատճառ չունեի հրաժարվելու, ուստի և մեկ էլ ուշի ուշով կարդացի ամբողջությունը միասին, այսինքն գիրքը, և եկա այն եզրակացության, որ Խորենացու աղբյուրների քննադատներից և ոչ մեկը մինչ այդ այնպիսի ճշտությամբ չի հասկացել Խորենացուն, ինչպես որ հասկացել է Մանուկ Աբեղյանը և այդպես էլ դրեցի վարչությանը։

Չգիտեմ, թե ո՞ր աղբյուրից դարող էր Խալաթյանցն իմացած լինել իմ տված այդպիսի կարծիքի մասին և խորին կերպով վիրավորվեց, մի հանգամանք, որ պատճառ եղավ մեզ իրարից դժգոհելու։ Չէի կարծում, որ ընկերական սերն ու հավատարմությունը կարող էին արգելք հանդիսանալ ընկերներից մեկի ազատ կարծիքի արտահայտության։

Դրա վրա անցավ մի ժամանակ, և ես սրտի ցավոք լսեցի, որ նա հիվանդացել է Թիֆլիսում և վախճանվել է, մարմինը տարվել է Մոսկվա և այնտեղ մեծ հանդիսավորությամբ հողին հանձնվել։

Սրանք մեր հուշերն են և հուշերի հետ կապված մի քանի դիտողություններ, որոնք համառոտակի անհրաժեշտ համարեցինք դրի առնել։

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻ ԹՈՂԱԾ ՄԵՋ ՀԱՑՏՆԻ ԳՐԱՎՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

1. Նրա առաջին գրվածքն եղել է մի ընդհանուր տեսություն (ՕՐԳՐ) հայ հեքիաթների, որ նա մատուցել է իբրև ուսանողական հաշվանցում (ՅԱՎԵՏ) Թ. Ի. Բուսլայեվին, 1879 թ.։

2. Ղազար Փարպեցի և գործք նորին։ Գրաբար ուսումնասիրություն, 1883 թ.։

3. Խորեն վարդապետ Ստեփանեի Խորենացու պատմության աշխարհաբար թարգ-

մանության քննադատությունը, 1890 թ. (հայերեն)։

4. Խաչատուր Հովհաննիսյանի հրատարակած Եղիշեի Վարդանանց պատմության քննադատությունը, 1893 թ. (հայերեն)։

5. Եղիշեի պատմության աղբյուրների առթիվ, «Հանդէս ամսօրեայ», 1893 թ. (հայերեն)։

6. Ջենոբ-Գլակ։ Քննադատական ուսումնասիրություն, 1899 թ. (հայերեն)։

7. Պատասխան իմ քննադատին, «Մշակ», 1893 թ., № 69։

8. Նորագույտ պարալիպոմենն Ս. Գրքերի մասին հայկական հնագույն թարգմանությամբ, Վաղարշապատ, 1896 թ.։

9. Երկու հայագետ — Մ. Յ. Էմին և Ք. Պ. Պատկանյան։ Մի տեսություն նրանց գիտական գործունեության մասին (ռուսերեն)։

10. Մովսես Խորենացու պատմության քննադատական ուսումնասիրության սկիզբն (ռուսերեն), 1894 թ.։

11. Հայկական վեպը (էպոս) Մովսես Խորենացու պատմության մեջ։ Մի փորձ քննադատական ուսումնասիրության, 1896 թ.։

12. Մար-Աբաս Մծուրանցի կամ կեղծ Ագաթանգեղոս, 1897 թ.։

13. Մովսես Խորենացու նորագույն աղբյուրների առթիվ (Հայ թարգմանություններ Սոկրատի եկեղեցական պատմությունից)։ Քննադատական ուսումնասիրություն, 1898 թ. հայերեն։

14. Եղնսիս Արպար թագավորի մասին ըստ Մովսես Խորենացու, Մոսկվա, 1900 թ.։

15. Մովսես Խորենացու աղբյուրները— Խորենացին և Դիոնիսիոս Նապիանոսցին, Վաղարշապատ, 1897 թ.։

16. Հին Հայաստանի մի քանի աշխարհագրական անունների մասին, Վանի արձանագրությունների տվյալների կապակցությամբ, 1901 թ.։

17. 17-րդ դարու մի հիշատակարան Հաթեշտանի մասին։

18. Ո՞վ է եղել Կրեսոսի հաղթողը, ըստ Մ. Խորենացու վկայության (Խորենացու Հայոց պատմության քննադատությունից)։

19. Հայ Արշակունիները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ։ Աղբյուրների քննադատության մի փորձ։

20. Մովսես Խորենացին և հին հայկական վեպը։ Ուսումնասիրություն Էմինի, թարգմանություն հայերեն, Թիֆլիս, 1896 թ.։

21. Մրագիր հայ ազգագրության և ժողովրդական-իրավաբանական սովորությունների վերաբերմամբ տեղեկություններ հավաքելու համար, 1897 թ. (հայերեն)։

22. Դավիթ Սասունցի։ Մի նմուշ Հայկական էպոսից, 1881 թ., հոկտ.։

23. Հայ հեքիաթների մի ընդհանուր տեսություն (очерк)։ Ազգագրական նյութերի հավաքածու, տպագրված պրոֆ. Միլլերի խմբագրությամբ, 1885 թ.։

24. Գրիգոր Խարբերդցու քերթվածը (պոեման) գրված 1525 թվին Թեմուրլանգի արշավանքի մասին Հայաստան, 1889 թ.։

Մանրագրություն

Ավելորդ չենք համարում այստեղ, գոնե այս ձանրագրությանս մեջ, մեջ բերել սխալներից մի երկու օրինակ։ Խալաթյանցն իր գրած կենսագրության մեջ ասում է. «Պատկանյանը ծնավ Նոր Նախիջևանում 1830 թվի նոյեմբերի 3-ին։ Պատկանյանի ծննդյան վկայագիրը մեր ձեռքը չի հասել, բայց հասել են նրա համալսարանի դիպլոմը և ծառայության ցուցակը, որոնց մեջ գրված է, թե նա ծնվել է 1832 թվի սեպտեմբերի 20-ին, մի թվական, որ, հայտնի բան է, առնված է եղել նրա ծննդականից։

Խալաթյանցն ասում է. «Բայց Ռափայել Պատկանյանը դժբախտաբար չկարողացավ լիովին ավարտել այստեղ (Լազարյան ճեմարանում) իր ուսման ընթացքը, ստիպված լինելով, իբրև եկեղեցական սան, վեցերորդ դասարաններից թողնել Լազարյան ճեմարանը, իր թշնամիների որոգայթների պատճառավ և հեռանալ Թիֆլիս իր հոր մոտ (1849—1850 թ. թ.)»։

Ստույգ վավերագրերը սակայն վկայում են, որ Ռափայել Պատկանյանն ավարտական քննությունների անհաջողության հանդիպելով, ինքնակամ դուրս է եկել, խնդրելով իր ընկերներին գաղտնի պահել իր չավարտած դուրս գալը ճեմարանից։

Սխալ է և այն, որ նա դուրս գալով ճեմարանից, գնացել է իր հոր մոտ, Թիֆլիս։ Նա Մակարիա մեծ տոնավաճառի վրայով, առաջ գնացել է Հաշտարխան, տաստոնց տանը և հետո իր հորեղբոր՝ Տեր Պետրոս քահանայի հետ, Ստավրոպոլ, և այդ տեղերում նա մնացել է երկար ժամանակ քեֆերի և ուրախության մեջ, մինչև որ հայրն իմացել է և բերել տվել նրան Թիֆլիս իր մոտ, և այլն և այլն։

ՊՐՈ Ֆ.-ԴՈԿՏ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հովհաննես Սարկավագի աշխատություններից, ըստ մատենագրական տեղեկությունների, արժեքավոր գործ է հանդիսացել նրա պատմությունը։ Իրավացի է Ալիշանը, երբ գրում է. «Անշուշտ իր ամեն գործքերուն մեջ գլուխ գործոց սեպելու է իր Պատմությունը, որ դեռ կորսվածներուն կարգն է ինծի»[1]։

Հովհաննեսի այս կորած պատմությունը, Ալիշանի կարծիքով, բաղկացած է եղել երկու մասից. առաջին մասում շարադրված է եղել սկզբից պատմությունը — սկզբունքների հանդես գալը, նրանց արշավանքները, Տուղրիլ բեկի, Մահմուտի և Ալփասլանի պատմությունները և այլն, իսկ երկրորդ մասում շարադրված է եղել Մելիքշահի պատմությունը[2]։ Նույն կարծիքն է հայտնել նաև Կ. Զարբհանելյանը[3]։ Եվ այս տեսակետը, պետք է ասել, քաղաքացիություն է գտել հայագիտության մեջ։

Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ ընդհանրացած այս կարծիքը ճիշտ չէ։ Սամվել քահանա Անեցու մի տեղեկությունից պարզ երևում է, որ Հովհաննեսի վերաբերվող հիշված աշխատությունները ոչ թե մի գրքի երկու մասերն են հանդիսացել, այլ Հովհաննեսի պատմական տարբեր աշխատություններ։ Սամվել Անեցու տեղեկությունից երևում է նաև, որ նա իր ժամանակագրությունը շարադրելիս, Հովհաննեսի վերաբերվող հիշված պատմությունից առաջինը, այսինքն «Սկզբնացվոց պատմությունը», որն առաջներում տեսած է եղել իր ուսուցչի մոտ, ձեռքի տակ չի ունեցել և չի կարողացել օգտվել նրանից, իսկ երկրորդը, Մելիքշահի պատմությունը, ունեցել է և օգտվել։

«Զայսոսիկ նշանաւ գրոյ եցոյց մեզ իմաստասէրն (Յովհաննէս), մինչև ցՄելիքշահն, — գրում է Անեցին, — զոր յիւրում տեղւոջն գրեցից սորին ձեռնտուութեամբ։ Իսկ զՀօրն նորա ժամանակ, զարիւնախանձին Ալփասլանայ, եւ զնորին հօրն եւ զհաւուց որ Տուղլուպէկ եւ Մահմուտ եւ Սարջուկ անուանք են նոցա, տեսաք երբեմն գրեալ սորին ձեռօք ստոյգ գտակաւ, եթէ հանդիպիմք մատենին եւ մեք շարադրեսցուք, եւ թէ ոչ՝ լքցուք»[4]։

Ինչպես տեսնում ենք, Հովհաննեսի պատմական աշխատություններից ունենք ո՛չ թե մեկ, այլ երկու կորուստ։

Հովհաննեսի նշված աշխատություններից ոչ մեկն ամբողջությամբ, դժբախտաբար, մեզ չհաջողվեց հայտնաբերել Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանում։ Միայն առաջին պատմությունից, այսինքն այն պատմությունից, որն Անեցին տեսած է եղել իր ուսուցչի մոտ բայց ձեռքի տակ չի ունեցել, մի փոքրիկ հատված գտնվել է Հաղբատ-Սանահինի «Գրիգորիս» կոչված ձեռագրում։ Հատվածը վերնագրված է. «Վասն սմանչելեաց Սուրբ Աստուածածնին»։

Այս հատվածի Հովհաննեսին պատկանելու մասին կա «Գրիգորիսի» կազմողի հետևյալ հեշատակությունը. «Էր եւ պատահումն ի վանան Սանահին կոչեցեալ, զոր տայ մեզ գրով իմաստուն Պետրոսիկոն Սարկաւագն»։ Նշված հատվածում Հովհաննեսը պատմում է, որ 1110 թվականի օգոստոսի 13-ին, Հաղբատում, առավոտյան, միաբանները եկեղեցում աղոթած ժամանակ, նրանց վրա են

1. Ղ. Ալիշան, Հուշիկք, էջ 300։

2. Նույնը, էջ 301։

3. Դ. Զարբհանելյան, Հայկական հին դպրության պատմություն, էջ 608։

4. Սամուելի քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 98։

5. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 2021, թ. 27բ։

հարձակվում սեյդուկները. «Ցանկարծակի յարձան եւ կալեալ զդուրս եւ զկողմանս ապօթարանին շուրջ պատեալ ամբարշտացն պարսկային սկիւթացւոցն մերկ զինուք պատրաստականաւք, խժաբան ձայնիւ զաղազակ եղեալս»[6]։ Այդ նույն ժամանակ, ինչպես երևում է, վանքում գտնված է եղել նաև Դավիթ թագավորը, Կյուրիկեի որդին, առանց զորքի։ Սանահինի միաբանությունը, տեսնելով վերահաս վտանգը, աշխատում է և կարողանում անվնաս ազատել Դավթին և փախցնել։

«Քյոթուկոի հիմնական մասը կազմվել է 17-րդ դարում[7], օգտվելով հին պատմագրերից, վավերագրերից, հիշատակարաններից և պատմական այլ նյութերից։ Անվիսակած, հենց այդ ժամանակ էլ կազմող հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է Հովհաննեսի ամբողջական աշխատությունը և օգտվել է նրանից։ Շատ է ցավալի, որ մինչև 17-րդ դարն անվնաս մնացած Հովհաննեսի այս պատմությունը այժմ կորած է մեզ համար։

Ի միջի այլոց, ժողովածուն կազմող հեղինակը, հայտնի մատենագրերի շարքում հիշատակում է մի պատմագրի ևս, որի հեղինակը ինքը չի կարողացել պարզել, ձեռագրի փտած և թերթեր թափած լինելու պատճառով. «Եւ միւս եւս դոյր պատմագիր, յորում գրեալ էր, զորոյ անուն ոչ կարացաք գիտել, վասն որոյ ապաշեմք ներել մեզ, քանզի կարի փտեալ էր, որոյ ոչ սկիզբն գոյր եւ ոչ վերջն»[8]։ Դժվար է այժմ հաստատապես որևէ բան ասել այս պատմագրի մասին, բայց ակամա մարդ կասկածում է— հեղինակը չպարզված պատմական այս աշխատությունը Հովհաննեսի կորած պատմությունից մեկն ու մեկը չի՞ հանդիսացել արդյոք։

Բանասեր Բ. Սարգսյանն իր կազմած Վենետիկի ձեռագրաց ցուցակի մեջ հիշում է իրենց մատենադարանում մի ձեռագիր (№ 261, 1504 թվի ընդօրինակությամբ), ուր ընդօրինակված է անանուն մի ժամանակագրություն, որի հեղինակը, ըստ Սարգսյանի տեղեկության, օգտվել է Հովհաննեսի պատմությունից։ Այդ մասին ժամանակագրությունը կազմող հեղինակը թողել է հետևյալ հիշատակությունը. «Իսկ յետ նոցա (արաբացւոց), սկիզբացւոցն առնուլ զբռնակալութիւնն այսպիսի պատճառաւ, զոր ընթերցաք գրեալ վարդապետին մեծի, որ Սարկաւագ վերակոչի...»[9]։

Սարգսյանի տեղեկությունից հրեվում է, որ անանուն ժամանակագրության սկզբի մասը քաղված է Սամվել Անեցուց, իսկ շարունակությունը՝ «Սարկավագ վարդապետի անհայտացած պատմութենեն»[10]։ Ժամանակագիրը, ինչպես երևում է Սարգսյանի տեղեկությունից, ուշ շրջանի համար կատարել է իր ավելացումները, հասցնելով այն 1314 թվականը, այնինչ շարունակելով ևս 180 տարվա պատմություն։ Ժամանակագրությունը հասցվում է մինչև Ափխազիայի կոտորածը. «Եւ անտի գազանաբար յարձակէին (թաթարք) յաշխարհին Գուգարացւոց եւ սուր ի գործ արկեալ անխնայաբար կոտորէին. զորս ի բուռն արկանէին, եւ այնպէս ահարեկ արարեալ զանենեսեան, զրազում գեղս եւ զգաւառս ուերէին մինչեւ ի ներքին կողմն Վրաց, որ կոչի Ափխազք»[11]։ Ցանկալի էր, որ Վենետիկի միաբանները, հնարավորին չափով շուտ, հրատարակության հանձնեին անանուն այս ժամանակագրությունը, որպեսզի կարելի լիներ պարզել ժամանակագրի Հովհաննեսից օգտված մասի չափը և արժեքը։

Ալիշանը Հովհաննեսի անունով հիշում է նաև եկեղեցական մի պատմություն. «Անցյալ գարու վերջը,— գրում է նա,—պլող բանասեր մը կըսե թե «Սարկաւագ վարդապետն սուրբ Յովհաննէս արար եկեղեցական պատմագիրս». այս բանիս վրա հինգերեն վկայություն մը չունիմ. միայն փափաքիմ թե հիրավի գրված ըլլա»[12]։ Ալիշանը ենթադրում է նաև, որ այդ պատմությունը, հավանական է, կանոնագիրք լինի... «Գուցե թե այդ պատմությունը ըլլա կանոնագիրքն»[13]։

Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ Հովհաննեսի անունով իրոք որ մեզ է հասել եկեղեցական մի պատմություն, որը սակայն ոչ մի կապ չունի կանոնագրքի հետ։

Հովհաննեսի վերագրվող եկեղեցական պատմության մի հատվածը գտնված է մեր մատենադարանի երեք ձեռագրերում՝ № № 2042 (14-րդ դարի ընդօրինակություն, թ. 11 բ—12 բ), 2043 (14—15-րդ դ., թ. 372 ա—376 ա) և 2045 (14-րդ դ., թ. 104 ա—

6. Նույնը, թ. 27բ—28ա։

7. Այս ձեռագիրը հայտնի է նաև «Հովսեփ Արղությանի ձեռագիր» անունով, որովհետև սկսած 1797 թվականից, նա Արղությանի ոնփկանությունն է կազմել։ Արղությանն ևս նպատակ է դրել, Հաղբատ-Սանահին վանահայրերի տրադիցիայով, շարունակել իր ժամանակի հետ կապված կարևոր վավերագրերի գրանցումները (տես ձեռագրի թ. 1բ, թ. 264 և այլն)։

8. Հայկ. ՍՍՌ Գիտական մատենադարան, ձեռ. № 3031, թ. 19ա—բ։

9. Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, Բ. հատոր, էջ 817։

10. Նույնը, էջ 817։

11. Նույնը, էջ 817։

12. Ալիշան, Հուշիկք, Բ. հատոր, էջ 304։

13. Նույնը, էջ 304։

106բ)։ Այս հատվածը վերնագրված է «Յեկեղեցական պատմութենէն, զոր երկրորդեալ է Սարկաւագ վարդապետի»։ «Երկրորդեալ է» այստեղ, մեր կարծիքով, պիտի հասկանալ մեկնելու, ծաղկաքաղ անելու իմաստով։ Իսկ թե ի՞նչ աշխատությունից է Հովհաննեսը ծաղկաքաղ արել, այս մասին քիչ հետո։

Հովհաննեսի եկեղեցական պատմության հատվածը սկսում է Հռոմեական Բեկտոր եպիսկոպոսի գործունեությունից, այնուհետև հիշատակված են մի շարք աղանդներ (Արտեմոնի, Նեստորի և նրանց հետևողների), իսկ վերջում Հովհաննեսը քննության է առնում Հայտնության և Մկրտության տոնների հարցը։ Իմիջի այլոց, Հովհաննեսին վերագրվող եկեղեցական պատմության այս հատվածի մի այլ ընդօրինակությունը, ինչպես երևում է Հ. Ոսկյանի մի տեղեկությունից, պահվել է նաև Երուսաղեմի Ս. Հակոբյանց Մատենադարանում (№ 884 ձեռագիրը)։

Հովհաննեսի անունով մեզ հասած «Յեկեղեցական պատմութենէն, զոր երկրորդեալ է Սարկաւագ վարդապետի» խորագիրը կրող հատվածի նախնական ծանոթության ժամանակ մենք ևս այն կարծիքն էինք կազմել, որ Հովհաննեսը, հավանական է, ունեցել է, կրոնական պատմության ընդարձակ մի տեքստ, որի հատվածն է վերև բերված պատառիկը։ Սակայն ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ մենք սխալված ենք եղել։ Հովհաննեսի մեզ հասած այդ պատառիկի ուշադիր ուսումնասիրությունը մեզ բերեց միանգամայն այլ եզրակացության։ Այս մասին ևս մենք կխոսենք ստորև։

Հովհաննեսի կրոնական-պոլեմիկ աշխատությունների շարքում նախ անցեալ տարի մեզ հայտնի դարձավ նրա մի աշխատությունը, որը վերնագրված է. «Նորին (Յովհաննու Բահանայի) հակաբանութիւն ճնագիտական ընդդէմ անգիտակաց ոմանց յիրս գիտութեան, որ ստայօղ հառիւ հաւանեցուցին զոմանս ի վայրազագ եւ պարզամտաց հաւատալ անհաւաստի իրաց»[14]։ Հովհաննեսն իր այս աշխատության մեջ, ինչպես խոստանում է իր ներածականում, նպատակ է դրել ծանոթացնել վաղ քրիստոնեական շրջանում առաջ եկած աղանդների հետ, նշել նրանց յուրաքանչյուրի առաջ գալու ժամանակը, տեղը, ղեկավարները, ինչհանուր ուղղությունը և այլն, այսինքն այն, ինչ որ արված է նրան վերագրված եկեղեցական պատմության վերեվ հիշված պատառիկում։ Իսկ Հովհաննեսը, իրեն հատուկ բարեխղճությամբ, հիմնվելով սկզբնաղբյուրների տեղեկությունների համեմատական ուսումնասիրության վրա, պարզում է՝ թե ո՞ր աղանդը ո՞ր թագավորի կամ ո՞ր եպիսկոպոսի ժամանակ է հանդես եկել։

Պետք է ասել, որ աղանդավորների հետ կապված Հովհաննեսի այդ աշխատությունը կարևոր նյութ է հանդիսանում Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար, որովհետև այնտեղ որոշ տեղ է տրված նաև պավլիկյաններին, որոնց հիմնագիր է հիշված Պող Սամոսատացին։

Ինչպես հայտնի է, ժամանակին Հայաստանում տեղի ունեցող սոցիալական շարժումների մասին սենսացիոն նորություններ են հանդիսացել Գ. Տեր-Մկրտչյանի «Ա. բարատասում լույս ընծայած Անանիա Նարեկացու «Գիր խոստովանութեանց»[15] և Բ. Սարգսյանի ուսումնասիրության հավելվածում տեղավորված Գ. Նարեկացու թուղթը՝ կհավատ միաբանությունը՝ թոնդրակեցիների մասին[16]։ Այս տեքստերի և մատենագրերի մոտ եղած որոշ տեղեկության հիման վրա է, որ Կարապետ եպիսկոպոսը գրել է իր ուրժեքավոր ուսումնասիրությունը պավլիկյանների մասին[17]։ Հովհաննեսի ներկա աշխատությունը ևս, պետք է ասել, որ կարևոր սկզբնաղբյուր է սոցիալական շարժումների պատմության համար Հայաստանում։

Հովհաննեսն իր այս աշխատության մեջ օգտվել է Եվսեբիոս Կեսարացու եկեղեցական պատմությունից։ Նա տեղ տեղ տառացի ընդօրինակել է Եվսեբիոս Կեսարացու եկեղեցական պատմության հինգերորդ դրքրության՝ «Վասն այնոցիկ, որ եղեն ի սկզբանէ յաղանդոց անտի Արտեմոնի եւ որով օրինակաւ էին նոքա և որպէս համարձակեցան նոքա եղծանել զգիրս սուրբսն վերնագիր ունեցող գլուխը։ Հետաքրքիր է, որ Հովհաննեսի Եվսեբիոսից օգտված այս գլուխը ո՛չ թե վենետիկյան հրատարակության բնագրի բուն տեքստի ընդօրինակության համար պատվանող ընդօրինակությունից է, այլ տարի տրված ընդօրինակության համար, որը մեր կարծիքով, ավելի հին է և կարևոր։ Մենք այստեղ ավելորդ ենք հա-

[14]. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 2650, էջ 120։

[15]. Նրանց լույս հաւ Անանիայի գիր խոստովանութեան («Արարատ», 1891 թ., էջ 6—18)։

[16]. Թուղթ ամենայնորի՝ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ, զոր գրեաց ի հայկազն ոճսին կճատայ վասն կարծեացն անցելոց թոնդրակեանց... (տե՛ս Բ. Սարգսյանի «Ուսումնասիրություն Մանիքա-Պավլիկյան թոնդրակեցիների ազանդի», Վենետիկ, 1893 թ., էջ 106—107)։

17. K. Ter-Mkrtchian, Die Paulikianer. Leipzig. 1893.

մարում պուպտահես բերել Հովհաննեսի և Եվսեբիոսի այդ տեքստերը, որովհետև նրանք այնքան նման են իրար, որ որոշ տեղեր հնարավոր է վիճում նույնիսկ մի տեքստի հիման վրա ուղղել մյուս տեքստի մեջ տեղի ունեցած դրչական սխալները։

Հովհաննեսի՝ Եվսեբիոսից օգտվելու այս փաստը օգնում է մեզ պարզելու նաև Հովհաննեսի անունով մեզ հասած վերև հիշված եկեղեցական պատմության հատվածի ազբյուրը և հասկանալ՝ թե ինչո՞ւ է նա վերնագրված եղել «Յեկկղեցական պատմութիւն, զոր երկրորդեալ է Սարկաւագ վարդապետին» ձևով։ Ուսումնասեր հայագետները, մեր կարծիքով, սխալ են հասկացել նշված պատառիկի վերնագիրը։ Այստեղ խոսքը Հովհաննեսի եկեղեցական պատմության մասին չէ։ Հովհաննեսի այդ հատվածի վերնագրից չի երևում նույնպես, որ նա ունեցել է որպես թե եկեղեցական պատմություն, ուստի և ճիշտ չէ այն ենթադրությունը, որ Հովհաննեսի եկեղեցական պատմությունը կորել է։ Այստեղ խոսքը պարզապես Եվսեբիոսի եկեղեցական պատմությանն է վերաբերվում, որի համապատասխան հատվածը Հովհաննեսը մեկնել, լուսաբանել է նոր փաստերով, կամ ինչպես վերնագրում է ասված՝ «երկրորդել» է։

Արշակ Տեր-Միքայելյանը Սամվել Անեցու ժամանակագրության ծանոթագրություններից մեկի մեջ հայտնում է, որ Փարիզի Ազգային մատենադարանում իրեն հանդիպել է 12—13 դարերի ընդօրինակություն ունեցող մի ձեռագիր, որը պարունակած է եղել Հովհաննեսի Քաղկեդոնական ժողովի և երկուբնության մասին մի աշխատություն, որը և, նա կարծում է՝ Հովհաննեսի պատմության մի հատվածը լինի [18]։

Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ Տեր-Միքայելյանը սխալվում է։ Հովհաննեսի Քաղկեդոնական ժողովի և երկուբնության մասին գրած վերև հիշված աշխատության ընդօրինակությունը ունենք Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրերում ևս, սակայն նշված աշխատությունները ոչ մի կապ չունեն Հովհաննեսի պատմական աշխատությունների հետ։ Նրանք կրոնական-պոլեմիկ աշխատություններ են, որոնք Հովհաննեսը գրել է քաղկեդոնականության դեմ։ Եթե կան այդ ժողովածուում պատմական որոշ նյութեր, ապա այդ ամենը բերված է միայն Քաղկեդոնական եկեղեցու հարձակումներից պատմական փաստերի հիման վրա պաշտպանվելու նպատակով։ Այս մասին մենք կխոսենք իր տեղում։

Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրերում պահված Հովհաննեսի աշխատությունների որոշ փշրանքներ հնարավորություն են տալիս մեզ լուծել նաև Ալիշանի առաջ քաշած այն առեղծվածը թե՝ Հովհաննեսի անունով հայտնի եկեղեցական պատմությունը կարող է և նրա կանոնագիրքը լինել։ Պարզվում է մի ցավալի փաստ—որ Հովհաննեսն իրոք ունեցել է կանոնագիրք, որը սակայն մեզ չի հասել։ Այդ կանոնագրքից մի փոքրիկ հատված պահել են Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրերը։

Հովհաննեսի այդ հատվածը երևաց Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրերում—№ 228 և № 6933։ Առաջին ձեռագրում մեջ է բերված հետևյալ հատվածը. «Որպես եւ մեծ վարդապետն Հայոց Սարկաւագ ի դատաստանաց դիրսն յիշէ եւ ասէ՝ բազում ժամանակ, զի ծնողքն հարկանեն զզաւակն եւ ինքեանք մաղկտեն զնոսա, ապտակեն եւ ինքեանք մորմոքին, մանաւանդ յորժամ տեսանեն յարտասուս հարեալ առաջի ծնողացն, յայնժամ զալարին աղիքն, ճմլին երիկամունքն եւ արտեւանունքն արտասուս թորացուցանեն» [19]։ Մյուս հատվածը, համեմատաբար, ավելի կարճ է և հեղինակի մասին ոչ մի նշում չունի. «Նախախնամութիւն Աստուծոյ... որպէս հայր որ սիրէ զորդի... է եւ բազում անգամ, զի ծնողն հարկանէ զզաւակն եւ ինքն մարմաքի, եւ յորժամ տեսանէ յարտասուս հարեալ զզաւակն, զալարի աղիքն եւ արտասուս ծորացուցանեն, այսպէս եւ մարդասէրն Աստուած» [20]։ Երկրորդը, հավանական է համառոտված է առաջինից։ Ցավալի է, որ Հովհաննեսի դատաստանագիրքը, որն անչափ մեծ արժեք պիտի ներկայացներ հայ իրավունքի պատմության համար, գժբախտաբար, կորած է։

Հովհաննեսի մեզ հայտնի աշխատություններից կիսապատմական-կիսատոմարական բովանդակություն ունի նրա «Պատճէն Տոմարի» ընդօրինակությունների հավելվածում գրված ժամանակագրական ցանկը, որի հիմնական նպատակը եղել է ոչ թե առանձին ժամանակագրություն կազմել, այլ իր կատարած տոմարական հաշիվներով ժամանակագրության որոշ թվականներ ամփոփել։

18. Սամուէլի բահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 292։

19. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 228, թ. 152բ։

20. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 6933։

Այս տեքստը Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 1973 ձեռագրում վերնագիր չունի։ Վերնագրի փոխարեն կարմիր թանաքով միայն ընդգծված է «նորին» բառը[21]։ Նախորդ տեքստը Հովհաննեսինն է, ուստի և այստեղ ընդօրինակողը Հովհաննեսի անունը նորից չկրկնելու համար պարզապես վերնագրել է «նորին» ձևով, ցանկանալով ասել, որ այս՝ նախորդ գլխում հիշված Հովհաննես քահանայի աշխատությունն է։

Հովհաննեսի ժամանակագրության այս ցուցակի համառոտ ընդօրինակությունը հրատարակել է Ոսկյանը «Հանդէս ամսօրեայում»։ Վենետիկի մատենադարանի ձեռագրերի պարունակած այս ցանկը վերնագրված է եղել. «Սարկաւագ վարդապետին է բանս»[22]։ Ժամանակագրությունն սկսում է Ադամի մահվանից և վերջանում Վրաց եկեղեցու բաժանումով։ Ժամանակագրական այս ցանկը իր բովանդակությամբ շատ է նմանվում Շիրակացու տոմարի մեջ բերվող ժամանակագրական ցանկին։ Վերջինս բերել է Տաշյանն իր կազմած ձեռագրաց ցուցակում[23]։ Այս նմանությունը հիմք է տալիս մեզ ենթադրել, որ Հովհաննեսի ժամանակագրական ցանկի հիմքը Շիրակացու ժամանակագրական ցանկն է հանդիսացել։

Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 1973 ձեռագրի պարունակած Հովհաննեսի ժամանակագրական ցանկը ուշ շրջանի ընդօրինակողների կողմից զգալի փոփոխության է ենթարկվել։ Ընդօրինակող գրիչները ժամանակագրությունը շարունակել և հասցրել են մինչև 1236 թվականը, մոնղոլների Հայաստան մտնելը և ավերելը.

«Ոչ (1236) թուին անաւրիկ բերդն, որ կոչի Կայեան եւ Լաւուէ քաղաք եւ Անի մայրաքաղաք Հայոց եւ այլ բնակ աշխարհս Հայոց, դաւառք եւ անառ բերդորայք եւ անմուտ մայրիք ի միում ամ առան եւ կոտորեցին անհամար եւ անթիւ արք եւ կանայք եւ մանկունք»[24]։

Ժամանակագրության վրա ավելացումներ կատարող հեղինակն անհրաժեշտ է համարել անդամ նշել Հովհաննեսի մահվան թվականը. «Փոխեցաւ ի Քրիստոս մեծ վարդապետն Սարկաւագն»[25]։

Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 1973 ձեռագրի ժամանակագրական գանկի արժեքավոր մասը, պետք է ասել, որ Հովհաննեսի ժամանակագրական ցանկի վրա հետագա գրիչների կատարած ավելացումներն են, որոնք կոնկրետ թվականներ են պարունակում այս կամ այն պատմական կարևոր իրադարձության մասին։ Այսպես, նշված են վրաց Դավթի, Դեմետրիի և Գորգու գահակալության կոնկրետ թվականները, նրանց առանձին արշավանքները, 10—13-րդ դարերում Հայաստանում կատարված շինարարական կարևոր աշխատանքները և այլն։

Վերև նշված Հովհաննեսի պատմական աշխատությունները, համեմատաբար, մանր գործեր են։ Նրանք փշրանքներն են պատմական այն մեծ աշխատությունների, որոնց մասին հիշատակություն է պահվել մեր մատենագրերի մոտ, բայց որոնք մեզ չեն հասել։ Գուցե երբևէ հայագետներից բախտավոր մեկին հաջողվի հայտնագործել հայ մատենագրության այս լուսամիտ հեղինակի կորած պատմական աշխատությունները և մենք հնարավորություն ունենանք կոնկրետ նյութի հիման վրա դատել նրա արժեքը միջնադարյան հայ պատմագրության մեջ։

21. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 1973, թ. 195ա։

22. «Հանդէս ամսօրեայ», 1925 թ., էջ 238—239։

23. Հ. Տաշյան, Ցուցակ Վիեննայի ձեռագրաց..., էջ 117։

24. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 1973, թ. 198ա։

25. Նույնը, թ. 198ա։

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ [1]

1. ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ ԱՆՑՅԱԼԻ ԳԼԽԱՎՈՐ ԶԲԱՂՈՒՄՆԵՐԸ

Այս մասին մեջ ևս, դժբախտաբար, շատ ժլատ են մեզ հասած փաստերը, լրիվ կերպով ներկայացնելու համար Բուխարեստի հին հայոց ունեցած գլխավոր զբաղումները։ Մինչ Մոլդավիո հայերը տակավին 15—16-րդ դարերուն նշանավոր հանդիսայան տեղվույն առևտուրին մեջ, զանազան տեսակի ապրանքներ ներածելով կամ արտածելով ու նույն ժամանակ սատարելով սուլտրական միջազգային ճանապարհի մը հիմնադրմանը, որ կպրավեր Եվրոպա—Լեմբերգ—Մոլդավիա—Ասիա կարևոր ու հսկա կիծը ու նույն ժամանակ ըլլալով նաև հայտնի ազարակապաններ ու կապալառուներ, Վալաքիո և կամ Բուխարեստի Հայոց ունեցած դերը այս ասպարեզներուն մեջ ավելի համեստ եղավ ու մեծ մասամբ մանր ու մեծաքանակ առևտուրը մնաց իրենց գլխավոր զբաղումը, ապրանքներ հայթայթելով իրենց գաղթած վայրերեն և ի մասնավորի Թյուրքիայեն։ Բուխարեստի հին հայոց մեջ Թյուրքիայեն իրենց հետ բերած զբաղում մըն ալ եղավ սեղանավորությունը։ Սակայն անոնցմե դուրս հայոց մեջ կհանդիպինք նաև մեծ մասամբ բազմաթիվ արհեստավորներու, որոնք կազմած էին իրենց արհեստակցական ընկերությունը։

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԵՆՑ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկսելով 17—18-րդ դարերեն, Բուխարեստի մեջ կարգ մը հայ արհեստավորներու կհանդիպինք։ Վալաքիո իշխան Կոնստանտին Բրընկովեանուի օրով (իշխած 1688—1714) կառուցված մարմարյա «Իշխանական բաղնիքը» նշանավոր էր։ Այս բաղնիքի ջուրի ճանապարհները շատ ավելի մեծ վարպետությամբ էին շինված, քան Պրահովայի՝ Ֆիլիպեշտի բաղնիքինը, որ կպատկաներ Կոնստանտին Կանտակուզինո մեծ պաշտոնատարին և որուն մասին Պաուլ Ալեպցի ճանապարհորդը մեծ հիացումով էր խոսեր։ Բրընկովեանու իշխանի բաղնիքին անհրաժեշտ եղող մարմարը Կ. Պոլսեն էր բերվեր, իսկ անոր շինության աշխատեր էին երեք հայեր[2]։

Նիկոլա Յորգան կրսե թե Բուդուի ֆրանչեսկանները։ Արխիվը պահվող Բուխարեստի հին կաթողիկե եկեղեցվո գլուխյանց մեջ կհիշվի Սերին, այսինքն Շիրին անուն հայ մը, որ Վալաքիո պալատին դերձակն էր։ Բնիկ Կ. Պոլսեցի, հետո Վալաքիո հայ դերձակներուն ճախագահ կըլլա։ Կմեռնի 4 սեպտ. 1739-ին կուրցած, 45 տարեկան հասակին մեջ։ Ուրեմն այդ շրջանին գոյություն

1. *Սկիզբը 1949 թ. III—IV և 1950 թ. I—II համարներում։*

2. Ionescu-Gion, Ist. Bucureșcilor, Buc., 1899, p. 508.

ուներ նաև հայ դերձակներու «բրեսլա» (ընկերակցություն) մը, ինիկ երկրացիներին դատ[3]։

18-րդ դարու վերջավորության Բուխարեստի մեջ շատ հացագործներ կային, սակայն և ոչ մեկը չէր հասներ Պապիկ (ռումաներեն արտասանությամբ Բարիկ) անուն հայուն հռչակին։ Նշանավոր էր հին ժամանակ Պապիկի փուռը, ու իրմե է մնացած «Պապիկեն կոլտուկ» ժողովրդական ասացվածքը, այս պատճառով, որ այս հացագործը Բուխարեստի ամենարնտիր հացը պատրաստելով, տակավին առավոտուն կանուխ Բուխարեստի բոլոր բոյարները մարդիկ ղրկելով այդ կոլաուկները կվերցնեին շուտով և ժողովրդյան ալ ոչ մեկ հատ չէր մնար։ Այնպես որ այս ասացվածքը կգործածվեր իբրև բացասական խոսք։ «Պապիկեն կոլտուկը կնշանակեր չեղած ու չգտնված բան մը։ Առաջին անգամ Պապիկի անվան կհանդիպինք 1778-ին կոտակագրության ակտի մը մեջ, ուր կրսվի թե Պապիկի փուռը կգտնվեր Բրրրսկա եկեղեցվո մոտ, ծաղկավաճառներու շուկային դիմաց։ 1820-ին Պապիկի փուռը կրրկին կհիշվի Ալեքսանդրու Նիկոլայե Շուցու իշխանին մեկ հրովարտակին մեջ։ Վերջին անգամ ան կհիշվի 1821-ին Կ. Իսվորանուի հուշերուն մեջ, ուր կրսե. «Երրորդ օրը Բաշ Գեորգեն առավոտուն գնաց շուկա և վերադարձավ երկու մեծ հացերով, որոնք իսկական «օխանոց» էին ու ձյունի նման սպիտակ։ Հարցուցի թե ինչ հաց էր այդ, և ինձ պատասխանեց թե Պապիկեն առնված «կոլտուկ»։...» Այս թվականեն վերջ, ա՛լ չի հիշվիր Պապիկի մասին կպատմվի թե ճիշտ էր թե ինք շատ փնտռված ըլլալով առաջ սկսեր էր փող դիզել, սակայն շուտով ցամքեր էր այդ աղբյուրը։ Բոլոր բոյարները ու մեծամեծները Պապիկեն «կոլտուկ» կպահանջեին, իսկ ինքը չէր կարող հասնիլ բոլորին։ Անոնց գոհ ծդելու համար խեղճ մարդը դլուխը կշարդեր դիշեր ու ցերեկ, թե ի՞նչպես ընե, որ հացերը միայն «կոլտուկ» շինե և նույն ժամանակ ալ անոնք օրինավոր ծանրության չափեն պակաս չըլլան, քանի որ այդ շրջանին եթե ոսպիկանները հացը ավելի պակաս գտնեին կշիռեն, հացագործը իր հագուստներեն մեծ գամերով կգամեին իր խանութի դռան առաջ և վզեն ալ վար կկախեին իր պակաս ծախած հացը։ Մեր այս հայուն դրխոն մեկ քանի անգամներ այսպես պատահած ըլլալով, ուրիշ անգամներ զերծ մնալու համար այսպիսի փորձանքներե, կստիպվեր մեկ օխային ավելի ծանր կշռող հացեր շինելու և օխայի տեղ վաճառելու։ Պապիկ կոտեսներ, թե այս ձևով շարունակ կորստյան կմատնվեր, իսկ Բուխարեստի ժողովուրդն ալ իրմե շարունակ «կոլտուկ» կպահանջեր, ի վերջո ան ստիպվեցավ փակել իր փուռը և ազատիլ ամեն ինչե։ Իր փուռը երբեմնի իշխանական հողամասին մաս կկազմեր ու իր առջև բազմաթիվ մանր առեստրականներ ապրանքներ կծախեին։ Պապիկը իր ժամանակի ընդհանուր հացագործներու արհեստակցական ընկերության ստարոստեն էր, այսինքն ղեկավարը։

Հին ժամանակ ևս ինչպես Մոլդավիո, նույնպես Վալաքիո ու Բուխարեստի մեջ, կաբելի չէր որևէ արհեստավոր իր առանձին խանութը ունենար և կամ իր մասնագիտության մեջ աշխատեր առանց «բրեսլա»յի մը և կամ եղբայրության մը անդամագրված ըլլալու։ Մոլդավիո հայաշատ քաղաքներուն և Տրանսիլվանիո մեջ հայերը ունեին արդեն իրենց «բրեսլա»ները, որոնք բացի արհեստակցական ընկերություն մը ըլլալե, հայ համայնքի պետքերուն օգնող եղբայրություններ ալ էին։ Բուխարեստի մեջ ևս հայկական «բրեսլա»ն գոյություն ուներ հին ժամանակներե սկսած։

Յոնեսկու-Ջիոն կրսե թե «բրեսլա»ները, այսինքն արհեստակցական ընկերությունները շատ կհարդեին իրենց կանոնադրությունները ու իրարմե առաջ անցնելու համար, անոնք կաշխատեին առավոտյան կանուխեն և կմրցեին իրարու հետ առաջնությունը շահելու համար[6]։

Այս «բրեսլա»ները Թյուրքիայի «էսնաֆնելյուն մասամբ նմանող ընկերակցություններ էին, ուր կխմբվեին ոչ միայն փարպետներ, այլ նաև առեստրականները ու զանազան դասի պատկանող այլազգիները, և որոնք միայն այս տեսակի պայմաններու մեջ կարող էին մնալ ու աշխատիլ։ Այս հանգամանքը ցույց է տրված հստակ կերպով Իրընկովենու իշխանի (1688—1714) տրված նամակի մը մեջ ուր, ի միջի այլոց, կրսե թե՝ օտարներն ալ բոլոր ազգերե, բրաշովենները և քիպրովիչենները, հայեր ու հրեաներ առանց տուրքի չեն կարող ընդունվիլ ու ասոնք բոլորը իրենց ունեցած պարարքով կապված են երկրին դանձատուն

[3]. N. Iorga. «Revista Istorica», 1919, p. 10.

[4]. Կնշանակե հացի ծալրի կեղև։

[5]. Gazelli. „Gazeta Municipală", 1937, № 281.

[6]. Ionescu-Gion, Ist. Bucurescilor, p. 743.

հնում, և ծանոթ է, թե անոնք ի՞նչ կուտան տարին։ Ամեն մեկ բրեսլա իր կարողությամբ կմասնակցեր քաղաքին մեջ պետք եղած ղանազան օգնությանց առթիվ ղանձված աուրքիրուն։ Այսպես, 1714-ին շատ դրամ հավաքվեցավ. ռումեն առևտրականները մասնակցեցան 574 տուգերով, հրյաները՝ 150, իսկ հայերը՝ 200։ Թյուրքիո համար Դանուբի վրա նավակներ պետք էին, Բուխարեստի մեջ կսահմանվեր առանց այլևայլի «նավակներու տուրքը», որուն կմասնակցեին առևտրականները 540 տալերով, քիպրոմիլենները՝ 250, հայերը՝ 100, հրյաները՝ 100[8]։ Ուրեքիա պատմագիրը կնկարագրե 1775-ի 3 փետրվարին Ալեքսանդրու Իպսիլանտե իշխանի մուտքը Բուխարեստ և անոր ընդունման առթիվ կատարված շքեղ հանդիսությունները։ Իշխանը Կ. Պալսին է, որ կուգար և մուտք կգործեր Բուխարեստ «Բեյլիքի կամուրջ»էն։ Անոր դիմավորող մեծամեծներու, դրոշակիր զինվորական խումբերու և բրեսլաներու բազմության մեջ կ՚ելնեն նաև կարգ մը հայեր իրենց բրեսլայի դրոշակով[9]։ Ըստ Իպսիլանտի իշխանի շրջանեն (1775) մնացած ակտերու, հայերը նկատված էին իբրև առանձին բրեսլա մը և անոնց ղեկավարը կդատեր հայոց միջև պատահած խնդիրները։ Ավելի մեծ պատահարները կդատեր ավագ սենեկապետը[10]։ 1791 դեկտեմբերի 23-ին Միհայիլ Շուցու իշխանը կհաստատե Բուխարեստի հայոց ղեկավարը իր պաշտոնին մեջ։ Իր հրամանագրին մեջ իշխանը կրսեր. «... Որպեսզի ան ղեկավարե և հոգատար ըլլա այս բրեսլային և դատե հայը հայուն միջև պատահած անհամաձայնությունները և իրենց ընտրությամբ զանոնք ուղղության բերե, իսկ ավելի մեծ խնդիրները, որոնք պիտի չկարողանան լուծվիլ ղեկավարին կողմե, դրկվին իմ իշխանության ենյակը. և այսպես, թե՛ բրեսլան և թե՛ անոր ղեկավարը շարունակեն իրենց հին սովորությամբ, ինչպես որ առաջ ալ շարունակեր էին ըստ իշխանական հրովարտակներու տված առանձնաշնորհումներու և որոնք տեսանք իշխանական պահլիճի մատյաններուն մեջ. և որուն համար կհրամայեմ ձեզ բոլորիդ, որ հայկական դավանանքի կպատկանիք, ճանչնաք ձեր ղեկավարը, ու անհրաժեշտ եղող հնազանդությունը և ունկնդրությունը ցույց տաք անոր»։ Ինչպես կերևի սույն հրամանագրի պարունակությենեն, Բուխարեստի հայերը արդեն վաղուց է, որ ունեին իրենց ընկերակցություններն ու ղեկավարները։ Այնպես որ, Միհայ Շուցուի այս հաստատումը հին դանոնների վերանորոգում մըն էր միայն[11]։

1794-ին, հայկական բրեսլայի անդամները դիմելով Ալեքսանդրու Կոնստանտին Մորուզի իշխանին, կխնդրեին, որ իրենց ղեկավարը հիվանդ և ծեր ըլլալով նորը նշանակվի, հանձին Սարգիս անուն հայուն և կրկին կխնդրեին, որ հրովարտակով մը հաստատեր զայն իր պաշտոնին։ Մորուզի իշխանը կհաստատեր[12]։ Այս շրջանին, Բուխարեստի մեջ 40 հայ հարկատուներու կհանդիպինք, որոնք կրկին կճանչցվին վերոհիշյալ իշխանեն հրովարտակով, իբրև առանձին բրեսլա։ 1800—1801 թվականներուն «յորդանջի բաշի» հայ մը կհիշվի, որ իշխանին պալատին վերմակագործն էր։ Մորուզի իշխանը, օգտվելով այս առիթեն, ուրիշ հայ վերմակագործներու ալ կարտոնե մտնել այս արհեստի բրեսլային ներս ու կշնորհե առանձին աշխատանոց ունենալու իրավունք, առարկելով որ անոնք իր երկրին մեջ աշխատելով զարկ պիտի տան սույն արհեստին և աշխատավորները շատանալով կյանքն ալ պիտի սկսի ժամանալ։ Իշխանը, այսպիսով, կ՚ուզեր վերոհիշյալ բրեսլայի ավագ անդամներու իրեն հղած խնդրագիրը, ուր անոնք կառաջարկեին հայերուն համար արդիլել աշխատանոց բանալը և իրենց բրեսլային ներս մուտ գործելը։ Այս շրջանին իբրև «յորդանջի» կհիշվին Սարգիս Յուսապ, Մարին Սարբյինուլ և Ասար Հոլտեյուլ Արմենուլ հայերը[13]։

1813 հունվար 25-ին Կարաջա իշխանը, վերանորոգելով վերմակագործներու բրեսլայի հրովարտակը, դարձյալ մի բանի ուղղումներ կրնե ըստ իր ըսածին՝ «ժամանակի պահանջներուն համեմատ։ Ինք ես կարտոներ այլազգի վարպետներուն, որպեսզի անոնք ես կարողանան խանութ բանալ այս արհեստի բրեսլային շարքին, բայց զանոնք պարտավորեցնելով, որ հիսանդին բրեսլայի մեծին։ «Բերբերներու

---

7. N. Iorga. Ist. Comertului Românesc. Vol I. p. 307.

8. Ionescu-Gion. Ist. Bucurescilor, p. 454.

9. Նույն, p. 395.

10. V. A. Urechea. Ist. Românilor, II. p. 180

11. V. A. Urechea, Ist. Românilor. tom. II. p. 295.

12. Նույն, tom V, p. 174.

13. V. A. Urechea, Ist. Românilor. Buc., 1897. tom VIII, p. 100 – 102.

բրեսլային մեջ ևս այլազգիներ կընդունվեին, իսկ «շելարներու և «կուրելարներու, այսինքն ձիու կազմածք շինող բրեսլաներու մեջ օտարներ իրավունք կունենային միայն իրը ծառայող աշխատելու «Բոյաջիներու, այսինքն ներկարարներու բրեսլային մեջ ևս կընդունվեին այլազգիներ[14]։ 1819 փետրվար 15-ին Ալեքսանդրու Շուցու իշխանը կվավերացնե Հայկական բրեսլայի նոր ղեկավարը[15]։ Իսկ 1820 սեպտեմբեր 22-ին, նույն իշխանը, ընդառաջ երթալով հայոց դիմումին, անոնց բրեսլան վերակազմվելու համար իր կողմե առանձին իշխանական գրությամբ կվավերացնե նոր կանոնագրություն մը։ Ինչպես կերևի հայոց կողմե առաջարկված և իշխանին կողմե վավերացված սույն կանոնագրության պարունակությենեն, հայկական ընկերակցության անդամները հավանարար գոհ չըլլալով միայն իրենց ղեկավարին տեսած առանձին դատաստաններին, որոշեր էին նախագահին կցել նաև ուրիշ խնամակալ անդամներու թիվ մը, և առհասարակ ամեն ինչ որոշեր էին կատարել տալ միայն այդ բոլորի խորհրդակցությամբ։ Նոր կանոնագրություն կպարունակեր հետևյալ կետերը. 1) Հայկական ամբողջ բրեսլան հավաքվելով, բազմության ժողովով պիտի ընտրե չորս խնամակալներ (թաղականներ), որոնք տեղվույն ամենահավատարիմ բնակիչներեն պետք է ըլլան և այդ չորսն ալ պիտի ընտրեն ղեկավար մը («ստարոստա») և այդ բանը պետք է որ տեղեկացնեն իշխանական դանձատան։ 2) Այս չորս խնամակալները ղեկավարին հետ միասին պետք է որ երաշխավորելան իշխանական դանձատան առաջ, որ ճիշտ պայմանաժամին պատասխանատու են հայկական բրեսլայի վրա ինկող տուրքերու մասին։ 3) Այս ընտրվածները, ղեկավարին հետ միասին, պետք է որ լավ կարգադրեն բրեսլայի մեջ պատահած առհասարակ ամեն ինչ, շարունակելով կետ առ կետ հին սովորություններու։ 4) Ղեկավարը իրավունք պիտի չունենա ո՛չ մեկ տեսակի պատահար լուծելու առանց խնամակալներու գիտության, քանի որ բոլորն ալ պատասխանատու են բրեսլայի մեջ կատարված որևէ պատահարի մասին։ 5) Հայը հայուն հետ դատվելու պարագային, բոլոր այս հինգ հոգիները պետք է քննեն և իրավացի վերդով սահմանեն (դատաստան), իսկ որևէ մեկուն կողմե եղող ոժգոհություններ պետք է որ ներկայացնեն իշխանական դիվանատան առաջ, հին սովորության նմանը[16]։

Ռումեն Ակադեմիան պահված 1820 թվականով ձեռագրի մը մեջ, Բուխարեստի մեջ կհիշվի «Կոմպանիա Արմենիլորը», այսինքն Հայկական խմբակցությունը։ 1821 թվի համար գետեղված երկրի բոլոր արհեստակցական և առևտրական խմբակցություններու մեջ, որոնք դրված են ըստ նահանգներու և քաղաքներու ու իրենց վճարելի պարտքերով, «Հայկական խմբակցությունը» կգրավե 15-րդ տեղը[17]։

1821-ին Բուխարեստի մեջ կգտնենք ռումանացի արհեստակցական ընկերության 187 անդամներու դիմաց 37 անդամներ հայ արհեստակցականի պատկանող։ 1832 թվին առևտուրի մատյանի մեջ նշանակված 3.269 պատենտավոր առևտրականներու և արհեստավորներու շարքին, Բուխարեստի ոստիկանատան մեջ կգտնենք 111 պատենտավոր հայեր, որոնք հետևյալ բրեսլաներուն մեջ էին[18]. 3 հոգի լիսպկայի ապրանք ծախող, 1 լիսպկայի մեծաքանակ ապրանք ծախող, 21 մանուֆակտուրայի ապրանքներ ծախող, որոնց մեջ նաև բուստեր (մարջան) և միտաքսեղեն, շրջուն վաճառողեն ու «բոխչաչի», այսինքն շալիր և գլխակապեր վաճառող, 1 փերեզակ, 6 սեղանավոր (սարաֆ), 2 թանչավաճառ և անանավաճառ, 2 նպարավաճառ, 7 թյուրքնչի, 1 չիբուխչի, 17 սրճագործ, 1 մաստագործ, 1 ձկնավաճառ, 2 կիր, կանաչեղեն ու երշիկեղեն վաճառող, 1 կապառալու, 9 ոսկերիչ և ժամագործ, 3 կոշկակար, 1 բամբակագործ, 2 վերմակագործ, 2 հացագործ, 1 խմորեղեն պատրաստող, 1 մոմագործ, 10 ղերձակ, 11 «իբրիշիմջի» (միտաքսյա ղերձաններ վաճառող), 2 սափրիչ, 1 ձիու կաշեղեն վաճառող, 1 երկաթագործ, 1 փամփրշտագործ։ Բրեսլայի այս անդամները իրենց առևտուրը կընեին հետևյալ վայրերու մեջ.—Պուքրեշտ՝ 10, Պիտեշտ՝ 7, իսկ մայրաքաղաքի փողոցներեն, Օլարի փողոց՝ 22, Արմենե՝ 9, Ս. Գեորգի վեքե՝ 8, Կուրտեա վեքե՝ 7, Մբնտուլեասա՝ 8, Կայմատա՝ 5, Սկաունե՝ 5, Ս. Դոմիտրու Նոու՝ 3, Պոպա Ռուսու՝ 3, Անտիմ՝ 3, Հանուլ Մանուկ՝ 2, Սիլվեստրու՝ 2, Ռոզվան՝ 2, Էկատերինա՝ 2, Ս. Նիկոլաե՝ 2, Դոբրոտեասա՝ 1, Բիսերիկա Ամզեյ՝ 1, Հանուլ Լույ Զամֆիր՝ 1, Դուդեսկու՝ 1, Ռադուվոդը՝ 1, Ս. Գեորգի Նոու՝ 1, Դոամնա Բրլաշա՝ 1, Ստարկու, Պոպա Գհիցու, Դելեա վեքե՝ 1։

(Շարունակելի)

[14]. Նույն. tom X. B. p. 220—221.

[15]. Նույն. tom. XII, p. 998.

[16]. Նույն. tom. XII, p. 999, & Cod. XCIII, fila 188.

[17]. Ion Bianu, Catalogul manuscriptelor românesti, vol. I, p. 545

[18]. Inceputurile edilitare. 1830—188 ', Buc. 1936.

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՂՆԵՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՍՏՈԿՀՈԼՄԻ ԵՐՐՈՐԴ ՍԵՍԻԱՅՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼԱԾ ԿՈՉԸ

Մենք պահանջում ենք կտրականապես արգելել ատոմային զենքը, որպես ահարեկման և մարդկանց մասսայական ոչնչացման զենք։

Մենք պահանջում ենք սահմանել միջազգային խիստ հսկողություն՝ այս որոշումը կենսագործելու համար։

Մենք գտնում ենք՝ այն կառավարությունը, որ առաջինը կգործադրի ատոմային զենքը որևէ երկրի դեմ, մարդկության դեմ հանցագործություն կկատարի և պետք է ճակատվի որպես պատերազմի հանցագործ։

Մենք հրավիրում ենք աշխարհի բոլոր բարի կամքի տեր մարդկանց ստորագրել այս կոչը։

Այս կոչի տակ առաջինը ստորագրել են պրոֆ. Ֆրեդերիկ Ժոլիո Կյուրիի գլխավորությամբ աշխարհի բոլոր երկրների խաղաղության կոնգրեսի դելեգատները։

ԱՏՈՄԱՅԻՆ ԶԵՆՔԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՉԻ ՏԱԿ ՍՍՌՄ-ՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ

Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պլենումը հսկայական գոհունակությամբ է նշում, որ սովետակտս ժողովուրդը լիակատար համերաշխությամբ և հավանությամբ դիմավորեց ՍՍՌՄ Գերագույն Սովետի Հայտարարությունը՝ ատոմային զենքը արգելելու, այդ որոշումը կատարելու նկատմամբ միջազգային խիստ վերահսկողություն սահմանելու և այն կառավարությունը, որը ագրեսիայի և մարդկանց մասսայական ոչնչացման այդ զենքը առաջինը կկիրառի, պատերազմի հանցագործ հայտարարելու վերաբերյալ Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի առաջարկների կապակցությամբ։

ՍՍՌՄ Գերագույն Սովետը վստահություն հայտնեց, որ խաղաղության շարժումը, և

ամենից առաջ խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստոկհոլմի Կոչը կստանա ամբողջ Սովետական ժողովրդի միահամուռ աջակցությունը։

ՍՍՌՄ բոլոր ժողովուրդները միշտ ջերմորեն աջակցել և աջակցում են խաղաղության կողմնակիցների կազմակերպված ճակատի այն ջանքերին, որոնք ուղղված են հոգուտ խաղաղության գործին, ընդդեմ նոր պատերազմի հրձիգներին։ Նրանք իրենց ուժերը չեն խնայում ժողովուրդների միջև խաղաղությունը և բարեկամությունը ամրապնդելու արդար և ազնիվ գործի հաջողության համար։ Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի պլենումը անհրաժեշտ է համարում սույն թվականի հունիսի 30-ից Սովետական Միությունում սկսել ատոմային զենքը արգելելու վերաբերյալ խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստոկհոլմյան Կոչի տակ ստորագրությունների հավաքումը։ Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի պլենումը սովետական բոլոր մարդկանց կոչ է անում իրենց ստորագրությունները դնել այդ կոչի տակ։

Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեն, որի ղեկավարությամբ տեղի է ունենալու ստորագրությունների հավաքման կամպանիան, հաստատ համոզմունք է հայտնում, որ բոլոր սովետական մարդիկ կարձագանքեն այդ կոչին։

Ստորագրելով Ստոկհոլմի Կոչը, սովետական մարդիկ դրանով իսկ կարտահայտեն իրենց նվիրվածությունը խաղաղության գործին, ամբողջ աշխարհում խաղաղությունը պաշտպանելու իրենց պատրաստակամությունը, իրենց միաձուլ համախմբվածությունը հարազատ Բոլշևիկյան պարտիայի շուրջը, իրենց անհուն նվիրվածությունը խաղաղության մեծ դրոշակակիր, բոլոր ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինին։

Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտե։

(Ստորագրություններ)

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՋԱԿՑՈՂ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Պարտիական, պրոֆմիութենական, կոմերիտական, կոոպերատիվ կազմակերպությունների, գիտական, կուլտուրական և կամավոր ընկերությունների ներկայացուցիչներից կազմված է խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեին աջակցող Ռեսպուբլիկական հանձնաժողով, խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստոկհոլմյան Կոչի տակ ստորագրություններ հավաքելու համար։

Հանձնաժողովի կազմումն են՝ Մ. Սարյանը (հանձնաժողովի նախագահ), Ջ. Գրիգորյան (հանձնաժողովի քարտուղար), Հ. Հայրապետյան, Վ. Համբարձումյան, Ա. Բարայան, Ն. Զարյան, Ա. Իսահակյան, Վ. Ղազարյան, Վ. Մամիկոնյան, Ս. Հովհաննիսյան, Ս. Սարգսյան, Պ. Սելյան, Տ. Շահմիրանյան։

Հունիսի 29-ին տեղի ունեցավ խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեին աջակցող Ռեսպուբլիկական հանձնաժողովի առաջին նիստը։ Հանձնաժողովը մանրամասն քննարկեց և մշակեց խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստոկհոլմյան Կոչի տակ ստորագրություններ հավաքելու կամպանիան կազմակերպված անցկացնելու միջոցառումները։

---

273 ՄԻԼԻՈՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՏՈԿՀՈԼՄԻ ԿՈՉԻ ՏԱԿ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՄՅՈՒՆԻԿԵ

ՓԱՐԻԶ, 9 օգոստոսի (ՏԱՍՍ).—Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեն մամուլի ներկայացուցիչներին է հանձնել կոմիտեի նախագահ Ֆրեդերիկ Ժոլիո-Կյուրիի կոմյունիկեն՝ Ստոկհոլմի Կոչի տակ ստորագրությունների հավաքման կամպանիայի ընթացքի հարցի մասին։

«Այսօր,—նշվում է կոմյունիկեում,— ամբողջ աշխարհում խոսում են այն Կոչի մա-

սին, որով սույն թվականի մարտի 19-ին Ստոկհոլմում հանդես եկավ խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեն։ Այդ Կոչը պահանջում է անպայման արգելել ատոմային զենքը, միջազգային խիստ վերահսկողություն սահմանել այդ արգելքը ապահովելու համար և որպես պատերազմի հանցագործ դատապարտել այն կառավարությունը, որը առաջինը կգործադրի այդ զենքը։

Ամբողջ աշխարհում անցկացվող, իսկ որոշ երկրներում միայն նոր սկսվող կամպանիայի երեք ամսվա ընթացքում Ստոկհոլմի Կոչի տակ մինչև այսօր դրվել է 273 միլիոն 470 հազար 566 ստորագրություն։

Այնուհետև կոմյունիկեում նշված է, որ կոմիտեի ստացած տվյալների համաձայն, Կոչի տակ հավաքված ստորագրությունները բաշխվում են հետևյալ կերպ. Ալբանիա՝ 62։ հազար, Ալժիր՝ 266 հազար, Արևմտյան Գերմանիա՝ 2 միլիոն, Գերմանական դեմոկրատական ռեսպուբլիկա՝ 17.046 հազար, Արգենտինա՝ 1 միլիոն, Ավստրալիա՝ 50 հազար, Ավստրիա՝ 578.578, Բելգիա՝ 153.060, Բիրմա՝ 1 միլիոն, Բոլիվիա՝ 20 հազար, Բուլղարիա՝ 5.801 346, Կամերուն՝ 22 հազար, Կանադա՝ 300 հազար, Չիլի՝ 50 հազար, Չինաստան՝ 44 միլիոն, Կոլումբիա՝ 50 հազար, Կորեա՝ 5.680 հազար, Կոստա-Ռիկա՝ 4 հազար, Փղոսկրի Ափ (Գոտ Դիվուար)՝ 50 հազար, Կուբա՝ 400 հազար, Դանիա՝ 100 հազար, Եգիպտոս՝ 12 հազար, Իրլանդիա՝ 1.200, Էկվադոր՝ 20 հազար, Իսպանիա (վտարանդիության մեջ գտնվող իսպանացիներ)՝ 284.995 ստորագրություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ 1.350 հազար, Ֆինլանդիա՝ 616.248, Ֆրանսիա՝ 12 միլիոն, Անգլիա՝ 790.277, Ֆրանսիական Գվիանա՝ 10 հազար, Վերին Վոլտա՝ 50 հազար, Հոլանդիա՝ 229.067, Հունգարիա՝ 7.500 հազար, Հնդկաստան՝ 127.389, Իրան՝ 25 հազար, Իսլանդիա՝ 5 հազար, Իսրայել՝ 261.750, Իտալիա՝ 14.631.523, Ճապոնիա՝ 1.345 հազար, Ռեյունիոն՝ 20 հազար, Լիբանան՝ 56 հազար, Լյուքսեմբուրգ՝ 7 հազար, Մարոկկո՝ 19.581, Մոնղոլական ժողովրդական ռեսպուբլիկա՝ 686.782, Նիգերիա՝ 12.500, Նորվեգիա՝ 50 հազար, Ֆիլիպիններ՝ 50 հազար, Լեհաստան՝ 18 միլիոն, Ռումինիա՝ 10.046.670, Սաար՝ 2.600, Սենեգալ՝ 25 հազար, Ֆրանսիական Սուդան՝ 30 հազար, Շվեդիա՝ 250 հազար, Շվեյցարիա՝ 150 հազար, Սիրիա՝ 60.500, Չադ՝ 16.500, Չեխոսլովակիա՝ 9.500, Տրինիդադ՝ 50 հազար, Թունիս՝ 30 հազար, ՍՍՌՄ՝ 115.275.940, Ուրուգվայ՝ 50 հազար, Վենեսուելա՝ 12 հազար։

«Երկրների այդ ցուցակին,— ասված է այնուհետև կոմյունիկեում,— անհրաժեշտ է ավելացնել այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հելլադան, Կիպրոսը, Ինդոնեզիան, Իրաքը, Մեքսիկան, Նեպալը, Նոր Զելանդիան, Պակիստանը, Պերուն, Պորտո-Ռիկոն, Թյուրքիան, Հորավ-Աֆրիկական Միությունը, Վիետնամը, որոնք դեռ տեղեկություններ չեն ուղարկել։ Այդ թվերը իրենցից ներկայացնում են առաջին տեղեկությունները, որոնք հավաքվել են ազգային զանազան շարժումների կողմից և ներկայումս հանձնվել են խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեին։

«Ստոկհոլմի Կոչի տակ ստորագրությունների հավաքման կամպանիան,— ընդգծվում է կոմյունիկեում,— ընդգրկում է ամբողջ աշխարհը և ներկայումս շարունակվում է ավելի քան 75 երկրում։ Եթե նկատի ունենանք, որ Կոչը մեծ մասամբ ստորագրել են միայն մեծահասակ մարդիկ, ապա կարելի է համարել, որ Կոչին ընդհանուր առմամբ միացել են 600 միլիոն մարդ, որը կազմում է ամբողջ երկրագնդի բնակչության մոտ մեկ քառորդը։

«Ստորագրածների թվում հանդես են գալիս բոլոր երկրների տարբեր համոզմունքների, դավանանքի և սոցիալական տարբեր դրության տեր մարդիկ։

«Մենք ողջունում ենք բոլոր նրանց, որոնցից ստացվել են այդ ստորագրությունները և որոնց ջանքերը հանդիսանում են ավանդ այն պայքարում, որը մղվում է արգելելու ագրեսիայի և մասսայական ոչնչացման այնպիսի զենք, ինչպիսին ատոմային զենքն է։

«Մենք կոչ ենք անում շարունակել և ընդլայնել այդ նպատակին հասնելու գործողությունները։

«Ատոմային զենքի արգելումը հիմնական էտապ է միջազգային դրության լարվածությունը թուլացնելու ճանապարհին և դրա շնորհիվ խաղաղությունը ամբողջ աշխարհում, որի վրա լուրջ պատասխանատվություն է կախված, դեռ կարող է և պե՛տք է փրկվի։»

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԴԻՄՈՒՄԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Պրագա, *18 օգոստոսի (ՏԱՍՍ).*— Պրագայում նիստեր դումարող խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Բյուրոն ընդունեց դիմում խաղաղության կողմնակիցների երկրորդ համաշխարհային կոնգրեսի հրավիրման մասին։ Դիմումի մեջ ասված է. «Ստոկհոլմյան Կոչի շուրջը միավորվել են ու շարունակում են միավորվել հարյուր միլիոնավոր տղամարդիկ ու կանայք։ Այդ միլիոնավոր տղամարդկանց ու կանանց անունից խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Բյուրոն հրավիրում է Երկրորդ կոնգրես, որի նիստերը տեղի կունենան 1950 թվականի նոյեմբերի 13-ից մինչև 19-ը Մեծ Բրիտանիայում։

Վերջին ժամանակներս սրված միջազգային դրությունը անմիջական սպառնալիք է դարձել ընդհանուր խաղաղության, և խաղաղության բոլոր կողմնակիցների վրա դնում է նոր, առավել կարևոր, քան երբևիցե, պարտավորություններ։

Խաղաղության կողմնակիցները շարունակում են իրենց կամպանիան ուղղված ատոմային զենքի արգելմանը և նորից արտահայտվում են ամեն տեսակ սպառազինության ընդհանուր կրճատման ու նրա նկատմամբ հսկողություն սահմանելու օգտին, սպառազինություն, որի աճումը մեծացնում է պատերազմի վտանգը, և ժողովուրդների վրա ծանր զոհաբերություններ է դնում։

Խաղաղության կողմնակիցները հանդես են գալիս ագրեսիայի դեմ, տ՝րտեղ էլ նա տեղի ունենա, և դատապարտում են արտաքին զինված միջամտությունը ժողովուրդների ներքին գործերին։ Նրանք պահանջում են նման ինտերվենցիայի դադարեցում ա՝յն երկրներում, որտեղ այդ տեղի ունի։

Խաղաղության կողմնակիցները ողջունում և պաշտպանում են այն խաղաղ քայլերը, որոնք ձեռնարկվել են Կորեայում պատերազմը դադարեցնելու համար, որը ընդհանուր կոնֆլիկտով սպառնացող օջախ է հանդիսանում։

Խաղաղության կողմնակիցները վճռականապես հանդես են գալիս մասսայական որմնաբակոծությունների դեմ, որոնց զոհն է դառնում քաղաքացիական բնակչությունը։

Խաղաղության կողմնակիցները պահանջում են, որպեսզի Անվտանգության խորհուրդը, որի կազմի մեջ պետք է մտնեն Չինաստանի իսկական ներկայացուցիչները, հնարավորին չափ ավելի արագ զրաղվի կորեական հարցի խաղաղ կարգավորմամբ և երկու շահագրգռված կողմերին հնարավորություն տա, որպեսզի նրանց լսեն։

Խաղաղության կողմնակիցները պահանջում են արգելել ամեն ագրեսիա, որը նպաստում է որևէ երկրում պատերազմի առաջացմանը։

Մենք ամբողջ աշխարհում խաղաղության բոլոր կողմնակիցներին կոչ ենք անում՝ կազմակերպել այդ առաջարկների հրապարակային լայն քննարկումը և Երկրորդ համաշխարհային կոնգրեսի համար ընտրել նրանց, ովքեր կարտահայտվեն հօգուտ այդ առաջարկների։

Մենք առաջարկով դիմում ենք քաղաքական, պրոֆմիութենական, կուլտուրական, սոցիալական ու կրոնական բոլոր կազմակերպություններին, ինչպես նաև կանանց ու երիտասարդությանը, բոլոր նրանց, ովքեր ձգտում են պահպանել խաղաղությունն ամբողջ աշխարհում, մասնակցել այս խնդրի կատարմանը՝ անկախ իրենց քաղաքական համոզմունքներից և գաղափարական շարժառիթներից, որոնք նրանց դրդում են այդ անելու։

Մենք գիտենք այն ուժը, որն արդեն ներկայացնում է Ստոկհոլմյան Կոչի շուրջը միավորված մարդկանց հսկայական մեծամասնությունը։ Այդ միավորումը պետք է ընդլայնվի և աճի։ Մենք կարողացանք գնահատել մեր ձեռնարկած կամպանիայի ամբողջ գործունեությունը։

Այսպիսով, առաջին քայլերն արդեն արված են։ Հետագա քայլերը կհետևեն, նրանք կարող են և պետք է ժողովուրդներին հասցրնեն կայուն խաղաղությանը, որին ծարավի են բոլորը։

Այդ խաղաղությունը չի կարելի, ձեռք բերել զենքի ուժով, այն պետք է ձեռք բերվի

բարի կամքի տեր բոլոր տպամարդկանց ու կանանց ընդհանուր համատեղ գործողություններով, որոնք ընդունակ են հաղթանակ բերել բանականության ու արդարության։

Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Բյուրոյի հանձնարարությամբ դիմումը ստորագրել է Ֆրեդերիկ Ժոլիո-Կյուրին։

ԱԼԵՔՍԻՎ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՆՈՒՆ ՎԵՀ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ

Մեզ բուն բերկրանք է պատճառում այն, որ ատոմային զենքի արգելման վերաբերյալ Ստոկհոլմի Կոչը միահամուռ հավանություն է գտնում սովետական բոլոր ժողովուրդների կողմից։ Մեր երկրում, ինչպես և աշխարհի բոլոր մասերում, միլիոնավոր ու միլիոնավոր մարդիկ ստորագրում են այդ պատմական փաստաթուղթը։

Կորեական ժողովրդա-դեմոկրատական ռեսպուբլիկայի դեմ ուղղված ագրեսիոն պատերազմի հրահրիչների դիմակը։ Ամերիկյան ագրեսորներն ամբողջ աշխարհի առաջ հանդես եկան որպես մարդկության թշնամիներ և կուլտուրայի կործանարարներ։

Իրենց իրենց հլու գործիք օգտագործելով դավաճան Լի Սին Մանի մարիոնետային կառավարությունը, ամերիկյան իմպերիալիստները մտադիր են զավթելու նաև ժողովրդա-դեմոկրատական Հյուսիսային Կորեան, ոչնչացնելու նրա դեմոկրատական նվաճումները։

Ամերիկա-անգլիական իմպերիալիստներն ուզում են նորից տիրանալ Չինաստանին, այդտեղ վերադարձնել Չան Կայ Շիին, որպեսզի հնարավորություն ունենան այսուհետև էլ ստրկացնելու, ճնշելու և կեղեքելու չին մեծ ժողովրդին։ Սակայն այդ բանը չի հաջողվի Ամերիկայի ու Անգլիայի իմպերիալիստներին, նրանք կչարդեն իրենց ճակատները։

Ասիան այլևս այն չէ, ինչպիսին ներկայացվում է ֆրանսիական ու անգլիական վիպագիրների նկարագրություններում— հաշիշից թմրած և ցանկիներից սարսափահար։ Ասիան զարթնել է, գիտակցության է եկել, կարողանում է պայքարել, ոտքի է ելնում իր ամբողջ հասակով։ Ստեղծագործ վեհ գաղափարները հասել են մինչև Ասիայի ամենահեռավոր անկյունները։ Ստալինի իմաստուն, արդարացի խոսքերը կտրել ու անցել են տարածություններ, լեռներ ու օվկիանոսներ, և ամենուրեք մեծ հույսեր են ներշնչել մարդկանց սրտերին։

Ասիան զավթելու Տրումենի ձգտումները կձախողվեն։ Անգլո-ամերիկյան գաղութարարների մասին ծանր հիշողություններ ունեն այն ժողովուրդները, որոնք անքացել և անքում են նրանց լծի տակ, այն ժողովուրդները, որոնք տեսել են միայն ծեծ, բանտ, քաղց, շահագործում և աղքատություն։ Ժողովուրդներն ատում են Անգլիայի և Ամերիկայի ռեակցիոն կառավարություններին։

Ասիայի ժողովուրդները ատում են անգլո-ամերիկյան դիշատիչներին, որովհետև ցանկանում են ապրել միմյանց հետ եղբոր պես, ցանկանում են խաղաղություն, ցանկանում են աշխատել և վայելել իրենց աշխատանքի պտուղները։

Ամբողջ աշխարհի բոլոր ազնիվ մարդիկ, որոնք ստորագրել են Ստոկհոլմի Կոչը, բուռն ատելություն են տածում դեպի ամերիկա-անգլիական ագրեսորները։ Դեռ չեն բուժվել երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառած վերքերը, իսկ իմպերիալիստներն արդեն արձակում են պատերազմի գազանին, որպեսզի երկարաձգեն մեռնող կապիտալիզմի կյանքը, ստրկացնեն ժողովուրդներին, ոչնչացնեն սոցիալիզմի գաղափարները աշխատավորության գիտակցության մեջ։ Ճիշտ այդպիսի մտադրություն ուներ Հիտլերը, բայց հայտնի է Հիտլերի վախճանը։ Պատմության դասը շատ թարմ է։

Զախողենք դիշատիչների պլանները— ահա՛ խաղաղության օգտին ծավալված շարժման վեհ իմաստը։ Այդ մասին խորհելով՝ ես ստորագրեցի Կոչը, խաղաղության և ժողովուրդների անվտանգության կոչը։

(Արտատպ. «Սով. Հայաստան» բերթից)

ՄԱՑՐ ՀԱՑՐԵՆԻՔՈՒՄ

Լ. ԱՀԵՄՅԱՆ

ՋԲՈՍԱՊՏՈՒՅՏ ԴԵՊԻ ԳԵՂԱՐԴ ԵՎ ԳԱՌՆԻ

Հաճելի են ամառնային կիրակիները Հայաստանում։ Հանգստյան այդ օրերը հաճախ վերածվում են ուրախության օրերի այգիներում ու պարտեզներում, կուլտուրայի պարկերում, Սևանի ափերի վրա և հնադարյան մենաստանները հովանավորող հարյուրամյա ընկուզենիների հովանու ներքև, նաև պաղ աղբյուրների գլուխը կամ լեռներից կլանքոտ աղմուկով իջնող սառնորակ ու վճիտ առուների եզերքին։ Կիրակիները զվարճությամբ անցկացնելու սովորությունը մեծ է մանավանդ երևանցիների մեջ, որովհետև ամառնային շոգը կարծես ամենից ավելի այստեղ է զգացնում իր սաստկությունը։

Աշխատանքի ընկերներից ոմանք որոշել էին այս անգամ դրոսապտույտի գնալ Այրի վանք կամ Գեղարդ, Երևանից մոտ 45 կիլոմետր հեռու դեպի հարավ-արևելք, և այդ առթիվ այցելել նաև Գառնին կամ Տրդատարերդը, 7 կիլոմետր նվազ հեռու առաջինից, նույն ճամբու վրա։ Գիտեի՝ թե իմ տարիքի մարդոց համար մեծ ոիսկ է դժվարություններով լի այդ ճամբորդությունը, բայց մեր նախնյաց մեծագործությունները, մեր ժողովրդի քաղաքակրթության բարձրարժեք հուշարձանները կենդանի աչքով տեսնելու փափագը այնքան մեծ է, ինձ համար, որ որոշեցի ետ չմնալ ընկերներից։ Մրագրված էր գիշերը Գեղարդում անցկացնել և հաջորդ որը Գառնի այցելել։

Ու հուլիս 1-ի շաբաթ օրը, աշխատանքից հետո, երկու մեծ ավտոմեքենաներ, մեր 40 հոգինոց խումբը առած, մագլցում են Նորքի բարձունքներն ի վեր, ուրախության աղաղակների, երգի ու ծիծաղի աղմուկով լցնելով ձորերն ու ծորձորները։

Քիչ հետո Նորքի բարձրությունների վրա ենք։ Տարբեր է տեսարանը այստեղ իր հմայիչ գեղեցկությամբը։ Ետևն է մնացել Արարատյան դաշտը, մութի մեջ թաղված։ Արևմտյան հորիզոնի վրա վեհափառ Արարատը մեզ է հետևում կարծես լեռների ընդմիջից կամ նրանց գագաթների վերևից։ Հյուսիսակողմը, Արագածը ամպի սպիտակ շղարշներով է պճնվել, ամեն կողմ լեռներ, փլուզումների հետևանքով տարօրինակ կերպարանքներ ստացած, ամեն կողմ ձորեր անդրնդախոր, եզերքների վրա հսկայական ժայռեր կախված, իսկ անմիջական շուրջդ ցանքերի տարածությունները, ուր դեռ կանաչ ցորենահասակները քնքուշ նազանքով են տատանվում իրիկնապահի անուշ զեփյուռից, մինչ դեպի իր գիշերային կայանը հակած Հուլիսյան արևը իր թրթռուն շողերով լրացնում է վեհությունը համայնապատկերին։ Ու յուրովի, իրև մի շատ բնական արտահայտություն, կրկնում ես բանաստեղծի հետ.

«Հե՜յ, ջան Երևան, ինչքա՜ն սիրուն ես...»

Մեր ավտոմեքենաները զվարթ աղմուկով լցնում են խաղաղ բնությունը։ Արտ ու ափից, Մարգ ու թուփից դուրս են նետվում լորամարդիները։ Մեր արագ վազքը կինեմատոգրաֆիայի սքանչելի ժապավենի է վերածել ամեն ինչ մեր շուրջ բոլորը։ Հիմա բարձրանում ենք մի այլ լեռնապարիսպ։ Մեր ճանապարհը անվերջ գալարումներ է կատարում։ Ամեն մի բլրի, ամեն մի ժայռի չորս բոլորը անդադար վերելք, անդադար վայրեջք, բայց միշտ դեպի առաջ։ Ու հետո մի ընդարձակ հարթություն, մի սիրուն լեռնադաշտ, ամեն կողմից զմրուխտ լեռներով սահմանագծված։ Գառնի ենք հասել։ Մեր առջևն է գյուղաքաղաքը, պտղատու ծառերի խիտ անտառի մեջ իրիկնապահի անդորրը ապրող։ Մարդ չի կարող չհափշտակվել բնության այս զմայլելի տեսարանից։ Դու չգիտես՝ մտածե՞ս այն հերքյուլյան տաժանելի աշխատանքի մասին, որի շնորհիվ մեր նախնիքը սքանչելի վարելահողի են վերածել այս քարաշատ բնությունը. թե հիանաս

մեր ստեղծագործ կոլխոզների վրա, որոնք մեքենաների օգնությամբ կերպարանափոխում են բնությունը, հարկադրելով նրան առանց կամակորության ծառայել իրենց։

Գառնի՞ կամ Տրդատարերդ։ Այստեղ ամեն ինչ քեզ խոսում է այն մասին, որ դու գտնվում ես պատմական մի վայրում, ուր «բազում գործ արութեան» կատարվել են։

Բայց մենք դեռ 7 կիլոմետր ճամբա ունենք Գեղարդ հասնելու համար, ամենից ավելի դժվարանցանելի մասը, մինչ արեր իր շուղերը հավաքել է արդեն լեռների կատարից անդամ։ Այստեղից սկսած լեռները աչից ու ձախից իրար մոտեցած, հաղիվ մի նեղ անցք են ձգում մի անդնդախոր հեղեղատի մեջ, որ այժմ դրեթե ցամքած է, բայց որից աշնան ու գարնան հորդահոս և արագավազ Ազատն է ձևանում։ Մեր ճանապարհը ձգված է այդ հեղեղատի եզերքովը, անվերջ գալարումներով։ Վայրէջք է ու ձորերից, անձավներից դուրս խուժող թանձր խավարը ծածկել է ամեն ինչ։ Ամեն բոպե դու կարող ես քու ավտոմեքենայովդ թռնել այդ անդունդի մեջ, այդ հսկա քարակույտերի վրա, որոնք երկրաշարժների ամեհի ցնցումների շնորհիվ միայն կարող էին տեղափոխվել։ Գնալով ձորը նեղանում, լեռները իրար են սեղմվում ու կազմում ծառախիտ մի անկյուն, որի մի կողմից, այդ պահին, անուշ երգի պես դու լսում ես հեղեղատից վազող ջրերի խոխոջը, դու լսում ես դարավոր ընկուզենիների տերևների փսփսուքը։

Խարխափելով բարձրանում ենք մի փոքրիկ բլուր և ներս մտնում մի ընդարձակ բակ։ Մեկ կողմը Գեղարդա կամ Այրի վանքն է. վանքերի խումբը ավելի ճիշտը, լեռան ստորոտին ամուր փակած, լուռ ու խորհրդավոր, իսկ հանդիպակաց կողմը՝ հյուրասենյակները։ Մեզանից առաջ ուրիշներ էլ են եկել, որոնք ուրախության մեջ են արդեն։ Մի սենյակ էլ մեզ է հատկացվում, ուր հարմարություններ ենք ստեղծում հանգստանալու համար։

Բացվել է մի զեռածիծաղ առավոտ։ Օ՜, ես շատ առավոտներ եմ տեսել օտար երկրների լեռների վրա, բայց նրանք երբե՛ք չեն ծնցրել այն խոր զգացմունքը՝ ինչ որ ես ունեմ հիմա։ Երեք կողմից անմատչելի լեռներ խիտ թավուտներով ծածկված, գլխավերևը մի վճիտ շերտ երկնքի և ամեն կողմ անդորրություն, երանավետ խաղաղություն։ Արևի շուղերը դեռ չեն հասել մեզ,— նրանք շատ ուշ պիտի կարենան հասնել,— ու հայրենի լեռների զովը սիրապետում է շորս բոլորդ։

Դիմում եմ եկեղեցի։ Առտվա ժամերգության պահն է։ Դռան առջև մատաղ են անում, ներսը՝ մկրտություն։ Բայց ինձ հիացնում է շենքը, «կաթուղիկէն»։ 13-րդ դարի գործ է դա, բայց ի՞նչ սիրուն ճարտարապետություն, ի՞նչ քանդակներ, ամեն սյունի վրա, ամեն կամարի վրա, ամեն քարի վրա։

Սակայն Գեղարդա կամ Այրի վանուց վեհությունը կաթուղիկեին մեջ պետք չէ փնտռել, այլ քովի տաճարների մեջ, մին դռնով կապված կաթուղիկեին, մյուսները անջատ անջատ, բոլորն էլ նույն շրջանում կառուցված։ Կառուցվա՞ծ, Ո՛չ։ Բացատրության մի կերպ է սա։ Նրանք կառուցված չեն, այլ փորված հսկա ժայռերի մեջ։ Փոքրիկ մատուռներ չեն սրանք, այլ խոշոր տաճարներ, սեղաններով, կամարներով, սյուներով, բոլորը միակտուր, ամեն կողմ սքանչելի նուրբ բանդակներով և անթիվ արձանագրություններով։ Հայտնի ճարտարապետ Թ. Թորամանյանը իր «Հայաստանի ճարտարապետությունը» անունով մեծարժեք հատորում, այս մասին գրում է. «Անիի մեջ շատ կան քարափոր եկեղեցիներ, մատուռներ և ժամատուններ, սակայն անոնցմե և ոչ մեկը չի կարող հավասարիլ Այրի վանքի քարափորներուն. այս վերջինս ամենեն ավելի փորձված արվեստագետներուն անդամ անհավատալի պատրանք թվելու չափ նրբությամբ, համաչափությամբ և վայելչությամբ կերտված է ընդհանրապես. և պետք է շատ ուշադրությամբ քննել՝ տեսնելու և համոզվելու համար, թե գեղեցիկ սյուներ, խոյակներ, խարիսխներ և ասոնք իրարու միացնող աղեղներ ու կամարներ միակտուր զանգվածներ են՝ կոշտ ապառաժին մեջ նրբին հաշիվներով կերտված» (էջ 349)։

Այս տողերը գրողն էլ շատ տեղեր,— Վանում (Տոպրակ Գալե), Կիլիկիայում (Սիսի բերդը) և Եգիպտոսում («Թագավորաց հովիտը),— տեսել է քարափորներ, սակայն ինչ որ նա տեսավ Այրի վանուց մեջ՝ վեր է ամեն գնահատությունից։ Այրի վանուց քարափորները ճարտարապետական արվեստի հավերժական ցուցադրություններ են և արվեստի ճյուղում մեր տաղանդավոր ժողովրդի առաջադիմության աստիճանացույցը։ Սա այն ժողովուրդն է, որ այսօր մեր հրաշալի երևանն է կառուցում իր Ստալինյան, Միկոյան, Բաղրամյան և բազմաթիվ այլ պողոտաներով, որոնց ամեն մեկ տունը մի շքեղ փաստ է ճարտարապետական բարձր բնռնումի։

Մեր ընկերուհիները ցերեկվա ճաշի պատրաստությունները լրացրած, մեզ են սպասում։ Աճապարում ենք, կեսը ձգած ցերեկվա պատարագը, որին ներկա է մի ստվար

բազմություն։ Ծառերի տակ բացված է սեղան։ Բայց միայն մե՛ջը։ Գիշերը և վաղ առավոտյան բազմաթիվ ուրիշ խմբեր էլ են եկել։ Ամեն կողմ ուրախություն, երգ ու խնծիր։ Ամեն կողմ սեղան և գինի։ Բնության այս մուգ կանաչ ֆոնի վրա, բազմերանգ ծաղիկների պսակներով զարդարուն ու մաքուր հագուստներով պճնված այս հայ աղջիկները, իրենց կանչվատոցովը, երգ ու տաղովը ի՜նչ անուշ ներդաշնակություն են կազմում այս պահուս։ Շրթունքիդ վրա է դալիս երգը՝

«Հայաստանի աղջիկները մարալ են ու «հյրան...»

Կեսօրից հետո, ժամը 3-ի մոտերը, մենք արդեն Գառնի ենք։ Գյուղի երեխաները մեզ ցույց են տալիս ճանապարհը ու մեկ բոպե հետո մենք Տրդատաբերդի մուտքի առջևն ենք։ Նրա երկու կողմի պարիսպները դեռ կանգուն են և խորը տպավորություն են ձգում վրադ։ Ու պատմությունը վերականգնվում է աչքիդ առաջ. մտքով փոխադրվում ես 1900 տարի առաջ... Ամեն կողմ շինության հակա քարեր, սյուներ, խոյակներ, պատվանդաններ, կամարներ, բոլորն էլ կրանիտից, բոլորն էլ ամենանուրբ հաշիվներով հղկված, նկարազարդված։ Ինչ որ դու տեսնում ես այստեղ, պարզապես հիանալի է, չասելու համար անհավատալի։ Կարծես դեռ երեկ փլած է ճարտարապետական այս սքանչելի կոթողը, որի ամեն մեկ բեկորի վրա հաշվի և գեղարվեստական ճաշակի կենդանի ու խոսուն նմուշներ կան։ Ու կարծես թե պիտի կարենաս դյուրությամբ վերականգնել այս փառավոր շենքը, այնքան մոտ են ընկած քարի այդ հսկայական կտորները և այնքան որոշ՝ ո՛ր կտորին որի՛ մասը լինելու։ Ամբողջ բերդը,— այժմ պտղատու ծառերով մի ընդարձակ պարտեզ,— դեպի Աղատ գետ երկարած մի բլուր է, մուտքի կողմից գետնի հավասար, բայց մյուս երեք կողմերից անդնդախոր ձորով շրջապատված։ Լսենք այս մասին Թորամանյանին.

«Նշանավոր պատմական հին ամրոց է Գառնին։ Մեր պատմագրերից շատերը անմատոյց ամուր կամ ճզոր անուն են տալիս այս անմատույց վայրին։ Դեռ նախաքրիստոնեական շրջանին ևս անառիկ ամրոց լինելուն տեղեկություններ կան, սակայն վերջին անգամ, հայոց թագավոր Տրդատը, ըստ Մովսես Խորենացու, նոր բերդ շինեց, մեջի իր արքունիքով միասին, նաև մեկ հովանոց «ի համար բեռ իւրոյ խոսրովիդխտոյ» կամ «սուրասոյր հովանոց Տրդատայ» անունով մի շքեղ սյունազարդ անդաստակով և քարյա լեռն աստիճան սանդուղքով բարձրացող միայն մի բաժանմունքից բաղկացած առանձին սենյակ...»։

Մի այլ տեղ, Թորամանյանը խոսելով այն մասին՝ թե Գառնիի այդ զմայլելի սենյակը տաճա՞ր էր թե հովանոց, դիտել է տալիս. «Գառնիի Տրդատի հովանոցը մի քանի գիտնականների կարծիքով մեհյան էր, ոչ թե հովանոց։ Սակայն մանրամասն քննությամբ բոլորովին պարզված է այժմ այդ ենթադրության սխալ լինելը, նույնիսկ այժմ ավերակների մեջ գոյություն ունեցող անվիճելի փաստերով... Գառնիի շենքին արտեքադիր լինելը միանգամայն հակառակ է ընդհանրապես հռոմեական երկրներում ընդունված մեհենաշինության, հետո, մեհյաններ, առանց բացառության, երբեք պատուհաններ չեն ունեցել, իսկ Գառնիի շենքի ավերակներում տակավին պահված են, բացի ճոխ քանդակազարդ դռան շրջանակից, մի քանի արտակարգ գեղեցկությամբ քանդակազարդված խոշոր պատուհանների շրջանակներ։ Հետևաբար, Գառնիի մեջ կանգնված այդ գողտրիկ շենքի շինողը՝ Տրդատ Ա. լինի թե Գ., շինած է իրը անհատական հովանոց՝ շրջակա տեսարանների բնական գեղեցկությունը վայելելու համար, ոչ թե իրը մեհյան»։

Գառնի՞, ճի՞շտ է արդյոք այն վարկածը թե եվրոպական „garnison" բառը ստեղծված է այս անմատչելի ամրոցի պարիսպների տակը, հռոմեական զորքերի կողմից, որոնց համար սարսափ է եղել ներսը ամրացած հայ բանակը՝ Գառնիի զորքը...

Ու մինչ իմ ընկերները թռչկոտում են դիրքից դիրք, հիանալու համար խաղաղ բնության ընծայած տեսարանների կամ այս բեկորների, քանդակների թարմության, ամբողջականության, կամ այս առյուծների կորովի արտահայտության վրա,— ես մտածում եմ մեր անցյալի մեջ սուզված փառքերի մասին, որոնց մեկ նմուշն է հիմա իմ աչքիս առջև, բայց որոնք սփռված են մինչև Փոքր Հայք, մինչև Կիլիկիա։ Աչքիս է հանդիպում բերդի մուտքին ու հովանոցի պատերից մեկի վրա Հնության պահպանության կոմիտեի կողմից դրված հայտարարությունը։ Արդյո՞ք պահպանվել են այն մյուս բեկորներն ևս, որոնք դուրս են սովետական երկնակամարից։ Արդյո՞ք մի օր նրանք ևս պիտի դրվե՞ն հոգածու ձեռքի տակ, թե պիտի մնան միշտ իրը «ոչ ազատ»...։

Գ. Մ. ԲՈՇՅԱՆԻ ՄԵԾԱՐԺԵՔ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Վ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

(Անասնաբուժական գիտությունների թեկնածու)

ՄԻՋՈՒՐԻՆՅԱՆ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ[1]

Մոտ ժամանակներս լույս տեսավ Համամիութենական փորձնական անասնաբուժության բիոքիմիական բաժնի վարիչ Գ. Մ. Բոշյանի աշխատությունը՝ «Միկրոբների և վիրուսների էության մասին» վերտառությամբ (Բժշկ. հրատ., 1949 թ., 146 էջ).

Գրքում բերված բացառիկ ինքնատիպ փաստերը և հաստատուն գիտական հիմնավորված եզրակացությունները արմատապես փոխում են գոյություն ունեցող ավանդական պատկերացումը միկրոօրգանիզմների ձևավորման և զարգացման, կայունության սահմանի, միկրոբների կյանքի և բազմացման, վակցինի (կանխարգելիչ միջոցառումների) բնույթի, շիճուկների ախտազերծության, բակտերիական ալլերգենների (ախտորոշիչների), բակտերիոֆագների և անտիբիոտիկների (հակակենսական նյութերի) մասին, ինչպես և ախտազերծության բնույթի մասին՝ վարակիչ հիվանդությունների նկատմամբ։

Հեղինակի բացահայտած օրինաչափությունը հանդիսանում է իսկական հեղաշրջում ոչ միայն միկրոբիոլոգիայի, այլ և բիոլոգիական գիտության շատ ասպարեզներում։

Հեղինակին առաջին անգամ «հաջողվել է նմանապես ապացուցել, որ կենդանի մարմինների բաժանելի փոքրագույն միավորը հանդիսանում է ոչ թե բջիջը, այլ այն մասնիկները, որոնցից կազմված է տվյալ բջիջը։ Այդ մասնիկներն ունեն իրենց աստիճանական զարգացումը և ընդունակ են ձևավորվել բջիջների» (էջ 5)։ Այդ ավելի հասարակ կենդանի մասնիկների խմբին են պատկանում, ինչպես մատնացույց է անում հեղինակը, ֆիլտրվող (մանրագույն ցանցից քամվող) վիրուսները։

Հեղինակը մի շարք փայլուն փորձերով ապացուցել է, որ «ֆիլտրվող վիրուսները կարող են վերածվել բակտերիալ ձևի, իսկ միկրոբները, իրենց հերթին՝ ֆիլտրվող վիրուսների։ Վիրուսները և միկրոբները, որոշ պայմանների մեջ, կարող են վերածվել բյուրեղների և, հակառակը, բյուրեղները՝ բակտերիայի և ֆիլտրվող վիրուսների։ Այդ ձևերը հանդիսանում են կենդանի մարմինների գոյության ձևերը» (էջ 146)։

Հեղինակին հաջողվել է նույնպես կենդանի միկրոբները զատել այնպիսիներից, որոնք անվիճելի համարվում էին ստերիլ (հականեխված) բիոպրեպարատներ, ինչպիսին բոլոր միջոցներով «ստերիլացված» վակցիններ են, ախտազերծային շիճուկները, ըստ որում, զատվում են այն միկրոբները, բակտերիոֆագները, անտիբիոտիկները, որոնցից այդ պրեպարատները պատրաստված են։ Այդ հիման վրա հեղինակը գալիս է այն եզրակացության, որ «կենդանի միկրոբների զատումը այն պրեպարատներից, որոնք առաջ համարվում էին հականեխված, վկայում են միկրոօրգանիզմների կյանքի կայունության նոր սահմանի մասին և ժխտում են Լուի Պաստերի նշանավոր փորձերի արդյունքները տվյալ հարցում» (էջ 146)։

Բազմաթիվ փորձերի արդյունքները հեղինակին բերել են այն եզրակացության, որ ախտազերծության արտահայտության ամեն մի ձև (բնական, ակտիվ, պասսիվ և այլն), հետևանք է միկրոբների կենդանի օրգանիզմների մեջ հատիկային, վիրուսային, ֆագային ձևի վերածվելուն, որը միանում է օրգանիզմի սպիտակուցին, որի հետևանքով կատարվում է նրա չեզոքացումը. «Հիպպոկրատյան շիճուկի, բակտերիոֆագների, անտիբիոտիկների, ֆակոցիտների գործողությունը, ըստ էության, վերածվում է միևնույն բանի— բակտերիալ ձևերը վերածվում են ֆիլտրվող ձևերի» (էջ 139)։

Համաշխարհային նշանակություն ունեցող այդ հայտնագործումը հնարավոր է միայն մեր սոցիալիստական երկրում և հաջողվեց

1. Վերջին ժամանակներում մամուլում շատ է գրվում Գ. Մ. Բոշյանի մեծարժեք հայտնագործության մասին։ Ենթադրելի հայ գիտնականի գյուտը մեծ պատիվ է բերում ոչ միայն իրեն, այլ և հայ ժողովրդին, որի գավակն է տաղանդավոր գիտնականը, և, ընդհանրապես, սովետական ձագված գիտությանը։ Գյուտի նշանակության մասին մեր ամսագրի ընթերցողներին որոշ ծանոթություն տալու նպատակով, անհրաժեշտ ենք համարում ուսումնական հրատարակությունից թարգմանել շնորհալի գիտնականի աշխատության մասին եղած գրախոսականներից մեկը։—ԽՄԲ.

Բոշյանին, շնորհիվ կենդանի օրգանիզմների բիոլոգիայի և իսկական գիտական միչուրինյան ըմբռնողության և դիալեկտիկական մոտեցման դեպի փորձերի և փաստերի մեկնաբանությունը։

«Մեր սոցյալիստական երկրում բնության մեծագույն վերափոխիչ Ի. Վ. Միչուրինի ուսմունքը ստեղծից սկզբունքային նոր հիմք՝ կենդանի օրգանիզմների փոփոխականությունը ղեկավարելու համար» (Լիսենկո)։

«Ձևի յուրաքանչյուր փոփոխություն,— գրում է Բոշյանը,—հանդիսանում է միկրոօրգանիզմների և այլ կենդանի մարմինների հարմարեցումը արտաքին աշխարհի պայմանների ներգործությանը։ Միկրոօրգանիզմների և այլ կենդանի մարմինների հարմարումը կախված է գոյության ձևի փոփոխությունից։ Միկրոբների և կենդանի մարմինների կյանքը ամբողջապես կախված է իրենց ձևից և արտաքին աշխարհի պայմաններից։ Այժմ արդեն գիտական չէ այն բիոլոգիան, որն ուսումնասիրում է կենդանի մարմինների հատկությունը, չկապակցված արտաքին պայմաններին, որոնք ազդում են կենդանի մարմինների առաջացման և զարգացման վրա» (էջ 103)։

Այդ օրինաչափությունը, որ սահմանում է հեղինակը, բաց է անում նոր և շեղած հնարավորություններ դիագնոստիկայի (ախտորոշաբանության), մարդկանց և կենդանիների շատ վարակիչ հիվանդությունների կանխման և բուժման համար, որոնք մինչև այժմ համարվում էին անբուժելի։

Իր հայտնագործման առաջին գործնական արդյունքը ստացել է ինքը՝ հեղինակը։ Նրա կողմից մշակված է սպեցիֆիկ (առանձահատուկ) ախտորոշման մեթոդիկան, ձիերի վարակիչ անեմիա հիվանդության ախտաբանությունը և բուժումը, որն ավելի քան հարյուր տարվա ընթացքում համարվում էր անբուժելի։

Գ. Մ. Բոշյանի հայտնագործության սկզբունքային նշանակությունը կաճի, այդ ապարեզում կատարված նոր ուսումնասիրությունների հանդես գալուն զուգընթաց։

Գ. Մ. Բոշյանի գիրքը օգտակար է ոչ միայն բժշկության և անասնաբուժական հասարակության, այլ և մեր երկրի, ողջ բիոլոգների համար։

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ 5-ՐԴ ՍԵՍԻԱՆ

Հուլիսի 6-ին, ցերեկվա ժամը 12-ին, ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի 5-րդ սեսիայի բացումը։

Նախագահության սեղանի շուրջն են Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահ Ս. Սահակյանը, նախագահի տեղակալներ Ն. Խոջանեթյանը և Թ. Մուսանը։ Օթյակներումն են Հայաստանի կառավարության աչքի ընկնող գործիչները։

Բացելով սեսիան, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահ, դեպուտատ Ս. Սահակյանը հրապարակում է 5-րդ սեսիայի հաստատմանը ներկայացված օրակարգը։

Դեպուտատ Ա. Հարությունյանի առաջարկով սեսիան միաձայն հաստատում է հետևյալ օրակարգը.

1. Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի 1950 թվականի Պետական բյուջեի և Հայկական ՍՍՌ 1949 թվականի Պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության հաստատումը։

2. Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության ընդունած հրամանագրերի հաստատումը։

Օրակարգի առաջին հարցի առթիվ՝ Հայկական ՍՍՌ 1950 թվականի Պետական բյուջեի և 1949 թվականի Պետական բյուջեի կատարման մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Ֆինանսների մինիստրը, դեպուտատ Ա. Շեկոյանը։

Հարակից զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Բյուջետային հանձնաժողովի անդամ, դեպուտատ Լ. Շահբազյանը։

Բյուջետային հանձնաժողովի հարակից զեկուցումից հետո առաջին նիստը ավարտվում է։

Նույն օրը, երեկոյան ժամը 8-ին, կայացավ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի 5-րդ սեսիայի երկրորդ նիստը, որի ընթացքում բացվեց մոքերի փոխանակություն, օրակարգի առաջին հարցի՝ Հայկական ՍՍՌ 1950 թվականի Պետական բյուջեի և 1949 թվականի Պետական բյուջեի կատարման մասին Հայկական ՍՍՌ Ֆինանսների մինիստր, դեպուտատ Ա. Շեկոյանի զեկուցման շուրջը։

Հուլիսի 7-ին շարունակվում էր մոքերի փոխանակությունը Հայկական ՍՍՌ Ֆինանսների մինիստր, դեպուտատ Ա. Շեկոյանի զեկուցման շուրջը։

Երեկոյան նիստում Հայկական ՍՍՌ Ֆինանսների մինիստր, դեպուտատ Ա. Շեկոյանի եզրափակիչ խոսքից հետո սեսիան անցնում է 1950 թվականի Պետական բյուջեի հաստատմանը։

Սեսիան միաձայն հաստատում է Հայկական ՍՍՌ 1950 թվականի Պետական բյուջեի Օրենքը և 1949 թվականի Պետական բյուջեի կատարման հաշվետվությունը։

Օրակարգի առաջին հարցը սպառված է։ Սեսիան անցնում է երկրորդ հարցի քննարկմանը՝ չորրորդ և հինգերորդ սեսիաների միջև ընկած ժամանակամիջոցում Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության ընդունած Հրամանագրերի հաստատմանը։

Այդ հարցի առթիվ զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության քարտուղար, դեպուտատ Ս. Հ. Ղևոնդյանը։

Գերագույն Սովետը միաձայն հաստատում է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության կողմից ընդունված հրամանագրերը։

Սրանով սպառվում է սեսիայի օրակարգը։

Նախագահող դեպուտատ Ս. Սահակյանը Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի հինգերորդ սեսիան հայտարարում է փակված։

ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ՆՈՐ ԱՆՏԱՌՆԵՐԸ

Տարեց տարի Կիրովականի շրջանում ստեղծվում են նոր անտառներ։ Գեղատեսիլ խառն անտառների մասիվները ձգվում են դեպի հարավ և արևելք։ Այդ անտառները ունեն կուրորտային, դաշտապաշտպան և տրանսպորտային խոշոր նշանակություն։

Կիրովականի անտառային տնտեսությունը հնգամյա ուշադրություն է դարձնում ան-

տառաքուծմանը։ Ստեղծվել են ու ստեղծվում են նոր անտառներ։ Անտառատնտեսությունն այս տարի գերակատարեց անտառատնկումների գարնանային պլանը։ Քաղաքի հյուսիսային մասը շրջափակող լեռները, որոնք ամայի և քարքարոտ լինելու պատճառով կոչվում են «դրեր», մի քանի տարուց հետո գեղեցիկ տեսք կստանան։ Այստեղ 45 հեկտար տարածության վրա տնկվել են ավելի քան 260 հազար դեկորատիվ ծառ։

Այս տարեշրջանում տնկվել է ավելի քան մեկ միլիոն սոճի, սպիտակ ակացիա, հացենի, վայրի տանձենի և խնձորենի։

Կիրովականի անտառատնտեսությունը տնկիներ է մատակարարում նաև ռեսպուբլիկայի մյուս շրջաններին։

«ԱՐԶՆԻ» ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ՆՈՐ ԱՂԲՅՈՒՐԸ

Օրերս «Արզնիի հանքային ջրի գործարանն ավարտեց նոր հորի փորումը։ Արզնիի ձորում նոր բացված այդ հորը օրական տալիս է մեկ միլիոն լիտր հանքային ջուր, որը մի քանի անգամ գերազանցում է «Արզնի» սեղանի և բուժիչ ջրի գոյություն ունեցող հիմնական աղբյուրների կարողությունից։

Այստեղ գործարկվել է նաև ածխաթթու ստացող երկրորդ ագրեգատը։ Դա հնարավորություն է տալիս ավելացնելու ածխաթթվի թողարկումը և ամեն օր լրացուցիչ տալու 30 հազար շիշ ջուր։

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ՆՎԻՐՎԱԾ ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻՆ

Գ. Սունդուկյանի ծննդյան 125-ամյակի առթիվ, հուլիսի 12-ին, հայ ռեալիստական դրամատուրգիայի մեծ հիմնադրի հոբելյանը հանդիսավոր կերպով նշելու համար, մեծ դրամատուրգի անունը կրող թատրոնն էին հավաքվել արտադրության առաջավորներ, հիմնարկ-ձեռնարկությունների ներկայացուցիչներ, գրողներ, դերասաններ։

Բեմի վրա դրված է Գ. Սունդուկյանի խոշոր դիմանկարը՝ շրջապատված փարթամ ծաղիկներով։

Նախագահության սեղանի շուրջը նստած են հասարակական կազմակերպությունների և հիմնարկությունների ղեկավար աշխատողներ, սովետահայ բեմի աչքի ընկնող վարպետներ։ Նրանց մեջ է հոբելյանի առթիվ Թբիլիսիից հրավիրված մեծ դրամատուրգի դուստր Եկատերինա Սունդուկյանը, որին ներկա գտնվողները ընդունում են ջերմությամբ։ Բացման խոսքում բանաստեղծ Գ. Բորյանը Գ. Սունդուկյանին գնահատում է իբրև մեր կլասիկ գրականության խոշորագույն ներկայացուցչի, որի ստեղծագործությունը թանկ է սովետական ժողովրդի համար։

Մեծ դրամատուրգի կյանքը, ստեղծագործությունն ու թատերական գործունեությունը բնութագրող զեկուցումով հանդես է գալիս ընկ. Գ. Աբովը։ Մ. Շաթիրյանը ընթերցում է հոբելյանի առթիվ ստացված ողջույնի հեռագրերը։ Այնուհետև Սունդուկյանի ռեպերտուարի վարպետներ Օ. Գուլազյանը, Ա. Ավետյանը, Գ. Գաբրիելյանը, Ռ. Վարդանյանը, Դ. Մալյանը, Մ. Կոստանյանը և ուրիշները մեծ ոգևորությամբ կատարեցին հատվածներ «Պեպո», «Էլի մեկ զոհ» և «Խաբեբայ» պիեսներից։ Հայկական ժողովրդական երգի պարի պետական անսամբլը իրեն հատուկ բարձր արվեստով կատարեց իր ռեպերտուարի լավագույն նմուշները։

Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻ ՆՇԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Հուլիսի 12-ին Վրաստանի արվեստի աշխատողների տանը կայացավ հայ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանի ծննդյան 125-ամյակին նվիրված հոբելյանական երեկո։

Բացման խոսքով հանդես եկավ գրող Ռոպիոն Քորքիան, որը բնորոշեց Գ. Սունդուկյանի կատարած դերը հայ և վրաց դրամատուրգիայի ու թատրոնի զարգացման, երկու հարևան ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։

«Գ. Սունդուկյանի կյանքն ու ստեղծագործությունը» զեկուցումով հանդես եկավ Վրացական ՍՍՌ ժողովրդական արտիստ, դրամատուրգ Շ. Դարբանին։ Զեկուցողը հանգամանորեն վերլուծեց Գ. Սունդուկյանի գրական ժառանգությունը, բարձր գնահատելով մեծ դրամատուրգի երկերի սոցիալական գեղարվեստական մեծ արժեքը։

«Գ. Սունդուկյանը վրաց բեմի վրա» թեմայով հետաքրքրական զեկուցում կարդաց պոետ, ակադեմիկոս, Ստալինյան մրցանակի լաուրեատ Ի. Գրիշաշվիլին։ Հետաքրքիր փաստերով Ի. Գրիշաշվիլին ցույց տվեց Սունդուկյանի կատարած խոշոր դերը վրաց թատրոնի ու դրամատուրգիայի զարգացման, վրաց բեմի գործիչների տաղանդի զարգացման բնագավառում, առանձնապես շեշտելով վրաց ականավոր դերասաններ Ակակի Մելիքիշվիլու, Նիկո Նիկոլաձեի մեծ բարեկամությունը Գ. Սունդուկյանի հետ և վերջինիս արտահայտած մեծ սերը դեպի Վրաստանը ու վրաց ժողովուրդը։

«Թիֆլիսի բարբառը Սունդուկյանի երկերի մեջ» զեկուցումով հանդես եկավ բնկ. Ս. Ավչյանը։ Նա ընդգծեց, որ Սունդուկյանը լավ իմանալով դրական լեզուն, իր երկերը դրել է Թիֆլիսի բարբառով, նպատակ ունենալով այդ երկերի դաղափարները դարձնել աշխատավոր լայն մասսաների, այն ժամանակվա Թիֆլիսի ներքին իավերին սեփականություն։

Հետաքրքրական հիշողություններով հանդես եկան ժողովրդական դերասան Տիգրան Փիրումյանը, Վրացական ՍՍՌ ժողովրդական դերասանուհի Տասո Արուլիձեն։ Վերջինս կարդաց նաև Իլիա Զուբարիշվիլու հիշողությունները Սունդուկյանի մասին։ Այդ հիշողությունների մեջ վառ ու կենդանի դույներով նկարագրվում է Սունդուկյանի պայծառ դերպարը, արտահայտված է նրա խիստ ու նախանձախնդիր վերաբերմունքը դեպի արվեստը, բեմական խոսքը, մեծ սերը դեպի վրաց եղբայրական ժողովուրդն ու թատրոնը։

Իոսեբ Իմեդաշվիլին իր հիշողություններում մատնանշեց Սունդուկյանի կատարած դերը բանվորական աշխատավորական թատրոնների կազմակերպման բնագավառում 1900—1905 թվերին՝ Թիֆլիսի Նոմալովկա և Հավլաբար թաղամասերում։

Վաստակավոր դերասան Դարիմանաշվիլին արտասանեց Ի. Ճավճավաձեի ջերմ զգացմունքներով տոգորված բանաստեղծությունները՝ նվիրված Գ. Սունդուկյանին։

***

Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ռուսթավելու անվան գրականության ինստիտուտում կայացավ Գ. Սունդուկյանի ծննդյան 125-ամյակին նվիրված նիստ։ Բացման խոսքով հանդես եկավ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ա. Շանիձեն։

«Գ. Սունդուկյանը և վրաց հասարակությունը» թեմայով զեկուցեց Ակադեմիայի իսկական անդամ Ի. Գրիշաշվիլին։

Նիստի վերջում ելույթ ունեցավ Գ. Սունդուկյանի դուստր՝ Եկատերինա Սունդուկյանը։

***

Հուլիսի 15-ին դրողների դահլիճում Վրաստանի Սովետական դրողների միությանը վարչությունը կազմակերպեց հանդիսավոր երեկո՝ նվիրված հայ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանի ծննդյան 125-ամյակին։

Սունդուկյանի հիշատակը հավերժացնելու նպատակով որոշվեց մարմարյա հուշատախտակ փակցնել այն տան ճակատին (Լերմոնտովի փողոց № 16), ուր ապրել և ստեղծագործել է հայ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանը։

ՉԻՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հուլիսի 23-ին Հայաստանի պետական պատկերասրահում բացվեց Չինական արվեստի ցուցահանդես։ Պատկերասրահի երկու դահլիճներում ցուցադրված են ավելի քան 300 էքսպոնատներ։ Այստեղ կարելի է տեսնել ճենապակյա վազեր ու թասեր, ագվարիումներ, փորագրված կահկարասիներ (սեղան-աթոռ) փորագրված սալոնի կոմպ՝ Հնդկական աստվածներից մեկի կերպարանքով, նիֆրիտից, շպարից, բյուրեղ ապակուց, օճառաքարից և այլ նյութերից պատրաստված կերտվածքներ, անհայտ նկարիչների նկարներ բրնձե թղթի վրա և այլ էքսպոնատներ։

Առանձին բաժին է հատկացված այն ուռարկաներին, որոնք դարեր առաջ գործածության մեջ են մտել հայ ժողովրդի կենցաղում։ Դրանց թվում կան այնպիսիները, որոնք պատրաստված են 9-րդ դարում։ Այս բաժնում ցուցադրված են նաև իրեր և մի շարք ձեռագործ աշխատանքներ, որոնք 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կիսամյակում պատրաստվել են չինաստանի հայկական գաղութի պատվերով էջմիածնի համար։

Ցուցահանդեսում ցուցադրված են մի ամբողջ շարք էքսպոնատներ, որոնք ցույց են տալիս այն խոշոր ազդեցությունը, որ թողել է Չինական արվեստը արևմուտքի կիրառական արվեստի վրա։

ԿՈԼԽՈԶԱՑԻՆ ՄԱՍՍԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Հայկ. ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրությունը և շրջսովետների գործկոմների գյուղբաժինները Ռեսպուբլիկայի շրջկենտրոններում, գյուղերում ու ավաններում կազմակերպել են կոլխոզային մասսայական կադրերի վերապատրաստման կարճատև դասընթացներ։ Անցած ամիսների ընթացքում վերոհիշյալ դասընթացներում որակավորվել են նոր 30 հազար կոլխոզնիկ՝ 42 մասնագիտություններին գծով։

Հինգ-վեցամսյա դասընթացներ են կազմակերպվել նաև Երևանում և ռեսպուբլիկայի մյուս քաղաքներում։ Դասընթացներին մասնակցել են կոլխոզների վարչությունների նախագահներ, բրիգադիրներ, գյուղատնտեսներ, անասնաբույժներ, զոոտեխնիկներ և գյուղատնտեսության այլ մասնագետներ։

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

ՄԻԿՈՅԱՆ.— Ռայոնում գործում է 12 ոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոց։ Շենքերի մեծ մասը կառուցվել է վերջին երկուսից երեք տարում։ Կուլտուր լուսավորական հիմնարկների թիվը հասնում է 10-ի։ Վերջին երկու տարում կառուցվել և շահագործման է հանձնվել կինոթատրոնի 4 շենք։ Երկու ամիս առաջ շահագործման հանձնվեց մի երկհարկանի գեղեցիկ ու ընդարձակ շենք, որտեղ տեղավորված են կինոթատրոնը, գրադարան-ընթերցարանը և ակումբը։ Միայն գրադարանից օգտվելու համար օրական այստեղ այցելում է 150—200 մարդ։

ՄԱՐՏՈՒՆԻ.— Այս տարի շրջկենտրոնում կառուցվում են մի շարք կոմունալ և բնակարանային շենքեր։ Այժմ կատարվում են կինոթատրոնի, պանրագործարանի, հանապարհաշինարարական դրասենյակի ընդարձակ շենքերի կառուցման աշխատանքները։ Կոնսերվի գործարանի բանվորների և ծառայողների համար կառուցվում է երկհարկանի բնակելի նոր շենք, որն ունենալու է բոլոր հարմարություններով 12 բնակարան։ Մեքենատրակտորային կայանի համար կառուցվում է արհեստանոցի նոր շենք։

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ.— Շրջանի Մրգաշատ գյուղում կառուցվում է կոլխոզային նոր ակումբ։ Ակումբի մեծ շենքը, որը նախատեսված է ավելի քան 500 հանդիսատեսի համար, ունենալու է ընթերցարան, գրադարան, առանձին խաղասենյակներ և այլ հարմարանքներ։ Ակումբը լրիվ շահագործման կհանձնվի Հայաստանում սովետական կարգերը հաստատվելու 30-րդ տարեդարձի օրը։

Վերջին երկու տարվա ընթացքում գյուղը լրիվ էլեկտրիֆիկացման է ենթարկվել։ Կոլխոզնիկների բոլոր տներում անց են կացված ռադիոբարձրախոսներ, իսկ շատ բնակարաններում՝ նաև ռադիոընդունիչներ։

ԿԱԼԻՆԻՆՈ.— Այս տարի ղգալի աշխատանք է տարվում շրջանային կենտրոնի բարեկարգման համար։ Գլխավոր փողոցում կառուցվում են ասֆալտապատ մայթեր, ցանկապատեր, տնկված են մետալյա էլեկտրական սյուներ։ Խճապատվելու և նորոգվելու է փողոցի կենտրոնական մասը։ Հիմնովին վերանորոգված են ջրմուղը և ջրաս կամուրջ։ Բարեկարգվում է շուկան։ Տեղական բնակչությունն ակտիվորեն մասնակցում է այդ աշխատանքներին։

Սկսված է Գործկոմի, կապի բաժանմունքի, պանրագործական դպրոցի և մեքենատրակտորային կայանի մեխանիկական արհեստանոցի նոր շենքերի կառուցումը։ Կազմված և հաստատված է Կալինինոյի գլխավոր հատակագիծը, ըստ որի շրջանային կենտրոնը, բացի գոյություն ունեցող գլխավոր փողոցից, ունենալու է 80 մետր լայնության հասարակական այգի, կուլտուրայի և հանգստի մեծ պարկ, ստադիոն, կինո-թատրոն և նոր ջրմուղ։

ԱԽՏԱ.— Շրջկենտրոնի հիվանդանոցն ունի ռենտգենյան, վիրաբուժական կաբինետներ, լաբորատորիա և այլ հարմարություններ։ Օրերս հիվանդանոցին կից բացվեց ֆիզիո-թերապևտիկ նոր կաբինետ, որը կահավորված է լավագույն սարքավորմամբ և ապարատներով։

ՆՈՐ ԽԱՆՈՒՔՆԵՐ

Երևանի Միկոյանի պողոտայի և Մարքսի փողոցի անկյունում, նորակառույց բնակելի շենքի առաջին հարկում, բացվել է գործվածքեղենի նոր խանութ։ Ընդարձակ, գեղեցիկ կահավորված խանութն ունի բամբակյա, բրդյա, մետաքսյա, վուշե գործվածքեղենի ու կտորեղենի վաճառքի ճոխ բաժիններ։ Շուտով նույն պողոտայի վրա կբացվի Ավտոմոբիլային արդյունաբերության մինիստրության խանութը, որտեղ վաճառվելու են «Պոբեդա» և «Մոսկվիչ» մարկայի ավտոմեքենաների դանազան սարքավորում ու մասեր։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՈՒՄ

Հայ Պետհրատը լույս ընծայեց կոմպոզիտոր Սպիրիտոն Մելիքյանի հավաքած հայկական երգերի ու պարերի ժողովածուն, ուր զետեղված են հայ ժողովրդական ստեղծագործության 270 նմուշ։ Շուտով լույս կտեսնի նաև Կոմիտասի ժողովրդական երգերի ժողովածուն։ Այս գրքում տեղ գտած բոլոր 108 երգերը հրապարակվում են առաջին անգամ։ Տպագրվում է նաև Ա. Սպենդիարովի երկերի 9-րդ հատորը։

«ԱՐԳԻՆԱՅԻ ԶՈՐՈՒՄ» ՊԻԵՍԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Լենինականի Պետական Դրամատիկ թատրոնի կոլեկտիվը քննարկեց Ա. Հովսեփյանի և Ս. Քոչարյանի «Արգինայի ձորում» վերնագիրը կրող պիեսը, որը ձոնված է Հայաստանում Սովետական իշխանության հաստատման պանծալի 30-ամյակին։ Պիեսը պատկերում է հայ ժողովրդի պայքարը՝ Սովետական իշխանություն հաստատելու համար։ Քննարկմանը մասնակցողները նշեցին պիեսի հետաքրքիր սյուժեն, հերոսների ճշմարտացի կերպարները և այլն։ Արվեցին նաև որոշ դիտողություններ, որոնց հիման վրա հեղինակները խոստացան վերանայել պիեսը և ապա հանձնել հրատարակության։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Բուխարեստ, 8 օգոստոս 1950

ՊԱՏՎԱՐԺԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

«Էջմիածին» ամսագրի յուրաքանչյուր թիվը երբ կատանամ, ո՛չ միայն հոգեկան անհուն հրճվանք մը կզգամ, այլ և կարդանալով անոր ամեն մեկ հոդվածին և առանձին գրություններուն յուրաքանչյուրին խոր արժեքին վրա։

Ամսագրին այսպես խնամյալ և բովանդակալից լույս տեսնելը նահ անտարակույս ազգային հպարտության մըն է, նամանավանդ սիրելի Հայրենիքեն հեռու ապրող Սփյուռքի մեր հայության համար։

Ինչ կվերաբերի ազգային, կրոնական, պատմական, գրական և հայրենի ծոցը երգող նորագույն բանաստեղծությամբ լույս ընծայված նյութերու մասին, բովանդակությամբ ինքնին կմատնին ոգիի հանքի մը, որ մութին ծոցեն դուրս, լուսի միջոցով, մեկ կզրկե իր թանկագին արտադրությունը՝ մեր ազգային թե կրոնական մասամբ պակաս ունեցող ավելի ճոխացնելու և հարստացնելու համար։ Մինչև ժամանակ ամսագիրը վստահարար զորավոր և շարունակական կապը պիտի մնա Մայր Հայրենիքեն հեռու ապրող հայերս Հայրենիքին և նեկտեցիին կապուլ։

Ամսագրին «Էջմիածին» անունը արդեն իսկ մեզ, ամեն մաքուր հայու սիրտ, անկասկած ասանց բացատրության, անմիջապես կփոխադրե Ս. Էջմիածնա կամարներեն ներս, խորին հավատքով և երկյուղածությամբ։ Ս. Էջմիածի՛ն, անասան և մայրական բույնը մեր քրիստոնեական հավատքին և ազգային կենդանությանն։

Դժբախտաբար, ազգային անարատ զգացումով կուռ հայության մեծ զանգված մը դեռ կապրի երկրագունդին դրեթե ամեն մասին մեջ, հեռու հինգերորդ Մայր Աթոռին հոգևարար մթնոլորտեն։ Նոյնիսկ կխորհիմ թե անցյալ սերունդեն հասունցած անհատներու մեծագույն թիվ մը և նամանավանդ նոր սերունդեն մեծ թիվ մը կազմող նորահասներ, Ս. Էջմիածնա Մայր Աթոռին անցյալ պատմության, կրոնական թե ազգային տեսակետեն, անոր կատարած դերին և արժեքին նկատմամբ անտեղյակ կմնան։ Այդ թե չեմ սխալիր, այս ուղղությամբ լույս ընծայված ուսումնասիրություն մը չունինք։ Հետևաբար թող ներվի ինձ Ձեր պատվարժան խմբագրությունեն խնդրել, եթե կարելիություն և հարմարություն կնկատվի, Մայր Աթոռին հաստատության սկզբեն սկսյալ մինչև մեր օրերը, Հայրապետական Աթոռին հաստատման շարժառիթներուն, Ամենայն Հայոց Սրբազան կաթողիկոսներուն հաջորդաբար կենսագրության և գործունեության դիմէրը, և, վերջապես, Մայր Աթոռին կրոնական թե ազգային օգտաշատ գործունեության քով կարելիություն մանրամասներեն պատմական ուսումնասիրության ձեռնարկել և ամսագրին էջերուն մեջ հաջորդաբար լույս ընծայել։

Այսպիսով, եթե կրկին անգամ թույլ կտրվի ինձ՝ կխորհիմ թե ամսագիրը արդեն ինքնին մեծագույն արժեքը տված պիտի ըլլա իր անունին ու հեռավոր և մութին մեջ խարխափող զավակները տեսականորեն կապ և դիտակից պահե Մայր Աթոռին անցյալին այ նկատմամբ։

Հարգանքով,

ընթերցող՝ ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԱՆ

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը այս նամակի կապակցությամբ պատմ է նամառում հայտնել, որ առաջիկա համարներում նախատեսվում է գետեղել Մայր Աթոռի և Հայ Եկեղեցու ակնարկ գործիչների մասին նման ուսումնասիրություններ։ Վերոհիշյալ Հայրապետը, որը մեծ հոգածություն է ցուցաբերում ամսագրի խմբագրության նկատմամբ, ցանկություն ունի, որ ամսագիրն ավելի ճոխ և բովանդակալից լինի։ Սակայն, այդ ցանկությունը, որքան չափով, կախված է մեր հավատացյալ ազգայիններից։ Հանկալի է, որ ամսագիրն իրենց աշխատակցությունը բերեին Հայրենիքի և Սփյուռքի մեր բոլոր պատրաստված մասնագետները՝ աշխարհական թե հոգևորական, և, մյուս կողմից, բնմերը աշխատանք տանին ամսագրի նյութական կողմը ապահովելու ուղղությամբ, որպեսզի հնարավոր լինեն «Էջմիածին» ը հրատարակել պարբերաբար յուրաքանչյուր ամիս։—ԽՄԲ.

ՅՈՒՅՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ[1]

№ 11

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 220։— Մեծությունը՝ 16,5×11,5×5,5։— Նյութը՝ գեղնագույն մագաղաթ։— Կազմը՝ կաշեպատ սափտակ։ Առջևի կողքի վրա փակցված են 4 խաչեր, որոնցից մեկի վրա փորագրված է՝ «Յիշեցէք ի Քրիստոս Տէր Աստուած Յիսուս», իսկ մյուսի վրա՝ «Նագլու Աստուծ»։— Վիճակը՝ վերջը թերի է։— Գրությունը՝ երկսյուն։— Տողերը՝ 25։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ սեի գիսախոշանոներ և Աստվածնա ու Մարգոս ավետարանիչների նկարներ։ Լուսանցքներում կան մի շարք նկարներ։ Գլխագիր տառերը զարդանկարներ են։ Վերնագրերը գրված են կարմիր թանաքով։— Ժամանակը՝ 17-րդ դար։

Հիշատակարաններ եվ հիշատակագրություններ չունի։

№ 12

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 264։— Գրակերը՝ 22։— Մեծությունը՝ 15×13×8։— Նյութը՝ գեղեցիկ հատ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ սափտակ, վրան զանազան զարդարանքներ տպված։— Գահպանակները՝ 3-ը առաջից, 2-ը վերջից՝ մագաղաթ։— Ներսի վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ երկսյուն։— Տողերը՝ 23։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ սեի խորանների և կիսախորանների ու ավետարանիչների նկարներ։— Ժամանակը՝ 1477 թ.։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 68բ.— Ով հանդիպողք սուրբ աւետարանիս, յիշեցէք գներաչս էրէցն, որ եա ծաղկել զաւետարանս յիշատակ խաւճա Իպրէհիմին, և որ յիշէ, յիշեալ լիցի ի յիւր միւս անգամ գալստեանն, ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս եւ զմիւս դուստրն զՍառա Խաթունն, եւ զնորին դուստրն՝ զնաթէլ Խաթունն, եւ զորդին Ազիզէկն, եւ զդուստրն զԽաթուն աղէն յիշե-(ցէք)։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՏէր Մուքայէլն, եւ զմիւս դուստրն՝ զԹառդումաշն, եւ զկուլակիցն Յեարվէլին յիշե-(ցէք)։ Դարձեալ յիշեցէք եւ զմիւս դուստրն զԳեահմավար Սոլթանն եւ զդուսարն իւր

1. Շարունակված մայիս—հունիս համարից։

խոյ(ս)բովիդուխան։ Եւ զմիւս դուսարն Անթառամն, եւ զորդին Վարթանէսն, եւ զհանդուչեալ զԳրիգորն, եւ զմիրզախանն, եւ զդստերքն՝ զՄարի տատն, եւ զՓարիզ(ա)տն եւ զՀռիփսիմէն յիշե(ցէք)։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զանյիշատակ Թառդումաշն, քանց հոգ հնա-գ(ա)նեղ։ սր բաղում աշխատանք ունի իւր հօր տանն վեր(այ), եւ ի վ(է)ր(այ) ս(ուր)ք աւետարանիս անարատ պահելով գսա։ Եւ որք հանդիպիք սմա, լի սրտիւ, աներկ մտօք, անկեղծ հաւատով, Աստուած ողորմի ասացէք մարմնաւոր անյիշատակ Թառդումաշին, զոր ս(ուր)ք Աւետարանս է հոգեւոր յիշատակ իւր հոգոյն եւ ծնողաց իւրոց։ Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի ի միւս անգ(ա)մ դալստեան իւրոյ, ամէն։ Հայր մեր...

Թ. 112բ.— Ղուկաս ավետարանչի նկարի շուրջ եղած հիշատակարաններ.— Մաղկեցաւ ս(ու)ք աւետարանս ձեռամբ ըՍտ(ե)փ(ա)-նոս եպ(իս)կ(ոպո)սի ի վանքս Առընչուց, ի դատն եւ ի նեղ ժամանակիս, զի գնաց Հասան բէկն եւ գերեալ գվնաստուն (զվրաց տուն?) թվ(ին) ՉԻԶ (1477)։

Թ. 109բ.— Սուրբ աստուածայիս աւետա(ր)ս, որ ստացաւ եւ Կարապետս իմ հալալ վաստակաւն իմով, որ լինի (յի)շատակ ինձ։ Արդ, երեւ անկե(ա)լ աղաչեմ ի սուրբ աւետարանիս ընթերցողաց, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զմեղայապարտ Կարապետ(տն) եւ իմ կողակիցն Սարալուն եւ հոդէորդին իմ Որդանանն, եւ կողակիցն Սուփիանէն, եւ որդիքն Վարդանն եւ Կարապետն, եւ դուք յիշեալ լիջիք առաջի անմահ գառին Աստծոյ։ Ամի տեառն ՌՄՃԼ-ին (1830)։ Արդ, ես Սարալայուս այս սուրբ աւետարանս (յ)անձ(ն)եցի թոռին իմոյ Կարապետին, որ է անուն կենակցին իմոյ եւ նա պարտական է ինձ եւ իմ կենակցին իմոյ Կար(ա)յպետին անդա(դա)ր յիշ(ա)ա(ա)կել։

Թ. 111բ—112ա.— Զվերջին ստացող սուրբ աւետարանիս զհեզաւոգի քահանայն զՏէր Մուքայէլն եւ զկողակիցն իւր զնանէֆ Սուլթանն, որ ստացան զսա ի հալալ արդիանց իւրե(ա)նց յիշատակ հոգոյ եւ ծնողաց իւր(ո)ց զՏէր Յակոբ քահանայն, եւ զԹառդու-

մաշն, եւ որդիքն Սարգիսչանն, եւ զՀունդուրէկն յիշ(եցէք)։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏեղապոզի քահանայն զՏէր Մուքայէլն, եւ զորդին զՍարգիսն, եւ զնորին կողակիցն զՀռիփսիմէն, եւ զորդիքն զԳրիգորն, զՅակոբչանն, զՀնդուրէկն, Յարութիւնն եւ զդստերքն Խաթունն, Խանփարին, յիշեցէք։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏէր Մուքայէլն, եւ զորդին Փիրասլանն, եւ զկոզակիցն զՄարի տատն, եւ զդուստրն զԳուհարն, եւ զմիւս կոզակիցն Ազիզ փաշէն, եւ զորդին Աստուածատուրն եւ զդուստրն զԷլչլի իանն յիշե(ցէք)։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏէր Մուքայէլն, եւ զդուստրն իւր զԽանփարին, եւ զորդին Յակոբչանն, եւ զհանգուցեալ զկարապետն յիշեցէք, եւ Աստուած զողորմի ասացէք, ամէն։

Թ. 187բ.— Զվերջին ստացող սուրբ աւետարանիս յիշեսցիք ի Քրիստոս եւ զՄուրատն, զԹուտախն, զմայրն իւր Ազիզն եւ զորդ(ի)ս իւր Ասայուրն, զՄածուրն, եւ զկողակիցն իւր զԽանձրեւարդն, զԽաթունիկն եւ զՀեղինարն, որ զաւետարանս ազատեց ի գերութենէ ի հալալ ընչից ի իւրոց։ Եւ վոր հանդիպիք, աղորմի ասէք եւ Աստուած ձեզ աղ(որ)մես(ց)ի իւր միւս անգամ գալստեանն, յամէն։

Ի թվականիս հայոց ՌԻԹ (1760)։

Ով եղբարք, ով ոք հանդիպիք սուրբ աւետարանիս, յիշեցէք ի մաքրայփայլ աղաւթս ձեր զՄարտիրոս քահան(այն) եւ զմայր իւր Փարիհայն եւ զկոզակիցն իւր Վարդխաթուն, որ բազում աշխատանք ունին ի ժամս ազատման սուրբ աւետարանիս եւ զիս անպիտանս եւ անարժան Միքայէլ երէցս, որ անուանս չեմ արժանի։ Ով ոք հանդիպիք, միոյ բերան ողորմի ասէք, եւ Աստուած ձեզ ողորմի իւր միւս անգամ գալստյան որ(դոյ)ն Ցլի պառքն կէր, մնացածէս տվի. ով ոք ողոր(մ)ի ասէ, ողորմածն Աստուած ողորմեսցի իւրն, ամէն։

Դարձեալ յիշեցէք զՄիքայէլ երէցն եւ զծնաւլսն իւր Տ(է)ր Ակոբ զահանան եւ զԹառդումաշն, որ զսուրբ խաչն աւետարանիս շինել ետուր։ Ով ոք յիշէ, յիշեալ լիցի ի Քրիստոսէ, ամէն։

Թ. 262ա—264 բ.—

Քրիստոս գՔած եւ ողորմած,
Քրիստոնէից Տէր Աստուած,
Չոգորմութեան քո զդուռն բաց,
Լուր տառապեալ քրիստոնէեաց։
Յամէն դիմաց եմք մեք նեղած,
Ի ամէն ազգաց կոխան եղած,
Եկեղեցիք բազում քակած,
Բազում խաչեր է խորտակած,
Գիրք ՝ աւետ(ա)րան գերի տարած,
Կանայք եւ տղայք գերի վարած,
Գիշեր ցերեկ կամք վարանած։
Էս ամէնն ի մեր մեղաց,
Որ բարկացար հայոց։

Ի թուականիս հայոց ՌԾԷ (1608), ի ժամանակիս որում Շահ Ապաս արքայն պարսից եկեալ պաշարեաց զԹարվիզ եւ կոտորեաց զզաւրս տաճկաց, քանզի դնացեալ էին Ալի փաշայն եւ ամենայն զաւրավարքն Թարվիժոյ, նեղչուանայ, եւ Երէվանայ ի վեր(այ) Ղազի բէկին ի Սալմաստ։ Եւ ի դառնալն նոց(ա) զամին(ես)եան զնոսա սրախողխող արարեալ եւ բազ(ու)մք ի քրիստոնէից անդ կոտորեցան։

Եւ առեալ զքաղաքս Թարվիզոյ, եւ անցեալ սնացեալ էառ զնեղչուան, եւ անցեալ գնաց ի յԵրեւան եւ պաշարեաց զնա ամիսս Թ (9) եւ ի հարկի կացուցեալ, էառ զքաղաքն, բայց չէ փոյթ երկարել մեզ զպատմութիւն մարտի պատերազմիս այսորիկ։ Այլ եկեսցուք ի Թարվիզ եւ ասասցուք փոքր ի շատէ զնեղութիւն եւ զչարչարանս քրիստոնէից ազգիս. թէ զի՛նչ եղեւ ընդ մեզ, քան(զի) ել հրաման ի յարքայէն թէ ո՛վ ոք աւժարեսցի բնակել, աստի կացցէք, եւ ով ոք ոչ աւժարեսցի՝ երթիցեն իւրաքանչիւր տեղիս իւրեանց, Յայնմ(ա)մ բազումք ի հայոց եւ ի տաճկաց զյուղի անկեալ ելեալ գնացին Ճանապարհի զաւուրս Բ (2), իսկ անաւրէն պարոնայքն քուրթ ազգին զամենեսեան զնոս(ա) զայրսն կոտորեալ եւ զկանայսն եւ զաղայսն գերի արարին։ Եւ զայս տեսեալ խեղճ եւ ողորմելի քրիստոնէիցս ահի եւ երկիւղի կայեալք ի տուէ եւ ի գիշերի։ Եւ լայեալք հայրք եւ մայրք։ Եւ մայրք ի վեր(այ) որդոց եւ զաւակաց մերոց միշտ եւ հանապազ վարանկեալ կայեալք թէ (զի՞նչ) լինելոց եմք։ Յայնժամ ողորմած եւ մարդասէրն Աստուած, որ ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զդառ(ն)ալ նորա, արկեալ գութ ի սիրտ արքային, տուեալ

հրաման հայոց՝ թէ հայք ազատք են, բայց երթալոյ ուրեք ուրենք հրաման չկա, կացցեն ասա, մինչ ի գարուն, եւ յորժամ ի մարտ ամիսն մտանիցեն, ամենեքեան եկեալ գնացցեն ի Շուշ քաղաքն, որ կոչի Ասպարան։ Յայնժամ սատապետ ազգս հայոց, զայն լուեալ ուրախացաք ուրախութիւն մեծ եւ փառս տուեալ Աստուծոյ, արձնեցաք զպարիշն մեր։ Եւ յորժամ եղեւ գարուն, եկ հրաման արքային, զի զազգս հայոց ի թիւ առցեն զայրան եւ զկանայսն, մանաւանդ զտարդայսն եւ զուղղունս, մինչեւ բոլորնեցեալ մանկունս։ Եւ բերին զազգս հայոց ի յԱզպահան. բայց ազգն պարսից ոչ սիրեն զազգս մեր. այժմ այսպէս։

Այժմ ասացուք՝ թէ զի՛նչ եղեւ առ այլ ամենայն ազգս հայոց. եղեւ հրաման արքային զի երթիցեն գերեսցեն զտունս հայոց՝ զԿարս, զՇիրակունիս, զԱրծկի, զԱրճէշ, զԹերկրի, զԽնուս, զԵրեվան, զՆախչուան, զՋուղայ, զԱղբակ, զՄաղամասու։ Եւ գնացեալ գերեցին եւ զբազումս սրախոյժող սրարին եւ զերեցին։ Եւ զայս տեսեալ խաւարեալ աչաց մերոց ի իւր խոցոտի, զալարի եւ խարշաւի ազիք մեր։ Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Բայց ճար չունիմք, քան զՔրիստոս. փառք Աստուծոյ հազար բերան։

Արդ, ի վերջին ժամանակիս նորոգեցաւ սուրբ աւետարանս ի թվին հայոց ՌԾԵ.ին (1606), ի թագաւորութիւնն Շահ Ապազին, ի հ(ա)յր(ա)պետութե(ան)ն էջմիածնայ տեառն Գաւիթ կ(ա)թ(ողի)կոսին։ Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք բարէմիտ եւ հեզահոգի Տ(էր) Միքայել քահանային եւ կողակցին Նէֆին եւ որդւոցն Սարգսին եւ Փիրալանին եւ զդստերացն եւ զարեան մերձաւորսն իւր, ամէն։

Դ(ա)ր(ա)ն(ա)լ յիշեցէք զպ(ա)ռն Յակոբճանն եւ զծնողսն իւր, զհայրն ուստայ Մկրտիչն եւ զմայրն Գաւհար սուլթանն եւ զկողակիցն իւր զՍուլթան խանումն...

№ 13

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 311։— Գրակները՝ 26։ յուրաքանչիւրը 12 թերթից։— Մեծությունը՝ 14,5×11×7։— Նյութը՝ դեղին թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։ Կազմի վրա զարդանկարներ, ներսի կողմից գծավոր կտավով պատված։— Գանգուռակ՝ սկզբում և վերջում 2-ական թերթ մագաղաթյա՝ ուղղագիծ երկաթագրով։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ երկսյուն։— Տողերը՝ միջին հաշվով 19։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագիրը՝ յուռանգրքերում կան զարդանկարներ, գլուխագրեր, Քոշանիկարներ և ծաղրանկարներ։ Դրուագների և պարբերությունների սկզբնատառերը կարմիր թանաքով։

Թ. 1բ.— Հետաքրքիր մի նկար՝ մի գինվորական, նստած, աջ ձեռքում՝ նետ, ձախում՝ աղեղ։ Իր ժամանակի տարազով և սակրերով։— Ժամանակը՝ 1494 թ.։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 311ա—բ.— Փառք ամենասուրբ Երրորդութեան... Նկարիցաւ սուրբ աւետարանս ձեռամբ (յ)ողնայմեղ եւ փծուն գրչի սոսկանուն Յովանէս աբեղայի։ Ցիշյալ լիշիք ի Քրիստոս, ի խնդրոյ Աստուածատուր քահանա(յ)ի եւ իւր որդոյ Թոմա քահանայի եւ իւր յո(ր)եան մերձաւորաց։ Ով ոք հանդիպիք, լի բերանով Աստուած ողորմի ասէք եւ Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալստեան, ամէն։

Ի թիւս ԹՃԽԳ (1494)։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 2բ.— Յանուն Աստուծոյ եւ Քանգու Սողոմոն միայրանեցար սուրբ աւետարանիս եւ փափտրոց եղաք Քրիստոսի տեսին, ով կարդնաք, լիով սրտի ասացէք՝ թէ Աստուած ողոր(մ)ի Քանդայու Սողոմոնայ, ամէն։

Թ. 91ա.— Յիշատակ է Սուկեազի որդի Տէր Յակոբին եւ իւր որդին Գէորգն, եւ Թորոսն եւ երրորդ որդին Համբարձն։ Եւ այս սուրբ մկրտի աւետարանս ինձ՝ Տէր Յակոբիս ընծայվիկ Նաղաշեան աստանարդից ի թվն Փրկչի 1821։

Թ. 147բ.— Զատաւանուն ծրագրս, զպղերգս, զծոյլս, որ չեմ արժանի լիշման։ Լիշնորիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, աղաչեմք։ Խորհուրդեան եւ աղա(լա)նացն զրոյս մի մեղադրիք, զի իմ կարողութիւնս այսչափ էր։

Թ. 240ա.— Յիշատակ է Տէր Աթանասին։

Ի 1841-ին այնպէս եղեւ թիւրքին պատահեց, որ մայրն իւր մանուկն ուրացաւ ի Փէրիս գաւառին, որ հայրն որդին թողեց, որդին իւր հայրն թողեց, ուշխարհն որ կայր երերում էր։ որ էս գեղիցն միյուս գիւղն չէին կարում գնալ։ Էնպէս սատանիկ բարկութիւն կար վասն մարդկանց մեղացէն, որ էլ չեմ կարող պատմել։ Եւ մեղաւոր անարժան անուն։ քահանա։ եւ գործս չարութեան։ Տէր Աթանաս Տէր Յակոբի գրեցի։ Ով ոք հանդիպի, մին բիդան ողորմի ասի, ամէն։

Թ. 311բ.— Փառք... սուրբ Երրորդութեանն... Յամի Ջ.ԻԽԸ-ի(նդամորի) (1502) թուականութեան Հա(յ)կազեան տոմարի։ Եւ ես, Մկրտիչ անարժան քահանա, ստուգեալ եւ ոչ գործով, տենչալի դիմաւ եւ հառաջարտիւք կայայ զտիեզ(եռ)այրոյն վասն յորիս գնոց...

№ 14

ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 267։— Գրակները՝ 22, յուրաքանչիւրը միջին հաշվով 12 թերթից։ — Մեծությունը՝ 13×9,5×3,5։ — Նյութը՝ դեղնած բարակ թուղթ։ —Կազմը՝ կաշեպատ գարտուն, ներսից փակցված սպագիր սպիտակ թուղթ։— Վիճակը՝ սկզբից եւ վերջից թերի։ — Գրությունը՝ միասյուն։ — Տողերը. միջին հաշվով 23։— Գիրը՝ մանր բոլորգիր։ — Զարդագրությունը՝ ունի կիսախորաններ, գարդագրեր և յուսանցազարդություններ։ Վերնագրերը կարմիր թանաքով։— Ժամանակը՝ 16—17-րդ դար։

Տեքստն սկսում է 1888 թվին Վաղարշապատում հրատարակված Եաթանի 25-րդ էջից և վերջանում 221-րդ էջով։

Հիշատակարաններ և Ցիշատակագրություններ չունի, բացի թ. 80բ.-ի փոքրիկ հիշատակագրությունը.— «Զայս ես Ղազար վարդապետս, ես անպիտան երէցս, ես գրեցի գիրս։

Այս ես աշակերտ Ղազարու գրեցի, որ յահեղ...»։

№ 15

ԱԻԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 318։— Գրակները՝ 26, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 17×13×7։— Նյութը՝ դեղնած հաստ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։—Վիճակը՝ ոչ բավարար. սկզբից թերի է մի քանի թերթ։— Գրությունը՝ երկսյուն։— Տողերը՝ միջին հաշվով 20։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ կան թոշնագրեր և յուսանցազարդություններ, ավետարանիչների նկարներ և կիսախորաններ։— Ժամանակը՝ 1489։— Գրիչը՝ Բարսեղ։— Վայրը՝ Արճեշ։— Պատվիրատուն՝ Հովհաննես քահանա։— Պահպանակ՝ վիճակում մի թերթ մագաղաթյա (ավետարանից)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 313ա—316բ.— Փառք քեզ... Արդ՝ յանկ եւեալ աւարտեցաւ աստուածաշունչս եւ աւետարանս սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՉԼԸ (1489), ի գաւառիս Քաջբերունոյ, որ կոչի Արճէշ, ի դեւաւոր Ասպիսինակ, ընդ հովան(ե)աւ սուրբ Ստեփանոսի Նախավկային եւ տուրբ Երից Մանկանց վկայիցն։

Արդ՝ գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Բարսեղ մեղսամակարթ գրչի, ի խնդրոյ Յովանէս քահանային, որ ստացաւ զսա ոչ յաւելորդեաց եւ կամ ի փարթամութենէ, այլ ի բազում տվայտութեամբ յաղթահարեալ ի սիրոյ սուրբ աւետարանիս, ըստ գրեցելոյն թէ՝ Սէր կատարեալ ի բաց մերժէ զերկիւղ... Զայս ամենայն լուան հաւատարիմ ծառայս Աստուծոյ Շահրիարն եւ զՍաղդաթիար, եւ ծանեալ՝ զի սնոտի եւ ունայն է աշխարհս եւ անցաւոր է մեծութիւն սորա, մեծաւ փափաքմամբ, յոյժ սիրով եւ յաւժար կամաւք ստացաւղ չքնաղ եւ զանհամեմատս ի բնաւ զՔրիստոսի աւետեաց բնակարանս զքառավտակ աղբերս որ զնդեմ եւ զարարածս առոգանէ եւ ըզթարշամեալքս մեղաց ասթիւ կանաչեցուցանէ առ ի պտղաբերել զարդարութիւն։ Զաղս համեմականս, զլոյս աշխարհի զարձակիչս կապելոցս եւ զպտիչս կորուսելոցս։ Ընկալաւ զսա մեծաւ ըղձմամբ ամէնօրհնեալ եւ երջանիկ տանուտէրն Դովլաթիարն ի վայելումն որդւոյն իւրոյ սրբասէր քահանայի Տէր Յովանիսին եւ յիշատակ մեծ պապին պարոն Մէրհանին, եւ կողակցին իւրոյ Թուրվատայ խաթունին, եւ զաւակացն նորին Դովլաթիարին, եւ Շահրիարին, եւ Սաղդաթիարին եւ Դովլաթեարին. ամէնօրհնեալ եւ ծաղկեալ զաւակացն՝ Տէր Հովանէսն, եւ Խուբեարին, եւ Գուլեարին, եւ դստերն Խունիկարին, եւ զՇահրիարն եւ զիւր օրհնեալ զաւակացն զՄուրատն, եւ զէջդանբաշին եւ դրստերքն զՄէրհշէն եւ զԳուլումիաշէն, եւ զկողակիցն զՄաղթումշէն, եւ զմիւս եղբայրն զՍաղթաթիարն եւ զտղայքն զէդկարն, եւ զՄէրհանն եւ զԴուլատարն, եւ զկողակիցն զնարին խաթուն։

Եւ դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԴովլաթիարն, եւ զկողակիցն զՇահնիկարն, եւ Տէր Տովանէսն եւ զիւր կողակիցն զնոնֆարն, եւ դստերն Գուլնիկարն, եւ մեծ պապին Դիլանչին, եւ զիւր կողակիցն զՄարիամն. լի բերանով Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմի ասողացդ ողորմեսցի, ամէն։

Եւ դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զէդլշէն, եւ զՄէրշէն, եւ զեղբայրն Թաղրի Վէրմշին, որ ի Քրիստոս գնացեալ են, Աստուած ողորմի իւրոցն, ամէն։

Եւ դարձյալ յիշեցէք ի Քրիստոս զԹայրամն, եւ զմեծ խաթուն. եւ Աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւն, ամէն։ Դարձեալ կրկին անգամ ազաչեմ ձեզ ո՛վ կարդացողք սուրբ աւետարանին, զի հանապազ Աստուած ողորմի ասէք Դովլաթիարին, եւ Շահրիարին, եւ Սաղդաթիարին եւ յիւրոց զաւակացն առհասարակ, նախ Տէր Յովանէսին, Գուլիարին, եւ Խուբիարին, եւ Մուրատշին, եւ էզդանբաղշին, էդկարին, եւ Մերձանին եւ զմայր աղայոց սոցա՝ Նիկարփաշէն, եւ զՄախթումշէն, եւ զնարին խաթուն, եւ դստերացն իւրոց՝ զԽունիկարն, եւ զԳալումփա-

շէն, եւ Դուխտարն, եւ զՄէրհշէն եւ զայլ ամենայն արեան մերձաւորքն՝ զկենդանիքն եւ զհանգուցեալսն, զի ստացան զսա ի Հալալ վաստակող իւրոց, յիշատակ իւր եւ իւրոց ննջեցելոցն, յի բիբանով Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի, ամէն։ Երանեալ են անրիծք, հոգոց եւ Հայր մեր...

Արդ ես անոպիտանս ի դրիշս գրչութեան Բարսեղ սուտանուն քահանայ, աղաչեմ զձեզ, զի որք կարդաք կամ օրինակէք, յի բերանիս Աստուած ողորմի ասէք ինձ՝ եկեալի գրչիս եւ ծնողացն իմ՝ Մկրտչին եւ Մելիք Խաթունին. եւ կողակցին՝ Մրաթ Խաթունին եւ դեռաբոյս դաւակին իմ Վրդանէս եւ զսաեր իմ Մէլէքնին եւ Գուլիստանին եւ զուսուցիչն իմ՝ զՏէր Ազարիայն եւ զամենայն երախ(տ)աւորն իմ եւ զամենայն ազգականս եւ զամենայն արեան մերձաւորքն, զկենդանին եւ զհանգուցեալն, Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմեսցի յիւր արքայութիւն, ամէն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 317ա.— Արդ՝ յիշեցէք զվերջին ստացող ողորմ աւետարանիս զիսոցա Իսրայէլն եւ զՀայրն իւր Միքայէլն եւ զմայրն իւր Ուստիանէն եւ զեղբայրն իւր Հանգուցեալ ի Քրիստոս Գնորոսն, զկողակիցն Նուր մէր տատիկն եւ զորդին իւր Սարատն եւ զբներքն իւր Հոնփսիմի, Գոգիին, Զաւրափաշէն։ Յիշողդ յիշեալ յիյիք ահեղ առենին, ամէն։ Հայր մեր...

Թվականիս հայոց ՌՆԷ (1606)։ Դարձեալ յիշեցէք զիսոցա Իսրայէլն եւ զմեծ պապն իւր զՄիսայէլ եւ զկողակիցն իւր զնուր Խաթուն, զՀայրապետն եւ զկողակիցն իւր Սինիին եւ զմիւսն Հայրապետն եւ զորդին իւր Զիւլէ։ Յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, ամէն։

Թ. 248.— Աստուած ողորմի ԹՍտեփանին տղոցն Գայուսին, Նոր Գարոնին՝ յիշատակ տվին սուրբ Հէրոյգայ մասն։

№ 16

ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 356։ 4 թերթ առջեւից և 4 թերթ վերջից չի գրված։— Գրակները՝ 29. յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 14,5×11×6,5։— Նյութը՝ մագաղաթ։ կազմը՝ կաշեպատ տախտակ՝ ծեղմամբ։— Տողերը՝ 25։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդարություն՝ բազմաթիվ խորանների, կիսախորանների, լուսանցազարդություններ, ոսկով և կարմիր և այլ գույնով։— Գրչությանը թվականը՝ ՌՃԳ (1654)։— Գրիչը՝ Հակոբ։—Գրչության վայրը՝ Նախիջևանի գյուղ (Սպահան)։— Պատվիրատուն՝ Ստեփան։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ա. 349բ—352ա.— Փառք... Արդ՝ գրեցաւ տառս այս աստուածային, որ կոչի շարակնոց, ի յերկիրս Շօշ, որ է Ասպահան, ի գիւղս որ կոչի Շահիսաղան, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, ի փառս Հայոց ՌՃԳ (1654), ի հայրապետութեան սուրբ Աթանասի էջմիածնայ Տեառն Փիլիպոս կաթուղիկոսի, որ ի մարմնի զվարս անմարմնոց ունէր, որ Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ, ամէն։ Եւ ի յառաջնորդութիւն Շօշ քաղաքիս քաջ բարեմասնութիւն Տէր Դաւթիս, ի միաբանութեան սլլասեռիդ փոքր Շահնազարին։

Գրեցաւ սուրբ տառս ձեռամբ անարժան եւ ախմար Յակոբիս, յիշատակ պարոն Ստեփանոսին, որ ստացաւ զսա Հալալ ընչից իւրոց՝ յիշատակ իւրն եւ ծնողացն իւրոյ պարոն Աւետիքին եւ Սանամին, որ Աստուած վայելեալ ասցէ եւ զիւրեանս անփորձ անսասան պահեսցէ, ամէն։

Յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն եւ հօրեղբայրն իւր զիսոցա Դիլանչին եւ որդին իւր զպարոն Միրզարէկն, եւ զՄիրզարէկի որդին զՈսկանն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն եւ զմիւս հօրեղբայրն իւր՝ զպարոն Մուքայէլն եւ զնորա որդիքն՝ զԲարաղամն եւ զԲարաքիսան։

Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն եւ զհանգուցեալ եղբարքն իւր ի Քրիստոս՝ Ամիրջանն, Ոսկանն, Պարսամն, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք։

Միւս անգամ յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն եւ եղբարքն իւր Այգրն, Ոհանէսն, Զօրաբաբէլն, Պետրոսն, որ Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ, ամէն։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն եւ զպապն իւր զիսոցայ Ամիրջանն, որ հան(գ)ուցեալ է ի Քրիստոս Աստուած ողորմի ասացէք եւ զհանիկն իւր Ազաբէկին, որ Աստուած իւր արքայութեանն արժանս առնէ, ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն եւ կողակիցն իւր զՄարիամն, եւ մայրն իւր զՍանամն եւ քոյրքն իւր՝ զԷէլին, եւ զԱննային եւ զամենայն արեան մերձաւորսն յիշեցէք։

Միւսանգամ յիշեցէք ի Քրիստոս զՍտեփանոսն եւ զՀայրն իւր պարոն Աւետիքն, որ եկեղեցոյս մեր խնամածու եւ երեսփոխան է, Աստուած փոխարէն երկնից արքայութիւնն հատուսցէ, ամէն։

Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս զքահա-

նայք եկեղեցոյս Լուսաւորչի, նախ զՏէր Աստուածածնուն, որ հանգուցեալ է ի Քրիստոս, Աստուած ողորմի ասացէք։ Երկրորդ, զՏէր Սարգիսն, երրորդ, զՏէր Աստուածածնուն, որ ունին բազում աշխատանք եւ երախտիք ի վերայ մեր, վարձահատուցն Քրիստոս հատուսցէ վարձս բարիս ի յերկինս եւ ի յերկրիս, ամէն։

Կրկին ահագա՛մ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Ստեփանոսն, որ շատ ջանիւ եւ գրել զսա, աղաչէ զձեզ ասելով, թէ յորժամ կարդաք կամ օրինակէք, միով ողորմեալիւ զփափաքս իմ լցէք եւ դուք վարձս ի Քրիստոսէ առնուք, ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զծաղվարար Աստուածածնուն, որ ոսկով եւ լաճվարտով, երանգ երանգ, գոյնզգոյն դեղօք զարդարեաց եւ պայծառացոյց. Աստուած աւելի շնորհաց արժանս արասցէ, ամէն։

Արդ՝ ես անարժան եւ պիտականուն Յակոբս, յերիսս ի գետնի դնելով աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք եւ եղբայրք, յորժամ կարդայք կամ օրինակէք, լաւ խնամս տարէք առ սա, եւ դուք վարձս ի Քրիստոս առցէք եւ ինձ մի բերան ողորմի ասացէք, ողորմածն Քրիստոս ողորմեսցի ձեզ ի միւսանգամ գալըստեան իւրոյ եւ լսել տացէ ձեր երանաւէտ բարբառն, որ ասէ. Եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգակից երկնից արքայութեանն, ամէն։

Եւ այժմ եղեւ աւարտ տառիս
Աստուածախօս սուրբ կտակիս,
Որ եղեւ խնդումն սրտիս,
Որ ծրեցի զվերջ գրիս,
Ի փոքր հայոց թուականիս,
ՌՃ, ասել երիս,
Որ աւարտեցաւ յա(յ)սմ տարիս,
Ի մուտ ամսոյ դեկտեմբերիս,
Զեռամբ անարժան Յակոբիս,
Որ անուն ունիմ, գործ ոչ բարիս,
Մեղօք սեւացեալ է հոգիս,
Որ յաճախ կացեալ եմ ի չարիս,
Ո՞հ, վա՜յ ասեմ քակտի հոգիս,
Չի ոչ ունիմ մասն ի յերկինս։
Եւ արդ ասեմ անօթ գրիս,
Նախ եւ յառաջ կաղամարիս,
Որ ի յինքն ունի սեւ թանաքիս,
Նա կու գրէ որչափ կամիս։
Երկրորդ՝ ասեմ վասն գրչիս,
Դու ժամէժամ է՞ր կու հանգչիս.
Մատունս իմ ոսկոր է եւ մկա,
Մինչ գրեց՝ գայլացաւ հոգիս։
Երրորդ՝ ասեմ գրչատաշիս,
Որ կու հանէ սիրալ գրիս,
Եւ գրչատաշն ասէ ի յիս,
Թէ որ զիս սուր մնալ կամիս,
Մի առաքեր զիս յայլ տեղիս.
Որ այլ զատ կոտորն կամ միս։
Չորրորդ՝ ասեմ սատաֆնեռիս.
Մինն զնչիւ մինն զրմզիս,
Տորժամ գրին զլուսի բանիս,
Նա կու խնդա(յ) սիրտս եւ հոգիս։
Հինգերորդ՝ ասեմ քանոնիս,
Որ ճշմարտութեան օրինակիս։
Վեցերորդ՝ ճարտարարիս,
Որ կու քաշէ պարիսպ գրիս։
Եւթներորդ՝ ասեմ տողշարիս,
Որ չեմ աշխատիր շատիել տեսրիս։
Ութերորդ՝ վասն փալկալիս,
Որ շինող է նա տողշարիս։
Ով ոք հետուի բաներիս,
Ուզէ թողութին գրոզիս։
Ըզքեզ ունիմ յոյս ի մտիս,
Տէր եւ Աստուած փրկեա զու զիս,
Ի փոյձանաց որ ի յերկրիս,
Սատանայի, որ պատրէ զիս։
Համարարի Տէր նայեա յիս,
Ի քո անարժան ծառայիս.
Ընդ սրբոց քոց հաղորդեա զիս,
Յորժամ զաղջս մարդկան զատիս։
Ո՛վ ընթերցող եղանակիս,
Յիշեա ի Տէր զիս եղկելիս,
Յակոբս խեղճ ողորմելիս,
Մի հայր մեղալիւ յիշեսցիս.
Եւ զու առցես վարձս բարիս,
Ի յարարչէն՝ որ ի յերկինս.
Թէ քահանայ ես՝ փառաւորիս։
Թէ սարկաւագ՝ ի փառս հասանիս.
Թէ պարոն ես՝ յիշեա եւ զիս,
Արքայութեան արժանասցիս.
Փոխան յիշման հայր մեղալիս,
Եւ զու երկայնամեայ կացցիս, ամէն։

Թ. 168ա.— Ո՛վ ընթերցող եղանակիս.
Յիշեա ի Տէր զգեղկելիս,
Թէ սարկաւագ ես՝ զօրասցիս,
Թէ տէրտէր ես՝ փառաւորիս։

Թ. 180բ—181ա.— Ի Յակոբէ անպիտան,
Գրեցաւ գիրս՝ որ է շարական,
Ի յերկիրս Ասպահան,
Ի գեղս, որ կոչի Թովրասական,
Ընդ հովանեաւ եկեղեցոյն,
Որ անուանի Լուսաւորչեան։
Ստացող գրոցս այս բանական,
ԸՍտեփանոսն պատուական,
Զոր Տէր Աստուած պահէ անփորձ,
անսասան։
Հովանի լիցի աչքն հայրական,
Որք կարդալով կամ լսելով,
Ամէնն ասացէք ամենեքեան։
Աւուրս է մեծ, տօնս ահաւոր,
Լեր իմաստուն խնդրեա մտաւոր։

Անդէն առցես պարգեւ բարի եւ երկնաւոր,
Այսօր երկ(ի)րս շնորհաց լցեալ է հոգեւոր,
Զոր մարդ անմիտ ոչ իմանայ ամէն բոլորս։

Այսօր առաքեալքն էին ի տանն վերնաւոր,
Առին շնորհս, իսկէին բաժանաւոր,
Այլ եւ այլ լեզու տուան քարոզաւոր.
Որ երկիրս լցաւ լուսով երկնաւոր.
Հոգին էջ երկնից է՛ր զօրաւոր.
Աղաւնանման արձաթապատ թեւաւոր.
Ոսկեւոսիլ ճաճանչ ունէր.
Նա բնակէ ի մարդն մտաւոր։
Ո՞վ Յակոբ Քշուառական եւ մեղաւոր,
Լեր ընդ հոգւոյդ եւ ընդ մարմնոյդ
իրաւախոր,
Ընդ մարմնոյդ ուղիղ կենաս եւ ընդ
հոգւոյդ մոլոր,
Մարմինդ է աղտեղացեալ ամէն բոլորս։
Ո՞վ եղբայր, յորժամ ասես այս շարական,
Լաւ ասէ քաղցր ձայնիւ համեղաբան,
Ընդ նմին եւ զիս յիշեա Յակոբս անպիտան,
Եւ սորա ստացողն, որ ստացաւ զսա
իւրան՝
ԸՍտեփանոսն, ազնուական,
Եւ հայրն իւր պարոն Ա(ւ)ան
զարմանական,
Որ է եկեղեցոյս մեր երեսփոխան,
Եւ հոգեւոր իրի յոյժ բարեկամ,
Հոգւոյն սրբոյ շնորհացն արժանն, ամէն։

Թ. 233ա.— Զեռս փտի եւ հոգ դառնայ,
Գիրքս յիշատակ առ ձեզ մնայ,
Ով ոք հանդիպի սորա՝
Թերին լնու, աւելն բառնա՝
Նա ի Տեառնէ զօրանայ։

Թ. 229բ.— Ո՞վ ընթերցող բարիմաց,
Պարգեւ առնուս ի Հոգոյն շնորհաց,
Յիշեա ի Տէր զծերոս անմոռաց։

№ 17

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 173, որոնցից 3-ը ուրիշ ձեռագրից պատատիկներ են։— Մեծությունը՝ 20,5×14×4։— Նյութը՝ հասարակ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։— Զնոգրի վիճակը՝ շրի մեջ ընկած, պակասում են բազմաթիվ թերթեր։— Տողերը՝ մյուրի հաշվով 23։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ լուսանցքներում կան զեղեցիկ լուսանցազարդեր և մայրագնց նկարներ։ Գլխագրերը գրված են զարդանկարներով, իսկ վերնագրերը՝ կարմիր թանաքով։

Հիշատակարան՝ միայն թ. 168ա. «Թվին ԻՃԻԹ (1680)»։

Հիշատակագրություն՝ թ. 69ա. անկապ մի նախադասություն, որից կարդացվում է միայն «Նարգիզ նշանացիս»

Ուշ շրջանի հիշատակագրություն՝ թ. 90ա. «Յիշատակ է պարոն Ամուրջանիս»։

№ 18

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 219։— Գրակները՝ 17, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 26×18×7։— Նյութը՝ ոչ հասարակ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, մի երեսում զարդաքանդակված խաչ. մյուսում՝ զանազան զարդարանքներ։— Պանդուխտները՝ երկու թերթ մագաղաթ, մեկը՝ առաջից, մյուսը՝ վերջից։— Վիճակը՝ բայց ոչված։— Գրությունը՝ երկսյուն։— Տողերը՝ մյուրի հաշվով 20։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ թուղթագիր։ Լուսանցքներում զանազան զարդարանքներ, երբեմն մարդու նկարներ։ Թ. 1—13՝ զանազան նկարներ, խորաններ եւ կիսախորաններ. Թ. 157բ—158ա՝ խորան և կիսախորան։— Գրիչը՝ Դավիթ եպիսկոպոս։— Ժամանակը՝ 1587։— Սուացողը՝ Մահտեսիս Սարգիսն։— Վայրը՝ Ղարայղալայ (Արարատյան երկիր) և Ծառս (Բասենի գավառ)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 215բ—219ա.— Փառք... Արդ, սկիզբն եկն սուրբ աւետարանիս ի երկիրն Արարատեան, ի գեւղն որ կոչի Ղարայղալայ, ընդ հովանեաւ սուրբ կաթողիկէիս եւ սուրբ Ստեփանոսիս, եւ այլ բազում սրբոցն որ աստ կան։ Ոչ կարացի կատարել վասն այն պատ(ճառին), որ վասն իմ ծուլացեալ մեղացն պատուհաս եւ Աստուած ի վերայ մեր, որ Ցարհատ փաշայն եկաւ ըՍտամբուլու բազում զաւրաւ, եւ եկաւ ի վերայ երկրին Երեւանու եւ շինեաց նորահիմն բերդ։ Եւ յորժամ լուաւ Մահմեդ իսանն զդալն փաշային, որ էր տեսար Երեւանու, եւնան երկիրն ամէն անոգորմարար, եւ (ա)ռաւ հետ իւրն, ազգ այլ ազգեաց եւ քրիստոնէից էաք, ի մէջ նոցա որպէս գազանինս ի մէջ գայլոց։ Յորժամ հասուցին երկիրն Գեղամայ, սկսան թալանել եւ կողոպտել. բազումք փախան անտի եւ դարձան յետս, եւ այլքն քշեցին մինչեւ Գանջայ, յայնպէս տեսաք, որպէս հրամայէ աւետարան սուրբ, թէ մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ եւ հայր զորդի։ Որ ես անարժան եւ մեղաւոր լցեալ Դաւիթ սուտանուն եպիսկոպոս, փախայ անտի եւ եկի սշիարէն աւանուն, ի երկիրն Բասենու։ Նոյնպէս սատացաւ սուրբ աւետարանիս բարեմիտ եւ հեզահոգի Տէր Աստուածատուրն եղոյ զիւր զստերքն եւ եղբայր որդիքն եւ ըստակ բազում ի մէջ կատաղած մարդագէմ գազանացն, եւ ինքն էտս դիւր որդին՝ Գրիգոր սարկաւագ, եկաւ գնետ մեր Բասէն, դատարկ ամենայն մարմնաւոր ինչից։ Ամենայն գրեանք եւ եկեղեցոյ ա-

նաւթ գերի անկաւ ի ձեռն այլազգեաց, բայց միայն այս աւետարանս կիսագիր մնաց շնորհաւքն Քրիստոսի։ Ես անիմաստ գծաւղս հանց իմացայ տեսութեամբ աշացս, որ Տէր Աստուածատուրն մարմնաւոր ապրանաց, ոչինչ հոգ չունէր։ Հոգեւոր փափաքն այն պատճառին մնաց, որ կատարի խոստացեալ պարգեւն առ Աստուած։

(Ա)րդ, որ կատարումն սորայ եղեւ երկիրն Բասենու ի գեւղն, որ կոչի Ծառս, (յ)իշատակ հոգոյն Տէր Աստուածատուր բարէմիտ քահանային եւ ծնաւղացն իւր, հարսն Յոհաննին եւ մարն Մարգարիտին եւ կողակցին Ումբրիշատին, որ ողոյ հասակաւ առ Քրիստոս փոխեցեալ էր եւ Տէր Աստուածատուրն այրի նստեալ, վասն սիրոյ արքայութեանն։

Բացցէ Տէր Աստուած զգուտն յիւրն, եւ որդոյն Գրիգոր սարկաւագին եւ դստերացն Հաստամսիմին, Եղիսաբէթին, Վարդիթէրին, եղբարն Կիրակոսին, եւ կողակցին Մուրատին, Ուլոփաթունին, որդոցն Մելքիսէդին, Ամիրին, եւ դստերացն Մարիամին, Մարգարիտ ապաշխարողին, Խանանդին, Ուղիտին, եւ այլ եղբարն Մարկոսին, եւ կողակցին Սամոսկին, որդոցն Յովանիսին, Կիրակոսին, դստերացն Գալիանին, Մարգարտին, Սիրամարգին, եւ քուերն եւ ամենայն արեան մերձաւորացն, առհասարակ կենդանեաց եւ ննջեցելոց, յիշեցէք եւ լիակատար սրտիւ Աստուած ողորմի ասացէք։

(Ա)րդ՝ գրեցաւ ձեռամբ անարժան եւ սուտանուն Դաւիթ եպիսկոպոսին, որ միայն անունս ունիմ եւ ոչ գործ։ Եւ գրեցաւ Ղուկաս գլուխն ձեռամբ իմ աշակերտ Գրիգոր սարկաւագին, որ եղեւ սուրբ աւետարանս յիշատակ Տէր Աստուածատուր քահանային հոգոյ, եւ վայելումն որդոյն Գրիգոր սարկաւագիս, որ է իմ աշակերտ։

Գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս հայոց ՌԼԶ (1587), ի գառն եւ ի նեղ ժամանակի, որ գրով ոչ կարեմ պատմել զչարն ի ձեռն այլ ազգաց։

Յիշեցէք զիս անարժան Դաւիթ գծողս, եւ զծնաւղսն իմ հայրիկ Խէչիկին, եւ մայրն իմ հանգուցեալ Փիանդէն եւ միւս մայրն, Խաթունն, որ գրոյս գրելն հանապազ մեզ սպասաւորէր եւ կերակրէր։ Եւ եղբայրն իմ Յովանէսն եւ հանգուցեալ եղբարքն իմ Մկրտիչ սարկաւագն, Սարգիս սարկաւագն, եւ քուերքն իմ եւ ամենայն արեան մերձաւորքն յիշեցէք, եւ լիակատար սրտիւ Աստուած ողորմի ասացէք։ Խոշորութեան եւ սխա(լա)նաց դրոյս անմեղադիր լերուք, որ ես սուր նած է։ Աւտարութիւն եւ միտքս մոլոր, թալաւուր մեզ կերակուր ինքն միայն Աստուած պատրաստէր, որ տուաղն է ողորմութեան, ապաւէն տնանկաց եւ պարգեւիչ բարեաց, հոգեւոր եւ մարմնաւոր։ Աղաչեմ զԱնդիպողդ, որ զիս սուտանուն Դաւիթ գծողս յիշման արժան առնէր։ Պարտեւաւորն Աստուած, որ նայ ինքն պարգեւէ, ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս, յերկնից արքայութիւն, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 219ա-բ.— Զվերջին ստացաւղ սուրբ աւետարանիս, որ ստացաւ զայլ ի հալալ յընչից իւրոց յիշատակ հոգոյ աստուածասէրն զպարոն Տէր Սիմէոն եպիսկոպոսին եւ ծնաւղացն Մելքոնին, Մարիմին եւ եղբարքն Դաւպարին, Կիրակոսին, Կարապետին, Ստեփանոսին, Ղազարին, մեծ պապին Ստեփանոսին, կողակցին Ենուհորին, մարդ պապին յԱշրաֆին, կողակցեն յԱննային, որդոցն Տէր Մխիթար վրդապետին Մկրտչին։ Աղաչեմ զձեզ. ո՛վ դաց քահանայից, կարդալով կամ տեսանելով, կամ յարիւնակցով կարդացէք եւ Աստուած ողորմի ասացէք, ամէն։

Ես Դաւիթ եպիսկոպոս Ժամնցի սուրբ աւետարանս Ա. մաշտոց, Ա. սաղմոսարան մագաղատ գրաւոնեցի Տէր Յովանէս իրիցէն գնեցի Թվին ՌԼԹ (1590)։

Հարսնեբոն, Դավիթին, իւր դստերացն՝ Խանիկին, Հռիփսիմին, Գառահարին, դեռորոյս դաւակացն՝ Մխիթարին, Մկրտչին, Ցարդիսանին, Գալեստանին. կարդացէք եւ Աստուած ողորմի ասացէք, ամէն։

Արդ, երեսս անկեալ աղաչեմ զձեզ ո՛վ հայրք եւ եղբայրք, որք հանդիպիք ի սմայ կարդալով կամ աւրինակով, յիշեսջիք ի մաքրայփայլ աղաւթս ձեր զվերջին ստացող սուրբ աւետարանիս, զմահդասիր Մարգին, եւ զհայրն իւր Միրզայեանն, եւ զմայրն իւր Ուստիանէն, եւ զեղբայրն իւր Վէշիշան եւ զկնքամակիցն իւր Աւշան եւ զդուստրն Ոսկի տատիկն, եւ զորդիսն Վէշիշանին, Սիամանն, Բարդամն, սարկաւագ Մկրտիչն, ամէն։

Ի թուին ՌԾԷ (1608), որ անկեալ էր սուրբ աւետարանս գիրոքին ի ձեռս այլազգաց, տարան ի բաղաքն Ամիթ, այս բարեմիտ այրս Մահդասի Ամիր Սարգիս առէք դրամ յիշատակ իւրն եւ ծնաւղացն, ամէն։

Ես մահդասի Ամիր Սարգիս տուի զսուրբ աւետարանս յիշատակ ի դուռն Սուրբ Էջմիածնայ, ի ձեռն Դաւիթ կաթուղիկոսին, ամէն։

Թ. 42ա.— Սուրբ աւետարանի մասայ մեղատր չէ արժան Սարգիս Վարդանեան. որ եկի Շիրիշկան, սուրբ աւետարանի երկրի տէրն բնչեց, նեկի յուխտ արի. ամենայն քրիստոնէից արժանի եղիր ար դա իւր յուխտն կատարի։ Ի թիվն փոքր ամի...

(Շարունակելի)

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ԳՐՎԱԾ ԿՈՆԴԱԿԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

ՎԵՀԱՓԱՌԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԿՈՆԴԱԿԸ [1]

Այս օրերս մեր ձեռքը անցավ «Էջմիածին» ամսաթերթի 1949 հունվար-փետրվար միացյալ համարը, որու առաջնորդողն է Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակը, որով Վեհափառը անդրադարձած է դարձյալ Ամերիկահայ թեմի այն հատվածին, որ «զոհ դառնալով հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը և ընդհանուր բարոյական նկարագիրը մեծապես արատավորող ողբերգական դեպքերի, կենտրոնախույս տրամադրությունների և անհանդուրժելի նախապարմանքների, տարիներ շարունակել է մեղանչել և ցարդ մեղանչում է Հայաստանյայց Ազգային-Առաքելական Սուրբ Եկեղեցու կենսատու միասնականության դեմ»։

Վեհափառը կնշե որ «Հայ ժողովրդի ազգային-եկեղեցական միասնությունը բարոյական մեծագույն գանձն է և հոգևոր երաշխիքը Սփյուռքի ազգահավաքման ու ազգապահպանության, որի տարաբնակ հայազունը զուրկ է և՛ սիրելի Հայրենիքի կենսատու արևից, հողից ու ջրից, և՛ ազգային դերիշխան Պետության ոգեշնչող մոգական ուժից», հետևաբար միասնականության բարակայությունը կնկատե խոշոր աղետ մը, որու վերացման համար անգամ մալ հայրական խոսքը կուզղե բաժանյալ հատվածին սրտառուչ տողերով։

Ուշագրավ է և այն նշումը Վեհափառին, որ «Որպես նախանձախնդիր հայ ժողովրդի ազգային-կրոնական համերաշխ միասնության վեհագույն գաղափարի անվթար պաշտպանության և հավատարիմ Հայ Եկեղեցու լայնախոհության, համբերատարության և ներողամտության սրբազան ավանդներին, Մայր Աթոռը տարիներ շարունակ հրաժարվել է կանոնական վճռահատումներից, նախընտրելով հայրապետական հորդորն ու հովվական խրատը»։

Համազգային միասնականությունը հայության ներքին ուժի աղբյուրը դավանող Վեհափառը իր այս կոնդակով կբաղձա դարձյալ հոգևին որ անմիաբանության ապետին դիտակցին բաժնվողներու ղեկավարները ու վերջ տան անմիաբանության, խաղաղություն տալու համար «ալեհեր Հայրապետի հոգուն, որ խռովահույզ է այսօր ի տես իր զավակաց պառակտման, անմիաբանության»։

***

Արդարև, սրտագրավ է Վեհափառին կոնդակը, ամբողջությամբ շաղախված քրիստոնեական սիրով, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիի միասնականության ջերմ ոգիով և հայրենասիրական վառ զգացմունքներով։ Վեհին բոլոր կոնդակներն այսպիսի աստվածային ոգի մը կրած են իրենց մեր։ Հայրական հորդորները՝ սիրո, խաղաղության և միասնականության, շատ ուժեղ եղած են, քարերն իսկ կակուղցնող, ապառաժներն իսկ շարժող, և սակայն անզոր հանդիսացած են շարժել բաժանյալ հատվածի ղեկավարության սիրտը բրածոյացած։

Երբ այս է դժբախտ և անհերքելի իրողությունը, դժվար է հավատալ թե այսօր անոնք

1. Հոդվածը բերում ենք կրճատումով։—ԽՄԲ.

պիտի մերկանան քինախնդիր, հատվածամոլ և փառատենչ ոգիեն և պիտի չսեն Վեհին ազգային համերաշխության և եղբայրության սիրո կոչը։ Դժվար է կրսենք անոր համար, որ բաժանյալ հատվածի ղեկավարներու թշնամությունը դեպի մեր ազատ Հայրենիքը՝ Էջմիածինը և անոր հավատարիմ արտասահմանյան եկեղեցականությունը ոչ միայն տկարացած չէ, այլև վերջերս ավելի ուժեղացած, ծավալած է և՝ անպատկառորեն և՝ անխիղճորեն...

Այսպիսի անմարդկային վերաբերում կա և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին հանդեպ այս օրերուն։ Եվ այս՝ ա՛յն ատենման անխղճորեն, որ «Միոն» ամսագիրը «Ուրջ ախտանշաններ» խորագրով խմբագրականին մեջ կանդրադառնա հետևյալ տողերով, գայրույթը տեղված.

«...Ինչպե՛ս որակել, օրինակ, արարքը անոնց՝ որոնք խմբակցական տխուր հաշիվներով խիղճ չեն ըներ վարկաբեկելու մեր եկեղեցին նվիրապետությունը խորհրդանշող և իրենց ամբասիր կյանքով և գործով հանրության մտքին ու հոգիին մեջ նվիրականացած անձնավորություններ, ի հեճուկս մեր ազգային խղճմտանքին և հաշտ օտարներու։

«Այդպիսիներուն խոսքը, խավարին մեջեն լսված հայհոյանքներ լոկ, արժանի պետք չէ նկատվին անշուշտ որևէ պատասխանի, ինչպես մորացած ճահիճներե ցայտած կեղտեր, որոնց՝ մարդ պիտի պժգար դառնալ և քար նետել արձակված ցեխին կողմը։»

Այս տողերը կուռ և զուսպ գրված Կիլիկիո Վեհափառին նկատմամբ եղած անպատկառ արտահայտությանց և վերագրումներուն ի պատասխան, չե՞ն փաստեր միթե մեր մտածումը թե՝ կիրքերե կուրացած այդ խմբակը, երբ տակավին բռունցքը կբարձրացնի մեր ազգային դեմքերուն և հաստատությանց դիմ, միասնականության ոգին ապրելե շատ հեռու է, և հետևաբար ան պիտի շարունակե մնալ բաժանված և թշնամական դիրքի մեջ ընդդեմ մեր ազատ Հայաստանին և անոր հավատարիմ հայրենասեր կղերականության։

Ինչքա՞ն պիտի բաղձալինք, որ Վեհափառի հայրական հորդորը արձագանք գտներ գոնե այս անգամ բաժանյալ հատվածի ղեկավարության մոտ և անոնք ընդառաջեին մաքուր սրտով և հոգիով իրականացնելու միասնականությունը...

Էջմիածնի արժանավոր Գահակալի, մեր օրերու Ղևոնդ Երեցի այս ազդակը, հայրական կոչը, կրկնենք, իցի՞վ թե այս անգամ անարձագանք չմնա, մեր Ազգին և եկեղեցիին արատ բերող պառակտումը վերջ գտնե ի շահ մեր ազատ Հայրենիքին և Հայ Առաքելական Եկեղեցիին։

(«Երիտասարդ Հայաստան», 20 սեպտ.ի 1949 թ.)

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Բուքրեշահայ ծանոթ արվեստասեր Գրիգոր Զամբաղչյան, երեք տարի առաջ, Սովետ Հայաստանի Գեղարվեստի թանգարանին բրած իր առաջին նվիրատվութենեն վերջ, որ կբաղկանար երեք նկարներե, ներկայիս որոշած է՝ Հայկ. Դեմ. Կոմիտեի միջոցով՝ Սովետ Հայաստանի թանգարանին նվիրելու երեք նկարներ՝ ֆրանսացի ծանոթ նկարիչներու գործերեն։

Հետևյալներն են այդ նկարները.

1. «Կրկեսը»,— 1,30×1,65 մ. մեծությամբ, նկար՝ Maurice Brianchon -ի, մին՝ ֆրանսացի աչքառու երիտասարդ արվեստագետներեն։

2. «Շուկա Հայտարապատի մեջ»,— 0,60×0,50 մ. մեծությամբ, գործ՝ Albert Besnerd-ի, նշանավոր հարդարիչը՝ Փարիզի Théatre français -ի առաստաղին, հայտնի դիմանկարիչ և արևելագետ։

3. «Կապույտով կինը Մոնմարտրի հրապարակեն անցած ատեն»,— պատել՝ Louis Anquetin -ի,— 0,60×0,65 մ. մեծությամբ։

Այս նկարներեն առաջինը՝ «Կրկեսը» ցուցադրված է 1928-ին Տուիլերիի ցուցահանդեսին մեջ և արժանացած՝ մեծ հիացմունքի։

(«Նոր կյանք», 30 հուլիսի 1950 թ.)

ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԸ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՏԱԳՆԱՊԸ[1]

(Լոզան, 10 փետր. 1950)

Դարերու ընթացքին շատ մը տագնապներ անցած է հայ Երուսաղեմը, բայց Ս. Հակոբյանց միաբանության և հայ ազգին նախանձախնդրության շնորհիվ կարելի եղած է ցարդ անվթար պահպանել Ս. Տեղյաց մեջ Հայաստանյայց Եկեղեցիին գրաված դիրքը, իրավունքները և Տեառնեղբոր Աթոռը։

Նոր տագնապը, որ մի քանի տարիներե ի վեր կտիրե, Պաղեստինի պատերազմը և անոր հաջորդող անստույգ վիճակը, հայ ժողովուրդը կստիպեն լարված աչալրջությամբ և միակամ հաստատակամությամբ զորավիգ հանդիսանալ Ս. Աթոռին և անոր զինվորյալ միաբանության, որպեսզի այս նոր տագնապին ևս կարելի ըլլա փրկել հայ Երուսաղեմը և պահպանել անոր դիրքը անսասան ու անխախտ։ Հայ Սփյուռքը ամենուրեք պետք է հանձնառու ըլլա նյութական ու բարոյական ամեն զոհողության։ Արդարև քրիստոնյա աշխարհին ամենեն փոքր ածուն, Հայաստանյայց Եկեղեցին, որ ամենեն ավելի դիրք և իրավունք ձեռք բերած է Տերունական վայրերու մեջ, ամենեն ավելի զոհաբերության պետք է հանձնառու ըլլա, իր թիվին ու զորության համեմատությամբ՝ զանոնք պահպանելու համար։

Պաղեստինի պատերազմեն աղետյալ մերայնոց նպաստ և օգնություն հասցնելու համար գիտենք որ ճիգեր տեղի ունեցան, բայց անտնք նույն չափով պիտի կատարվեին որևէ դաղութի մեջ տեղի ունեցած աղետի մը պարագային։

Երուսաղեմ «որևէ գաղութ» մը չէ սակայն։

Կհուսանք որ այսքանը ըմբռնելու շատ ծանոթություն ունի հայ ժողովուրդը և եթե ցարդ այս ըմբռնողության համապատասխան շարժում առաջ չեկավ, ուշ չէ տակավին ցույց տալու համար, թե մեր նախնյաց նախանձախնդրությենեն բան մը պակսած չէ մեր մեջ և թե մենք ալ պիտի դիտնանք միզմն սպասված աչալրջությամբ և զոհողության ոգիով դիմակալել ներկա տագնապը։

1. Այս հոդվածի նեղինակն է Լ. Թութունյանը։ Բնագրում ենք կրճատումով։—ԽՄԲ.

***

Ս. Աթոռը ներկայիս շատ ծանր բեռան տակ է։ Անոր 32 միաբաններեն 15-ը միայն կգտնվին տեղվույն վրա, մյուսները ցրված են հայ դաղութներու մեջ, բոլորը իրենց ուսերուն վրա կոտանին տագնապին ծանրությունը։

Ս. Հակոբյանց վանքին մեջ ապաստանած հայությունը, խմբված միաբանության շուրջ, թեև վարոտ նպաստի և օգնության, ծանր պատասխանատվության մը բեռը կտանի իր կարգին, պայմանավ որ ամեն հայ ո՛ւր ալ որ դտնվի, ո՛րքան ալ որ հեռու ըլլա Երուսաղեմեն, ինքզինքը զգա նույնքան նախանձախնդիր իր ազգային պարտականության, այնպես ինչպես՝ եթե կանչված ըլլար անձնապես տեղվույն վրա կիրարկելու զայն։

***

Հակառակ օրերով ոմբակոծման առարկա ըլլալուն, վանքին նյութական շենքը հրաշքով անեղծ մնացած է, շնորհիվ հանգուցյալ երջանկահիշատակ Պատրիարքին անձնազոհ ջանքերուն, որ ռումբերու տարափին տակ նորոգել կուտար վնասված մասերը։ Սակայն երբ վանքը նյութապես անվթար կմնա, ցամքած են անոր հասույթի աղբյուրները, անոր կալվածներեն մեծ մասը փլատակի վերածված ըլլալով, իսկ կանգուն մնացածներն ալ անցած ըլլալով նոր տիրողներու ձեռքը։

Ավելորդ պիտի ըլլա հիշեցնել, թե Ս. Հակոբյանց նման հաստատություն մը առանց նյութական աղբյուրներու չի կրնար կանգուն մնալ...։ Ահա թե ինչո՛ւ համար մեր դարավոր իրավունքներու պաշտպանությենեն զատ անոնց պահպանումը ևս կպահանջե թե՛ բարոյական և թե՛ մանավանդ նյութական զոհողություն։

***

Պաղեստինի ներկա քաղաքական կացությունը շատ լուրջ մտահոգության աղբյուր մըն է մեզի համար։ Բայց իրականության մեջ մինչև որ մենք հասկնանք զայդ և մեզմն սպասվածը կատարենք, գործի ամբողջ ծանրությունը կրողը դարձյալ միաբանությունն է, Ս. Աթոռոս Տեղապահ Գեր. Տ.

եղիշե Վարդապետի շուրջ հավաքված Բլա՛ Իսրայելի, բլա՛ իսլամներու, բլա՛ քրիստոնյա եկեղեցիներու մոտ և միջազգային առյանի առաջ, Ս. Աթոռն է որ աշխուրջ պիտի հսկե մեր իրավունքներուն և մեր դիրքին վրա, բեռ՝ որու ծանրությունը կ՚համեմատի այդ իրավունքներուն և դիրքին գերակշռությանը...

(«Պայքար», 26 փետրվարի 1950 թ.)

ՍՈՖԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԻՏԻՆԳԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կիրակի, մայիս 14-ին, Սոֆիայի մեջ տեղի ունեցած է խաղաղության ի նպաստ հրապարակային մեծ ժողով, «Երևան» Համաշխարհական Միության Սոֆիայի վարչության մասնաճյուղի հրավերով։

Ժողովին նախագահ Գ. Պարակյան պատվո նախագահության համար առաջարկած է առաջդիմական մարդկության առաջնորդ և ուսուցիչ, խաղաղության մեծագույն պաշտպան Ի. Վ. Ստալինը, խաղաղության կողմնակիցներու համաշխարհային կոնգրեսի Մնայուն կոմիտեն՝ պլխավորությամբ պրոֆ. Ժոլիո Կյուրիի, Բուլղարիո խաղաղության պաշտպանության ազգային կոմիտեն՝ պլխավորությամբ մինիստր Ցոլա Տրակոյչևայի, որոնք ընտրված են ներ կաներու բուռն ծափահարություններով։

«Երևան»ի Կենտրոնական վարչության նախագահ Մ. Խաչիկյանը գեղեցիկ զեկուցով մը, համոզիչ փաստերով դիմակազերծած է պատերազմի հրձիգներուն դիվային ծրագիրները, իմպերիալիստներու սնանկ քաղաքականությունը՝ վեր հանելով դեմոկրատ երկրներու խաղաղասիրներու բլոկին ամրակուռ բնույթը պլխավորությամբ հզոր Սովետական Միության, և այլն։

Ողջույնի խոսք ըրած է Զթովա, իսկ Գ. Պարակյան առաջարկած է կազմել խաղաղության պաշտպանության հայկական կոմիտե, որուն մաս պիտի կազմեն «Երևան»ի Կենտրոնական վարչության նախագահ Մ. Խաչիկյանը և ուրիշները։ Ժողովին կողմի հեռագրեր ղրկված են Նյու-Յորք, Փարիզ՝ խաղաղության մնայուն կոմիտեներուն և խաղաղության պաշտպանության Բուլղարիոյ ազգային կոմիտեին։

Հետո, կատարված է գեղարվեստական ճոխ հայտագիր մը՝ մասնակցությամբ «Երևանի գեղարվեստական կոլեկտիվին, Պետական հայ դպրոցի աշակերտության», կգրե «Երևան» թերթը իր մայիսի 19 համարի մեջ։

(«Նոր կյանք», 4 Յունիսի 1950 թ.)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

(Ֆիլ. գիտությունների թեկնածու)

ԽՈՇՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Հ. Աճառյան, «ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ», հատոր Դ, 1948 թ., 686 էջ, Երևան, Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի հրատարակչություն)։

Պրոֆ. Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի Դ. հատորը պարունակում է ավելի քան 1200 բառ-անձնանուն և ընդգրկում է նարար անունից մինչև Սոսուն անձնանուն։

Պրոֆ. Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանը» շուրջ քառասուն տարվա տքնության աշխատանքի բեղմնավոր պտուղն է։ Դեռևս 1910 թվից, հեղինակը ձեռնարկել էր այս աշխատությանը, սակայն ի վիճակի չի եղել շարունակել այն։ Միայն վերջին տասնամյակում նա թափով աշխատեց նրա վրա և ավարտեց։ Ընդհանրապես, պրոֆ. Հ. Աճառյանի գիտական աշխատանքի բեղմնավոր շրջանը ծավալվեց Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելուց հետո, երբ սանդվեցին բարենպաստ պայմաններ նրա գիտական-ստեղծագործական աշխատանքների համար։

Աճառյանի «Անձնանունների բառարանը» ընդգրկում է հայոց անձնանունները ամենահին շրջանից սկսած մինչև մեր օրերը, ընդ որում մինչև 16-րդ դարն ընկած շրջանում հիշատակված են հեղինակին ծանոթ գրականության մեջ հիշված բոլոր անձինք, սկսած ամենանշանավոր դեմքերից մինչև ամենաանշանը, որ այս կամ այն հիշատակարանի մի անկյունում պատահաբար արձանագրել է իր անունը, անկախ նույն անունը կրող անձի պատկանելիությունից, սեռի, ծագման, կրոնական դավանանքի, կրթական ցենզի տարբերությունից և այլն։ 16—17-րդ դարից սկսած հիշված են միայն այն դեմքերը, որոնք պատմության և գրականության մեջ նշանակալից դեր են ունեցել։

Պրոֆ. Հ. Աճառյանի այս աշխատությունը իր ծավալով և մանավանդ փաստական հարուստ նյութի ընդգրկմամբ, դերազանցում է մինչև այժմ եղած բոլոր հայ և օտար լեզուներով լույս տեսած անունների բառարաններին։

Հայտնի է, որ մինչև այժմ եղած անձնանունների բառարանները դերազանցապես պատմական-կենսագրական բնույթի են, մինչդեռ պրոֆ. Աճառյանի անձնանունների բառարանը իր մեջ ամփոփում է ոչ միայն պատմական-կենսագրական տվյալներ, այլև ամենից առաջ, քննարկում է լեզվաբանական-բանասիրական խնդիրներ։ Այս վերջին ուղղությամբ հայտնի է Justi, Iranliches Namenbuch (Marburg, *1895), սակայն ո՛չ այս և ո՛չ էլ այս կարգի մյուս բոլոր բառարանները չունեն ո՛չ պրոֆ. Աճառյանի աշխատության ծավալը և ո՛չ էլ նրա հարուստ բովանդակությունը։*

Պատկերացնելու համար՝ թե ի՛նչպիսի հրակայական աշխատանքներ են կատարվել անձնանունների վրա, բավական է հիշել, որ հեղինակն իր այս ժողովածուն կազմելու համար օգտագործել է ամբողջ մեր հին մատենագրությունը՝ ինքնագիր և թարգմանական, որ ավելի քան 800 աշխատություններից է բաղկացած, հիսունից ավելի ձեռագրերի ցուցակներ հայերեն ու օտար լեզուներով և պատմական ու բանասիրական բազմաթիվ աշխատություններ։ Ահա փաստական այս հարուստ նյութի հիման վրա է կազմված մեզանում գիտական այս աշխատությունը։

Պրոֆ. Հ. Աճառյանի «Անձնանունների

բառարանում նյութը դասավորված է հետևյալ հաջորդականությամբ. անունները շարված են այբբենական կարգով և ամեն մի անվան վրա խոսում է հետևյալ ձևով. նախ տալիս է անունը, միաժամանակ տվյալ անվան իգական կամ արական գործածությունը, սրան հետևում են նույն անվան ծագումը կամ ստուգաբանությունը, նրա համապատասխան ձևերը մի քանի լեզուներով, ապա այդ անվան փողոցական կամ գզվական ու ժողովրդական ձևերը արդի հայ բարբառներում։ Նույն անունը կրող անձինք դասավորված են ժամանակագրական կարգով, տալիս է այդ անձերի հակիրճ կենսագրությունը, որից հետո այն բոլոր տեղերը, ուր հիշատակված է նույն անունը ամբողջ մեր հին մատենագրության մեջ և ձեռագրերի ցուցակներում տպագրված հիշատակարաններում և հիշատակագրություններում։

Պրոֆ. Աճառյանի «Անձնանունների բառարանում» տեղ գտած անուններից նկատելի է, որ մեր անձնանունների բազմազանության աղբյուրը գալիս է դեռևս շատ հնից։ Եթե ուշի ուշով հետևենք մեր անձնանունների կազմության ընթացքին, ապա դժվար չէ նկատել, որ անունների մի մասը առաջացել է ածականներից, ինչպես օրինակ՝ Նազելի, պայծառ ածականներից ունենք Նազելի, Պայծառ իգ. անձնանուններ։ Ունենք գոյականներից ձևացած անձնանուններ, ինչպես արփի, տաք, շող, շուշան հասարակ անուններից, Արփիկ, Տաքիկ, Շողիկ, Շուշիկ, որոնց լրիվ ձևերն են Արփենիկ, Տաքենիկ, Շուշանիկ, որոնք ձևացած են են, ան մասնիկով։ Կան նաև հասարակ անունների հոգնակի ձևից առաջացած անձնանուններ, ինչպես՝ Որդիք (որդի անվան հոգնակի ձևից), Շողեր, իգ.— հյ. շող բառի հոգնակիից, Նաներ, իգ.— նան, ստատ բառի հոգնակիից և այլն։ Թռչունների, ծաղիկների, կենդանիների հասարակ անուններից ձևացած անձնանուններ, ինչպես՝ արծիվ—Արծիվ, կաքավ—Կաքավ, բազե—Բազե, որից և Բազեճյան ազգանունը, մանուշակ—Մանուշակ, ծաղիկ—Ծաղիկ, ստատմբար—Սուսամբար, նունուֆար—Նունուֆար, նապաստակ— Նապաստակ։ Վերջինս մատենագրության մեջ հիշատակված է լապաստակայն ժողովրդական ձևով, ինչպես նման ձևով այժմ էլ ունենք մեր մի քանի բարբառներում օրինակ՝ Ագուլիսի բարբառով ղլպազտրակ, Մեղրու բարբառով՝ լրպազտրակ, իսկ Հաղբատի բարբառով՝ ղլբաստրակ։ Ի դեպ, ժողովրդական լեզվում՝ բարբառներում դտնում ենք ն—լ, այսպես է՝ եղան—լրղոլի, ելանել—իլլիլ, նիգ—լինգ կամ լէնգ, նեռ—լեռ (նեռոն անունից), նէմէց—լէմէց. սահման—աղով, և, նույն իսկ, ֆանտան—փանթալ բառը[1]։

Մեր մատենագրության մեջ կան բաղադրյալ անուններ երբ անձնանվան առաջին բաղադրիչը հայկական ծագում ունի, իսկ երկրորդը օտար, և հաճախ էլ դրա հակադարձ ձևը։ Այսպես՝ Ոսկիենար, իգ.—հյ. ոսկի+արաբ. nār «կրակ» բառերից։ Ոսկեգուլ, իգ.— հյ. ոսկի+պրս. gul «վարդ» բառերից, և այժմ էլ գործածական է Ջանգեզուրում։ Այսպես նաև Շահմամ, պրս. sāh, «թագավոր»+հյ. մամ, «մայրս, ստատ» բառերից, նույնը Շահտիկին և այլն։ Բայց ունենք և անձնանուններ, որոնց երկու բաղադրիչներն էլ հյ. ծագում ունեն, ինչպես՝ Շողոսկի, իգ— հյ. շող+ոսկի բառերից, այսպես և Նորայր, ար.—հյ. նոր+այր բառերից, Նորամայր, իգ — հյ. նոր+մայր բառերից, այսպես և Նորապետ, ար.— հյ. նոր+պետ բառերից, Շատարև, ար.— հյ. շատ+արև բառերից, որ նշանակում է «երկարկեց», սրա հակադարձը՝ Արևշատ, որից և Արևշատյան ազգանունը. հմմտ. Ումրշատյան։

Ենթակայական դերբայից առաջացած անձնանուն, ինչպես՝ Սիրող։

Գործիականի ով վերջավորությամբ ձևացած՝ Սէրով, իգ.— հյ. սէր բառից, իբր սիրով, ժողովրդական ձևով, որ հիշատակված է 15-րդ դարից մի անգամ, այժմ գործածական անուն է Ղարաբաղում։ Ունենք գոյականից և ածականից բաղադրված անձնանուն, ինչպես Ոտնամուր, ար.— հյ. ոտն+ամուր բառերից։

Բառարանում տեղ են գտել նաև այնպիսի նորակերտ անձնանուններ, ինչպիսիք են՝ Սիրվարդ, իգ.— հյ. սէր+վարդ բառերից, Սոխակ, ար., որ հյ. սոխակ թռչունի անունից է (հիշատակված է Սովետ. Հայաստան օրաթ. 1932 թ. փետրվարի 3-ի վերջին էջի հայտարարությունների մեջ), բայց այժմ Սոխակ իգ. անձնանուն է և բավական լայն գործածություն է գտել Ալավերդու շրջանի գյուղերում։ Նորակերտ անուն է և Ցնաշխարհիկ անձնանունը, որ հյ. նուլանուն գյուղից է և նշանակում է աշխարհում նմանը չգտնված (գեղեցիկ)։ (Տե՛ս Սովետ. Հայաստան, 1949 թ. հունիսի 13, էջ 1, սյունակ 5-րդ)։

Պրոֆ. Աճառյանը միանգամայն ճիշտ է վարվել, երբ մեր Սոնա, որ և Սոնիա (սրա փաղաքշականը՝ Սոնիկ) իգ. անձնանունը

1. Այս վերջին յոթ օրինակները քաղել եմ իմ «Հաղբատի բարբառի ուսումնասիրությունը» դիսերտացիոն աշխատությունից։

համարում է բնիկ և սեփական միաժամանակ երեք տարբեր լեզուների մեջ։ Սոնա ձևը հայերեն է և ծագում է Վանա բարբառով սոնա, «բարձրահասակ» (աղջկանց տրված ածական) բառից, երկրորդ՝ արևել. թրք. sona, «էդ բադ» բառից (համարվում է տիպար գեղեցկության) և երրորդ՝ ռուս. Соня ձևից, որ София անվան փաղաքշականն է» (Տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», Սոնա բառի տակ)։

Հեղինակը ճիշտ է վարվել նաև, երբ մեր Նուարդ անունը մեկնել է Նոր+վարդ բաղադրիչներով, իբր Նորավարդ՝ Նորաբաց վարդ, պրս. «նոր» +vard, «վարդ» ձևից, մանավանդ, որ 18-րդ դարից ավանդված ունենք Նորավարդ անձնանուն։ (Justi մեր Նուարդ անունը մեկնում է՝ պրս. «navard, «հաճելի, սիրելի» բառից)։

Չվստահելով ոչ մի անվանացանկի, պրոֆ. Աճառյանը անունները միշտ քաղել է բնագրերից (բացառություն է կազմում Տաշյանի մեծ ցուցակը)։ Շատ հաճախ միևնույն անունը ավանդված է մեզ բազմազան ձևերով, մանավանդ 13-րդ դարից հետո։ Այսպես է օրինակ՝ Նուենփար անձնանունը, որ հյ. համանուն ծաղկանունից է, հնում երկսեռ գործածություն ուներ և հասել է մեզ բազմազան ձևերով, ինչպես՝ Նունուֆար, Նիֆար, Նոնոֆար, Լալիֆար, Լիլիֆար, Լիլիֆար, Լալեֆար, Նանաֆար, Լուլաֆար։

Արդյոք ո՞ր ձևին նախընտրություն տալ։ Հեղինակը այս դժվարին կացությունից էլ ճիշտ ելք է գտել. այս կարգի անունները հիշատակելիս, առաջին տեղում գրել է ոտար աղբյուրին համապատասխան ձևը՝ հին տառադարձությամբ, իսկ հետագա հիշատակությունների մեջ ձեռագրերում պատահած ձևը (կամ ձևերը) ժամանակագրական կարգով։

Մեր մատենագրության մեջ կան անուններ էլ, որոնց թե՛ սեռն է անհայտ և թե՛ ծագումը, ինչպես. օրինակ՝ Շահատ, որ հիշատակված է 15-րդ դարի անթվական մի հիշատակարանում (Արարատ, 1911 թ., էջ 222)։

Անհայտ ծագման բառեր են նաև Սիսակ, Սմբատ, Պապկանես, Պուղի և բազմաթիվ այլ անուններ, որոնց թիվը երկու հարյուրից անցնում է և որոնք ուսումնասիրության կարոտ են. հուսանք, որ մեծանուն բանասերները իրենց հետագա ուսումնասիրությունների ընթացքում կբացահայտեն և այդ անունների ծագման ակունքները։

Մենք ցանկանում ենք հարգելի գիտնականի ուշադրությանը ներկայացնել Պուղի անվան ծագումը, որը անհայտ է։ Պուղի (այլ է Պողոս անունը) առաջացած պետք է լինի գավառական պուղ—պող, «կրակ» բառից, ի ածականակերտ ածանցով, իբր թե «կրակ մարդ, կրակե (կրակից)»։

Պրոֆ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը» իրավամբ խոշոր ներդրում է հայագիտության մեջ։ Այն բազմակողմանի մի տեղեկատու է բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում են հայ բանասիրությամբ և, առհասարակ, հայագիտությամբ։ Այս աշխատության հիման վրա, մեկը կարող է ուսումնասիրել անձնանունների պատմությունը հայոց մեջ, մի ուրիշը՝ կազմել ազգանունների ձևավորումն ու ընթացքը ամբողջ մեր պատմական շրջանում, երրորդը՝ իշխանական և նախարարական տոհմերի ճյուղագրությունը, չորրորդը՝ միասեռ և երկսեռ անունների գործածությունը պատմական ստորեր շրջաններում և այլն և այլն։

Երևանի Պետական համալսարանի ռեկտորատը, հրատարակելով պրոֆ. Աճառյանի այս մեծարժեք աշխատությունը, չափազանց շնորհակալ աշխատանք է կատարում։ Լիահույս ենք, որ շուտով լույս կտեսնեն մեծանուն գիտնականի «Անձնանունների բառարանի» մյուս հատորները և հայագետներն իրենց ձեռքի տակ կունենան այս մեծ աշխատության ամբողջական հատորները։